

1915.info  
1915.info

1915.info  
1915.info  
1915.info



1915.info

Մարկ Արեն  
Վարս Չարենց

ԴԱՐՁՅԱԼ  
ՍԻՐՈ  
ՄԱՍԻՆ

Երևան  
**bookinist**  
2022

ՀՏՏ 821.19-3

ԳՄԴ 84(5Հ)-4

Մ 370

## Արեն Սարկ, Վարս Չարենց

**Մ 370** Դարձյալ սիրո մասին: Վեպ / Սարկ Արեն,  
Վարս Չարենց.- Եր.: Բուկինիստ, 2022.- 232 էջ:

Սարկ Արենի և Վարս Չարենցի հեղինակած «Դարձյալ սիրո մասին» վեպը հանճարեղ բանաստեղծ, բժիշկ Ռուբեն Սևակի և Յաննի Ապակելի անմահ սիրո պատմությունն է:

Ազգակործան դաժան եղեռնի ծանր օրերին Սևակին փրկություն առաջարկող թուրք պաշտոնյային սառնասրտորեն մերժած Ռուբեն Սևակը գերադասում է դաժան մահը, քան հավատուրացության միջոցով իր կյանքը փրկելը...

Որպես սիրո առանձին հուշարձան ներկայացվող «Դարձյալ սիրո մասին» գրքի յուրաքանչյուր էջ լի է հավերժական սիրով ու սիրո իմաստնությամբ...

թվային յուն 5 1915. ՀՏՏ 821.19-3  
գմդ 84(5Հ)-4  
կայ Ք

ISBN 978-9939-66-358-6

© Բուկինիստ, 2022

© Սարկ Արեն, 2022

© Վարս Չարենց, 2022

## ԽՄԲԱԳԻ ԿՈՂՄԻՑ

Սիրելի ընթերցող,

Երբ հասնես այս ավելի քան հարյուրամյա պատմության իրական ու չջնջվող փաստերի վրա Մարկ Արենի և Շուշան Ղազարյանի համահեղինակությամբ ստեղծված «ԴԱՐՁՅԱԼ ՄԻՐՈ ՄԱՍԻՆ» վերտառությամբ գրքի վերջին էջին ու ծանրացած սրտով փակես այն, կարծում եմ, քո դիմաց անպայման հառնելու են ընդամենը երկուսուկես տարի առաջ հազարավոր գեղեցկագույն, կրթված ու ծաղիկ հասակում իրենց հայրենի հողը զավթիչներից պաշտպանելու համար ոտքի կանգնած և ՀԱՅՐԵՆԻ-ՔԻՆ զոհաբերված հայորդիների՝ «44-օրյա» պատերազմի տեսարանները... Բայց, հարկավ, ոչ վախից երկրից փախչելու և այն հանիրավի թշնամուն հանձնելով կորցնելու, այլ հիշողությունդ միշտ արթուն պահելու, բոլոր թեր ու դեմ փաստերը համադրելով՝ բուն ճշմարտությանը հաս-

նելու և բոռնցքվելո՛ համար, քանզի հիշողություն չունենալը հավասարագոր է չլինելուն, վերջիվերջո, «այլոց մեջ» ձուլվել-կորչելուն կամ քո իսկ հոդի վրա վախեցած, ստրկացված, գլխահակ ապրելուն, քանզի որտեղ էլ լինի և երբ էլ լինի, պատերազմով վախեցնելով, միայն ոչինչ չստեղծողն է մոլեգնությամբ ցանկանում... կործանել ստեղծողին՝ սեփականելու համար նրա հողն ու ինչքը, պատմությունն ու մշակույթը... Բայց... Բայց ոչ սերը ՌՈՒԲԵՆ և ՅԱՄՆԻ ՍԵՎԱԿ-ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆՆԵՐԻ և հին ու նոր՝ չարի նույն ձեռագրով զոհ գնացածների՝ գեղեցիկ սկսված, ավելի քան գեղեցիկ շարունակված ու բիրտ ուժի դիմաց անզամ չերկնչած երկու ՀՈԳՈՒ ՍԻՐՈՒՑ ՀԱՍԱՄԱՐԴԿԱՅԻՆԻ ՎԵՐԱՃԱԾ ՍԵՐԸ, նաև ԴԱՐԵԴԱՐ ՀԱՐԱՏԵՎՈՂ ՄԵՐ ՏԵՍԱԿԻ ՍԵՐԸ առ մարդկությունն ու մարդկայինը, առ գեղեցիկն ու հարատևելու արժանին, ԱՌ ԱՍՏՎԱԾ ՄԵՐ ՍԵՐԸ, քանզի ՄԵՐԸ ՉԲ ՄԱՀԱՍՈՒՄ, քանզի ՄԵՐՆ ԱՆՄԱՀ Ե...

ԴԱՐՁԱՆ  
ՍԻՐՈ  
ՄԱՍԻՆ



## Ա շուն էր:

Օրինապահ Շվեյցարիայում նոյնիսկ տարվա եղանակներն են խստորեն փոփոխվում ըստ օրացուցի: Դեռ երեկ աղմկում էր խամրած կանաչով խարող օգոստոսը, իսկ սեպտեմբերի մեջին, թվում է, թե երկինքը դարձել էր քամբակյա ու ծանծրալի. անդադար տեղում էր անձրև, թրջում ամեն ինչ ու փրփրում ցեխոտ ջրափոսերում և իր ծանր, խոշոր կաթիլները տպում սալահատակին թափված տերևների վրա...

Քամին իրար էր տալիս փողոցի ծառերի կատարները, որոնք ասես իրենց կիսամերկ ուրվագծերն էին թաքցնում սեպտեմբերյան մառախուղի սավանի տակ: Այզու նստարաններին սառել էր ամառվա շունչը. նոր սկսվող աշունը քամել էր նրա վերջին կաթիլը: Հին լապտերից կիսախավար, փոշոտ լույս էր ծորում: Երեկոն կարճացել էր: Չնայած եղանակի կտրուկ փոփոխությանը՝ կիսադատարկ զբոսայգում տաք վերարկուների մեջ փաթաթված՝ արկածներ էին որոնում անհոգ սիրահարները: Նրանց տեսապատկերի վրա կտրուկ առանձնանում էին հովանոցներով պաշտպանված նրբաճաշակ երկու տղամարդիկ, որոնք անշտապ զբոսնում էին կենտրոնական ծառուղիով:

– Օգոստոսը նման էր կիրակնօրյա երեկոյի, – լոռությունը խզեց խորհրդավոր տեսքով երիտասարդը:

– Գեղեցիկ էր համեմատությունը, կեցցեն, Ռուբեն, – գովեց ուղեկիցը և, թաքցնելով ժախտը, շարունակեց, – դու շուտով կհավակնես եղբորդ՝ Սևակի բանաստեղծական դափնիներին:

– Յուրաքանչյուրին՝ իրենը, – խուսափողական արձագանքեց Ռուբենը:

– Դե, եթե յուրաքանչյուրին՝ իրենը, ապա ուզում եմ խոստովանել, որ պետք է վերանայես կարգավիճակդ, – մի պահ լրությունից հետո արձագանքեց Ռուբենի զրուցակիցը:

Ռուբենն ուշադիր նայեց ուղեկիցին:

– Բեռնար, դու զիտես, որ ես չեմ ախորժում հանելուկներով զրուցներից:

– Բարի, ես կփորձեմ լինել ավելի պարզ, – պատրաստակամությամբ հայտարարեց Բեռնարը և խորը շունչ քաշելով՝ շարունակեց: – Դու հավանաբար նկատել ես, որ հիվանդանոցի և բուժկետիդ ընդունարաններում քեզ սպասողները կանայք են: Հիմնականում՝ օրիորդներ, և հազվագյուտ՝ այրիներ:

– Ինձ հետաքրքրում է միմիայն նրանց առողջական վիճակը և բացարձակ չի հուզում այն հարցը՝ նրանք ամուսին ունեն, թե՞ ոչ, – անկիրք ձայնով պատասխանեց Ռուբենը:

– Հենց ցավն էլ այն է, որ նրանք մեծ մասամբ բացարձակ առողջ են, – արձագանքեց Բեռնարը և արտահայտիչ դադարից հետո լրացրեց, – եթե հաշվի չառնենք նրանց «սրտի ցավը»:

– Բայց և այնպես, ցավը, – նկատեց Ռուբենը:

– Տվյալ պարագայում՝ «բայց և այնպեսի» փոխարեն երևի գերադասելի է կիրառել «այնուամենայնիվ» բառը, – մի պահ մտածելուց հետո ասաց

Բեռնարը և, նկատելով ընկերոց հարցական հայացքը, շտապեց պարզաբանել.

– «Արտի ցավ» ասելով՝ ես նկատի ունեմ այն զգացումը, որ նրանք տածում են քո նկատմամբ:

– Դու չափազանցնում ես, – Ժպտաց Ռուբենը:

– Ամենսին, – ուսերը թօթվեց Բեռնարը և ծանր հոգոցով շարունակեց, – տվյալ պարագայում դու նոյն հաջողությամբ կարող ես համարել, որ չափազանցնում է ողջ քաղաքը:

– Լո՞րջ, – զարմացավ Ռուբենը:

– Ավելի՞ քան, – հաստատեց ընկերը և շարունակեց պաթետիկ ձայնով, – և զուտ այդ հանգամանքից ելնելով՝ ես՝ քաղաքի դատական բժիշկ Բեռնար Դարմոսս, կարելի է ասել, լիազորված եմ քաղաքի կողմից քեզ կոչ անել ուղղել այս անթույլատրելի վիճակը:

– Բայց ինչպես, – զարմացած կանգ առավ Ռուբենը:

– Շատ պարզ, – կանգ առավ նաև Բեռնարը և ափը դնելով սրտին՝ բացականչեց, – ամուսնացիր և վերականգնիր հանգստությունը:

– Դու կատակում ես, – ասաց Ռուբենը:

– Հավատա, ես լուրջ եմ, քան երբսի, – խոստովանեց Բեռնարը:

– Ինչպես կարելի է լուրջ խոսել նման անհեթեթք քաների մասին, – համբերությունը կորցրեց Ռուբենը, – միգուցե Դուք արդեն գտել եք նաև հարսնացուի՞ս: Ես հուսով եմ, որ մի չքնաղ օր Աստված ինձ կպարզենի իմ սերը, – կանգ չառնելով՝ շարունակեց Ռուբենը, – բայց թե երբ, գիտի միայն ինքը:

Անձրես փոխվեց տեղատարափի, քամին կրկնակի եռանդով էր ձգտում խլել նրանց ձեռքերից

հովանոցները, և ընկերները միմյանց հրաժեշտ տալով՝ լքեցին գրոսայգին՝ այնտեղ իբրև լիիշխան տեր թռղնելով մոլեզնած տարերքը:

Գետափնյա փողոցի անկյունի երկիարկ առանձնատունը, որը շրջապատված էր վայրի բնության հրաշք եղևնիներով և որի մոտակայքում լսվում էր գետի վշշոցն ու գորտերի կռկոնցը, գողտրիկ էր միայն անտեղյակների համար:

Առանձնատունը, որի առաջին հարկը համարվում էր մասնավոր բուժկետ և որը վարձակալում էր Լոգանի հիվանդանոցի գլխավոր բժշկի օգնական Ռուբեն Չիլինկիրյանը, ուներ չորս հարկաբաժին: Բժշկի և նրա երկվորյակ եղբոր հարկաբաժինը ոչ այնքան մեծ, բայց հարմարավետ էր:

Եղբայրները վարձակալել էին դեմ-դիմաց բացվող սենյակները, և նրանց բացարձակ նմանության պատճառով հարևան կենվորները հաճախ մատնվում էին զվարճալի շփոթության:

Տանտերը, եթե ինձ չի դավաճանում հիշողությունս, պարոն Մալոն, շատ խիստ և աստվածավախ մարդ էր և նոյնը պահանջում էր իր կենվորներից: Առանձնատան ետնամասում կար ոչ մեծ կացարան և բոլորին իր հսկողության տակ պահելու համար պարոն Մալոն ապրում էր այդ տնակում:



Երեկոն երկնքից առանձնատան տանիքին մաղում էր ստվերներ. մայրամուտն ասես մարող մոմի լույս լիներ՝ հսկայական պատուհանով սենյակի պատշգամբին:

Թափանցիկ վարագույրի ետևից երևում էր արդեն մեզ ծանոթ Ռուբենը:

Սենյակում տիրում էր բժշկին հատուկ կարգուկանոն. պահարանում միատող դասավորված էին հիվանդների առողջական պատմությունների թղթապանակները: Սեղանին դրված լուսանկարների շրջանակում ծնողների կանչող հայացքն էր, պատերին՝ չստորագրված, բայց, միաժամանակ, արժանի կտավներ և մեկ տասնյակից ավելի պատվոգրեր ու շնորհակալագրեր: Դեպի կիսարաց պատուհանը դանդաղ, ծխամորճի բուրավետ ծիսի նման սահում էր Բեթհովենի լուսնի սոնատը:

Ռուբենը հայացքով շոյեց ծնողների լուսանկարը և մտքով տեղափոխվեց այնտեղ, ուր վայելել էր անհոգ մանկություն, հիշեց երկաթագործ հորը՝ Հովհաննես աղա Չիլինկիրյանին, որի երազանքն էր Ռուբենին տեսնել որպես բժիշկ: Հպանցիկ հիշեց վարժարանում սովորելու տարիները...

Առավոտյան ժամը տասն էր, երբ աշխատավայրում լսվեց մի աղմկալի խառնաշփոթ: Աշխատակիցներն անհանգուացան. մուտքի դիմաց հավաքվել էր մի հոծ բազմություն:

Կուտակումներ առաջացնողները հիմնականում կանայք էին, ավելի ստույգ՝ երիտասարդ օրիորդներ: Նրանք ցնորվում էին հենց միայն այն պատճառով, որ, առանց որևէ հիմնավոր գանգատի, փորձում էին միմյանց հրելով՝ ներխուժել բժշկի աշխատասենյակ:

Չսայած դռան ետևում օգնական բուժքրոց՝ գոնեահրաբերական լուսություն հաստատելու ջանքերին՝ աղմուկը հասել էր Ռուբենի աշխատասենյակ:

Պատուհանից երևացող Ռուբենի միտքն ասես մշուշվեց, և նա ակամա հիշեց այն դժվարին ժամանակահատվածը, երբ նոր էր տեղափոխվել Լոգան...

Համալսարանի խոլ ու համր և անճռոնի «Քվազիմոդո» պարետը նրան ուղեկցել էր տարտասնիինք հոգու համար նախատեսված կացարան և ցույց տվել իրեն հատկացված մութ, առանց պատուհանի նեղլիկ ննջարանը, իսկ մշտապես զբաղեցված երեք աշխատանքային սեղանները պետք էր ինչ-որ «հրաշքով» համատեղել, այն դեպքում, երբ համալսարանից վերցրած գրքերը պետք է կարդար, մշակեր և ժամանակին հասցներ ավագին: Պետք է սնվեր ամենօրյա տապակած կարտոֆիլով ու մսի չնչին կտորտանքներով, իսկ ճաշարանում... Իսկ ճաշարանում ուտեստների գներն անհանդուրժելի էին նրա «կիսածակ» գրպանի համար: Նրա հիշողության մեջ ցմահ տպավորվեց այն ամիսը, որը մեծ դժվարությամբ կիսել էր այլազգի ուսանողների հետ, որոնք ապրելով խրախճանքներով՝ իրենք իրենց շարունակ գտնում կամ կորցնում էին աղմկոտ գարեջրատներում: Մի քանի շաբաթ այսպես դիմանալուց հետո Ռուբենը որոշեց բնակարան վարձակալել, որտեղ երազում էր գտնել փափագած հանգստությունը:

Միայնության առաջին երեկոն էր, որ ցանկացավ տեսնել քաղաքը աշխան մշուշում:

Աչքարաց ընկերները պատմել էին, որ ամեն մի փողոց աչքի է ընկնում հղփացած երիտասարդներով. նույնիսկ 18-20 տարեկան աղջիկներով, որոնք Լոգան էին եկել առանց խնամակալների և ուրախգլարթ թափառում էին քաղաքի աղմկալի վայրերում:

Ռուբենն արդեն տեղեկացված էր կանացի վտանգավոր գրոհների մասին, սակայն այն որդիական պատասխանատվությունը, որ կրում էր իր հոգում, և ծնողներին տված խոստումը՝ զերծ մնալ ժամանակավոր կապերից ու խրախճանքներից, նրան ապահով կերպով թաքցրել էին մի ամուր կաղապարի մեջ, որից՝ զսպվածության այդ տիրույթից, դուրս կգար այն ժամանակ, երբ կկատարվեին երազանքները...



Շատ բարոյական ու ազնիվ մարդ էր պարոն Մալոն, որը երբեք չէր հանդուրժի անբարո ու սխալ վարքագիծ իր հյուրատանը, և հենց առաջին հանդիպման ժամանակ խոր հավանության արժանացրեց Ռուբենին, երբ վերջինս մոտենում էր իր կացարանին. Մալոն պատուհանից ակնապիշ դիտում էր երիտասարդին, որը չէր նկատում իրեն ուղղված հայացքը:

Ռուբենը նայեց շուրջը. ոչ ոք չկար: Բոլնեց դրան ուսկեփայլ թակոցը, մի քանի անգամ թակեց, և բացված դուն առջև կանգնեց հաղթանդամ, ճաղատ, ճերմակ, չսափրված դեմքով Մալոն՝ փորք դռնից առաջ, իսկ ինքը՝ դռնից այն կողմ, որ սպայական խիստ հայացքով նայեց Ռուբենին ու, հոնքերը վեր թոցնելով, հարցրեց.

– Դուք ի՞նչ եք ուզում, բարեկամս:

– Դուք պարոն Մալոն եք, – իր հերթին հարցրեց Ռուբենը:

– Ես ինքս պարոն Մալոն եմ, – քթի տակ ժպտաց տանտերը:

Այդ ժայիտը որոշ թեթևություն բերեց երիտասարդ Ռուբենին:

– Այդ դեպքում ես ձեզ մի խնդրանք ունեմ: Կրթություն ստանալու նպատակով մի քանի ամիս է, ինչ տեղափոխվել եմ Լոգան: Ուսանողական հանրակացարանում տիրում է սարսափելի իրարանցում. նորեկներին վերահսկելն անհնար է, հները խրախնդի մեջ են քանչորս ժամ անընդմեջ, իսկ ես կրթության վերաբերյալ ունեմ լուրջ նպատակներ: Եվ այդ միջավայրն այլևս հանդուրժել չեմ կարող...

Խոր հոգոց հանեց Մալոն, սառած ճակատից իջեցրեց ձեռքը, շոյեց կենվորի գլուխն ու հրավիրեց ներս:

– Բավական է, ներս արի, նոյեմբերին այսքան դրսում չեն մնա, կշարունակես տանը:

Ռուբենը շեմին զցված շորի վրա մի քանի անգամ թաց կոշիկները քնելուց հետո անցավ ներս, որտեղ այսքան կոկիկ ու հավաք էր, որ ասես մաքրելուց հետո տանը չէր եղել ոչ մի շունչ:

Հյուրասենյակը ոչ փոքր էր, ոչ էլ մեծ:

Մուգ կապույտ բազմոցին ծածկված պառկած էր տասնամյա մի մանչուկ՝ Զոնը. այդպես նրան դիմեց հայրը՝ Մալոն:

Աղմուկի վրա հարևան սենյակից ներս մտավ 18-ամյա գեղեցկուիի դուստրը, բարեւց, հյուրի աչքերին չնայելով՝ վերցրեց նրա ոչ նոր վերարկուն և խսկույն ետ գնաց, իսկ Ռուբենն էլ զուսպ, չնայելով օրիորդին, քայլեց դեպի վառարանը: Նստեցին դրա շուրջը: Թեյսիկը, գոլորշի արձակելով, քլթքլթում էր՝ խոնավացնելով օդը:

– Ասում ես՝ ինչո՞ւ ես եկել, – կրկին հարցրեց տանտերը:

Ռուրենը, ծանր շունչ առնելով, նորից սկսեց պատմել, սակայն Մալոն ընդհատեց.

– Ես տանը լավ օղի ունեմ, ոչ բոլորին եմ հյուրասիրում, – հյուրին սեղանի մոտ կանչելով՝ ասաց նաև շսպասելով Ռուրենի պատասխանին՝ ձայնեց.

– Եսթեր, բեր օղին:

«Եսթեր», – կարծես փորձելով ճաշակել անվան համը՝ մի քանի անգամ մտքում կրկնեց Ռուրենը, բայց խնդրեց, որ դեմ չէր լինի, եթե թեյ խմեին օղու փոխարեն. այն ժամանակ նա ընդհանրապես անտարբեր էր ոգելից խմիչքների նկատմամբ և. «Վերջիվերջո, – մտածեց, – գուցե սա իրեն փորձելու հնա՞րը է»:

Մինչ Ռուրենը մտքերի մեջ էր, Եսթերը սկսուտեղին դրած բաժակները խնամքով դասավորեց սեղանին: Ուսերին սև սաթի պես փոված վարսերի տակից կանաչայա Եսթերը հպանցիկ նայեց Ռուրենին, հետո ժպիտը թաքցրեց սև փնջի ետևում:

Հայրը, խախտելով լոությունը, դիմեց Ռուրենին.

– Հայ ես, տղան:

– Հայ եմ, պարոն Մալո: Բայց ինչ իմացաք, – զարմացավ Ռուրենը:

– Ձեր մեջ ինչ-որ աստվածային բան կա: Պատմիր քեզանից, – ասաց տանտերը:

– Ծնվել եմ Սիլիվրիում, հայրս երկաթագործ է: Պոլսում ավարտել եմ Պերպերյան վարժարանը: Մեր գերդաստանում առաջինն եմ, որ, իբրև ապագա քժիշկ, սովորում եմ համալսարանում:

Մալոն սեղմեց Ռուրենի ձեռքը.

– Տղաս, դու անկասկած կդառնաս լավ քժիշկ և գուցե հենց դու էլ հանես այս վիճակից իմ զավակին:

Եվ ոտքի կանգնելով՝ քայլեց որդու ուղղությամբ:

Գանգրահեր տղան, անկասկած, հիվանդ էր և այդ մեկ ժամվա ընթացքում ոչ վեր կացավ, ոչ մոտեցավ սեղանին և ոչ էլ խոսեց:

Սակայն Ռուբենը ոչինչ շհարցրեց՝ մտածելով, որ գուցե քայլն անպարկեցան դիտվի, այլ ոտքի կանգնեց, սեղմեց Մալոյի ձեռքը, շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար և գնաց դեպի դուռը, բայց քիչ հետո լսեց տանտիրոց ձայնը և դեռ դարպասին շհասած՝ շրջվեց:

— Տղան, գուցե շրջես տանը, և քեզ համար սենյակ ընտրես: Ասեմ քեզ. ունեմ Բեռնար անունով մի կենվոր, որ երկար տարիներ ապրում է այստեղ, լավ տղա է, իրեն ասել եմ. «Եթե լավ կրթություն ստանաս, մեծ մարդ կդառնաս», — Մալոն զրնգուն ծիծաղեց ինքն իր ասածի վրա, մեկնեց բանալիների համարակալված խուրճը և ավարտեց, — շրջենք, տես. որ սենյակը հավանես, բանալին վերցրու:

Պտույտ գործեցին տան ետնամասով և սանդուղքով բարձրացան վեր:

Պարոն Մալոն հաշվեց.

— Առաջին, երկրորդ, հինգերորդ, յոթերորդ և իններորդ սենյակներում արդեն ունեմ կենվորներ: Մնացածն ունեն զրեթե նույն տեսքն ու զինը: Մեկ սենյակ էլ ունեմ քիչ ներքևում: Բայց ոչ ոք չի կամենում այդ տարածքը, ուստի քեզ կտրամադրեմ մատչելի գնով:

Ռուբենը մի պահ մտորեց. հավաքած գումարով և ծնողների օգնությամբ հազիվ կարողանար բավարարել սպասվելիք ծախսերը: Դեռ որոշակի մի գումար էլ պետք էր գրքերի համար:

– Ես հենց դա էլ կընտրեմ, պարո՞ն Մալո, իսկը ինձ համապատասխան է, – որոշեց Ռուբենը և հանկարծ, չգիտես ինչու, լրացրեց, – և հարմար՝ երկուսիս:

– Մի՞թե մենակ չես, տղայն, – հարցրեց տանտերը:

– Երկվորյակ եղբորս հետ եմ:

– Նա էլ է քժիշկ դառնալու:

– Նա բանաստեղծ է, – Ժպտաց Ռուբենը, – ես այսօր ևեթ կտեղափոխսվեմ, – ասելով՝ սեղմեց տանտիրոջ ձեռքն ու մի քայլով իջավ սանրութքը:

Դարպասի մոտ Ռուբենի դիմաց մանրիկ ու փութեկոտ քայլերով ելավ Եսթերը:

Չսայած այն բանին, որ երիտասարդը շտապում էր՝ կանգնեց, շնորհակալություն հայտնեց, ներողամտորեն նայեց աղջկան և հեռացավ: Այդ օրը նրա մտքում մնացին անպատասխան հարցեր. ինչ կատարվեց իր՝ Ռուբենի հետ. միայն այն, որ սեղակը հավանեց... Դա՞ էր պատճառը, որ շտապում էր, թե մեկ այլ հարց էր մտատանջում: Իսկ երեխանն... Ինչո՞վ է նա հիվանդ, և որտեղ էր մայրը: Ապա հուսադրեց ինքն իրեն, որ ամեն քան կարգին է ու շտապեց դեպի քաղցրավենիքի կրպակը:

– Ինձ անհրաժեշտ է մի քանի ստվարաթղթե արկղ, գուցե օգնեք, – գրպանից հանելով մեկ ֆրանկ՝ ասաց Ռուբենը, գնեց նաև քաղցրավենիք, բլիթներ, զեն ու որոշեց, – «Որպես շնորհակալություն՝ կտանեմ Մալոյին»:

Հանրակացարանի դիմաց սպասում էր գգգված մազերով տիրուհին՝ «Քվազիմոդոյի» կինը, որ լսել էր, թե Ռուբենը. – «Դրան տեսեք, չի հարմարվել... պահ-պահ-պահ... Եվ ինքը թքած ունի, քանի որ կան մարդիկ՝ իր սիրելի կենվորները, որոնց հետ մշտա-

պես գարեցնիր է վայելում ինքը: Իսկ սա, այս անմարդամնտը»... իսկ ինքը... տիրուհին, ումից վախենում և ում հարգում են բոլորը (և ումից՝ անմաքրասերից ու գարշահոտ բուրողից, դրսում խուսափում էին նոյնիսկ... բաժակակիցները)...

Եվ Ռուբենը ոչինչ չասաց, երբ սենյակի դռան առջև հանդիպեց նրան, միայն բարևեց և գլուխն անմիջապես թեքեց. սուկալի էր բուրում:

Ներսում ամեն ինչ պատրաստ էր, միայն պետք էր դրանք խնամքով դասավորել ստվարաթղթե արկղերի մեջ: Վերցրեց անհրաժեշտ գրքերը, իսկ մնացածը, որ ուսանող ընկերները տվել էին լավության կարգով, որպեսզի ավելորդ ծախսեր չանի, վերադարձրեց տերերին: Հրաժեշտի պահին Ռուբենը նրանց խոստացավ, որ կայցելի երբեմն-երբեմն, բայց այլս չի կարող ապրել այդ թոհուրոհի մեջ...

Նոյեմբերի սկիզբն էր, մառախլապատ եղանակ, ճանապարհն էլ կիսեր բավականին ժամանակ, և Ռուբենի շտապողականությունն իրեն հրում էր առաջ... Այնուամենայնիվ, երկու կառք պետք եղավ. ծանրոցները տեղավորեց մեկում, իսկ ինքը՝ գրքերով, նստեց մյուսը:



Ռուբենը ձեռքերը կրծքին ծալած՝ հենվել էր բաց պատուհանագոգին, բայց երբ տեսավ այդ կնոջը, իսկույն հասկացավ, որ սա այն դեպքն է, որի մասին նրան քիչ առաջ զգուշացնում էր Բեռնարը. երբ կանայք, առանց որևէ հիվանդության ու պատճառների, փորձում են իր հետ շփման եզրեր գտնել:

– Բարև Զեզ, բժիշկ: Իմ անունը Ազաթա է:

– Ես Զեզ լսում եմ, – լայն ժախտով պատասխանեց Ռուբենը, – նստեք խնդրեմ և նկարագրեք, թե ինչն է ձեզ անհանգստացնում:

Կինը, չնայած Ռուբենի ջերմ վերաբերմունքին, դեռ համրացած էր, ասես քիչ առաջ ինքը չէր դռան ետևում աղմկողներից մեկը, և բժշկի ժախտն ընդունելով որպես մտերմության նշան՝ դանդաղ մոտեցավ նրան՝ հաշվի չառնելով, որ բժիշկը չի էլ փորձում մոտ լինել իրեն, և առանց պարկեշտության ու ամորթի, ասես մի խաղ սկսելով՝ մատով հպվեց Ռուբենի բաճկոնի կոճակին՝ ակնհայտ դարձնելով իր ցանկությունները:

– Ներեցեք, – ասաց նրան Ռուբենը, – ես վստահ եմ, որ դուք հիմա անհիմն կերպով սխալվում եք, – հանգիստ ու ցածրածայն շարունակեց նա:

Շփոթված կինը լարված մթնոլորտը թուլացնելու նպատակով սկսեց արդարանալ, բայց ոչ թե ներսում այդ պահին կատարված միջադեպի համար, այլ փորձելով արդարացում գտնել դրսի իրարանցման մեջ.

– Հասկանո՞ւմ եք, դրսի խառնաշփոթությունն ու աղմուկն այլ պատճառով է. բոլորիս ցանկությունը ձեզ հետ շփվելն է, – խստովանեց Ազաթան՝ ցույց տալով դուռը, – նրանցից շատերը, – եզրափակեց նա, – ամենսին էլ հիվանդներ չեն:

Ռուբենի անտարբերությունն ու հանգստությունը հարձակողականության էր մղում կնոջը, իսկ երբ սկսվեցին անհիմաստ արդարացումները, Ռուբենն արդեն չէր էլ նայում նրա կողմը, այլ սկսեց աշխատանքային սեղանի վրա դասավորել ինչ-որ թղթեր: Ազաթան ձեռքի ափով ծածկեց դեմքը, կարծես հասկացավ իր գործած սխալը, որի հետևանքով

Էլ արժանացավ բժշկի արհամարհական վերաբեր-  
մունքին, և սկսեց կմկմալով բացատրել.

– Հավատացե՛ք, բժիշկ, դրսում այն պատկերն է  
տիրում, ինչի մասին ես պատմում եմ...

Զցանկանալով այլս լսել այդ անհեթեղությունը՝  
Ռուբենը նրան դուրս հրավիրեց:

Ազաթան իրեն վիրավորված զգաց, որ Ռուբենն  
իրեն՝ որպես կնոջ անուշադրության մատնեց...

Նա զայրացած դուրս եկավ, նայեց սպասողնե-  
րին և կարծես հասկացնում էր, թե այս ամենն անփ-  
մաստ է. ներսի տղամարդը սառնասիրտ մեկն է, որն  
իր սրտում չունի... Ոչ-ոչ, ոչ թե սրտում սեր չունի,  
այլ... սիրտ չունի. սովորական մարդկային մի սիրտ,  
և որի ամբողջ բարեհաճությունն ու համակրան-  
քը սուկ մասնագիտական մոտեցում է, բժշկական  
պարտք... Երբ անգամ չկամեցավ օգտվել իր նման  
մի կնոջ սիրահետությունից...

Արդեն երեկոյան ժամը ինն էր, երբ հիվանդանո-  
ցում վերջապես տիրեց համեմատաբար հանգիստ  
մթնոլորտ: Ծանր աշխատանքային օրը մոտենում  
էր իր օրինաչափ ավարտին, և անձնակազմը երա-  
զում էր գտնել վաստակած հանգիստը, երբ հան-  
կարծ մուտքի կողմից լսվեց օգնության կանչող մի  
ձայն. 25-ամյա երիտասարդի հայացքը լի էր վախով  
ու անհանգստությամբ:

Ընդունարանում վայրկենապես իրարանցում  
սկսվեց:

Պատկառելի տարիքի բարձրահասակ մի տղա-  
մարդ ձեռքերի վրա պահել էր անզիտակից, գրեթե  
կիսամեռ մի օրիորդի: Նա հիվանդանոցի դռների  
դիմաց հանդիպել էր Ռուբենին, որն արդեն վեր-  
ջացրել էր աշխատանքը և ցանկանում էր տուն

գնալ: Աղջկա բազուկներն արյունոտ էին, արյունով էր ներկված նաև նրա ողջ հազուստը, իսկ դեմքը սփրթնած էր կիտրոնի նման:

Ռուբենը մոտ եկավ, որպեսզի ստուգի ակնարիթերը և... տեսածին չհավատաց. Եսթերն էր՝ պարոն Մալոյի դուստրը:

Ռուբենի մարմնով դոդ անցավ, և կասկածը համակեց նրան. մեծ պատասխանատվությամբ գրկեց Եսթերին՝ հասկանալով, որ կորցնելով ժամանակը՝ կկորցնեն հիվանդին:

Կարգադրեց արագ նախապատրաստել վիրահատարանը. հերթապահ բժիշկներից ներկա էր միայն ինքը:

Անձնակազմից ոմանց հետաքրքրում էին դեպքի մանրամասները, բայց ոչ ոք չէր համարձակվում բժշկի ներկայությամբ հարցեր տալ աղջկան ուղեկցողներին:

Երիտասարդն ու տղամարդը մնացին ընդունարանում, իսկ Ռուբենը վիրահատարանում բուժքույրերի հետ փորձում էր դադարեցնել դաստակների բավականին խոր կտրվածքների արյունահոսությունը...

Բարեբախտաբար, երակային արնահոսության հետ կապված թթվածնային քաղցը դեռ չէր վնասել մարմնի կարևորագույն համակարգերը:

Տղամարդը, որն ընդունարանում հիստերիկ նոպայի մեջ էր, անընդհատ կրկնում էր, թե աղջկան այս վիճակին է հասցրել «այն սրիկան», և իրեն պատեպատ տալով՝ ավելի էր սրում իրավիճակը:

Կլորիկ դեմքով, ցածրահասակ և ոչ այնքան գրավիչ արտաքինով, բայց շատ հմուտ բուժքույր Վեներան բժշկության մեջ մեծ փորձ ունեցող մեկն էր և

քմծիծաղով էր նայում երիտասարդին, իբր՝ «Երևում է, որ այնքան էլ մեղավոր տեսք չունես»:

Տղամարդուն հանգստացնող ներարկելուց հետո վերջինս այնքան անհասկանալի էր պատմում ամրող եղելությունը, որ բուժքույրը, այդպես էլ ոչինչ չհասկանալով, սկսեց լրացնել հիվանդության պատմության թերթիկը:

Երբ Ռուբենը դուրս եկավ վիրահատարանից, նրանց, այնուամենայնիվ, չհաջողվեց հասկանալ, թե վերջիվերջո ինչ էր կատարվել իրականում այդ «եռանկյան» ներսում, կամ ինչ կապ կա Մալոյի դստեր և այդ տղամարդկանց միջև:

Առաջին քայլը, որ ցանկանում էր անել Ռուբենը, Մալոյին շտապ տեսնելը պիտի լիներ: Ռստի, ըստ ընդունված կարգի, պետք է տեղեկացվեին օրինապահ մարմինները, և Ռուբենը խնդիրներից խուսափելու համար տեղյակ պահեց ղեկավարությանը. ի վերջո, առկա էր ինքնասպանության փորձով ծանր հիվանդ, որով արդեն պարտավոր էր զբաղվել դատական բժիշկը: Նա զանգահարեց Բեռնարին և պատմեց եղելությունը, իբր՝ այսպես ու այսպես, կատարվել է ինքնասպանության փորձ, և ցավալին այն է, որ աղջիկը ոչ այլ ոք է, քան նախկին տանտիրոջ դուստր Եսթերը, և, երևի, անպատճախան սիրո պատճառով է:

Ի պատասխան նրա պատմածի՝ Բեռնարը կեսկատակ ասաց.

– Ռուբեն, ընկերս, շուտով նման մի մեղքի մեջ էլ ինքդ կընկնես՝ մերժելով և սառը վերաբերմունք ցույց տալով տասնյակ գեղեցիկ կանանց ու օրիորդների:

Ռուբենը, որպես կատակ չընդունելով ասվածը կամ կատակը չհասկանալով, սկսեց մեկ անգամ ևս

բորբոքված բացատրել, որ ինքը բժիշկ է, իսկ այցելուները՝ հիվանդներ, և ոչ թե կանայք, որոնց կարելի է նայել այլ աչքով, և ասելով դա՝ դրեց լսափողը:

Մեկ ժամ չանցած՝ վկաներից քննություն վերցնելու եկան երկու քննիչներ, որ նախ մի քանի հարց տվեցին Ռուբենին:

Եսթերը՝ կյանքի հետ հաշվեհարդար տեսնող օրիորդը, անհերքելիորեն գեղեցիկ էր. Նորածին երեխայի նման փափլիկ, սպիտակամաշկ, երկար սևաթ մազերով, իսկ աչքերն էլ՝ ասես անձրևաբեր ամպեր:

Նա դեռ գիտակցության չէր եկել. Ռուբենը կարգադրել էր հարկ եղած դեպքում կրկնել հանգստացնող դեղը՝ միաժամանակ բուժքույրերին հանձնարեկով ուշադիր լինել, և երբ հիվանդը ուշքի գա, անմիջապես տեղեկացնել իրեն:

Արդեն ուշ գիշեր էր, բայց նա չէր էլ շտապում տուն. անհամբեր սպասում էր աղջկա հետ զրոյցին, սակայն, իմանալով որ աղջիկը մինչև առավոտ քնած կմնա, որոշեց սովորականից երկար վայելել գիշերային սառը օդը, զբոսնել խորդուրորդ փողոցներով և դուրս գալով հիվանդանոցից՝ սկսեց դանդաղ քայլել՝ տարվելով այն մտքերով, թե տեսնես ինչպես կդասավորվեր կյանքը, եթե ծնողներն իրեն չուղարկեին սովորելու:

Հիշեց, թե ինչպես էր հայտնվել սիրո կապանքների մեջ, ինչի պատճառով երկար ժամանակ չէր տրվում այլ սիրո հրապուրանքներին: Նա կարծես շարժվում էր գիտական կանոններով, իսկ երջանկությունը, որ նմանվել էր հարաբերական մի հասկացության, թվում էր, իր կյանքում պիտի հայտնվի տիեզերական պարզ հաջորդականությամբ:

Գիշերն անցավ կարճ ու աներազ: Անարև ու մոայլ եղանակ էր, իսկ մտքերը քամու նման Ռուբենի ուղեղում խփվում էին այս ու այն կողմ:

Ինչպես «բոլոր ճանապարհները տանում են դեպի Հռոմ», այնպես էլ փողոցը, որի երկայնքով քայլում էր Ռուբենը, նրան բերեց դեպի հսկա եղևնիների ստվերում թաքնված առանձնատունը:

Մենյակը կիսամութ էր՝ կահավորված դարաշրջանի ոգուն համապատասխան, և գրեթե ամբողջ տունը պաստառապատված էր մուգ երանգներով: Պատերին փակցված էին նկարներ, որոնց ծագումը նշված չէր, բայց զգացվում էր անհայտ վարպետի հմուտ ձեռքը: Գրապահարանի հաստափոր գրքերը վկայում էին, որ այս տանը բնակվում է խելացի ու բանիմաց մի մարդ: Բժշկական գրքերին չին զիջում տարբեր լեզուներից կատարված գեղարվեստական թարգմանությունները: Մի դարակում էլ խնամքով դասավորված էին ձեռագրեր:

Ռուբենը չէր ճգտում ճնխության, ոչ էլ սիրահար էր երևակայական փառքի: Նա ուներ մի հատուկ աշխարհ, որը լցված էր արտասովոր կյանքով, և սենյակում տեղ գտած իրերը համապատասխանում էին նրա հակումներին ու զգացմունքներին:

Մինչ ծագող արեգակը տեսանելի էր դարձնում նրա սենյակը, Ռուբենը խոհանոցում իսկական ճաշկերույթի պատրաստություն էր տեսնում: Խոհարարական գոգնոցի և բժշկական սպիտակ գլխարկի ետևում թաքնված էր համերի ու հոտերի մի իսկական հանճար: Այսորժակ գրգռող բույրն արդեն ամենուր էր: Սակայն մինչ հնդկահավը և ալպիական տապակած պանիրը կհայտնվեին սեղանին, մի քանի անգամ լսվեց դոան թակոցը, որից այն

կողմ կանգնած էր Ռուբենի՝ ազնվական դեմքով ու երանելի ժպիտով ընկերը՝ մեզ արդեն ծանոթ Բեռնարը: Նրա ձեռքին թղթով փաթաթած մի շիշ կար, որի երևացող կափարիչը հուշում էր Բեռնարի միակ թուլության առկայությունը՝ գլխավեյնը՝ համեմունքներով հարստացված գինեհամ, շվեյցարական ծագում ունեցող այն խմիչքը, որը կարող է յուրահատուկ հմայք պարզել ցանկացած սեղանի:

Հյուրը երանելի ժպիտով խոր ներշնչեց ախորժալի մսաբույրը, շիշը տվեց Ռուբենին և նրան ձեռքով հեռացնելով իր ճանապարհից՝ ասաց.

– Մի քանի հազար քայլ արեցի, որպեսզի համտեսեմ քո պատրաստած համեղ տապակաները, – ու սլացավ դեպի խոհանոց:

– Դե դու ինձ վաղուց չես այցելել, քո այլ աշխարհիկ կյանքում ամեն քան այնպես է խառնված... Եվ ինչպես ես հասցնում. միաժամանակ մի քանի սիրային արկածներ, աշխատանք, հանգիստ...,- թիկունքի կողմից փնթփնթաց Ռուբենը:

– Սիրային արկածներն արդեն իսկ մեծ հանգստություն են, քարեկամս, – քարոզչական տոնով արձագանքեց Բեռնարը:

– Ասինար է, եղբայրս, դրանք ավելի շուտ գլխացավանք են, քան հանգիստ, – շհամաճայնեց Ռուբենը:

– Դու դա պնդում ես իբրև տեսաբան, իսկ ես հմուտ փորձագետ եմ, – հիհոաց Բեռնարը:

Երբ Ռուբենը տաք ուտեսատը ձեռքին մոտեցավ սեղանին, ընկերն արդեն անհոգ հյուրասիրվում էր:

– Իսկ դու երբսէ «փորձել ես նրանց», հենց թեկուզ՝ փորձելու համար, – հարցրեց նա՝ նայելով

Ռուբենին,- չէ՞ որ երկուսս էլ գիտենք քեզ համար խենքություններ թույլ տվող կանանց, որ նույնիսկ առանց պատճառի են հիվանդ ձևանում:

- Ուրեմն, իմացած եղիր, եղբայրս, ես երբեք արկածներ չեմ որոնում, նույնիսկ չեմ էլ կամենում փորձել,- չոր ձայնով արձագանքեց Ռուբենը:- Չեմ ընդունում զզացմունքները խառնակել,- (իսկ մտքում մայրենիով ավելացրեց՝ «հարամել»),- մի քանի օրվա հաճույքների հետ: Դա Աստծո կամքն է. ամեն բան՝ իր ժամանակին:

- Երբ Աստված չի լսում, սատանան է խառնվում կյանքի սխալ դասավորությանը,- հիհոաց Բեռնարը:

- Սատանան: Սատանան գործում է նաև կանանց մեջ, և միայն Աստծուն է հայտնի, թե ինչ կա նրանց մտքում,- հիշելով Ազաթային և առավոտվա միջադեպը՝ խոր հոգոցով ասաց Ռուբենը:

Երբ ճաշեցին ու դուրս եկան փողոց, Ռուբենը հանկարծ հիշեց.

- Եթե դժվար չէ, ճանապարհին մտնենք հիվանդանց, տեսնեմ, թե ինչպես է երեկվա «հերոսուհի», որն իրեն մի լավ «քառատել էր»:

- Ճիշտ ես ասում,- իսկույն համաձայնեց Բեռնարը,- զրոյցով տարված՝ մոռացա հարցնել, թե ինչ էր եղել, ինչն էր պատճառը:

- Դեռ չգիտեմ, երեկ շատ թույլ էր,- ասաց Ռուբենը,- ցավազրկողներն օգնեցին, որ քնի:

- Ես կզրուցեմ նրա հետ՝ իբրև դատական բժիշկ,- խոստացավ Բեռնարը, ու, ի զարմանս Ռուբենի, չգիտես ինչու, ավելացրեց,- և միզուցե աղջկա ապագա հայր:

Երբ Ռուբենն ու Բեռնարը ներս մտան, բուժքույր Վեներան Եսթերի հիվանդասենյակում էր:

Բժիշկներն իսկույն նկատեցին, թե ինչպես է աղ-  
ջիկը նեղվում իրենց ներկայությունից և, չնայած  
ուշիք էր եկել, բայց ցավազրկողների ազդեցության  
տակ քնած ձևացավ:

Բեռնարը, այնուամենայնիվ, հայացքով հարց-  
րեց՝ քնած է, ինչին Վեներան գլխի շարժումով հաս-  
կացրեց՝ ոչ: Նրանք զգում էին, որ օրիորդը պատ-  
րաստ չէ որևէ մեկի հետ քննարկել իր արարքը, և  
երբ դուրս եկան միջանցք, Վեներան ասաց, որ աղ-  
ջիկը ծանր ապրումների մեջ է, և նրա հետ խոսելու  
համար ժամանակ է պետք...

Քիչ անց եկավ քննիչը, որը, մեկ-երկու խոսք  
փոխանակելով բժիշկների հետ եղանակի մասին և  
դուռը թերևնակի թակելով, մտավ հիվանդասենյակ:

Սակայն օրիորդը չէր կամեցել նույնիսկ աչքերը  
բացել, ուր մնաց՝ որևէ բան պատմեր:

– Հարմար պահ չես ընտրել հարցաքննելու հա-  
մար, բարեկամ, – ասաց Բեռնարը, – նա դեռ ծանր  
հոգեվիճակում է, հարկավոր է սպասել:

Քննիչին ճանապարհելուց հետո Ռուբենն ու Բեռ-  
նարը դուրս եկան քաղաքային այգի՝ զբոսնելու:

Դրսում զով էր, վերջին մի քանի օրերին եղա-  
նակն ասես խելազարվել էր. մերթ քամի էր, մերթ  
մառախուղ, մերթ թերևնակի գունատ արև, որն այն-  
քան գեղեցիկ էր, ասես թափանցիկ օդը մենապա-  
րում էր նրա կաթվացող շողերի հետ:

Վաղուց էր, ինչ Շվեյցարիան չէր ունեցել այդպի-  
սի հաճելի օր...

Ռուբենն ու Բեռնարը քայլում էին դեպի կենտ-  
րոնական պուրակ, երբ նրանց դիմաց դուրս եկան  
մեկը մյուսից գեղեցիկ երկու աղջկներ: Նրան-  
ցից շիկամազը ժպտալով քայլեց դեպի Ռուբենը,

մոտեցավ, ջերմորեն փաթաթվեց, սիրալիր համբուրեց այսն ու ասաց:

– Ողջոյն, Սևակ, ինձ ցնցեցին քո տողերը, կերազեի, որ դրանք ինձ ձռնված լինեին:

Բեռնարը գլուխը թերեց ու ժպտաց, իսկ Ռուբենը ետ քաշվեց և շփոթված ասաց.

– Ներեցեք, բայց ես Սևակը չեմ, այլ նրա երկվորյակ եղբայրը:

Աղջիկը շփոթված նայեց ընկերուհուն, հետո՝ Ռուբենին, ապա՝ Բեռնարին՝ ասես հարցնելով. «Սա կատանկ է, թե՞ ոչ», և տեսնելով Բեռնարի լրջացած դեմքը՝ հապճեաւ խնդրեց ներել իրեն ու շտապեց հեռանալ:

Բեռնարը հայացրով ուղեկցեց աղջիկներին և ուշադիր նայեց Ռուբենին:

– Երբ ես ծանրթացնելու եղբորդ՝ Սևակի հետ:

– Մի օր, երբ նրան բռնացնեմ տանը, – խուսափելով ուղիղ պատասխանից՝ խոստացավ Ռուբենը և շտապեց փոխել թեման: – Ես ունեմ շատ ավելի կարևոր զբաղմունք. շուտով պետք է ներկայացվեն ապագա գիտական աշխատանքների համառոտագրությունները, իսկ ես դեռ պատկերացում էլ չունեմ դրանց ցանկի մասին:

– Իսկ դու պատկերացնո՞ւմ ես, թե ինչ սպանալիք է իրենից ներկայացնում անձնական կյանքի բացակայությունը տղամարդու համար, – հետաքրքրվեց Բեռնարը:

– Ամեն ինչ իր ժամանակն ունի, – խելամտորեն պատասխանեց Ռուբենը:

Բավականաչափ զբոսնելուց հետո Բեռնարը հրաժեշտ տվեց ընկերոջը, բայց Ռուբենը տուն չէր շտապում: Քայլերը նրան տանում էին մեկ այլ այգի, որտեղ քչերն էին զբոսնում, և ետևում թողնելով

մութ փողոցի աղմուկը՝ սկսեց բարձրանալ քարե աստիճաններով:

Այզում զբունում էր աշնան քամին:

Ռուբենը թեթևակի դողաց ու նստեց անշուր նստարանին, որի վրայի ներկը ճեճթում էր հնությունից: Նա ձեռքերը ծալել էր կրծքին, շարֆը բարձրացրել դեպի ծնտոր և լուս հետևում էր երիտասարդին, որը քչփորում էր դիմացի աղբամանը: Նայելով շուրջը և մոտակայքում ոչ որի չնկատելով՝ վերջինս ամբողջ մարմնով խրվեց աղբակույտի մեջ, հանեց մի կապոց, որում գտավ հին, չորացած հացի կտորներ, նստեց խոնավ ասֆալտին և սկսեց ազահարար խժոել թերմացքը:

Ռուբենը չդիմացավ և մոտեցավ նրան, բայց ամբողջ մարմնում սարսուր զգալով՝ ետ քաշվեց. այնքան տհաճ թվաց իրեն չարաբախտ մարդը:

– Պարոն, ի՞նչ եղավ, քաղցած եք, – հացի կտորտանքը Ռուբենին մեկնելով՝ հարցրեց թշվառը:

– Երիտասարդ եք, գուցե արժանի գործ փնտրեք, ինչպես եք կարողանում ուտել աղբամանի այս հին ու փշացած մնացորդները, – հարցրեց Ռուբենը:

– Ոչ բոլորն է հին կամ փշացած, – չհամաձայնեց զրուցակիցը: Մարդիկ դեն են նետում ձեռքից պատահարար վայր ընկած քաղցրավենիքը, – ապա ուշադիր զննելով Ռուբենին՝ հարցրեց, – հետաքրքիր է, իմ մասին եք մտածում, թե՞ ուղղակի զգվելի է այս տեսարանը:

Ռուբենը ոչինչ չասաց: Մոտեցավ, գրպանից հասեց մի քանի թղթադրամ և մեկնեց մուրացկանին:

– Վերցրեք: Մի որոշ ժամանակ..., – հետո լոեց:

Մուրացիկը քմծիծաղ տվեց.

– Պարոն, որոշ ժամանակ անց էլի նոյնն եմ լինելու:

Ռուբենը շրջվեց ու քայլեց: Մտքերով տարված՝ նա վերադարձավ հիվանդանոց և շտապեց հետաքրքրվել, թե ինչպես է Եսթերը...

Երբ նա ներս մտավ, աղջիկը չհասցրեց աչքերը փակել. ուղղակի խուսափեց նայել բժշկին և գլուխը շրջելով՝ թաքցրեց արցունքները:

Ռուբենը մոտեցավ պատուհանին, փակեց վարագույրն ու թույլ լուսավորության մեջ նստեց աթոռին:

Եսթերի դեմքը վախճանից, թե՞ն ամոթից կարմրեց: Նա նույնիսկ զգիտեր, որ բժիշկը իրենց վաղեմի բարեկամ Ռուբենն է:

– Ինչպես դիմեմ քեզ, – հարցրեց Ռուբենը՝ պարզապես ցանկանալով այն լսել աղջկանից:

Եսթերը լոեց:

– Դեռ շատ երիտասարդ ես, աներևակայելի գեղեցիկ, ինչը քեզ ստիպեց զնալ այդ քայլին, – փափուկ ծայնով իր հարց ու փորձը շարունակեց Ռուբենը, որ, խախտելով լուրջունը, ցանկանում էր Եսթերին դուրս բերել այդ վիճակից: – Հայրդ տեղյակ է, մտածել ես, թե ինչ կլինի, եթե նա վերադառնա ու քեզ տեսնի այս վիճակում, կամ եթե հասկանա, որ ես տեղյակ եմ եղել քո այս հիմարությանը և քողարկել եմ... Քեզ ճանաչելով, իմանալով քո դաստիարակության մասին՝ վստահ եմ, որ դու պատճառ չես ունեցել քեզ վնասելու:

Փորձեց նաև ժպիտով մեղմել նրա լացը, ինչը հաջողվեց, և աղջիկը միայն արցունքախառն ժպիտով պատասխանեց Ռուբենին:

– Սիրահարվել ես որևէ մեկին, – հարցրեց Ռուբենը՝ շարունակելով ժպտալ, բայց վստահ էր, որ մի գաղտնիք է թաքնված նրա արցունքների ետևում:

– Բարդ է, – ասաց Եսթերը, – ես վախենում եմ հայրիկից:

– Կպատմե՞ս, – հարցրեց Ռուբենը:

– Բարդ է անսեր ճանապարհով քայլելը: Ես սխալ էի նրան հասկացել: Գժվել կարելի է, թե որքան միամիտ ենք մենք. փուլ ենք գալիս մեկ-երկու հաճոյախոսությունից, երեք ժայտից և մի կիսատ հանդիպումից...

– Այսինքն՝ նա օգտվել է քո միամտությունից, – անհանգիստ ձայնով փորձեց ճշտել Ռուբենը:

– Ո՞չ... Ամենախին... Նա պարզապես ինձ ընկեր է համարում, ասես ես ավելին եմ իր համար՝ քրոջ նման մեկը, և իմ կյանքում սկսվեց մի նոր շրջան. Ես չընտելացա, չսովորեցի առանց ցավի ընդունել նրա տեսակետը:

– Իսկ նա քեզ առիթ տվել է, որ սեր տածես:

– Ես այլևս չեմ սիրում: Չես զգում:

– Զգում եմ:

– Բայց սա այլ ցավ է... Երբ զգացի, թե ինչպես է դանակը սահում ձեռքերիս վրայով, սարսափելի էր, բայց քիչ հետո մարմինս սկսեց տաքանալ:

– Իսկ եթե մեռնեիր, պատկերացնում ես հայրիկդ ինչ կզաք. Նախ՝ ցավ, հետո՝ ամոթ, – հանդիմանեց Ռուբենը:

– Ուրեմն, դա էր իմ ճակատագիրը, – առանց որևէ զգացմունքի՝ պատասխանեց Եսթերը, – և ես չեմ զղջում. դա դարձավ պատճառ, որ ես սրափվեմ: Ես հիմա հասկանում եմ. կյանքում հաճելին ու գեղեցիկը մենք ենք ստեղծում, ինչպես նաև դժբախտությունը: Մենք ենք միակ հեղինակը այն ամենի, ինչ կատարվում է մեզ հետ:

– Այսուհետև ինչ ես պլանավորում. դո՞ւ կպատմես

հայրիկիդ, թէ ես խոսեմ նրա հետ, – հարցրեց Ռուբենը:

– Ես: Թեև վախենում եմ ցավ պատճառել նրան, – մի փոքր հապաղելով՝ պատասխանեց աղջիկը:

– Ուրեմն, արժե՞ք ինքնասպանության փորձ կատարել և վերածնվել նոր կյանքով, – շարունակում էր հարց ու փորձ անել բժիշկը:

– Բայց ես վերածնվեցի, որպեսզի գնահատեմ կյանքը, – արտասովոր մի համոզվածությամբ արձագանքեց աղջիկը:

– Հետաքրքիր է քեզ հետ զրուցելը, – խոստովանեց Ռուբենը, – հանգստացիր և քնիր: Հենց ցանկանաս զրուցել, ես կգամ:

Թեթևություն զգալով՝ Եսթերը Ժպտաց:

Ցուրտ գիշեր էր:

Ռուբենը փորձում էր քնել, բայց քամին կիսաբաց պատուհանից պաղ շնչով էր ողողել ննջարանը: Ցուրտը պատուհանի ապակուն եղյամ էր հյուսել, դրսից լսվում էր հեռացող ոռնոց: Ռուբենը նայեց ժամացույցին. Երեքն անց էր, ձյուն չկար, բայց դրսում ասես քուք լիներ, և իր համար երկարեց գիշերը... Իսկ երբ թաթախվեց հիշողությունների գիրկը, աննկատ քուն մտավ՝ մանկան անխոռվ ու հանգիստ քուն:

Լույսը բացվեց, ինչպես փոթորկին հաջորդող մի թափանցիկ խաղաղություն:

Կիրակիները Ռուբենի համար օրինյալ օրեր էին:

Լոգանում հայկական եկեղեցի չկար, բայց այն եկեղեցին, որ այցելում էր Ռուբենը, հոր նման իրեն պարուրում էր քրիստոնեական խունկի մառախուղով: Նա ամեն կիրակի ներկա էր գտնվում

պատարագներին, թոթափում ամբողջ շաբաթվա հոգսերը, թեթևանում և աշխատանքային շաբաթն սկսելու համար մաքրվում ներսից ու դրսից:

Ժամերգությունից հետո դուրս եկավ եկեղեցուց և զնաց մի նեղլիկ կածանով, որը տանում էր եկեղեցու ետնամաս:

Եվ քայլում էր այդ կածանով, ասես ճեմափողոցով, որն իրեն հասցնելու էր դրախտ...

Եկեղեցու շուրջըլորը փոքրիկ տնակներ էին, իսկ շրջապատում՝ միայն սաղարթախիտ անտառներ: Ռուրենը նստեց մի քարձը քարե աթոռի վրա, որտեղից երևում էր Լոգանն իր ամբողջ հմայքով. արևը կաթում էր քարձը սարերին, իսկ երկինքը ծանրանում էր գորշ ամպերով: Եվ օգտվելով ժամանակի փոքր հնարավորությունից՝ նա սկսեց ուշադիր զննել տարածքը, ծոցագրավանից հանեց նոթատետրը և արեց մի քանի ուրվագծային նկարներ: Սկզբում պատկերեց փոքրիկ, ծոնոված տնակներ, հետո անհարթ գծեր՝ իբրև ամպերից կախված ծառեր, և մտքում ասաց. «Սա կարելի է անել առանց ավելորդ շտապողականության և վարպետորեն»: Իսկույն փակեց նոթատետրը, դրեց գրանն ու խորագնին հայացքով նայեց հավատացյալներին, որ եկել էին եկեղեցի՝ երևի մի պատասխան գտնելու իրենց անվերջանալի հարցերին...

Եկեղեցու ժամհար Ֆրեդ Զորդանը կրոնասեր, խստարար մարդ էր՝ քարձրահասակ, շագանակագույն աչքերով, սպիտակ և ալեխսան մազերով, աչքերն այնքան ժպտուն, ասես ոչ ցավ էին տեսել և ոչ էլ դառնություն: Նա կանգնած էր քարերի հեռադիր քարձունքին, թիկունքը՝ Ռուրենին:

Մուտքը ետնաբակ արգելված էր, բայց Ռուբենն առաջացավ դեպի ժամհարը, որի համար երկար ժամանակ աննկատ էր մնացել ինքը: Նա վաղուց էր ճանաչում Ֆրեդ Զորդանին, որ երկար տարիներ եկեղեցու սպասավորն էր և ընտանիք չուներ: Եկեղեցին ժամատանը նրան մնալու սենյակ էր հատկացրել՝ որպես կացարան:

Ռուբենը ձեռքը դրեց Ֆրեդի ուսին:

– Հորեղբայր Ֆրեդ, բարի կեսօր:

Վերջինս ետ նայեց շփոթված ու բարի ժպիտով և.

– Ռուբեն, տղան, ինչպես ես, – ասաց, – Նորից կիրակի է, և դու, ինչպես միշտ, Տիրոջ տանն ես:

– Փառք Աստծո, լավ եմ: Ինչպես է Ձեր առողջությունը:

– Ես տարիքս առել եմ, լավ թե վատ, կյանքս ապրել եմ, տղան:

Հետո լոեցին մի քանի վայրկյան, շրջվեցին ու հայացը նետեցին դեպի ձորը, որտեղից բարձրանում էր առվակների աղմուկը, որ քչքալով հոսում ու թափվում էին իրենցով հագեցող գետը, որի ջուրն այնքան բազմերանգ էր, ասես ծառերի բեկրեկվող անդրադարձումները ներկանյութեր լինեին, իսկ բնությունը՝ ծերացած նկարիչ: Լոգանի աշունը կարծես գույներով լի մի վրձին լիներ, որն ամենուրեք տարածում էր չխամրած կանաչի բազում երանգներ:

– Հորեղբայր Ֆրեդ, ձորում որս կարո՞ղ ենք անել:

– Կարող ենք, Ռուբեն, գարնան շեմին միասին կգնանք:

– Որսորդություն սիրո՞ւմ եք:

– Այո, բարեկամս, մեզ մոտ՝ Շվեյցարիայում, տղամարդիկ որսորդ են ծնվում:

– Իսկ ձորում ի՞նչ կարող ենք որսալ, – իր հարցն ու փորձը շարունակեց Ռուբենը:

– Քարայծ, արջ, զայլ, կարմրամորթ աղվես...

Զրույցը երկարեց ու ձգվեց ժամից ավելի:

Վերջապես Ռուբենը հրաժեշտ տվեց Ֆրեդին և շտապեց տուն: Տունդարձի ճանապարհին նրան հանդիպեց մի տարեց կին: Հավանաբար ճանաչեց, մոտեցավ, ջերմ բարևեց և.

– Լավ համբավ ունեք, – ասաց բարի ժպիտով, – պնդում են, որ Դուք Լոզանի հիվանդանոցի ամենալավ բժիշկն եք և, բացի այդ, ունեք կանոնավոր ու առարինի վարք: Քույրս՝ Մագդան, Ձեր հիվանդն էք: Իսկ իմ կողմից ավելացնեմ, որ դրա հետ մեկտեղ անչափ հմայիչ տղամարդ եք:

Ռուբենը չիշեց Մագդային, բայց ելնելով պարտքի զգացումից՝ այնուամենայնիվ հարցրեց.

– Այժմ ինչպես է իրեն զգում Մագդան:

– Լավ է, – կարճ պատասխանեց կինը:

Ռուբենը ներողություն խնդրեց ու շտապեց տուն:

Ճանապարհին նրան պատահական հանդիպեց Բեռնարը, և նրանք քայլեցին մշուշում երևացող եղնախների ուղղությամբ:

Եթե դուռը բացեցին, Բեռնարը զարմացած նայեց սենյակի խառնաշփոթությանը:

Ռուբենն սկսեց արագ հավաքել սեղանին թափված գրքերը և շփոթված ասաց.

– Ներիր, բարեկամս, երևի եղբայրս է սենյակում ստեղծագործել:

Բեռնարը չթաքցրեց քմծիծաղը.

– Նույնիսկ գլխնթվեյնը չի վրիպել աչքից: Իսկապես որ նա քո հակապատկերն է:

Այդ ասելով՝ նա գրասեղանից վերցրեց թղթի մի

թերթիկ, որի վրա գրված էր մի քանի տողանոց բանաստեղծություն և հարցրեց:

– Հեղինակը Սևակն է:

– Սևակը: Որքան էլ տարօրինակ է, եղբայրս աշխարհիկ կյանքում կապված է արվեստի ու գրականության հետ. սիրում է գրել, նկարել...

– Երբեք չես պատմում նրա մասին: Ինչ է, դուք անհաջող եք, խնդիրներ ունեք, որ չես ծանոթացնում:

– Դե, որքան էլ նման լինենք արտաքնապես, հոգեպես շատ տարբեր ենք. – բարկացած պատասխանեց Ռուբենը:

– Դե լավ, տղա է, էլի, – ասաց Բեռնարը և անցում կատարեց իրենց քժշկական գործերին, ինչից հետո Ռուբենը ճանապարհեց ընկերոջն ու խոր շունչ քաշելով՝ սկսեց անմիջապես հավաքել սենյակը:

Պահարանի մի կողմում գեղեցիկ դասավորեց Սևակի հագուստները, իսկ մյուս կողմում՝ տեղավորեց իրենը: ՀԱԳՈՒՍ ու ՎԱՐՔ: Բաներ, որոնք քաղաքին հնարավորություն էին տալիս նույնիսկ հեռվից անվրեալ տարբերել երկվորյակներին: Սևակը նախընտրում էր հազնվել այնպես, ինչպես հազնվում էին գրեթե բոլոր արվեստագետները՝ երաժիշտները, նկարիչները, քանդակագործները... և, իհարկե, բանաստեղծները: Որպես կանոն՝ Սևակն ամունը գերադասում էր լայն ու վառ վերնաշապիկներ, որոնք համապատասխանում էին կոշիկների և տարատների ճացող երանգներին, իսկ տարվա ավելի զով եղանակին նրա զգեստը լրացվում էր արտաքին հագուստով, որով պմավում էր Մոնմարտրի բոհեմիան: Փարիզյան նորաձևության վերջին ճիշն առանց դժվարության և որ ամենակարևորն է՝ արագությամբ հասնում էր Լողանի նորաձևության

սրահներ: Ինչ վերաբերում է Ռուբենին, ապա զուսպ հագուստի ազատությունը, որ ինքն իրեն թույլ էր տալիս կիրակնօրյա զբոսանքներում, ընկերակցող աքսեսուար ձեռնափայտն էր ու գլխարկը:

Եղբայրները չեին սիրում խոսել միմյանց մասին, և եթե հանկարծ նրանցից մեկի ներկայությամբ հապճեպ զրույցը գալիս հասնում էր երկվորյակի անձին, ապա այդ մասին իմացող զրուցակիցները խոսքը փոխում էին դեպի այլ հարթություն: Այս գնահատականով հասարակության մեջ շրջում էին շատ տարրեր բամբասանքներ: Ոմանք պնդում էին, որ Եղբայրների հարաբերությունների սրման պատճառը բնական է, և նրանց մեջ հոգսոր ազգակցության բացակայություն կա, և որ Ռուբենի «հետիտնը» համատեղելի չէ Սևակի ըմբոստ բնույթի «նժույգի» հետ, ինչպես անհնար է ներդաշնակությունը ձիու և դողացող եղնիկի միջև:

Մյուսները՝ հիմնականում կանայք, համոզված էին, որ երկվորյակների միջև տարածայնությունների պատճառն այն է, որ նրանք ժամանակին անզոր են եղել «կիսել» ինչ-որ մի կող: Կամ գուցե կինը խճճվել է նրանց միջև, ինչը, հաշվի առնելով նրանց խելահեղ նմանությունը, զարմանալի չէ. ոչ բոլոր երկվորյակներն են այդքան նման և միննույն ժամանակ այնքան տարրեր, ինչպես Սևակն ու Ռուբենը: Սևակն ինքնարուիս է, իսկ Ռուբենը, ճիշտ է, ընկերասեր է, բայց զուսպ է և ծայրաստիճան ճիշտ:



Երեկոյան ժամերին Լոզանի աշունը հաճախ լալիս է իբրև մի մանուկ: Այդ օրը ևս անձրևը սևացրել էր գլաքարե փողոցները, և քամին խաղ էր բռնել Սևակի անձրևանոցի հետ: Նա հենվել էր կամրջի փայտե բազրիքին և նայում էր վարար գետի ալիքներին, կլոր լապտերի լույսը կաթում էր խիտ ծառերի աներևութացած ճյուղերից, և անձրևաջրի մեջ տևերի բեկրեկվող ստվերները բնօրինակների հետ ասես ձգվում էին դեպի երկինը:

Թանձրացող մթության մեջ Սևակը վայելում էր գիշերային փողոցի զով շունչը՝ բարձր կրկնելով մի քառատող իր սիրո հուշերից: Նա այնքան էր տարվել բանաստեղծությամբ, որ նոյնիսկ չէր էլ նկատել, թե երբ է հեռացել կամրջից ու հասել գրոսատեղիի հարևանությամբ գտնվող հին գինետան շեմին, որի պատուհանից ցոլցլում էին արդեն գինովացած տղամարդկանց ու կանանց ժպտուն աչքերը:

Նա մի քանի անգամ թափահարելով փակեց անձրևանոցը և վերարկուն ու գլխարկը փոխանցելով սպասարահի աշխատող աղջիկներից մեկին՝ առաջացավ դեպի սակավամարդ սրահը, որտեղ արդեն ճանաչում էին Սևակին և հաճախ էին նրան նկատում անկյունում ստեղծագործելիս: Բայց Սևակն այսօր գրելու տրամադրություն չուներ և նստեց սրահի լուսավոր հատվածում, հետո ձեռքի թերև շարժումով մոտ կանչեց մատուցող աղջկան ու գինի պատվիրեց:

Խավար պատուհանից այն կողմ մաղում էր անձրևախատն զյունը՝ ամրապնդելով նրա՝ հյուրնկալ մթնոլորտում գտնվելու ցանկությունը:

Առավոտյան ութն անց երեսուն էր, երբ Ռուբենը հիվանդանոցի մուտքի մոտ հանդիպեց փոստատարին, որն ամեն առավոտ ընդունարան էր բերում քաղաքային օրաթերթը:

Միջանցքում աղմուկ էր: Բարձր ճայները հասնում էին հիվանդասենյակի կողմից, որտեղ հավաքվել էին թե՛ բուժանձնակազմը և թե՛ հիվանդները:

Ռուբենն արագացրեց քայլերն ու տեսավ Բեռնարին, որը ձեռքերը կրծքին ծալած՝ կանգնել էր հիվանդի գլխավերևում:

Բոլորի աչքերում գրված էին անլուծելի հարցեր, իսկ «պատասխանողն» անշարժ պառկած էր մահագույն դեմքով, որի ակոսներին իր անջնջելի հետքն էր թողել ժամանակը և նստել ճերմակ ծերունական մազերին: Սպիտակ սավանը մինչև պարանոցը ծածկել էր նրա անհոյս ու անշարժ մարմինը, որը մահվան թմբիրում էր:

Երբ Ռուբենը մոտեցավ պառկածին, դեմքն իսկույն այլայլվեց և, չհավատալով տեսածին, լայն բացեց աչքերը. հորեղբայր Ֆրեդն էր՝ եկեղեցու սպասավորը, միակ մարդը, որը նեղության ժամին ձեռք էր մեկնել իրեն: Նա տեղում քարացավ և հիշեց իրենց առաջին հանդիպումը...

...«Սաոցալուայի վերածող» ցուրտ կիրակի էր:

Ինքը չէր ել գիտակցում՝ մարմինն է մինչև ոսկրածուծը սառել, թե՞ սոսկ մարմնականին խառնվել է հոգու ցավը: Ուկորներն ասես ապակուց լինեին, որ շլսկշլսկում էին ցրտից: Այս անգամ որոշել էր աղոթատուն գնալ և Տիրոջը դիմել մի մեծ խնդրանքով. դեռ մի քանի տարի էլ կար, որ ուսումնառությունն ավարտեր, իսկ թոշակը հազիվ էր բավականացնում հանրակացարանի վճարին:

Հուսահատությունից խեղդվելով՝ ինքը ծնկել էր եկեղեցու խորանի առջև և Աստծուց ելք էր խնդրում...

Պատկառելի տարիքով մեկը ձեռքը դրեց ուսին. Ֆրեդ Զորդանն էր, որ ոտքի կանգնեցրեց իրեն և օգնության չնշին խորհրդով հրավիրեց սեղանիկի մոտ, թուղթ ու գրիչ տվեց և, առանց որևէ ավելորդ բան ասելու, խնդրեց գրել այն, ինչ կասի ինքը, և ավելացրեց, որ դա այս ծանր պայմաններում միակ օգնությունն է:

Ու ինքը շփոթված սկսեց գրել.

16 փետրվար, 1908, Լոզան:

«Ամենասպասիլի S. S. Մաղաքիս սրարդիալք Օրմանյանին,

Կ. Պոլիս:

Բարեգործ հայր,

Ձերդ սրբազնության ներողությունը կհայցեմ Ձեր բարձր ուշադրությունը վայրկյան մը հրավիրելու համար նվասու ծառայիս վիճակին վրա: Խշվառության վեցին աստիճանի մեջ է, որ կգննվիմ, աննեցուկ ու գրեթե անոթի. առանց Ձեր բարձր միջամտության՝ ինձի կմնա մեռնի անսպադ. կապահանձն Ձեզի, Ամենողորմ հայր, վայրկյան մը մրածեիք իմ վրաս. Դուք այնքան աղքատ ուսանող-ներու պաշտպան գրաք այս տարի. արցունքներու լեզ-վովը կաղաչեմ Ձեզի, Ամենասպասիլի հայր, փոքրիկ, շան փոքրիկ օգնություն մը գրնեիք ինձ համար: Երկու տարի միայն մնաց բժշկությունս ավարտելու, ու ես չեմ ուզեր ասպարեզ թողով կիսավարդ այնքան տառապանքներեւ ու այնքան հաջողություններեւ վերջը: Չնշին նպաստ մը բանի է ինձ, օրական չոր հացի նպաստ մը: Ձեր մեկ բառը

կրնա զիս փրկել այս հետին թշվառութենես: Ամենագոյնը հայր, Ձեր ծունկերուն կիսարիմ ու չեմ ուզեր հուսահայր վերադառնալ Ձեր գիրկեն:

Ձեր թշվառ ծառան՝  
Ծուրեն Հ. Չիլինկիրյան»:

Ֆրեդ Զորդանի վախճանը մեծ ցավ պատճառեց Ծուրենին: Ծերունու հուղարկավորությունից հետո հոգեկան ցնցումից սթափվելու համար փորձեց մի քանի օրով հանգստանալու մեկնել:

Ժամանակն անցնում էր, օրերն իրար էին հացորդում ավագե ժամացույցի հոսքով: Արևն արդեն տաքացնում էր. գարունն անմիտ կերպով կյանքի խոստումներ էր շոայլում: Օդը լցվել էր խիտ ու դալար խոտի բույրով: Շուրջը թոքեր լցվող գարնան օդի թարմություն էր:



Լուսաբաց էր. ամպերի ետևից արևի ասեղները ծակծկում էին իրենց սուր ու ոսկե շողերով և ցանցածն վարագույրի բացվածքից ոսկեփայլ զցում Յանսիի թարթիչներին: Դեռատի օրիորդը կկոցեց աչքերը, փորձեց ձգձգել երանավետ քունը, ձեռքի ափով դեմքը թաքցրեց արևի թթուացնող ծակոցներից, որոնք ասես երկնքի կողմից հայելախաղ լինեին օրիորդի հետ: Արեգակի խաղի հետ մեկտեղ նրան վերջնականապես արթնացրեց սպասուիի էմմայի՝ կողքի սենյակից եկող բարձր ձայնը: Կիսարթուն Յանսին, երբ հիշեց, թե ինչ կարևոր օր է սպավում, հազիվ զապելով հրճվանքի ճիշը, զապանակի նման վեր ցատկեց անկողնում, ուղղվեց, նստեց

մահճակալին, ափերով գրկեց այտերը և սկսեց մտածել նախորդ օրը կատարվածի մասին:

Հավատացե՛ք, իսկապես գեղեցիկ է այն կի՞նը, որն ինչպես գարնանային բնությունը, գեղեցիկ է արքնանալիս, առավոտյան, և Յաննի Ապահելն այս չգրված օրենքի կենդանի մարմնացումն էր՝ գեղեցիկ, նուրք ձեռքեր, սպիտակ և քնքույշ պարանց, սև սաթե մազեր, որոնք շրջապատում էին դեմքը և ցանկացած մեկին գերի վերցնող շողշողուն, խոշոր աչքեր: Նա պրուսական ազնվական ընտանիքի դուստր էր, հայրը՝ մարտերում կոփված գնդապետ, որի խոսքը հարգում էին թե՛ ընտանիքում, թե՛ տանից դուրս:

Յաննին և եղբայրը եկել էին Լոզան՝ ուսանելու, և ծնողները որպես հարմարավետ կացարան ընտրել էին բարեկամ Շնայդեր ընտանիքի տունը: Սակայն եղբայրը, որ նոր էր Վայելելու իր երիտասարդական ազատությունը, որոշեց բնակվել առանձին, իսկ գնդապետ հայրը, դեմ չլինելով, վստահեց որդուն: Դուստրը ապրելու էր Վոլֆգանգ Շնայդերի տանը, որը նաև Յաննիի հեռավոր մորեղբայրն էր. ծնողներն ավելի հանգիստ կլինեին, եթե նա գտնվեր հուսալի ձեռքերում:

Փշում էր լուսաբացի ջերմ զովը, գարնանային նորածիլ ծաղիկների բույրը հաճելի մթնոլորտ էր ստեղծել, և Շնայդերներն այգում՝ թեյի սեղանի շուրջը, խրատում էին օրիորդների նկատմամբ իրեն խիստ ամբարտավան պահող իրենց որդուն՝ Հերբերտին, թե նա ինչպես պետք է իրեն դրսնորի Յաննիի հետ ծանոթանալիս:

Նա նստել էր ճնճաթողին և ձանձրույթով սպասում էր, թե ով է լինելու այդ աղջնակը, ում հետ,

ըստ ծնողների պահանջի, ինքը պետք է լինի «ան-չափ սիրալիր ու հոգատար»:

«Այօր շատ հետաքրքիր կամ շատ տաղտկալի օր կլինի», – մտածում էր Հերբերտը, երբ հայացք նետեց այգու դռան կողմը, որ բացվեց, և իր ամբողջ հմայքով ներս մտավ Յաննին:

Շատերի ճյուղերի միջով հետևելով նրա դանդաղ ու երազկոտ քայլվածքին՝ Հերբերտը զարմացած ու շփոթված հայացքով նայեց Յաննիին՝ անչափ գեղեցիկ, արևի շողերը կաթնագոյն դեմքի ու սևափայլ մազերի վրա վերցրած աղջկան, ու... առաջին իսկ հայացքից սիրահարվեց նրան:

Ըսդունելով զարմուհուն՝ Շնայդերները նրան սիրեցին իրենց դստեր պես: Ինչ վերաբերում է Հերբերտին ու նրա՝ սիրուց խենթանալուն, որն սկզբում հաճելի էր ու շոյում էր դեռատի աղջկա ինքնասիրությունը, շուտով սկսեց ձանձրացնել ու նմանվեց Յաննիի գլխավերևում ճոճվող դամոկլյան սրի:

Օրերն անցնում էին, բայց Յաննիի սրտի սառուցը չէր ուզում հալվել, իսկ Հերբերտը գնալով համոզվում էր, որ Յաննին միակն է այն բազում աղջիկներից, որ կարողացել է իր հոգում առաջացնել չդադարող փոթորիկ: «Որքան ժամանակ է պահանջվելու, որ Յաննին նոյնպես զգա սրտի թրթիռ և, փոխադարձ զգացմունքներ տածելով, ցանկանա ապրել ինձ հետ», – անհամբեր մտածում էր խենթի նման սիրահարված Հերբերտը՝ գերմանացի դիվանագետ, Արգենտինայում Գերմանիայի դեսպան Բարոն Հանս ֆոն Վանգենհայմի քրոջ որդին, որը որոշել էր տանուլ չտալ և պայքարել մինչև ճակատագիրը Յաննիի սիրտը իրեն կհանձնի: Ասշուշ, Յաննին կշարունակեր ապրել նրանց մոտ, եթե

չիներ Հերբերտի այդ անսպառ ու հոգնեցնող սերը, իր ամեն քայլափոխին հետևելը, որ ամեն օր ավելի ու ավելի էր նյարդայնացնում և խառնում Յաննի մտքերը: Իսկ երբեմն էլ խեղդում էր իր ներկայությամբ՝ բառացիորեն աղջկան չտալով ազատ շնչելու հնարավորություն, որը փորձում էր ամեն կերպ ազատվել Հերբերտի ծանծրալի սիրուց:

Յաննին հաճախ խուսափում էր հանդիպում-ներից՝ պատճառաբանելով, թե իրեն վաս է զգում: Հերբերտին բնավ չէր հետաքրքրում, թե ինչ է մտածում Յաննին. Նա ձգտում էր ցանկացած ձևով արժանանալ աղջկա սիրուն, իսկ Յաննին ամեն կերպ փորձում էր այնպիսի մի ծրագիր մշակել, որ օր առաջ դուրս գա Շնայդեր ժառանգի տիրապետության տակից:

Հերբերտի ծնողները որդու վերաբերմունքից իսկույն գլխի էին ընկել, որ տղայի կյանքում ինչ-որ անսովոր բան է կատարվում:



Իր խիստ ներկայությամբ ընտանեկան ճաշկերույթը պատված պարոն Հանս ֆոն Վանգենհայմը՝ Հերբերտի մորեղբայրը, ուշադիր տնտղում էր զարմիկի սիրառատ վերաբերմունքին արժանացած Յաննին, որը, «հակառակ զարմիկի թափած ջանքերի, այնքան սառն էր նրա նկատմամբ»: Նա անգամ հասցրեց զարմանալ, որ իրենց գեղեցկադեմ ժառանգը, որ դարձել է շատ աղջիկների երազանքը, իսկույն ծնկի է եկել իր անպատճախան սիրո առջև... Բայց չշտապեց այնպիսի եզրակացության հանգել, որը կվնասեր Հերբերտին:

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՐԱՅԻ ՎՐԱՅԻ ՎՐԱՅԻ ՎՐԱՅԻ

Սկզբնական շրջանում Յաննին ոչինչ չէր պատմում ծնողներին, բայց, վերջիվերջո, որոշեց զրուցել մոր հետ: Ի զարմանս Յաննիի՝ Հերբերտի մայրը՝ ֆրառ Էռնան, օրեր առաջ փորձել էր ամեն ինչ պատմել նրան՝ հօգուտ իր որդու, և նրան նախապատրաստել երիտասարդների հեռավոր ամուսնությանը: Սակայն ֆրառ Ապակելը, ինչ-ոք եզրահանգումներից առաջ համբերատար սպասում էր դստեր՝ անհնար թվացող սիրո պատմության մեկնաբանությանը: Եվ երբ մայրը լսեց Յաննիին ու հասկացավ, թե Հերբերտն ինչպես է շանում շահել աղջկա համակրանքը, երբ վերջինս, դեռևս չպատկերացնելով իրենց համատեղ կյանքը և կենցաղավարությունը ու գտնվելով հյուրի կարգավիճակում, անպարկեշտ է համարում նրա հետ սիրախաղ սկսելը և ցանկանում է հեռանալ այնտեղից, անչափ զարմացավ դստեր խոհեմության վրա և խոստացավ զրուցել հոր հետ: Ամուսինը՝ որպես իսկական պրուսական գնդապետ, հարգելով չգրված օրենքները, գովեց դստերը և մեծ գոհունակությամբ խոստվանեց, որ Ապակել կլանի արյունը լավ ձեռքբերում է: Ստանալով ամուսնու համաձայնությունը՝ Յաննիի մայրը խորհրդակցեց ֆրառ Էռնայի՝ Հերբերտի մոր հետ, նա էլ իր հերթին ամուսնուն հայտնեց զարմուհու որոշման լուրը՝ համոզելով նրան, որ եթե դա Յաննիի խստության միակ պատճառն է, ապա նա կարող է տեղափոխվել եղբոր վարձակալած բնակարան՝ մնալով իրենց տեսադաշտում:

Յաննին մտածելու հայացքը գամել էր դռանը և ուշադիր լսում էր, թե ինչ է կատարվում դրանից այն կողմ: Լսած խոսակցությունը նրան այնքան էր զայ-

բացրել, որ մեծ ցանկություն ուներ լոեցնել Էմմային, բայց դեռ փորձում էր համբերատարությամբ լսել նրա և ֆրառ Էռնայի սպասուինու երկխոսությունը:

– Պետք չէ շտապել, օրիորդը կարող է մի քիչ էլ քննել, դեռ ժամանակը կրավականացնի, հանդիպումը կեսօրին է, – ասաց Էմման:

– Ձեր գործն է, – դժգոհ ծայնով պատասխանեց սպասուինն, – սակայն իրերն այնքան շատ են, որ ցանկալի կլիներ նրա մասնակցությունն այս ամենին, որպեսզի նա ընտրի, թե ինչն է հարկավոր առաջին հերթին տեղափոխել նոր բնակարան, իսկ ինչը կարող է դեռևս մնալ այստեղ:

Իսկ Յաննիին առաջին հերթին անհրաժեշտ էր ազատություն, որի համար նա պատրաստ էր հրաժարվել բոլոր մանրութներից, քննել մերկ մահճակալի վրա, չունենալ այն բազմաթիվ թանկարժեք իրերը, որոնք ամեն պատեհ-անպատեհ առիթներով նվիրել էր Հերբերտը: Բայց կար ևս մեկ փաստ. Յաննին պատրաստ չէր վերջնականապես հրաժարվել Հերբերտի հետ շփումից, այլ մտադիր էր շարունակել հանդիպել, բայց ազատությունից հետո: Ինչպես և բոլոր օրիորդները, որոնք առաջնորդվում են բանականությամբ, նա գործնականում հասկանում էր, որ վաղ թե ուշ ստիպված է լինելու ամուսնանալ ինչ-որ մեկի հետ, իսկ Հերբերտն ամենավատ տարբերակը չէր:

– Տասը տարի է, ինչ ապրում եմ նրա կողքին, ուստի՝ գիտեմ նրա բոլոր կարիքները, – լսվեց Էմմայի ծայնը:

Չցանկանալով լսել այդ դատարկ բանավեճի շարունակությունը՝ Յաննին դուրս եկավ պատշգամբ, որտեղ շուրջը լուսություն էր, և պատերն ականջնե-

ըլ սրած՝ լսում էին աղջկա սրտի աշխատանքը, որն ամենակին էլ սիրառատ բախում չէր, այլ վարկյանացույցի ալաքի հանգույն սովորական, հանդարտ թխկթխւկոց: Նա հենվեց քարե բազրիքին և հայացքը նետեց տուն շտապող Հերբերտին, որն անչափ տիսրել էր Յանսիի հեռանալու պատճառով:

Շուտով երիտասարդի ոտքերի ծանրության տակ դժգոհ ճողոցով ճոճվեցին փայտե աստիճան-ները, և դուռը շտապ թակելուց հետո, նա, առանց հրավերի, հայտնվեց Յանսիի սենյակում: Նրա դժգույն ու մոայլ դեմքին իջավ մի կիսաժայիտ, երբ տեսավ իր կուրքի՝ քամուց օրորվող սև վարսերը ու, կորցնելով ինքնատիրապետումը, նետվեց դեպի պատշգամբը և ամուր գրկեց աղջկան:

Կարուսն այնքան մեծ էր, որ Յանսին ինքն էլ պատասխանեց գրկախառնությանը:

– Յանսի՛, – դողացող ձայնով շնչաց երիտասարդը, – Ձեր հեռանալով՝ ես կկորցնեմ հանգիստու, և գուցե ապարդյուն են խոսքերս, բայց ինձ համար կյանքը կդառնա ահավոր ու անգույն....

Զրույցը խախտվեց ժամացույցի տասնմեկ զարկերով, բայց, միևնույն է, արդեն ամեն ինչ որոշված էր, և Յանսին, հրաժարվելով արդեն իսկ կորցրած ակներս հոգեկան խաղաղությունից, չէր կարող տրվել գեղեցիկ բառերին:

– Մենք վերջին անգամը չենք, որ հանդիպում ենք, Հերբերտ, և պետք չէ շտապել ու տարտամ գուշակություններ անել: Ես քաղաքում եմ, և հանդիպում ենք էլ կախված են Ձեր հետագա պահվածքից, – ասաց օրիորդը՝ շրջվելով սեղանիկի կողմը, որի վրա դրված էին մեկ տասնյակից ավելի գրքեր: Վերցրեց նոթատետրը, գրեց իր հասցեն և մեկնեց Հերբերտին՝

մի հպանցիկ հայացք նետելով պատուհանից դուրս, որտեղ Էմման տան աշխատողների հետ կառքի մեջ էր դնում իր բազմաթիվ ճամպրուկները...

Աղջկա մտքերը շարունակում էին թափառել ճակատագրին անհայտ մի ճանապարհով, բայց ինչոր մի վեցերորդ զգայարան, որը հատուկ է միայն կանանց ու փորձառու հանցագործներին, հուշում էր Յաննիին, որ իր կյանքում հայտնվելու է մեկ այլ կատարելություն, որով իմաստավորվելու է իր կյանքը:

Մինչ ճամպրուկները կտեղափոխվեին եղբոր վարձակալած բնակարան, նա կեսօրից հետո՝ ժամը մեկին, հանդիպում ուներ մտերիմ ընկերուին հետ:

Հյուրասենյակի ժամացույցը ցնցվեց մեկ բարձր զարկով, և Յաննին, ներողություն խնդրելով Հերբերտից, շտապ դուրս եկավ տանից և, ինչպես սպասվում էր, տասը րոպեում հասավ Ալե 4 փողոց:

Պինտե Բեսսոն կիսաշրջանաձև և կիսախավար քարե պահոցներով գինետուն-սրճարանն արձակում էր խոնավ փայտահոտ: Երբ ներս մտավ, տապակած մսի և պանրի բույրը գրգռեց աղջկա քաղցը, որը մինչ փորձում էր տարբերել հոտերը, տեսավ ձվաձև սեղանի մոտ նստած ընկերուին՝ Ռոզա ֆոն Շմիդտին: Երկար բանավիճելուց հետո ընկերուիները պատվիրեցին դառը գինի և լցոնած նապատակ: Մինչ պատրաստ կլիներ ախորժակ գրգռող ուտեստը, Ռոզան իր սովորական հարցախեղի չանելու տարբերակով, ինչպես ասում են «ցուլին գետին խփեց՝ եղջյուրներից բռնելով»:

– Երեկ Հերբերտը կանգնել էր ճանապարհին ու խնդրում էր, որ քեզ ինչ-որ կերպ համոզեմ մտա-

փոխվել: Գաստոնը նրան հազիվ հեռացրեց, – ասաց Ռոզան:

– Հորեղբայր Հանսը պնդում է, որ այստեղ արդեն մի քանի դար է, ինչ ոչինչ չի փոխվել, – ասաց Յաննին՝ նայելով շուրջը:

– Մի խուսափիր պատասխանից, – մատը թափ տվեց Ռոզան:

– Ի՞նչ ես ուզում ինձանից, – հարցրեց Յաննին:

– Առանձնապես՝ ոչինչ, – ուսերը թոթվեց Ռոզան, – բավական է խոշտանգես Հերբերտի սիրտը:

– Նա ինքն է իրեն խոշտանգում, – անտարբեր ձայնով պատասխանեց Յաննին:

– Կամ քաց թող նրան, կամ տուր դրական պատասխան, – խստորեն պահանջեց Ռոզան:

– Ես չեմ պահում նրան, – չոր պատասխանեց Յաննին:

– Քո ձայնն ավելի դառն է, քան իմ գինին, – ասաց Ռոզան՝ գլխով ցույց տալով բաժակը:

Ճաշելու ժամանակ Յաննին Ռոզային հնարավորինս մեղմ խնդրեց, որ գոնե այսօր մի ավելորդ անգամ ևս չհիշատակի Հերբերտի անունը, մինչև ինքն էլ հասկանա, թե ինչպես կարող է ընդունել կամ հրաժարվել նրանից:

Եվ երկար, շատ երկար զրույցից հետո նրանք հրաժեշտ տվեցին միմյանց:

Յաննին վաղուց չեր զրունել միայնակ և մի վայրկյան իսկ չմտածելով ուր գնալու մասին՝ դուրս եկավ ու անշտապ ուղղվեց դեպի հրապարակ՝ հոգեպես այնքան անհոգ, որ ժամանակի մասին մոռացած՝ քայլեց դեպի մայրամուտ:

Երկինքը կարմրել էր, ամպերի եզրերից արևի ոսկի էր հոսում, և Յաննին, ասես յոթերորդ երկնքում,

ազատության առաջին համը ըմբոշխնելու համար սպառնում էր դեպի երանության երկինք՝ մի զգացմունքով, որ շուտով պիտի իրեն ընդառաջ գա նա՝ անսպասելին, ում զգում ու լսում էր արդեն իսկ վերին՝ Աստծո ձայնով, և ինչը երջանկության ալիքով էր ողողում նրա ամբողջ էությունը...

Եվ մինչ Յաննին գրունում էր երեկոյի խոնավ բույրը դեմքին վերցրած, Հերբերտը խուճապի մեջ էր, նրա սատանայական մտքերից անգամ կարելի էր գուշակել, որ այս չակերտավոր ազատությունը միայն ավելի է բորբոքելու իր սիրո կիրքը դեպի Յաննին: Առաջին բանը, որ մտածում էր, այն էր, որ պետք է ստեղծել մի իրավիճակ, որ Յաննին իր մեջ բացի սիրահարից տեսնի նաև առնական, հաղթանակող մի տղամարդու:

Բավականին օրեր էին անցել Յաննիի հեռանալուց, երբ Շնայդեր-Վանգենհայմ ընտանիքները նրան հրավիրեցին ճաշկերույթի, որպեսզի լրջմիտ վերաբերմունք ցույց տային Յաննիի և Հերբերտի հարաբերություններին: Եվ շնայած երկու՝ և՛ Շնայդեր, և՛ Ապակել ընտանիքներն էլ սպասում էին իրենց ժառանգների ամուսնությանը՝ Յաննին շարունակում էր լուր դիմադրել, քանզի նրա սիրտը երբեք չէր թրթռում Հերբերտի ներկայությունից: Իսկ նա հենց այդ կերպ էր պատկերացնում սերը. երազելով հանդիպել այն միակին, որի կողքին հոգում կթռվուան թիթեռնիկները, իսկ աչքերում, մոռացության մատնելով ժամանակի զգացողությունը, կրոցկլտա սիրո աստղաբույլը:

Ինչևսէ, կամենո՞ւմ էր օրիորդը դա, թե ոչ, Հերբերտի տանը, այնուամենայնիվ, տիրում էր մեծ խառնաշփոթ, որի պատճառը ինքն էր՝ Յաննին:

Հերբերտը երեկոյի համար ոտքի էր հանել բոլոր սպասավորներին, և հյուրասրահում խւկական եռուցեղ էր. նրան թվում էր, թե հյուրասենյակ թափանցող այզու թարմ օդն այնքան էլ թարմ չէ, թե հայելու պես փայլող ճերմակ մարմարե հատակն այնքան էլ լավ փայլեցված չէ, իսկ մեծ, լուսավոր ջահերի լույսն այնքան էլ պայծառ չէ և չի հասնում այն հատվածին, որտեղ պետք է նստի Յաննին, և հրամայեց, որ հյուրասենյակի ամեն մի անկյունում, որտեղից կարող են երևալ Յաննիի փայլուն աչքերը, տեղադրվեն լուսամփոփներ, շուրջողորը՝ անուշահոտ ծաղիկներ, իսկ վարագույրը ասեղնագործված լինի նուրբ ու թույլ շուշանագույնով։ Խոհանոցում կարգադրեց, որ պատրաստեն այնպիսի ճաշատեսակներ, որոնք հաստատ կնախընտրի Յաննին, քանի որ նրանք արդեն գիտեին օրիորդի նախասիրությունները...

Երեկոյին դեռ շատ կար, բայց նա արդեն ծնողներին պատվիրում էր Յաննիի նկատմամբ լինել ավելի ուշադիր, ասես նրանք առաջին անգամ էին հյուրընկալում Յաննին, կամ կարծես դրանից էր կախված աղջկա սրտի ընտրությունը։

Երբ սուրհանդակը վերադարձավ դատարկաձեռն՝ առանց նամակի, Հերբերտը ապրեց խենթության հասնող երջանկություն. «Եթե լրել է, ուրեմն համաձայն է», – մտածեց նա:

Մոտենում էր ընթրիքի պահը, Յաննին խճճվել էր զգեստապահարանի առատության մեջ։ Վերջապես ընտրեց լայնեզր գլխարկ, դարչնագույն զգեստ և համապատասխան կոշիկներ։ Նա ասես աղջկական կատարելություն լիներ, ասես դրախտը հենց նրա ներսում էր, և նրանից էր սկիզբ առնում բովանդակ

կյանքը: Նա չէր դիմել արհեստական պաճուճանք-ների. բավական էր, որ հագուստը ուղղակի ընդգծեր իր աննկարագրելի գեղեցկությունը...

Յաննին պատրաստ էր:

Նրան ուղեկցում էր եղբայրը՝ ժուազ Ապպելը, որը մտերիմ էր Հերբերտի հետ:

Հենց հասան առանձնատուն, Հերբերտն անհագուրդ հայացքով նայեց Յաննին: Մոտեցավ, ողջունեց, համբուրեց ձեռքը, և միասին քայլեցին դեպի հյուրասենյակ: Երբ Յաննին տեսավ, թե ինչ էր կատարվում ներսում և ինչպիսի պերճաշուր ճաշկերույթ էր կազմակերպվել իր պատվին, հասկացավ, որ սա իր սիրտը գրավելու մի նոր փորձ է...

Սովորույթի համաձայն՝ Հերբերտը Յաննից վերցրեց թիկնոցն ու գլխարկը և հրավիրեց սեղանի մոտ:

Յաննին նախ ողջունեց՝ խոնարհվելով մորեղբորը և նրա տիկնոցը, շնորհակալություն հայտնեց նրանց, իսկ այդ ընթացքում Հերբերտը շտապում էր հյուրասիրել. բյուրեղապակյա բաժակների մեջ կայծկլտում էր հոենոսյան գինին, իսկ սեղանը ծփում էր ուտեստների առատությունից:

Երկար գրուցեցին: Տանտերերը վաղուց չէին տեսել ժուազին, և նրանց միջև ծայր էր առել մի գրավիչ գրույց, որի թաքուն նպատակը մեկն էր. հնարավորություն տալ Հերբերտին շփվելու Յաննիի հետ, բայց նրանք օտարի նման հեռու էին ու լու:

«Նա նման է երկնային տեսիլքի, – մտածում էր Հերբերտը, – այս հիացմունք առաջացնող պատկերը անկասկած իմն է»: Նա ավունով ու կրով էր լցվում անգամ Յաննիի նուրբ շարժուծներից, նրա՝ սպասի դասավորվածությունից օգտվելու հմտությունից...

Բայց հանկարծ նրա դեմքը մոայլվեց, նա ետ-ետ գնաց, հենվեց պատին, ձեռքերը ծալեց կրծքին և սկսեց պատերազմել տխուր մտքերի դեմ, թե վերջ ի վերջո ինչպես պիտի գրավի նման գեղեցկուիու սիրտը: Հերբերտը խավարում էր, իսկ իրեն կարող էր լուսավորել միայն Յաննի ներկայությունը, բայց օրիորդի անտարբերությունն արդեն վկայում էր նրա վերջնական պատասխանի դառնությունը...

Յաննին թեր հայացրով հետևում էր Հերբերտի դժգոհ դեմքի շանթերին: Եվ հայտնի չէ, թե նա որքան կմնար պատին հենված, եթե Յաննին չմոտենար ու չհարցներ.

– Ձեզ ինչ-որ հա՞րց է մտատանջում, Հերբերտ:

– Ես Ձեզանից սպասում եմ ավելին, ուզում եմ արագացնել հարսանիքի փաստը, բայց Դուք չեք ցուցաբերում ոչ մի վերաբերմունք, – հանդիմանանքով արձագանքեց Հերբերտը:

– Ես դեռևս ոչինչ չեմ խստացել, – պատասխանեց Յաննին:

– Պետք է քայլ կատարել, գրո՞ղը տանի, իսկ Դուք նույնիսկ թույլ չեք տալիս ավելի մոտենալ Ձեզ:

Նրա ճայնի մեջ կոպտություն և չարություն կար, ինչը զայրացրեց ու վիրավորեց Յաննին:

Մոտենում էր հրաժեշտի պահը:

Երբ սպասուիին բերեց իրերը և Հերբերտը նրա սիրտը շահելու և ներողություն խնդրելու համար օգնեց հագնվել, Յաննին խոր տհաճություն զգաց:

Ճանապարհելիս Հերբերտը վերցրեց ձեռքի լապտերը, քայլեց նրա առջևից, որպեսզի վայելի օրիորդի գիշերային տեսքը, և Յաննիի ականջին շնչաց, որ շուտով կհանդիպեն, իսկ զայրացած

Յաննին մեկ անգամ ևս խոր հիասթափություն ապրեց այդ ժաշող ու ազրեսիվ պահվածքից:

Ամբողջ ճանապարհին ոչ մի բառ չխոսեց, իսկ ժուազն անընդհատ ծաղրում ու կատակում էր, թե ինչպես է Հերքերտը սողում քրոջ ոտքերի տակ:

Յաննիի ննջարանում աղոտ ցոլցլում էր լուսամփոփի շողը և դեղին, թույլ լույսը լուծվում էր շրջապատող խավարի մեջ:

Օրիորդը, հոնքերը կիտած, մտավ սենյակ, հանեց օրվա ծանրությունից թե՛ռ դարձած հագուստը, լուության մեջ հագավ գիշերազգեստը, դուրս եկավ պատշզամբ, նստեց ճոճաթռոին ու սկսեց մտածել, թե ինչո՞ւ է մթության մեջ ամեն ինչ այլ, և ինչո՞ւ է կյանքն անաղմուկ, խաղաղ ու հանդարտ դառնում գիշերվա մթության մեջ, երբ, առավել ևս, ներկա չէ Հերքերտը:

Ծածկոցը ձեռքին մոտեցավ Էմման.

- Երեկոն ուրախ անցավ:
- Առանձնապես ոչ:
- Ի՞նչն է քո դժգոհության պատճառը:
- Նրա պարզունակ սերը: Նա ինձ վերաբերվում է սեփականատիրոջ նման:

- Իսկ դու ինչ ես զգում:
- Ոչինչ: Ես չունեմ ոչ մի յուրահատուկ զգացմունք: Իսկ նրա հանդեպ զգում եմ միայն ու միայն նողկանք, և միակ բանը, որ խանգարում է դա իրեն ասել, այն է, որ ինքն իմ հեռավոր ազգականն է, և բացի այդ, իր ծնողների ուշադրությունը իմ անձի նկատմամբ,- զայրացած պատասխանեց Յաննին:

- Ուրեմն ինչո՞ւ ընդունեցիր հրավերը:
- Ես պարզապես ցանկացան նրան ևս մեկ հնարավորություն տալ կամ էլ համոզվել մեր համատեղ ապագայի անհնարինությանը: Իսկ նա շարունակ

«Յաննի», հայ «Յաննի»: Ինձ մահու չափ հոգնեցնում էր այդ ամենը:

– Լավ, ես քեզ համար բրիոշ եմ պատրաստել, մի կողմ դիր զայրույթ:

– Եմմա, բրիոշը կհամտեսեմ վաղը, ներիք, հիմա ուզում եմ հանգստանալ:

Անցավ ևս երկու շաբաթ, իսկ Հերքերտն անկոտրում սիրահարի նման արդեն պլանավորում էր իր հետագա անելիքները:

Մի օր տան ծառայողի հետ զրույցի ժամանակ, կարծես ի միջի այլոց ասաց.

– Գաստոն, ինձ հարկավոր է մի մասնավոր կլինիկա կամ նույնիսկ բուժկետ:

– Լավ, պարոն, ես կտեղեկանամ, – պատրաստակամությամբ պատասխանեց հավատարիմ Գաստոնը:

Արդեն իսկ մտածված ծրագիր էր կազմել, թե ինչպես է պետք կոտրել Յաննիի դիմադրությունը. մի քանի սայի առաջացնել հոնքի կամարին և դաստակի վրա, ինչը պիտի վկայեր նրա մասնակցության մասին երիտասարդության շրջանում լայն տարածում ստացած մենզրանային սուսերամարտերում, որտեղ, ի տարբերություն դասական մենամարտերի, վիճողները սուսերով պարզում էին իրենց հարաբերությունները աթոռներին նստած: Վերջին հանգամանքը թույլ էր տալիս խուսափել մահացու դեպքերից, բայց, այնուամենայնիվ, հակառակորդների դեմքերի կամ ձեռքերի վրա մենամարտի արդյունքում հաճախակի մնում էին սպիներ, որոնք վկայում էին սպին կրողի բացարձակ տղայության մասին, ինչը և Հերքերտին դրդեց դիմել նման խորամանկության:

Արդեն հաջորդ օրը Գաստոնը թուղթը ձեռքին գեկուցեց.

– Պարոն, այս բուժկետը պատկանում է Ռուբեն Չիլինկիրյանին, և եթե դիմեք նրան, գուցե գտնեք ձեր հարցերի պատասխանները:

Քանի որ այս ամենը նման էր գաղտնի դավադրության, նա կարգադրեց, որ կառքը պատրաստեն երեկոյան ժամերին, և երբ պահը եկավ, զնաց թերթիկում նշված հասցեով:

Իր վարած կառքը կանգնեցրեց գողտրիկ առանձնատան բակում և մտքում արդեն իսկ իր մտացածին հեռապատկերը հաջողված համարելով՝ մոտեցավ դունը, թակեց, որի պատասխանը լուսավորությունը եղավ:

Պտույտներ գործեց տան շուրջը: Լսվեցին ինչ-որ ձայներ և վերջապես փոքրիկ պատուհանին մոտեցավ բուժքույրն ու հարցրեց, թե ինչ է կամենում պարոնը:

– Ես կցանկանայի շտապ տեսնել բժիշկ Ռուբեն Չիլինկիրյանին:

– Պարոնը դեռ չի վերադարձել, ինչի պատճառով ստիպված եմ խնդրել Ձեզ մի փոքր սպասել:

Հերբերտը, ոչինչ չպատասխանելով, հեռացավ. կառքը մնաց աննկատելի կանգնած եղանիների ստվերում, իսկ նա ժամանակն անցկացնելու համար որոշեց մի փոքր զբունել մոտակա տարածքում:

Ճանապարհը, որին անծանոթ էր Հերբերտը, փողոցի խոլ լուսավորությունն ու ոչ խիտ բնակեցված վայրը նրան վստահություն էին ներշնչում, թե բժիշկն աշխատում է ապօրինի, ու երևի դա է այսպիսի գողտրիկ տեղի ընտրության պատճառը...

Երեկոյան ժամը ինն էր, երբ նա կրկին թակեց դուռը. այս անգամ նրան դիմավորեց հենց Ռուբենը: Հերբերտը ձեռքը մեկնեց նրան ու բարևեց:

Ներսում պատմեց իր պատմության որոշ դրվագներ ու խնդրեց օգնել: Կատարվելիքի մասին ոչ ոք չպետք է իմանար, և դրա դիմաց խոստացավ բարձր վարձատրություն, իսկ Ռուբենը, լսելով նրա առաջարկը և պատկերացնելով, թե ինքն ինչպիսի արջի ծառայություն կմատուցի անծանոթ օրիորդին, կտրականապես հրաժարվեց՝ փաստելով, որ նա խարերա չէ, այլ բժիշկ է, և իրեն պատկանող բուժկետում չի արել ու չի անի ոչ մի անօրեն բան:

Հերբերտի աչքերի մեջ բռնկվեց զայրույթի կրակը, որը, չկարողանալով ոչ մի կերպ սանձել, դուրս եկավ բուժկետից, ձեռքի ափով մաքրեց խոսքերի սառը ցնցուղից երեսին գոյացած ամոթանքի քրտինքը, հոգում դառնացնող խարան զգաց ու հաւաքացավ, որ, ի գարմանս իրեն, կան մարդիկ, որոնք ունեն սկզբունքներ ու պատրաստ չեն դավաճանել իրենք իրենց նույնիսկ բարձր գնի դիմաց և, տուն վերադառնալով, իր ամբողջ բարկությունն ու ամոթի դառնությունը թափեց Գաստոնի գլխին:

Ինչ վերաբերում էր Ռուբենին, ապա դուրս հրավիրելով տարօրինակ այցելուին՝ նա զգում էր անդուր տհաճություն. թե ինչպիսի ստորության կարող է դրդել անպատասխան սերը, և նոյնիսկ ցանկություն ունեցավ գոնե հպանցիկ տեսնել առիթ հանդիսացող օրիորդին: Նա միաժամանակ հետևում էր ժամացույցի պտտվող թևերին՝ խորհելով, թե որքան դանդաղ է հոսում ժամանակը՝ գրեթե անսկատ, իսկ կյանքում ամեն ինչ շտապում է՝ միաժամանակ մնալով լեռան նման անշարժ:

Եվ մինչ Ռուբենը հետևում էր ժամանակի ընթացքին, կիլոմետրեր այն կողմ իրեն պատեպատ էր խփում Հերբերտը: Վերջապես նրա մտքի թոիչքը

կանգ առավ «Էմմա» ճյուղի վրա. կարելի է աղախ-նի միջոցով իմանալ՝ կամենում է արդյոք Յաննին վերստին տեսնել իրեն: Ժուազի միջամտությամբ խնդրեց Էմմային մի համեղ քաղցրավենիք պատրաստել, որպեսզի երեկոյան այցելի նրանց ու ներողություն խնդրի Յաննին տհաճություն պատճառելու համար:

Կեսօրին նա հյուր գնաց Ժուազին: Այս անգամ ձևացնում էր, թե այցելության պատճառը Յաննին չէ:

Կլոր սեղանի առջև թեյ ու քաղցրավենիք համ-տեսելով՝ Հերբերտն ու Ժուազը վիճում էին շախմա-տային հերթական խաղի շուրջ, իսկ կողքից հպան-ցիկ հայացքով հետևող Յաննին առանձնապես չէր հետաքրքրում ոչ խաղը, ոչ էլ տղամարդկանց զրոյցը եվրոպական քաղաքականության մասին և, պատճառաբանելով, որ հոգնած է, վեր կացավ, հրաժեշտ տվեց ու մինչ կհեռանար հյուրասենյակից, դուն թակոց լսեց ու շտապեց դեպի այն, որի ետևում փոստատարն էր:

Նա բարի ժպիտով ողջունեց օրիորդին ու մեկ-նեց ծրարը, որը հիողը քաղաքապետի ընտանիքն էր: Յաննին ետ վերադարձավ հյուրասենյակ ու հրճվանքը չթաքցնելով՝ բարձրածայնեց գրու-թյունը.

– Բուրգոմիստրի տանը գրական երեկոն է տեղի ունենալու: Ես ուղղակի պաշտում եմ գրական հան-դիպումները:

Հերբերտը ոչինչ չասաց, բայց թեթևակի ժպիտով թեքեց հայացը:

– Իսկ այդ հրավիրատոմսում նշել են միայն քն անունը, – քմծիծաղով հարցրեց եղբայրը:

– Եթե ցանկանաս, կարող ես ինձ ուղեկցել, – արձագանքեց Յաննին:

– Ես Հերքերտին եմ ուղեկցելու, – բարձր ծիծառեց Ժուազը:

– Մի՞թե դուք էլ եք հրավիրված, – զարմացած հարցրեց քոյրը:

Եղբայրը խիստ տոնով պատասխանեց.

– Այդ երեկոյին կգնանք միասին: Հուսամ, խոչընդոտներ չեն լինի:

– Բնավ, – դժգոհությունը թաքցնելով ժախտի տակ՝ ասաց Յաննին և մտքում շարունակեց. «Որքան է դեռ խորամանկելու նա և ինչ նպատակ է հետապնդում իր այս թշվառ քայլերով»:



Զառամյալ ձմեռը, որ Լոգանում այնքան էլ սաստիկ չէ, արդեն իր դիրքերն էր զիջում գարնան ամպրոպների դիմաց:

Սևակն իր մտքի դարակներում պատրաստում էր սիրո, հայրենիքի և ամենատարբեր գրվածքների ժողովածու: Նա իր բանաստեղծական խոսքում անհնարինը դարձնում էր հնարավոր, իսկ մտորումներին խաղաղության ծնունդ տալու համար այցելում էր գրադարան, որտեղ նաև հասցնում էր պատախանել հարզատների ու ընկերների նամակներին: Մինչ նա մտքերն էր հանձնում թղթին, աչքի վայրկենական թարթման հետ գրասեղանի մոտով անցավ մի գեղանի օրիորդ: Շփոթվեց, ոչինչ չկարողացավ անել, անզամ մտածեց, որ երանելի պատրանք էր: Տան ճանապարհին որոշեց ստուգել փողոցի փոստարկողը: Նամակ էր ստացել: Գրության մեջ

նշված էր, որ բուրգոմիստրի տանը լինելու է գրական երեկո, իսկ Ասակը՝ որպես քանաստեղծ, երբեք անմասն չէր մնում նմանատիպ երեկոներից:

Կիրակին այնքան էլ հեռու չէր, իսկ նա դեռ պետք է ավարտին հասցներ մի քանի քանաստեղծություն ու ելույթի համար մի ճառ պատրաստեր իրեն բնորոշ ճարտար լեզվով:



Կիրակի օրվա վաղ առավոտյան Յաննին որոշել էր «գողանալ» գարնան գեղեցկությունը: Իր չքնար տեսքը լրացնելու համար նա ցանկանում էր այդ երեկոն տարբեր դարձնել մնացյալներից: Եվ սրտի թրթիռին հնազանդ՝ նա որոշեց ներկայանալ միայն մեկ գույնով:

Զգեստապահարանի ամենավատ գույների մեջ խճճված՝ Յաննին գտավ ամենաներկայանալի երեկոյան հագուստը՝ կարմիր շրջազգեստ, սև լաքապատ կիսակրունկ կոշիկներ և լայնեզր գլխարկ:

Երբ Հերբերտը կառող եկավ Յաննիին ու ժուազին ուղեցելու, սպահատակն ասես փախավ ոտքերի տակից. Յաննիի պարզ և բնական գեղեցկությունը խենթացրեց սիրահարին:

– Ես երջանիկ եմ...,- ասաց նա՝ համբուրելով աղջկա ձեռքը:

Մի կերպ իրեն զսպելով՝ օրիորդը թևանցուկ արեց Հերբերտին:

Իրենց տեղ հասցնելուն կոչված կառքի կառապանը երիտասարդի հրամանով զգուշացվել էր ճանապարհը հնարավորինս երկարացնել Յաննիի ներկայությունն ավելի երկար վայելելու համար...

Բնական է, որ քաղաքապետի հրավերը չէր մերծել նաև Սևակ Չիլինկիրյանը: Նա՝ որպես մտավորական և գրականության երիտասարդ շունչ, հաճախ էր ներկա գտնվում թե՛ քաղաքական և թե՛ մշակութային հանդիպումներին:

Բուրգոմիստրի տանը պատշաճ ընդունելություն էր: Երեկոյին հրավիրված էին երևելի ազնվականներից շատերը:

Սև թիկնոցներ կրող մարդկանց ետևից Յաննիի նման օրիորդի ընկերակցությամբ աստիճաններով բարձրացող Հերբերտն իրեն զգում էր երանության գագաթնակետին...

Եվ մինչ նա ընկերների հետ կփոխանակեր մեկերկու բառ, «ազատազրված» Յաննին իր ողջ հմայքով կանգնեց սրահի մուտքի դիմաց: Նրա աչքից չվրիպեց պատուհանի մոտ կանգնած երիտասարդը, և պատահական հանդիպումից ոգևորված Յաննին քայլեց դեպի Լևոն Ազնավորյանը:

Եզիպտահայ Լևոնը Յաննիին ճանաչում էր մանկուց, իսկ նրա հայրը գնդապետ Ապահելին համարում էր իր ընտանիքի լավագույն գերմանացի բարեկամը:

Ասսպասելի հանդիպումը ցնծություն էր երկուստեր, և ցերմագին ողջագուրանքից հետո նրանք բռպեների ընթացքում «թերթեցին» իրենց մանկության էջերը:

Հերբերտի փնտրող հայցքից չվրիպեց Յաննիի երջանիկ ժպիտը: Մի ակնթարթում, ինչպես ծածուկ մի լրտես, նա հայտնվեց օրիորդի կողքին:

Եվ երբ Յաննին ցանկանում էր ծանոթացնել երիտասարդներին, լոռությունը խախտվեց ինչ-որ ելույթով, որի ընթացքում Լևոնը, ներողություն խնդրելով, առանձնացավ:

Ականջ էր շոյում բարձրաճաշակ և բարձրաշխարհիկ երաժշտությունը: Մատուցողները սրահով մեկ պտտեցնում էին գինին և շվեյցարական աղանդերը:

Երեկոն սկսվեց ելույթներով. ինչպես նման դեպքերում է լինում, մեկի ելույթը ձանձրացնում էր, իսկ մեկ ուրիշինն այնքան գեղեցիկ էր ներկայացնում արվեստը, որ ընձեռված հաճույքը վայելելու համար պատրաստ էր կանգ առնել նույնիսկ անողոք ժամանակը:

Խանդավառության բարձրակետին՝ Յաննին Հերբերտի խնդրանքով մոտեցավ սրահի կենտրոնում գերիշխող դաշնամուրին և մատները սահեցրեց ստեղների վրայով: Երաժշտությունը խոսեց շատերի սրտերի հետ... Թվում էր, թե Յաննին մենակ էր, իսկ ստեղները նրան ենթարկվում էին ինքնակամ...

Երանության զգացումը համակեց երիտասարդ գրող Սևակ Չիլինկիրյանին, որը, հնազանդվելով հմայիչ հնչյուններին, շրջվեց և իսկույն ճանաչեց այն ոչ երկրային էակին, ում գերող կերպարն իրեն շփոթության էր հասցրել գրադարանում:

Փակ աչքերով Յաննին մի դյութական թմրիրի մեջ էր, և իր մանկական, բայց ստեղներին վարժ մատների հպումներից կորզում էր ակնապիշ հայցըներ...

Երբ դադարեց երաժշտությունը, և Յաննին բացեց կապույտ աչքերը, պատկերը խենթացնող էր. քարացած սրահը դդրդաց ծափահարություններից:

Որոշ ժամանակ անց, երբ սրահը հանդարտվեց, դարձյալ խախտվեց լոռությունը. այս անգամ պատճառը Սևակ Չիլինկիրյանն էր, որն սկսեց բարձրաճայն կարդալ իր բանաստեղծությունները:

Հավաքվածների աչքերում սառել էր ժամանակը, և երաժշտությունից արբած երիտասարդը անմասն չմնաց իր տաղանդով: Նա սաեւ անհանում էր իր բառերի ետևում:

Ստեղների պոեզիայով բոլորին հմայած Յանսիին հմայել էր բառերի երաժշտությունը...

Երբ Սևակը շրջվեց դեպի հյուրերը, Հերբերտի քերանը զարմանքից բաց մնաց, ասես սառը ցնցուղից... Նա սրբեց ակնթարթորեն դեմքին հայտնված սառը քրտինքը և օգնություն հայցող հայացքով ու կարկամած շուրջերով շրջվեց դեպի Յանսին: Բայց...

Յանսիին ամենսին չէր հետաքրքրում, թե ինչ է կատարվում շուրջը: Նա սևեռուն հայացքով հետևում էր սևակեր, կիզիչ հայացքով ու գեղեցկադեմ տաղանդին, քանզի ճանաչեց այն երիտասարդին, որն իր ուշադրությունը գրավել էր գրադարան կատարած վերջին այցելության ժամանակ... Բայց այդ պահին զգաց, որ մեկն իրեն ետ է ձգում, և երբ շրջվեց, Հերբերտի աղերսող հայացքի մեջ նկատեց փախուստ և վախեցած երեխայի՝ առանց արցունքների լաց...

Սևակին տեսնելուց հետո նա սկսեց սարսափից կմկմալ և ամեն կերպ փորձում էր դուրս գալ անելանելի թվացող այդ վիճակից. զարհուրելի կանխազգացումները հանկարծ Հերբերտին ներկայացն իբրև անխուսափելի խայտառակություն, եթե... բժիշկը Յանսիին պատմեր իբրև հնարամտություն հորինած իր այն ծրագրի մասին...

Եվ մինչ Հերբերտը խուսափում էր Սևակի տեսադաշտում հայտնվելուց, Յանսին, քմծիծաղը դեմքին, թե ինչն է վերջինիա անհանգստության պատճառը, նրան ուղղորդում էր դեպի բանաստեղծը, բայց...

Հերբերտի բախտը բերեց. խառնաշփոթ եղավ, ինչոր մեկի անփոյթ պահվածքից գինին շրջվել էր Սևակի հազուստին, և մինչ հավաքվածների ուշադրության կենտրոնում հայտնվել էր Սևակը, Հերբերտը, Յաննին ձեռքից քաշելով, անցավ սրահը փակող վարագույրի հետևը:

– Չեմ համարձակվում պնդել, բայց երեկոն ինձ արդեն ձանձրացնում է: Գուցե հրաժե՞ցտ տանք, – համեստություն խաղալով և բանտելով ներսի վիրավոր գազանին՝ ասաց Հերբերտը:

– Ասացեք խնդրեմ, ինչո՞ւ եք այդքան անհանգստացած: Դեռ վաղ է երեկոն համարել ավարտված, իսկ ես ինձ զգում եմ ավելի քան լավ:

– Ամեննին, օրինորդ, – չգիտես ինչու, հեգնական տոնով պատասխանեց Հերբերտը:

– Ուշադիր եղեք Ձեր վարքագծին, որը ինձ չի գոհացնում, և ես տանել չեմ կարողանում Ձեր հաճախակի կերպարանափոխությունները:

Յաննին ձեռքը մի կողմ քաշեց և շտապեց հյուրարահ, իսկ զայրացած Հերբերտը, մեղադրելով ինքն իրեն, թե՝ «Ես պետք է ավելին իմանայի և ոչ թե կուրորեն վստահեի Գաստոնին», քայլեց դեպի բացօթյա պատշգամբ տանող սանդուղքը, որտեղ կանայք զրուցում էին քաղաքապետի որդու հետ:

Նա ներողություն խնդրեց կանանցից և ընկերոջն առանձնացրեց հյուրերից.

– Լսիր, բարեկամս, ո՞վ է այդ բանաստեղծը, որ նվաճեց հյուրերի ուշադրությունը:

– Երևի խոսքը Սևակի մասին է:

– Դե, չգիտեմ... այն երիտասարդը, որ կարդում էր, և որի անհասկանալի խոսքը, սրտաճմլիկ, իրարկապկած բառերը հուզեցին բոլորին:

– Ասում եմ քեզ՝ Սևակն է, Չիլինկիրյանը, խոստումնալից գրող:

– Եթե ոչ ավելին, – չզսպելով զգացմունքները՝ արձագանքեց Հերբերտը և, մտքում մի քանի անգամ կրկնելով «Սևակ Չիլինկիրյան...», հայտնագործություն անողի նման մտածեց. «Պարզվում է՝ սրանք երկվորյակներ են: Իսկ եթե բժիշկը սրան պատմի, թե որն էր մեր հանդիպման առիթը: Այդ դեպքում ես Յաննիին կկորցնեմ հավիտյան»:

Ապա մի կերպ խոր շունչ քաշեց, Ներքին տագնապը ցրելու համար մատուցարանից գինի վերցրեց, մի քանի կում արեց և շտապեց Յաննիի մոտ:

Հյուրասրահում Յաննին մենակ էր, երբ նրան մոտեցան Լևոնը և Սևակ Չիլինկիրյանը:

Մինչ այդ, Սևակը փորձում էր տեղեկություն ստանալ երաժիշտ աղջկա մասին, կամաց-կամաց իրեն մտատանջող հարցերը սպասում էին պատախանների, և երբ Լևոնը, առանց որևէ բացարության, նրան մոտեցրեց Յաննիին, նա ինչ-որ ներքին դող զգաց, երբեմ չապրած մի ամոթ, և չէր էլ կարողանում թաքցնել իր շփոթմունքը:

Յաննին ժպտաց այնպիսի քնքշանքով, որ նրա հմայիչ ժպիտից Սևակը սկսեց կարմրել: Աղջկա հայացքի մեջ այնպիսի խաղաղություն կար, որ կարծես ողջ բնությունն էր խնամքով տեղավորվել փոքրիկ, բայց ներդաշնակ մարմնում:

Սևակը համբուրեց Յաննիի ձեռքը, և նրա ներսի խոռվքը վերածվեց մի մեծ փոռորդիկ. արդյոք իրական է այս հրեշտակը, տեսնես ինչպիսին կլինեն նրա ուրախության արցունքները պարզ ժպիտով ներկված դեմքին, և արդյոք ինչ-որ մեկն արդեն նրա շուրթերից քաղնել է շրթներկի գույնն ու համը:

Մի քանի վայրկյան ցնորված Սևակը բաց չէր թողնում Յաննիի ձեռքը, երբ ընկերը միայն նրա համար լսելի շնչաց.

– Ստվերի նման ո՞ւր ես չքացել:

– Ի՞նչ, – հարցրեց Սևակը:

– Դու երևի ինչ-որ բանից ցնցվել ես, ինքդ քո մեջ թաքնվել, չես խոսում ոչինչ, – Ժպտաց Լևոնը:

– Դու ինչ-որ բան ասացիր, Լևոն, – հարցրեց Սևակը: – Ես չեմ լսում ոչինչ:

Յաննին Ժպտաց նրանց խոսքերից և ձեռքը աննկատ ետ քաշեց Սևակի ափից:

Անվճռական քայլերով նրանց մոտեցավ Հերբերտը և մտքում ինքն իրեն հորդորելով՝ համարձակ եղիր, ձեռքը մեկնեց Լևոնին, իսկ Սևակը գերադասեց սոսկ գլխով՝ թեթևակի բարևել:

Հերբերտը, գրեթե տասը րոպե գտնվելով ձանձրալի զրոյցի կենտրոնում, լցվել էր անզոր զայրոյթով. հարցերը, որ կեղերում էին ներսը, նա հասցրել էր քիչ թե շատ ցրել մեկ շիշ բուրգունդյան գինով:

Վերջապես սրահում հնչեցին ժամացոյցի տասը զարկերը, որոնք վկայում էին, որ ժամանակն է երեկոն համարել ավարտված:

Հրաժեշտը ցանկալի չէր, բայց Սևակը խոստում-նալից հանդիպման հույս ուներ, քանի որ Լևոնը Յաննին ծանոթ էր...

Ամբողջ գիշերը նա լուսացրեց բազմոցին, որը դրված էր պատշգամբում: Լապտերների լույսերը հանգել էին արդեն, իսկ թափառող քամին նրա մտքում ասես խառնաշփոթ էր ստեղծել:

Նոյն վիճակում էր և Յաննին...

Գիշերը խորանում էր և խոնավ մշուշով պատում քաղաքը: Պակասում էին մարդկային շարժումն ու

աղմուկը, այզու նստարաններին հազիվ թե մի քանիսը լինեին: Վերջալույսի շողերը մարել էին Յաննիի ապրումների մեջ:

Հազիվ լուսացավ տաղտկալի գիշերն ու կյանքն ընկավ իր սովորական հունի մեջ:

Յաննին շտապեց Պինտե Բեսսոն պանդոկի քրե պահոցներ, որտեղից հմայիչ կերպով կանչում էին վառված փայտի, օղու, գինու, մսի և տապակած պանրի անուշահոտությունները:

Մոզան կրկին ավելի վաղ էր եկել և նոյնիսկ հասցրել էր պատվիրել նախաճաշը: Բարեկելուց հետո երկար ժամանակ լուտ էին: Մոզան ընկերուհու դեմքին նետած հարցական հայացքով այնտեղ կարդաց և՝ անհանգստություն, և փայլ:

– Ինձ թվում է, որ դու երբեմն դրսերում ես տարօրինակ վարքագիծ:

– Ինչ վարքագիծ, – ափերի մեջ թաքցնելով ժպտուն աչքերը՝ հարցրեց Յաննին:

– Տարօրինակ, – կրկնեց Մոզան և գինու գավաթը թեթևակի թափահարելով ու խոր շունչ քաշելով՝ ասես ինչ-որ բացահայտում անելու համար սպիտակ գինու բուրմունքի մեջ՝ մոտեցրեց շուրթերին և.

– Պատմիր երեկվա հանդիպման մասին, – շարունակեց:

– Միթե կարողանում ես որոշել հնությունը, – հետևելով գինու գավաթին և փորձելով հարցից խուսափել՝ պատասխանեց Յաննին:

– Չփորձես շրջանցել հարցս. դու վաղուց այսքան անկեղծ չես ժպտացել, – և մտախոն նայեց ընկերուհուն, որի փայլող աչքերի մեջ կար դեռևս չբացահայտված ինչ-որ խաղ:

– Բավականին լուրջ հանդիպում էր. մտավո-

բականներ, երաժիշտներ, քաղաքական գործիչներ: Այնտեղ էր նաև Լսոնը, որու նրան գիտես՝ հորս վաղեմի ընկերոջ որդին... մի քանաստեղծի հետ, այնքան խաղաղ էր խոսում, – թեթև ժպիտով պատմում էր Յաննին, – և այնպես էր խոսում, ասես մտածում էր ինքն իրեն:

– Ո՞վ էր նա, – շինծու անտարբերությամբ հարցրեց Ռոզան:

– Ոմն Սևակ Չիլինկիրյան:

Երկար ժամանակ օրիորդը լուր էր, և նրա աչքերը փայլում էին տարօրինակ կերպով, կարծես տեսնում էր մի քան, որը բերկրանքով պետի լցներ իր կյանքը:

Լոռությունը խախտվեց իրենց հանդիպումները խորհրդանշող լցոնած նապաստակի «մուտքով», երբ, սովորականի նման, Ռոզան, սպասը շնչչխկացնելով, սկսեց ափսեում մասնատել կերակուրը, որից մի պահ կտրվելով՝ հիշեց Հերբերտին.

– Իսկ ինչպես պիտի վարվես կնքահորս եղբորդու հետ: Նա քեզ սիրում է:

– Սիրո՞ւմ է, – տարութերեց գլուխը Յաննին, – նա ինքն իրեն խոշտանգում է, պարտադրում ինչ-որ աննպատակ հարաբերությունների մեջ տեր դառնալու մասին:

– Ես քեզ չեմ հասկանում, – գինուց կում արեց Ռոզան:

– Կրացատրեմ, – ասաց Յաննին, – ասա, ինչո՞ւ ես խնդրել, որ քեզ նապաստակ բերեն:

– Որովհետև ես նապաստակ եմ սիրում, բայց իմ հարցի հետ ինչ կապ ունի նապաստակը:

– Դու սիրում ես նապաստակին, – հեգնական ժպտաց Յաննին: – Եվ այդ սերն է պատճառը, որ քեզ համար բռնեցին, սպանեցին, եփեցին... Չհամար-

Ճակվե՞ս ասել, որ դու սիրում ես նրան, դու սիրում ես քեզ, – ձայնը բարձրացրեց Յաննին:

Ռոզան անհանգստացած նայեց շուրջը, իսկ Յաննին շարունակեց նույն ոգևորությամբ.

– Հենց այն պատճառով, որ քեզ դուր է գալիս այդ խեղճ նապաստակի համը, նրան բռնեցին, սպանեցին և պատրաստեցին: Քո՞ սիրած բաղադրատուսով: Այս, ինչը մենք հաճախակի համարում ենք սեր, ավելին չէ, ինչպիսին քո սերն է նապաստակի հանդեպ: Ապա նայիր, – շարունակեց Յաննին՝ գլխով ցույց տալով հեռվում նստած զույգին, – երկու սիրահարներ են, դու նրանց ճանաչում ես, ժողեֆինան ու Թիերը: Ժողեֆինան, ի դեմս Թիերի, տեսնում է նրան, ով կրավարարի իր հոգական ու ֆիզիկական պահանջմունքները: Թիերը՝ նույնպես. ի դեմս ժողեֆինայի տեսնում է իր պատրանքների աղջկան: Բայց նրանցից յուրաքանչյուրը՝ և ժողեֆինան, և Թիերը, մտահոգված են միայն ու միայն սեփական կարիքներով: Նրանք չեն սիրում, այլ ուղղակի ցանկանում են միմյանց օգտագործել իրենց կարիքները բավարելու համար: Իսկ սերը... Սերը այն չէ, ինչ ուզում ես ստանալ, այլ այն է, ինչ պատրաստ ես տալ:

– Թույլ կտա՞ս գոնե մեկ բառ ասեմ, – կմկմաց Ռոզան:

– Ես չեմ ավարտել, – գլխի թեթև շարժումով մերժեց Յաննին և շարունակեց, – բայց դա այնքան սարսափելի չէ, որքան «ոչ սերը»:

– Աստված իմ, դա՞ ինչ է, – զարմացավ Ռոզան:

– Դա այն է, ինչով ավարտվում է սերը, որին նման է քո սերը նապաստակի նկատմամբ: «Ոչ սերը» այն է, երբ չի կարելի խանգարել խոսելը, ծիծառելը, փաթաթվելը, գրկախառնությունները... Չի

կարելի պատմել ապրումներիդ մասին: «Ոչ սերը» այն է, երբ առանձնապես չեն ուղղորդում, բայց չեն էլ գովում: Չեն նկատում: Ո՞չ, դա ատելություն չէ: Դա ավելի վատ է, որովհետև ատում են ինչ-որ բանի համար: Չնայած ատում են. «Դե՛, սիրում եմ քեզ, միայն թե հանգիստ թող ինձ», իսկ դու դարձյալ քոնն ես պնդում: «Ոչ սերը» հետո դա է: «Ոչ սերը» կաշկանդում է մարդուն, զրկում է նրան հմայքից, դարձնում ճգմված, տձև ու երկշու: Նա վախենում է նյարդայնացնել, խանգարել, գրգռել... Նման դեպքում մնում է կամքը հավաքել բռունքի մեջ ու հեռանալ: Կամ էլ պարզապես հասկանալ, որ դա «ոչ սերն» է, «ոչ սերը»: Դրանից մահանում են: Իսկ ես դեռ ուզում եմ ապրել այդ անհասկանալի, անբացատրելի ու աներևոյթ զգացումը, – ավարտեց Յանսին:

Մի պահ լրելուց հետո դիմեց ընկերուին.

- Դու ինչ-որ բան էիր ուզում ասել:
- Այլս ոչ, – հապճեպ պատասխանեց Ռոզան և շարունակեց ուտել:

Հետո լրությունը հալվեց բարձր երաժշտության մեջ: Այդ աղմուկի մեջ Յանսին դարձյալ հիշեց Սևակին, հիշեց բուրգոմիստրի տան երանելի պահերը:

Նախաճաշն ավարտեցին ու դրւս եկան փողոց:

Կեսօրը ճնշում էր ամպերին, սեղմում ու երկնքից թափում փողոցի այն հատվածում, որտեղ միայնակ քայլում էր Յանսին: Նրան հուզում էին նախօրեի հուշերը, որոնք եղանակի նման խոռվ էին, սառը և անհանգիստ: Թվում էր, թե աշխարհն իր տխրությունը հենել էր օրիորդի ուսերին, և աղջիկը խոնարհվեց, արտավեց պուրակի ուտենու նման, ապա մաքրեց դեմքը ու քայլեց դեպի փոստարկողը. պետք էր նամակն ուղարկել ծնողներին. երեկ գիշեր էր

գրել՝ խնդրելով, որ թույլ տան ուսումնական ծրագրից զատ, մի քանի ամսի հավելյալ ուսում ստանալ: Նման որոշումը ոչ այնքան կրթությունը խորացնելու նպատակ էր հետապնդում, որքան հոգում ծայր առաջ ներքին կարուկ զգացողությունը հասկանալ, և թե ինչերի կարող էր այն դրդել իրեն:

Նստեց տան բակի նստարանին ու ինքն իրեն մատնեց ինչ-որ գաղտնիք լուծելուն, որը բաղեղի նման փաթաթվում էր ուղեղի ծալքերին և պայթեցնում քունքերը, մեղվի մնան խայթում պարանոցը, որից ցավը հասնում էր կրծքին ու հոգնատանց անում մարմինը, որ հարցական նշանի նման առաջ էր հակել ուսերը և սպասում էր, թե երկինքը երբ անձրև կժայթքի:

Երկինքն այնքան մթամած էր, որ ասես մի նոր ջրհեղեղ էր պատրաստում մարդկության ու քնության դեմ: Արհավիրքի սպասման մեջ լոել էին նոյնիսկ թռչունները, իսկ քամին, որ կարծես բակից դուրս թռչելու ճանապարհ չուներ, իրար էր խփում ծառերի կատարները... Ապա շանթը ճեղքեց հոծ ու սև ամպերը և ելք տվեց հեղեղին, որ կատաղած հարճակվեց դրսում հայտնված ու... իրենից չվախեցող աղջկա վրա...

Կոշիկներն անմիջապես լցվեցին ջրով, կապտած շուրթերն սկսեցին դողալ կտրատող ցրտից, իսկ կուրծքն այրվում էր ինչ-որ անհանգիստ տապից...

Էմմայի ձայնը նրան կտրեց արտասովոր մտքերից, որոնց միջոցով շարունակում էր ճանապարհ փնտրել ճակատագրի կողմից իրեն տրված անլուծելի խնդրից:

– Միրտդ արյունոտվել է, – աղջկա գլխավերևում պահելով հովանոցը՝ հարցրեց Էմման:

Յաննին ցրված հայացքով նայեց նրա կողմը:

– Արյուն, ինչ արյուն:

– Սրտիցդ հոսող ու հոգիդ տակնուվրա անող, քեզ անծանո՞թ արյուն...,- պատասխանեց Էմման՝ շոյելով նրա՝ ջրի առվակներ վաթող մազերը:

Յաննին գունատվեց Էմմայի խոսքերից: Իսկ Էմման՝ նրան վեր կացնելով.

– Մի՞թե թանաքը մեր օրերում չի բավականացնում, – գորովանքով շարունակեց աղախինը, – մեկ նամակ գրելու չափ թանաքը, որ արյունն ես սրտիցդ դուրս հանել. սիրահարվել ու մոլորվել...

– Դուք չեք կարող հասկանալ այն, ինչը նույնիսկ ես չեմ հասկանում, – մոայլվեց աղջիկը:

– Դու դեռ մանկուց էիր փորձում քեզ մտահոգող խնդիրներն ինքդ լուծել ու տառապել, օրինո՞րդ: Երեկվանից դու ոչնչի մասին չես խոսում, ոչինչ չես ասում:

Յաննին ներս գնաց, և լուսթյան մեջ բանտարկված մեծ ցավի հարցը մնաց հարց. սիրո ուժն ու հմայքը պատասխան չգտնելու մեջ է:

Հասկանալի էր, որ կյանքը վազում էր դեպի վեր, իսկ մանկությունը՝ փորձում ետ քաշել...

Գարնան շունչն ու այգաբացը Յաննիին քաշում էին դեպի պուրակ, որտեղ հեծանվից առաջ էին ընկնում նրա իրարամերժ մտքերը, իսկ ոտնակները կյանքի արագությամբ պտտվում էին՝ չհասկանալով, թե որտեղ է խաչմերուկը կամ հատող ճանապարհը:

Ամենաջինջ առավոտն էր. կիրակին արձանի նման տեղում չէր մնալու շաբաթ օրվա աշխարհակործան փոթորկի ներքո:

Արևը փայլում էր ամենաբարձր հարգի ոսկու նման և օդը լցոնում հազարավոր ծնծղաների թվացյալ ձայներով:

Երեկվա անձրևը արթնացրել էր քնած հողը, որ մեկ օրում գոլորշի ու բույրեր էր արձակում:

Գարնանային առաջին խենթությունը թոթափած երազկոտ Յաննին, վայելելու համար գարնան անսպառ բերկրանքը, դանդաղեցրեց հեծանվի ընթացքը:

Ռուրենի համար սովորական կիրակի էր, երբ բոլոր կիրակիների նման աղոթատուն էր գնալու՝ առանց համազգեստի ու առանց աշխատանքային օրվա ծանրությունների: Եվ նրան ընկերակցող Բեռնարը միակը չէր, որն ուներ գրեթե նույն կիրակին, և որի կյանքն էլ էր հոգսաշատ, ինչպես Ռուրենինը:

Թեքվեցին դեպի եկեղեցին, և երկուսի շուրթերն էլ, անկախ իրենց կամքից, նոյն հոգևոր զգացումով մրմնացացին. Երևի աղոթեցին ու շարունակեցին իրենց ճանապարհը, որը նրանց տարավ դեպի անցյալ, և Բեռնարը, կնճռոտելով ճակատը, առաջին անգամ մտածեց, թե ինչո՞ւ է Ռուրենը հենց Լոգան եկել սովորելու:

– Կծխե՞ս, – ծխախոտ փաթաթելով՝ հարցրեց Ռուրենին ու նրան պարզեց գլանակը:

Ռուրենը սև թիկնոցի գրանից հանեց ծխամորճը, գլանակը տեղադրեց դրա մեջ ու, խեղիվելով թունդ ծխից, դադարեց ծխել:

– Ռուրեն, ընկերս, երբեք չեմ հետաքրքրվել, թե ինչո՞ւ հենց Լոգան եկար ուսանելու:

Ռուրենը լոեց տարի թվացող մի քանի վայրկյան, ապա դառը ժպիտով ասաց.

– Պատմեմ, պատմեմ իրողությունը, մի կնոջ մասին, որը կուրքն էր մի ամբողջ բանակի, մեր օրերի ամենախիզախ կնոջ մասին, որն ինձանից մեծ էր չորս երկար ու ձիգ տարիներ, բայց ինձ ոչինչ չէր խանգարում սիրահարվելու համար Ռուբինա անունով այդ խենթանալու շափ խիզախ կնոջը:

– Ռուբինա և Ռուբեն... Շատ հետաքրքիր է: Սակայն ինչ կապ ունի այդ խիզախ կինը քո՝ Լոզան տեղափոխվելու հետ:

– Համբերիր, այս պատմությունը սկզբից եմ քերում մեր օրեր, – Ժպիտը դեմքին՝ պատասխանեց Ռուբենը:– Օսմանյան բռնակալության դեմ հայերի ազատագրության համար շատ մեծ պայքար է մղել այդ օրիորդը, որն ընդամենը քսանչորս տարեկան էր: Այդ տարիների բախումներից ի վեր շատ անմեղ մարդկանց կյանքեր կործանվեցին, և հեղափոխականներն այդպես համախմբվեցին ու դուրս եկան թուրքական կառավարության դեմ:

– Մի՞թե Ռուբինան զինվորական է եղել:

– Իհարկե ոչ: Նա ծնվել էր կալվածատիրոջ ընտանիքում և խիզախություն ձեռք բերել ազգային-ազատագրական շարժման մեջ: 1904 թվականին ընդունվում է Դաշնակցական կուսակցության շարքերը, որտեղ էլ ծրագրում են Արդու Համբոյի մահափորձը, որը, սակայն, ճախողվում է:

– Ինչ տարօրինակ և անհավատալի պատմություն ես պատմում, ընկերս, – նրան ընդհատեց Բեռնարը:

– Դու դեռ լսիր շարունակությունը, և վաղ է եղարակացություններ անելը, – շարունակեց Ռուբենը:– Մեկ տարի անց Ռուբինան կրկին ձեռնարկեց մահափորձ Պոլսի Ելտըզ մզկիթի մոտ, որտեղ ամեն

ուրբաթ նամազ էր անում սուլթանը: Այդ խիզախ կի-նը մեծ դժվարությամբ մզկիթին կառք է մոտեցնում, որի մեջ թաքցրած է լինում մեծ ժամացույցի նման ճիշտ հաշվարկված ոռումքը... Հուլիսի 21-ին Պողիսը ցնցվեց պայթյունից, որը խլեց բազում թուրք պաշտոնյաների կյանքեր: Սակայն սուլթանի բախտը դարձյալ ժպտաց, ու նա կրկին ողջ մնաց...

Ես էլ, շատ երիտասարդների նման, փորձում էի շփվել Ռուբինայի հետ և հնարավոր ամեն քան անում, որպեսզի մոտ լինեմ նրան, նոյնիսկ փախուստի մի քանի փորձ կատարեցի, որոնց մասին իմացան ծնողներս ու եզրակացրին, թե սիրահարված եմ, անգամ կասկածեցին, թե երևի ես անմիջական կապ ունեմ այդ պատմության հետ, քանի որ ամեն քանի պատրաստ էի հանուն նրա:

Մի օր էլ հայրս՝ Հովհաննես աղան, առանց իմ կարծիքը հաշվի առնելու, վեճ սարքեց... Մինչև հիմա էլ հիշում եմ հորս տիրական հայացքը և իշխող աչքերը, որոնց մեջ խայտում էր վախի կայծը և աչքերում լճացած արցունքը, իսկ կոկորդում՝ խեղդող մի գունդ... Եվ նա ինձ ուղարկեց Շվեյցարիա՝ սովորելու:

– Իսկ դու որևէ կապ ունեցե՞լ ես այդ գործողությունների հետ...

Այդ պահին անսպասելիորեն նրանց դեմ դուրս եկավ հեծանվորդ Յաննին, որը, տեսնելով երիտասարդներին, ճշաց և ցանկանալով խուսափել բախումից՝ դեկը կտրուկ աջ թեքեց ու իր երկաթե ձիու հետ հայտնվեց թփուտներում, որտեղից բժիշկներին հասավ նրա բարձր ճիշը:

Ռուբենը, անակնկալից սթափվելով, անմիջապես նետվեց օգնության և, առանց վարանելու,

գրկեց նրան ու տեղափոխեց քարե նատարանին, ձեռքի պայուսակից հանեց սպեղանին, բժշկական մի քանի պարագաներ և խնամքով վիրակապեց վերքը և ապա.

– Ցավո՞ւմ է, – հարցրեց:

Յաննին, կծելով շուրթը և արցունքոտ աչքերը հառելով նրան, պատասխանեց.

– Շատ...,- և ցավոտ ժպիտով նայելով Ռուբենի երազկոտ դեմքին՝ շնորհակալություն հայտնելու նպատակով ցանկացավ նրան դիմել անունով, – Սևակ, երախտապարտ եմ օգնության համար:

Բեռնարնը հազիվ կարողացավ զսպել ծիծաղն ու քթի տակ ասաց.

– Օ՛, իմ խեղճ Ռուբեն, որքան հաճախ են քեզ շփոթում: Այստեղ էլ Սևակը բախսիդ թևանցուկ արեց:

– Միջթե դուք Սևակ Չիլինկիրյանը չեք, – զարմացավ Յաննին:

– Կարծում եմ, որ այսօր, Ձերդ գեղեցկություն, եղբայրներից երկրորդին եք հանդիպել, – հոհոաց Բեռնարը:

– Այս ինչ է խոսում, – մոռանալով ցավն ու շրջվելով դեպի Ռուբենը՝ զարմացավ Յաննին:

– Այն, ինչը գուցե և կզարմացնի շատերին, իրականություն է. ես Ռուբեն Չիլինկիրյանն եմ՝ բանաստեղծ Սևակ Չիլինկիրյանի բժիշկ եղբայրը:

Նոյն ներքին անհանգիստ թրթիոր պատեց Յաննին, որը շփոթմունքից սկսեց կարմրել, իսկ Ռուբենի քունքի վրա լարվածությունից նկատելի դարձավ փքված երակի տրոփիյունը՝ ցույց տալով, որ սիրտն ինչ-որ տեղ է շտապում կամ ինչ-որ մեկին է սպասում:

Նրանցից աննկատ, բայց ոչ հեռու զբոսնում էին Ժուազն ու Հերքերտը: Վերջինս վաղուց էր նկատել նրանց, բայց հարմար պահի սպասելով՝ լռում էր: Նա խորապես հավատում էր իր կանխազգացումներին ու պահը ձգձգեց այնքան, մինչև հասունացավ:

Եվ միշադեպն իրեն սպասեցնել չտվեց. երբ Յաննին փորձեց քայլել, ցավից կամ էլ միտումնավոր, սայթաքեց, իսկ Ռուբենը ստիպված նրան վերցրեց ձեռքերի վրա:

Հերքերտը կատաղությունը չկարողացավ զսպել և միանգամից մատնացույց անելով նրանց՝ ասաց Ժուազին:

– Կաց: Միջեւ Յաննին ընդունակ է զբոսայգում, այն էլ՝ գլխավոր, ինչ-որ մեկի հետ սիրաբանել:

Ժուազի աչքերը կատաղությունից կարմրեցին, երբ տեսավ նրանց ու խցանի նման պոկվեց տեղից:

– Լսիր, տղա՛, ես կտրորեմ քեզ, – բռունցըների մեջ հավաքելով Ռուբենի օճիքը՝ նա սկսեց ամրող ուժով թափահարել երիտասարդին:

– Գժվել ես, բաց թող, – բղավեց Յաննին, – միջեւ դու կարող ես լավությանը նման ձևով պատասխանել ու շնորհակալություն ասելու փոխարեն, հարվածել:

– Մի քանի ծամծմված բառեր կապկպելով՝ բանաստեղծը շոյում է քեզ և փորձում մխիթարել, որովհետև օրիորդը վնասել է ոտքը, – հեգնանքով բղավեց Ժուազը:

Բայց Ռուբենը չափազանց նրբանկատ գտնվեց և Յաննիի ներկայությամբ ոչինչ չասաց: Պարզապես մի քանի անգամ թփթփացրեց Ժուազի ուսին՝ հակացնելով, որ դեռ կհանդիպեն, ու հեռացավ՝ իր թիկունքին տանելով Յաննիի հայացքը...

Տուն հասնելուն պես զայրացած Յաննին հարց-  
րեց եղբորը.

– Ինչո՞ւ էիր հարձակվել քժիշկի վրա:

– Ես չեմ հասկանում քո հարցը, միթե դա բա-  
նաստեղծը չէր:

– Գրողը տանի, դու ինձ խելագարության կհասց-  
նես, – մի պահ ափերից դուրս եկավ Յաննին, ապա  
հանգստանալով՝ ցածրացրեց ձայնը, հուզված մո-  
տեցավ եղբորն ու ասաց.

– Ես Էլ Էի շատ զարմացել, որ դա Սևակը չէ,  
այլ Ռուբենն Է՝ Սևակի երկվորյակ եղբայրը... Եվ,  
պարզվում է, որ նրանք զույգ եղբայրներ են՝ քժիշկ  
ու բանաստեղծ:

– Միթե հնարավոր է նման բան, ասես նույն մար-  
դը լիներ, – կմկմալով պատասխանեց Ժուազը:

– Փաստորեն՝ հնարավոր է: Խնդրում եմ քեզ, նե-  
րողություն խնդրիր նրանից: Մեր դաստիարակու-  
թյանը հարիր չէ նման պահվածքը:

– Ես ընկերաբար ներողություն կիսնդրեմ, երախ-  
տահատուց կլինեմ քեզ օգնելու համար, հենց վա-  
ղը կհանդիպեմ նրան ու կփորձեմ զրոյցի եզրեր  
գտնել: Իսկ դու հասկացիր ինձ. Ես քո հանդեպ մեծ  
պատասխանատվություն եմ կրում: Մեր ծնողները  
քեզ ինձ են վստահել, և ես պետք է քեզ հեռու պա-  
հեմ ամեն տեսակի փորձություններից, – ապա համ-  
բուրեց քրոջ ձեռքը և Ռուբենից ներողություն հայ-  
ցելու խոստում տալով՝ դուրս եկավ Յաննին ննջա-  
սենյակից:

Ինքնազդի Հերբերտը շտապեց քաջալերել նրան.

– Դանակդ սո՞ւր է, – հարցրեց նա Ժուազին, – երևի  
դու խիստ կպատժես բանաստեղծին՝ իրեն անպար-  
կեշտ պահելու համար:

– Բժիշկն էր, – գլուխը կախ պատասխանեց Ժուազը: – Յաննիին օգնողը բանաստեղծի բժիշկ Եղբայրն էր: Ռուբեն է անունը, պետք է հանդիպեմ ու ներողություն խնդրեմ նրանից. Ես չափազանց վատ խոսեցի:

– Սպասիր, մի՞թե դու պատրաստվում ես ինչ-ոք բժշկից ներողություն խնդրել կամ ար-դա-րա-նալ, – կարծես մի գունդ կանգ առավ Հերբերտի կոկորդին ու վախից ճակատը քրտինքով պատվեց, դեմքը սփրթնեց, իսկ ներսում ամեն բան սկսեց տակնուվրա լինել: «Իսկ եթե հանդիպեն, – մտածեց Հերբերտը, – իսկ եթե այդ բժիշկը նրան պատմի ամեն բան... Այդ դեպքում ես ոչ միայն կկորցնեմ Յաննիին, այլև մեր ընկերությունը...»:

Հերբերտը մի քանի քայլ ետ ընկավ Ժուազից. Վախը ծփում էր նրա աչքերում, և մեկն ասես ուղեղում փայտով խառնում էր մեղվափեթակը. «Ամեն բան խառնվեց, բոլոր հաշվարկների մեջ՝ անընդհատ սխալներ ու թերացումներ...», – վախվորած բղավում էր նա մտքում, նախատում ինքն իրեն...

Նոյնիսկ հրաժեշտ չտվեցին միմյանց. Մտահոգ Հերբերտը չնկատեց, թե ինչպես Ժուազին կանգնած թողեց այգում ու շտապեց տուն, ինչն անհասկանալի էր ընկերոջ համար.

– Ի՞նչն է այդքան մտահոգում Հերբերտին, երևի տեսարանից էր «անհանգստացել», – քթի տակ ժպտաց Ժուազը:

Տուն հասնելուն պես Հերբերտը մեջքի վրա պառկեց բազմոցին և, լարելով միտքը, ջանաց հասկանալ, թե ինչպես պետք է դուրս գա այս խառնաշփոթից... լարիրինթոսից. ուր էլ գնում է, հայտնվում է նոյն տեղում: «Ես կկորցնեմ նրան... Ինչ ուզում

է լինի, ես պատրաստ եմ ճանապարհից հեռացնել ցանկացածին, ով կհայտնվի մեր միջն...»:

Երկար ու տառապալի մտածմունքները նրան մատնեցին անհանգիստ, մղջավանշային երազների՝ ամենուր արյոն, արյոն, արյոն...

Արթնացավ արյան հոտից, մի քանի րոպե տևած քունը ցնցեց նրան:

Դուռը թակեցին:

Գաստոնն էր, որ նայեց Հերբերտի սարսափած աչքերին, սփրթնած դեմքին, անձրևի կաթիլների նման ճակատից թափվող քրտինքին և «պետք է հանգստություն բեմադրել» մտածելով՝ սրբիչը մեկնեց նրան:

– Ինձ հետ կքաշե՞ս կախաղանի պարանը, – ասաց Հերբերտը:

– Ինչ կախաղան, ով է պատասխան տվողը, պարո՞ն:

– Շան որդին, որը ճանապարհիս է կանգնել՝ ասես կոկորդիս կանգնած ոսկոր...,- և բաժակով թունդ խմիչքը մեկնեց Գաստոնին.

– Խմի՞ր, տաքացրու կոկորդդ:

Ծառան իսկույն հասկացավ, որ հենց այնպես իրեն խմիչք չէին առաջարկի: «Երևի, ինչ-որ շահ ունի կամ հրաման, որից ես կհրաժարվեմ», – մտածեց և ցանկացավ հարց ու փորձի միջոցով պարզել տիրոջ անհանգստության պատճառը, բայց վերջին ճախողումը հիշելով՝ ոչինչ չհարցրեց. այն չարությունը, որը լերդացել էր Հերբերտի կրծքի տակ, չի կարող դուրս չպրծնել նրա հետագա քայլերի մեջ...

Մուրենն ու Բեռնարը երկար ժամանակ լուր էին՝ ամեն մեկն իր մտքերի հետ. միս ու արյուն, կերպար

ունեցող մտքեր, որ երկուսի մոտ էլ նոյն անունն ուներ՝ «Յաննի»:

– Օրիորդը երևի Ասակի ծանոթներից է, – լոռությունը խզեց Բեռնարը:

– Երևի, – կարճ ու հստակ պատասխանեց Ռուբենը:

– Ինչո՞ւ լոեցիր, երբ սկսեց թափահարել օձիքդ: Ինչ-որ տարօրինակ հանգստություն կար պահվածքիդ մեջ:

– Իսկ աղջիկը. մի՞թե կարելի էր նրա ներկայությամբ վեճի բռնվել: Ես չցանկացա նրան վատ դրության մեջ գցել:

– Միևնույն է, դու քեզ նման չեիր:

– Իսկ ինչ է, կտոր-կտոր անեի նրան:

– Արդեն ուշ է, – պատասխանեց Բեռնարը:

– Ամեն մի չկայացած արարք դեռ ուշը չէ, – քթի տակ ժպտաց ընկերը...



Արևը կախվել էր ձորերի վրա:

Տան վերևի հարկից երևում էր եկեղեցու՝ ոսկու նման փայլող գմբեթը: Բարձրացող տաք գոլորշին չորացնում էր երեկվա անձրևի հետքերը:

Ռուբենը մոտեցավ բակի ցայտադրյուրին, խմեց, նայեց երկնքին, խաչակնքեց դեմքը ու շտապեց հիվանդանոց: Միակ մարդը, որ նկատեց ընդունարանում, Ժուազն էր: Չմոտեցավ ու աննկատ մնաց:

Աշխատասենյակում անհամբեր սպասում էր. «Ինչո՞ւ է եկել, մի՞թե զղացել է երեկվա պահվածքի համար», – միտքը լեզվին դեռ չհասած՝ դրան թակոցը նրան հասկացրեց, որ իր աննկատ մնալը տեղին չէր:

Ժուազն էր:

Բարիդրացիական հարաբերություններ հաստատելու համար նա ժպիտով ասաց.

– Ներս եկեք:

– Ողջոյն, բարեկամս, հոյս ունեմ՝ չեմ ուշացել:

– Ինչ-որ տեղ եք շտապում, – հարցրեց Ռուբենը:

– Բնավ, – Ժուազն անհանգստությունից սկսեց կծոտել շուրթը, լարեց լսողությունն ու սպասեց, թե ինչ արձագանքի կարժանանա Ռուբենի կողմից:

Լոռությունը պերճախոս էր, և Ժուազն ասաց.

– Ես Ձեզ շփոթել էի Ձեր եղբոր՝ Սևակի հետ, կարծեցի, թե նա է փորձում նեղացնել Յաննիին...

– Ինչ նեղացնել, գուցե օգնել: Թեև, մեծ հաշվով՝ տարբերություն չկա, օգնությունն օգնություն է, պարզապես ընկալելի չէ, որ բանաստեղծն էլ կարող է օգնել, վարորդն էլ, ոսկերիչն ու բժիշկը՝ նույնպես:

– Բարեկամաբար հայցում եմ Ձեր ներողամտությունը, ես այդ պահն ընկալեցի իբրև անհանգստացնել: Հուսով եմ, որ Ձեզ նման առաքինի մարդն ուղղակի կների ինձ:

– Հոգ չէ. իմ փոխարեն կարող էր նաև մեկ այլ բժիշկ լինել: Ինչպես է Յաննիի առողջությունը, – անհարմար խոսակցությունը շրջանցելու համար հարցրեց Ռուբենը:

Նկատելի էր Ժուազի՝ անհարմար վիճակի պատճառով կարմրելը:

– Երեկ մտահոգ էր կատարված միջադեպից, անկեղծ լինեմ. նրա խնդրանքն էր, որ ես հանդիպեմ Ձեզ, չնայած ես ինքս էլ էի պարտավոր գալ:

– Շնորհակալ եմ նման պատվի արժանացնելու համար, – ժպտաց Ռուբենը և սրտում շերմ խլրտոց զգաց:

Ժուազը ընկերաբար ձեռքը պարզեց Ռուբենին, ասես հաշտությունը հենց այդպիսին էլ պետք է լիներ:

Վերջինս էլ իր հերթին ընդունեց մեկնված ձեռքը: Նոյնիսկ կատակեց.

– Ինքնազոհաբերության եք գնացել հանուն Յաննի:

– Իսկ Դուք մտածեք, որ սա կարող է նաև զոհաբերություն չլինել: Կամ անվանեք ինչպես կուգեք: Իդեալ, իմ հրավերը ուժի մեջ է:

– Մի՞թե մենք պայմանավորվել ենք ինչ-որ հրավերի վերաբերյալ, չեմ իիշում:

– Մոտ օրերս սիրով հրավիրում եմ Լոգանում նոր բացված մի խորտկարան, որտեղ հրաշալի՛ են ձուկ պատրաստում:

– Սիրով ձուկ էլ կուտեմ, արջ էլ, – կատակեց Ռուբենը:

Եվ միասին քայլեցին դեպի դուռը, գլխով հրաժեշտ տվեցին միմյանց՝ հանդիպման ակնկալիքով, և Ժուազը, գոհ ընդունելիությունից, վերադարձավ սուն:

Իսկ Ռուբենը մտածում էր. «Տեսնես այստեղ ինչ են մտածում հայերի մասին, և մի՞թե տասնութամյա գերմանուհու հպարտությունը թույլ կտար եղբորն ինձ մոտ ուղարկել: Այդ օրիորդն ինձ զարմացնում է»:

Ու մինչ Ռուբենը, հիացմունքը չթաքցնելով, քարձրաձայն կմտածեր օրիորդի մասին, Յաննին տան չորս պատերի մեջ մի քանի կիլոմետր մեկ աջ, մեկ ձախ էր քայլում և տեսնելով Ժուազին՝ սկսեց հարց ու փորձ անել.

– Տեսա՞ր բժշկին, ինչ ասաց, խոսեցի՞ք: Խոսի՛ր, ինչ ես լուր կանգնել:

– Հարցրու մեկ-մեկ: Տեսել եմ. ոչինչ չստացվեց, նա բարձր բղավեց ու փրփրած գետի նման ինձ քշեց սենյակից: Հետո էլ ոչինչ չեմ հիշում. գետն ահավոր էր քշում, – ծիծաղը մի կերպ թաքցնելով՝ ասաց Ժուազը:

– Մի՞թե նա ընդունակ է այդքան կոպիտ լինել, – պատկերացնելով ինչ-որ անորոշ տեսարաններ՝ միամտորեն հարցրեց Յաննին ու ավելացրեց վիրավորված, – մի՞թե ոչինչ չասաց...

– Ոչինչ, ինձ ծաղրեց ու «Չես ցանկանում միասին արջ ուտելու գնանք» ասաց:

– Ինչպես թե՝ արջ, – բարկությունը չզսպելով ու խոռված հայացքով հարցրեց Յաննին:

– Ես ներողություն խնդրեցի, իսկ նա հետաքրքիր մարդու տպավորություն թողեց: Շատ ճիշտ եղավ, որ նրա մոտ գնացի:

Էմման, որ հետևում էր նրանց գրույցին, միջամտեց.

– Իսկ երիտասարդն ինչ ազգություն ունի: Դուք ծանոթացաք:

– Բժիշկ է, – միասին կրկնեցին Ապակեները, – Լոգանից չէ, հայ է, Կոստանդնուպոլսից է եկել, ուսանում է Լոգանի բժշկական համալսարանում: Համատեղում է աշխատանքն ու ուսումը:

Էմման խոր հոգոց հանեց և ոչինչ չասաց, բայց դա դեռ չէր նշանակում, որ նա ոչինչ չէր մտածում. որոշեց, որ առաջին իսկ հարմար առիթով, ասենք առողջական ինչ-որ խնդրով կայցելի բժշկին:

Առավոտյան ժամը տասին մոտ էր: Համալսարանում քննական շրջան էր սկսվել. Ռուբենը շատ ծանրաբեռնված օրեր էր ապրում՝ ճակատագրական օրեր. պետք է հասցներ և՛ դասերը, և՛ աշխատանքը:

Ժամանակի սղության պատճառով վերջին շրջանում ծնողներին նամակ չէր գրել: Ինչ-որ քան խանգարում էր սեփական կյանքին ավելի մտերմիկ վերաբերվել, անտարբեր էր դարձել ինքն իր նկատմամբ... Համալսարանում հանդիպեց իին ծանոթների, որոնք առաջին կորսի սկզբում հանրակացարանի հարևաններն էին: Ողջագուրվեցին. վաղուց չին տեսնվել: Բեռնարը, որ ամենաոգևորվածն էր, շտապեց ընկերներին անակնկալ մատուցել.

– Հիանալի առաջարկ ունեմ. այս շաբաթ կամ կիրակի անգլիական մի թիանավ վարձենք ու թիավարելով հասնենք Ֆրանսիա: Եվիան քաղաքը կտեսնենք, որը ֆրանսիական արիստոկրատիայի լավագույն ամառանցն է համարվում, կզբունենք, քաղաքի նշանավոր արվարձանները կտեսնենք, մի լավ կիսմենք և կվերադառնանք, – ասաց նա:

Երիտասարդները, որ ամեն քան գունավոր ակնոցներով էին տեսնում, մի լավ հրճվեցին այդ ոգևորիչ առաջարկից:

– Մի լավ կիսմենք և ետ կդառնանք թիավարելով, – քմծիծաղեց Ռուբենն ու շարունակեց, – այս կիրակի Լոգանում, այսինքն՝ Լեմանի վրա, տեղի կունենա *Grande Regate International*-ը: Մասնակցելու են եվրոպական գրեթե բոլոր պետությունները՝ իրենց թիավարողներով և մրցումային մասնավոր նավակներով, որոնք բերել են իրենց հետ: Կմրցեն տասական նավակներով: 2 000 մետրը պետք է թիավարեն 3 րոպեում, – ասաց Ռուբենը:

– Ուրեմն՝ կիրակի օրը կհանդիպենք Լեմանում, – ասացին ընկերները, – լուսաբացից ազատ կլինենք ու օրը կվայելենք մինչև երեկո:

Բեռնարը չդժգոհեց, բայց նաև գոհության ոչ մի նշան չցուցաբերեց: Միայն քմծիծաղով ասաց.

– Դե, Ռուբենի հրավերը խելքին ավելի էր մտությանը, ձեռքը դնելով նրա ուսին, ասաց.

– Մի օր Էլ քո ասածով կլինի, գուցե՛ լեռնագնացություն, –ու միասին ծիծաղելով՝ անցան լարաններ:

Ցերեկվա 12-ն անց էր, երբ Ռուբենը մտավ ճաշարան, որտեղ Շվեյցարիայի դաշտային ծաղիկների եփուկով թեյ էին վաճառում:

Ծեր կինը, որն ամեն անգամ Ռուբենին թեյ տալիս իր հիացմունքն էր հայտնում զերմանացիների, և, ըստ իրեն, նրանց՝ թեյից Էլ քաղցր լեզվի մասին, չգիտես ինչու, այնտեղ չէր:

Որոնող հայացքով փնտրեց նրան. դժվար թե խոշորամարմին կինը ճաշարանում լիներ, և նրա աղմուկը չհասներ Ռուբենին: Մի տեսակ կարոտած՝ վերցրեց թեյը, մաքուր թուլթ ու գրիչ և դուրս եկավ պատշգամբ: Մինչ կլսեր վերջին դասախոսությունը, ցանկացավ մի նամակ գրել ծնողներին. կարոտել էր Պոլսի ամեն թուփ ու ծառին, մտահոգ էր երկրի քաղաքական վիճակի համար:

Թերևս, նամակը երկար չէր լինի, բայց ժամանակը կրկին նրան չբավականացրեց. ուետ չսկսած՝ կանչեցին...

Համալսարանին կից *Pinte Besson* բիստրոյում կարծես խրախճանք կար, որն այնքան էլ չէր գոհացնում Ռուբենին. երիտասարդները, լավ իմանալով, որ Ռուբենը երբեք ժամանակ չի վատնում սրճարանների ու ժամանցային այլ վայրերի վրա, կատակով հորդորում էին, որ մեկ գավաթ գարեջուրը նրան չի ուշացնի ինչ-որ գործերից կամ սիրային հանդիպումներից....

Երեկոն մոտենում էր:

Նրան հիվանդանոցից ուղարկել էին վերապատրաստման՝ որպես քննական վերջին շրջան։ Դասընթացների առաջին իսկ օրը հերթապահություն էին նշանակել զինվորական հոսպիտալում։ Նրան ուղեկցում էին ևս երկու բուժակներ։ Իր մարտական և բժշկական գիտելիքների համապատասխան՝ նրա հետ հաշվի էին նստում նույնիսկ ավագ բժիշկները։

Այդ երեկո կարծես հերթապահությունը մեծ փորձություններով սկսվեց. ծառայողական միջադեպի ժամանակ հրազենային վերք ստացած հիվանդ ընդունեցին. համակարգային կարևոր օրգանների պատովածքներով ներքին արնահոսություն...

Միակ բժիշկը, որ պետք է Աստծուն կրեր իր հոգում և նրանով առաջնորդվեր, Ռուբենն էր։

Ամեն բան պատրաստ էր՝ և վիրահատարանը, և բուժակները, իսկ Ռուբենը սպասելու ոչ մի վայրկյան չուներ, հաջողությունը նրան կտաներ դեպի բժշկական պառնաս։

Նախ բժշկական անձնակազմը շատ պատրաստակամ գտնվեց. երբ նրանք նայեցին բժշկի աչքերին, նա միայն ասաց.

— Լսե՞լ եք հայտնի առածն այն մասին, թե երեք վախսկոտի վախսն ավելի պակաս է, եթե նրանք միասին են, քան մեկ քաջի վախը, եթե նա մենակ է։

Եվ նրանք դադարեցին աջ ու ձախ նայել, ինչպես մինչ այդ անում էին։

Երեք ժամ տևած վիրահատությունն անցավ բարեհաջող՝ առանց բարդությունների ու առանց խնդիրների. և մեկը մյուսի աշխատանքից գոհ՝ դուրս եկան վիրահատարանից, սակայն հանգստա-

նալու համար դեռ վաղ էր. կարող էին լինել հետվիրահատական բարդություններ:

Հիվանդասենյակում, չխախտելով իր սովորական զգուշավորությունը, նա չէր կարող պառկել ու քննել: Ավելի վստահ և մանրամասնորեն ստուգելու համար հիվանդի հետվիրահատական վիճակը նա մի քանի ժամ ներս ու դուրս արեց վիրահատարանում: Տասնմեկին մոտ էր, երբ ինչ-որ մեկն զգուշությամբ թակեց հիվանդասենյակի դուռը. Ռուրենը, հազուստը վրան, պառկել էր:

– Ես Ձեզ ուզում եմ խնդրել, պարոն, որ տուն գնաք և հանգստանաք. դա պարտադիր է, քանի որ ամեն քան արդեն նորմալ է, և տունն էլ շատ հեռու չէ. հարկ եղած դեպքում Ձեզ իսկույն կկանչենք:

Ռուրենը ոչ թե համոզվեց, այլ ցանկացավ ուղղակի տանը հանգստանալ, միևնույն է՝ նա արդեն անելիք չուներ, նաև եկել էր փոխարինող բժիշկը:

Հրաժեշտ տվեց աշխատողներին:

Տան ճանապարհին միտքն անընդհատ ուշացրած նամակն էր ծնողներին, ընկերներից էլ ոչ մեկը վերջին օրերին նամակ չէր գրել, ու նա ոչչից տեղյակ չէր: Աստծո կամոք, թե պատահականությամբ նա որոշեց փոստարկը մեկ անգամ էլ ստուգել, չնայած՝ առավոտյան արդեն ստուգել էր. նամակն ուղարկված էր Պոլսից՝ հարազատների կողմից. մի քանի նամակ՝ մեկ ծրաբի մեջ: Մենյակ մտնելով՝ անմիջապես բացեց նամակը. հայրն առաջին իսկ տողից դիտողություն էր արել որդուն.

«Մենք մրահոգված ենք քո լրությամբ. դու քո նամակների մեջ ոչ մի լուր և ոչ մի հերաքրքիր նորություն չեն պակտում քո կյանքից: Ես ոչ ընկերների, ոչ բարեկամների չեմ կարողանում պարասիսնել, բացի այն բանից, որ

դու շատ գրադած ես և դժվարությունների առաջ ես: Քեզանից միայն հարցումներ ենք կարում, եթե կուզես, մենք էլ հարցումներով նամակ կուղարկենք: Մի խոսքով, քեզանից արացած նամակները զուրկ են որևէ շահեկանությունից: Ամեն բողիդ մեջ Պողի խնդիրներն են, ամեն բառիդ մեջ՝ միայն երկրի ծանր վիճակով հետաքրքրվելու: Բոլորը քեզ մեծամիտ են համարում, որքան երկար լուս, այնքան պիկի մրածեն, որ դու Լոզան գնացիր ու մոռացար բոլորին...»:

Երկար կկարդար նամակը, բայց փակեց, մի պահ մտքով գնաց մտահոգված հարազատների մոտ... Առանց շաքարի թեյն արդեն լցրել էր ու մինչ կկարդար նամակները, այն հասցրել էր սառել. մի քանի կում խմեց, զգաց դառնությունը ու որոշեց առաջին իսկ բովելից պատասխանել նամակներին.

«Միրելի հայր իմ և անուշ մայր իմ,

Սրացած ձեր ուղարկած նամակները: Ձեր առողջության համար մըրահոգ եմ և միշտ աղոթում եմ: Լուսություն բարորինակ եք գրնում և չեք մըրածում պատճառ գրնել հապաղումի համար: Աշխարհանքը հոգնածություն է առաջ բերում, հոգնածությունն էլ՝ հիվանդ վիճակ, դա էլ իր հերթին՝ լուսություն: Գործի մեջ ոչ ծովություն, ոչ մոռացություն կա: Չգրելուս պատճառները երեքն են. նախ՝ բացարձակապես ժամանակ չունենալու քննությունների մոդենալն է, ուսման հետ համարեղ՝ աշխարհանքը, որ բավականին ժամանակադրամ է, և կա մեկ պատճառ ևս, որ չեմ կարող ասել, Ասրծո կամոք, երբ հանդիպենք, կպարսեմ այդ մասին: Բարեկամներն էլ իմ վիճակով չեմ, որ մըրահոգ եմ. բոլորի նպարակը մեկն է՝ հասպարպվել Լոզանում: Միրելի հայր, ամենքին թվում է, թե ես այսրեղ փառքի մեջ եմ ապրում, ամենքին թվում է, թե ես հարսարություն եմ դիզել, դուք միայն ձեր մասին մըրածեք: Այնքան եմ հուսահարպվում նա-

մակներից, դրանք միևնույն բովանդակությունն ունեն, նոյն հարցերը, թե որքան ֆրանկ եմ աշխատում և այսպես ցեղափոխվելու համար որքան ֆրանկ է հարկավոր: Անկեղծորեն ներողություն եմ խնդրում նամակն ուշացնելու համար, որի պատճառը անկախ իմ կամքից է եղել, ընկերներին էլ փոխանցիր, խնդրում եմ, թող բոլորը իմանան պատճառը: Ներողություն եմ խնդրում, որ չեմ կարող ամենքի նամակների պատճառիս ժամանակին դալ:

Բարներ, սիրով՝Ռ. Չինկիրյան»:

Սիրտը տեղն ընկավ վերջապես: Ծնողներին հասցեագրեց նամակը, որն առավոտ վաղ պիտի փոստատարին տար: Հանգստանալ էր պետք: Նա առավոտյան պետք է գնար Լեման լիճ, չէ՞ որ իր որոշումից հետո էր կայացել ընկերների համաձայնությունը:

Մի ամբողջ գիշեր հանգիստ քնելուց հետո առավոտյան նրան արքնացրին մղճավանշային ինչ-որ ձայներ: Դուն թակոցից արդեն պարզ էր, որ քնով է ընկել: Ընկերները՝ Բեռնարի գլխավորությամբ, եկել էին Ռուբենի ետևից: Երևի պետք էր շտապել. դուն մյուս կողմի աղմուկը, որ բարկացնում էր նրան, ոչ միայն հրապարակ, այլև Լեման էլ կհասներ, եթե դուռը չբացեր:

– Օ՛, Ռուբեն, սիրելի բարեկամս, ինչ լավ է, որ ավելի քան պատրաստ եք, այն էլ՝ շատ լուրջ հանդիսատեսի դերում, – բարկությամբ ասաց բժիշկ ընկերը:

– Մինչ ես կպատրաստվեմ, կարծում եմ, դեմ չեք լինի մեկ բաժակ առանց շաքարի թեյ խմել, Բեռնար, ինձ թվում է՝ բոլորին թարմանալ է պետք:

– Ամենախին դեմ չեմ չեմ, – պատճառանեց նա, – միայն շտապիր, թիավարները շուտով կգրավեն լիճը:

Թեյլ այդպես էլ փաթեթից դուրս չեկավ, և ոչ մեկը շշտապեց խմել այն, միայն շտապեցնում էին Ռուբենին: Դոնից դուրս էին եկել, երբ հիշեց, որ նամակը փոստարկող չի գցել, ետ դարձավ, վերցրեց սեղանին դրված նամակը, համբուրեց, կրկին անզամ Աստծոն խնդրեց, որ պահապան լինի ծնողներին, և այն փոստարկողը գցեց:

Կառապանը չէր հասցնում նույնիսկ նկատել, թե ձիու սմբակներն ինչ արագությամբ են վեր բարձրանում-իջնում. միայն թե ժամանակին տեղ հասցնի երիտասարդներին:

Լեմանի ափը լեփ-լեցուն էր: Ռուբենն այնպիսի հիացմունքով էր նայում, ասես երբեք ծով չէր տեսել, ոչ էլ ծովի ափին էր մեծացել և կարծես առաջին անգամ էր խաղաղություն ըմբողջնում...

Ընկերները նրան իր զգացումների հետ մենակ թողեցին:

Բարի ժպիտով հիշեց Շուրյան ընկերոջը:

– Ե, Պետրոս, «Ինչո՞ւ ապշած են, լըճակ, // Ու չե՞ն խայտար քու ալյակր...» գրելուց լիճ չտեսած՝ գրական գլուխգործնց ստեղծեցիր, իսկ ի՞նչ կգրեիր, եթե այս խենթությունը տեսնեիր...

Լիճն ալիքված էր և փրփրում էր օճառաջրի նման...

Թիավարվող նավակներն անկառավարելի էին, եղան նաև շրջվող նավակներ...

Միցանակները կիսեցին լոգանցիներն ու միլանցիները:

Երեկոն իջավ աննկատ: Աչքերի դիմաց ու աչքերի մեջ ծփում էր լիճը...

Առանձնացավ. բառերը հոսում էին անարգել.

«Ինչ անոյշ է հանդարդիկ հովն իրիկվան՝  
Սնյրամուսի քաղցրիկ շունչովը լեցուն.  
Ծաղիկները կմթագնին, կհևան,  
Կնախողի թռչնիկին երգը ցնծուն.  
Ինչ անոյշ է հանդարդիկ հովն իրիկվան...»

... Բլուրեն վար, սեզ ծառերու շուրին քով,  
Կ'սրվերոտի չքնաղ լիճը Լեմանի.  
Չնաշխարհիկ պշտուիի նազանքով  
Ամիկն ավազը կզգվե, կշիկնի,  
Բլուրեն վար, սեզ ծառերու շուրին քով...»:

Խրախճանք, ափին խորոված ձկներ, ճագարներ,  
լիառատ կերակուր, որը չէր գրավում նրան:

Մոտակա պանդոկում, որը միշտ լեփի-լեցուն էր  
լինում զբոսաշրջիկներով և ուսանողական ծրագ-  
րով եկածների ներկայությամբ, ինչ-որ այլ աշ-  
խուժություն էր տիրում, որին անտարբեր չմնաց  
Ռուբենը, հանկարծ մի այնպիսի ձայն հնչեց, որից  
երակներում արյան եռք սկսվեց ու արտասովոր մի  
զգացում պարուրեց նրան. մթության միջից լսվող  
և երաժշտությանը, և ձայնին նա սկսեց մեծ հիաց-  
մունքով հետևել և մոտեցավ պանդոկին, որից նրա  
դեմ-դիմաց դուրս եկավ Ժուազը: Հասկանալով, որ  
նա՝ «... տեսնես՝ եղբայրներից ո՞ր մեկը...», շտա-  
պում է պանդոկի կողմը՝ որպես ծանոթ առաջ գա-  
լով՝ ժպտաց ու.

– Ողջոյն, բարեկամս, – ասելով՝ ձեռքը մեկնեց  
Ռուբենին, որ շփոթված նայեց նրան ու պատասխա-  
նեց բարևին:

Եվ քանի որ Ժուազը կասկածելի էր նայում, Ռու-  
բենն անմիջապես հասկացավ, որ նա վստահ չէ, թե

եղբայրներից որ մեկին է հանդիպել, ձեռքը մեկնեց և պաշտոնապես ներկայացավ՝ Ռուբեն:

Երկուսն էլ միաժամանակ ժպտացին և տղայաբար շփոթված՝ ժուազն ասաց.

– Խեցգետնով ապուրը յուղոտ էր, իսկ բրնձով հավի համը դեռ բերանում է... Իսկ Դուք երևի ժամանակ էլ չունեք ինձ ու իմ շատախոսությունների համար...

– Ես, իհարկե, ժամանակ չունեմ, բայց ամեն առավոտ փոստատարին հարցնում եմ. «Մի՞թէ ինձ համար հրավիրատոմս չկա», – խորամանկ կատակին կատակով պատասխանեց Ռուբենը:

– Ձեր այցելուները՝ հիվանդներ, թե՞ բողոքներ ունեցողներ... չգիտեմ էլ, թե ինչպես անվանեմ նրանց, այնպես էին Ձեր աշխատասենյակի դուռը շրջապատել, ասես՝ մատուռ լիներ...

– Մի՞թէ նկատելի է իմ կին այցելուների գրոհը, – շփոթվեց ու կարմրեց Ռուբենը և կատակի տալով՝ փոխեց խոսակցության թեման: – Շշերով գինի ենք բերել և յուղոտ խեցգետնով կհամտեսենք:

Ու մինչ նրանք քննարկում էին սպասվելիք երեկոյի շարունակությունը, զինվորական շքախումբը ճեղքելով՝ կամացուկ իրենց էր մոտենում Յան-նին...

Այլս հնարավոր չէր թաքցնել ուրախությունը, և ժուազի հետ շտապեց ընդհառաջ գնալ օրիորդին, որը, թվում էր, թե համատարած մթության մեջ լուսավորում էր շրջապատր...

Ռուբենը բարևելիս համբուրեց օրիորդի ձեռքը:

Հերքերտը, որ Յաննի ցանկությանը հակառակ՝ ուղեկցել էր քրոջն ու եղբորը, մոլեգնությամբ նայում էր նրանց:

– Հերբերտ, ընկերս, դու ծանո՞թ չես Ռուբենին։ Այսինքն՝ գիտես նրա մասին մի որոշակի պատմություն։

– Ծանոթ ենք, – հավելեց Ռուբենը։ – Մի շատ տհաճ միջադեպի ժամանակ ենք ծանոթացել, երևի բարեկամդ մոռացել է։

Ուր որ է՝ Հերբերտի սիրտը տեղահան կլիներ, եթե Ռուբենը չավելացներ։

– Մի՞թե մոռացել եք Զեր վերջին հարձակումն ինձ վրա, մի՞թե նրա հորդորով և նրա ցուցումով չծագեց վեճը։

Հերբերտի արյունը կանգ առավ երակներում, դեմքը փայտի գույն ստացավ ու բավական էր ևս մեկ խոսք, որ նա տեղն ու տեղը տապալվեր։ Բայց ընկերը բավականին խելացի գտնվեց և Հերբերտի փոխարեն ևս ներողություն խնդրեց։ Այն, որ Ռուբենը ներողամիտ էր, հասկացել էին նրանք, բայց որը Հերբերտի սրտում վրեժիսնդիր լինելու ավելի մեծ ցանկություն առաջացրեց։ Նա հասկացավ, որ բժշկի քայլերը նրան տանում են դեպի Յանսիի սրտի ճանապարհ, որը, իրեն հակառակ, այնպիսի հեշտությամբ է հարթում Պոլսից եկած ինչ-որ մի ուսանող։

– Բարեկամս, – Հերբերտին օգնության հասավ Ժուազը, – եկ մոռացության տանք այդ դեպքը և պատիվ համարենք հաջորդ շաբաթ ճաշել զինվորական մի ամբողջ գնդի ճանաչված բժշկի հետ։

– Այն, բարեկամս, – Ռուբենը բարեկամաբար ընդունեց Ժուազի պարզած ձեռքը, – շուտով կսկսվեն բժշկական քննությունները, որոնք ես պետք է վերջացնեմ, վերջացնեմ նաև մնացած բազմաթիվ անելիքներս, մեկնեմ հայրենիք՝ արձակուրդս այնտեղ

անցկացնելու, բայց սիրով ժամանակ կգտնեմ մի օր ձեզ հետ ճաշելու համար:

– Միթե այդ միտքը, որ ծնվեց իմ գլխում, սիրում է սպասել, – ասաց Ժուազը, – մեզ մի նեղացրեք, մի օրվա համար ժամանակ գտեք:

Ռուբենի ձգվող լոռությանն անտարբեր չմնացին ու միջամտեցին նաև նրա ընկերները, և պայմանի համաձայն՝ հաջորդ կիրակի արդեն կարող էին հանդիպել գինու սեղանի շուրջն ու մտերմիկ հանդիպմանը տալ բարեկամական շարունակություն:

Հիվանդանոցից լուր բերեցին, որ շտապ այնտեղ են կանչում Ռուբենին, և երիտասարդները շտապեցին մոտեցնել կառքը:

Հոսպիտալ հասնելուն պես քարացած միմյանց երեսի էին նայում բժիշկները...

Ռուբենը մի պահ այլայլվեց... մտքով ամեն բան անցավ. մտածեց, որ երեկվա վիրահատությունն ունեցել է... Չէ՞ որ առաջին անգամն էր հանդես գալիս ոչ որպես օգնական: Քայլ առ քայլ մոտենում էր դռանը, որտեղից իրեն կարող էին ուղարկել ոչ թե արձակուրդ, այլ...

Սակայն պարզվեց, որ ղեկավարությունն անցած գիշեր փորձություններով անցած Ռուբենին, որը չէր կորցրել գլուխը և միայնակ կատարել էր վիրահատությունը, արժանացրել է ՊԱՏՎՈ ՄԵԾ ՇՔԱՆՇԱՍԻ:

– Կարելի է նաև ավելորդ անգամ չհիշատակել, որ Դուք վերջնականապես համարվում եք բժիշկ, – ասաց կոչումով մայոր բժիշկը, որին ենթարկվում էր ամբողջ հիվանդանոցը:

– Շատ բժիշկների համար, որոնք մեծ վարպետությամբ են կատարում ցանկացած վիրահատու-

թյուն, դա նորմալ կլիներ, բայց նման վիրահատությունը կատարել է բժշկական համալսարանի ուսանողը, որն առաջին անգամ, առանց ուղղորդվելու, ինքնուրույն քայլեր է արել:

Բժշկական անձնակազմի ներկա անդամները մեծ հպարտությամբ ու հիացմունքով խոսեցին երիտասարդ մասնագետի մասին, սեղմեցին նրա ձեռքը, շնորհավորեցին և որպես գնահատական՝ վարձավճարից զեղչեցին կես տարվա ուսանողական ծախսը:

Դա մեծ լավություն ու խրախուսանք էր նրա համար, ուստի Ռուբենն արդեն կարող էր իրեն հավասար համարել և՛ ընկերներին, և՛ կողեզաներին:

Քաղաքի առողջապահության ամենաբարձր ոլորտում երբեք չէր արտահայտվել նման բուռն հիացմունք. մեկ ժամից ավելի հնչում էին գովեստի խոսքեր...

Եվ մինչ Ռուբենին ցուցաբերում էին արժանի վերաբերմունք, նրան հայացքով որոնում էր Յան-նին, որը, ըստ Հերբերտի, զարմանալիորեն տարօրինակ էր դարձել և անտարբեր ամեն ինչի նկատմամբ:

Բարեհաջող օրվա ավարտից հետո Ռուբենը որոշեց տանը իր ձեռքով ընթրիք պատրաստել ժուազին հյուրընկալելու համար, բայց ավելի լավ միտք հղացավ. Bundesplatz փողոցում մեծահարուստների համար կային թանկարժեք խորտկարաններ, որտեղ հյուրընկալվում էին միայն նշանավոր մարդիկ, քանի որ այդ փողոցում էին գտնվում նաև Շվեյցարիայի ազգային-մշակութային արժեք ներկայացնող կենտրոններն ու խորհրդարանի շենքը...

Ուստի իրեն լուրջ, գործունյա և կարևոր մարդ զգալու համար նա որոշեց հենց այդ փողոցի խորտ-կարաններից մեկում հյուրընկալել նորահայտ ըն-կերոջը:

Առավոտյան աշխատանքի գնալուց առաջ կար-դաց աշխարհի լավ ու վատ նորությունները, մտա-մոլոր ծիսեց երկու գլանակ և ընկավ մտքերի մեջ... Ժամը տասին՝ աշխատասենյակ դեռ չհասած, նրան զգուշացրին, որ դեռատի մի օրիորդ նրան է սպա-սում: Ռուբենը մտածեց, որ երևի հերթական այցե-լուն է, որն ունի ձևացնելու վարպետություն: Երբ ներս մտավ, տեսածն իրեն երազ թվաց. նախ շփոր-մունքից մի քանի վայրկյան կորցրեց իրեն, ապա, երբ լսեց Յաննիի հուզված «երկար ժամանակ է, ինչ սպասում եմ ձեզ» խոսքը, սթափվեց:

– Ներեցեք, օրիորդ, եթե իմանայի, ավելի վաղ կգայի և Ձեզ սպասեցնելն անարդար կլիներ իմ կող-մից... Կրկին անգամ հայցում եմ ձեր ներողամտու-թյունը:

Հետո մի տագնապ զգաց Ռուբենը.

– Մի՞թե ինչ-որ խնդիր ունեք, որևէ գանգատ,- հարցրեց նա:

Նրա խառնաշփոթ պահվածքի պատճառով Յաննին, ավելի շփոթվելով, այդպես էլ չէր կարո-դանում խոսել և երկար լոելուց հետո, կարծես շատ կարևոր մի բան իմանալու համար հայացքը թաքց-նելով՝ հարցրեց.

– Երեկ երեկոյան ուրախ ժամանակ անցկացրի՞ք:  
– Ո՞չ, առանձնապես ոչ:  
– Ո՞չ... Ինչո՞ւ ոչ...  
– Դուք մի տեսակ դառնացած եք խոսում, օրիորդ Յաննի:

– Ներեցեք, դա ակամա ստացվեց, ես չգիտեմ ինչպես շարադրել մտքերս... Մի՞թե... Մի՞թե կարելի է... չսիրելով՝ ամուսնանալ:

Ռուբենը մտածեց, որ աղջկա մեջ ինչ-որ ուրիշ բան կա, մանկական զգայուն հոգի ունի և չափազանց նուրբ է: Ինչո՞ւ է այդպես մտածում:

– Չգիտեմ, թե Զեզ ինչպես բացատրեմ միտքս, – ասաց Յաննին և աչքերը լցվեցին արցունքով:

– Զեր խոսքերից երևում է, որ մտահոգ եք ինչ-որ պատճառով:

Յաննին, ուսի վրա զգալով Ռուբենի ձեռքը, շրջվեց: Մարմնով դող անցավ, պարզապես վախ, որ կմատնի ինքն իրեն: Եվ ամեննին կարևոր չէր, թե ինչ է հետո իրեն սպասվում, ինչ կլինի կամ ինչպես կհասկանա դա Ռուբենը...

Շփոթված, իրեն անհասկանալի դրսնորած Յաննին միանգամից դուրս եկավ սենյակից:

Հոգու խորքում գրեթե ամեն բան հասկանալով՝ Ռուբենը չգնաց նրա ետևից. սա մի հնարավորություն էր, որը նրան կստիպեր խոստովանել այն զգացմունքը, որից կյանքի բույր էր փշում, ու անհնար կլիներ այն երկաթյա վանդակի մեջ պահել երկար ժամանակ: Նա որոշեց մոտակա օրերին մի նամակ հասցեագրել աղջկան, ինչը շատ հարցերի պատասխանը կլիներ:

Օրվա մեջ շտապ հեռագիր էր եկել Լևոնից, որով նա ընկերոջը երկար-բարակ պատմում էր, թե երկրում իրարանցում է, ոչ խաղաղ իրավիճակ, և ինքը որոշել է ժամանակավորապես տեղափոխվել Շվեյցարիա. պետք է հայ կամավորականներով ինչ-որ լուծում գտնել:

Ռուբենը որոշեց անհապաղ նամակ ուղարկել Սիլիվրի և հենց նամակի պատասխանը ստանա,

կփորձի առաջին իսկ հնարավորության դեպքում արձակուրդ վերցնել և մի քանի օր անցկացնել Պոլ-սում:

Հեռագրի հետ նաև հրավիրատոմսեր կային, համերգի երկու տոմսեր, երկու հրավեր, փասորեն՝ Յանսիի ուսումնական վերջին՝ հաշվետու համերգի: Հրավիրատոմսերի վրա նշված էին երկու եղբայրների անունները:

Տուն մտնելուն պես Ռուբենը ոգևորությամբ նորից կարդաց հրավիրատոմսը, մի քանի անգամ աչքի անցկացրեց, շուռումուու տվեց, ասես սիրային մի մեծ հատորյալ էր ձեռքին, որը սկզբում շփոթեցրեց, ապա հանգեցրեց մի եզրակացության. «Վերջիվերջո, ես ինչո՞ւ եմ տագնապով լցվել: Եթե Հերբերտը որոշել է հագուրդ տալ իր փառամոլությանը և խցկվել նրա կյանք, ապա ինչո՞ւ ես չմտնեմ Յանսիի աշխարհ: Երևի ոչ մեկն իրեն իրավունք չի վերապահում գահընկեց անել այդ ինքնակոչ թագավորին: Երևի հասել է նրա ինքնասիրությունը խոցելու ժամանակը», – մտածեց Ռուբենը...

Միաժամանակ հոգին անհանգիստ էր իր երկրում ծայր առած իրարանցումների պատճառով...

Այն, որ ներկա կգտնվի դաշնակահարուիու համերգին, անկասկած էր, իսկ թե ինչ պիտի ձեռնարկեր նրա հետ գրուցելու համար, անխսս դրա համար ժամանակ էր պետք:

Մի քանի օր էր մնացել այդ փառահեղ միջոցառմանը: Պետք էր պատշաճ պատրաստվել. դաշտային ծաղիկներ կվերցներ մոտակա ծաղկավաճառից, դրա մասին մտածել էր պետք: Ամենայն անկեղծությամբ նա դեռ ոչ մի անգամ չէր զգացել նման գլխապտույտ:

Մինչև չորեքշաբթի օրը նա՝ որպես առողջարանի Ներկայացուցիչ և լավագույն ուսանող, պետք է երեք օր շարունակ Լոզանիայի փոքր քաղաքների հիվանդանոցներում վերապատրաստման նպատակով բժշկական խորհրդատվություններ անցկացներ և միջամտություններ կատարեր:

Առավոտը զարմանալիորեն շուտ բացվեց: Ամենաանհրաժեշտ իրերի ճամպրուկը ձեռքին՝ մոտակա կայարան էր շտապում Ռուբենը. առաջիկա ժամերին պետք է հավաստի տեղեկություն ստանար Կոստանդնուպոլսից, մտներ մոտակա փոստատուն և երկու հարյուր ֆրանկ փոխանցեր հայրենիքի քաղաքական հարցերի համար:

Հիվանդանոցի անձնակազմը, կայարանում խոնված, արդեն նրան էր սպասում, երբ նա, քրտնքի մեջ կորած, հայտնվեց, ներողություն խնդրեց սպասեցնելու համար և շտապեցրեց սպասարահ:

Լյուցեռն մեկնող գնացքը շարժվելու էր քիչ անց՝ փաստաթղթերի ստուգումից հետո:

Ռուբենի մտքի ու սրտի համատեղ անհանգութությունը նրան զցել էր շփոթության մեջ. մեկ մտածում էր բժշկության մասին, մեկ ծնողների, մեկ ծննդավայրում ծայր առած խառնակությունների և, վերջապես, ամենաքառսային մտածմունքներ Յաննիի մասին, որ հաճելի ու ծանր հիվանդության նման տակնուվրա էր անում ուղեղը, սիրտը, հոգին ու մարմինը...

Ուղեկցորդը բարձր ծայնով խնդրեց ուղևորներին անցնել խցիկներ: Ռուբենը, Բեռնարը ու մի քանի բժիշկներ տեղավորվեցին մի ճամփորդախցիկում:

Գնացքն ահոելի շշակով ազդարարեց իր մեկնարկը դեպի Լյուցեռն ու ծանր տնքոցով շարժվեց

առաջ: Ամբողջ ճանապարհի ընթացքում Ռուբենն անթարթ նայում էր դուրս:

Լարվածությունը նկատեցին նաև ընկերները...

– Ինչ-որ բան է պատահել, – շշուկով հարցրեց Բեռնարը:

– Ինձ մի բան է հուզում:

– Ի՞նչ, – հարցրեց Բեռնարը:

– Մի լուր, որ դառնացրել է ինձ. Երկրիս քաղաքական վիճակը քառսային է: Երեկ նամակով լուր ստացա, որ Պոլսում խաղաղ բնակիչներ են տուժում, կարող են քաղաքացիական ջարդեր սկսվել:

– Մի՞թե հնարավոր է նման բան:

– Այո, հնարավոր է, դեռ երբեք այսպիսի մտավախություն չեմ ունեցել:

– Ի՞նչ ես մտածում:

– Դեռ չգիտեմ՝ ինչ մտածեմ, – մի կողմում կրթությունս է, մյուս կողմում՝ Յաննին:

– Յաննին, – հարցրեց Բեռնարը: – Եվ դու չե՞ս ցանկանում խստովանել այդ զգացմունքը:

– Շուտով: Շուտով ես նրան կխստովանեմ իմ մեծ սիրո մասին, – ասաց Ռուբենը:

Ընկերը ժախտով մի քանի անգամ թփթփացրեց Ռուբենի ուսին և մաղթեց բարին:

Մի քանի ժամ տևած ճանապարհից հետո վերջապես ժամանեցին պահանջված վայր:

Դիմավորողներ չկային. Նախօրոք ասվել էր, որ կայարանից կառքով են հասնելու առողջարան, որտեղ պետք է առանց հերթափոխի մնան ու աշխատեն: Որպես գործուղում՝ նրանց կվճարեն, իսկ գումարը կծախսվի բարի նպատակով. Երեք օրը բավական կարճ է և շուտ կանցնի:

Հասնելուն պես երիտասարդ բժիշկները որոշեցին կիրակին անցկացնել քաղաքի տեսարժան վայրերն այցելելով: Առաջին անգամ տեսնողների համար այդ միաժամանակ ծովափնյա, դաշտային և լեռնային քաղաքում ամեն ինչ պատկերավոր էր:

Մինչև գալը, Ռուբենը հասցրել էլ գրականության միջոցով ուսումնափրել, հարց ու փորձի միջոցով տեղեկանալ Լյուցեռնի մասին:

Ճաշին հասցրին լինել առողջարանում և որոշեցին դրան կից ճաշարանում մի լավ սնվել: Մտատանջությունների պատճառով Ռուբենը նախորդ օրվանից ոչինչ չէր կերել: Մոտեցան խոհարարին և խնդրեցին, որ ճաշացուցակ տրամադրի իրենց:

Լճափնյա քաղաքում բոլոր ցուցադրված կերակուրների կողքին կար նաև ձկնեղենի առատ տեսականի:

– Ինչ կարելի է համտեսել, Ռուբեն, Դուք ծանոթ կլինեք այս ուտելիքներին, – ասաց բուժակներից մեկը՝ Ամելոն:

– Իսկ ինչո՞ւ ես. մի՞թե միայն ես եմ սնվում, դուք բնիկ շվեյցարացիներ եք, դուք ավելի լավ կիմանաք ձեր կերակուրները:

Խոհարարը միջամտեց.

– Աքլորի կատարով ձվածեղ ունենք, պարոն, սնկով ապուր, կծու սոուսով խեցգետին, խոզի ճարպով համեմված տապակած տավարի միս, ունենք նաև ձկների տարբեր տեսակներ, ընտանի թոչունների մսով լցոնած երշիկ: Ես ձեզ համար կարող եմ պատրաստել ձուկ, որը կպատեմ մանրացված պարսիմատով և ձիթայուղի, մանանեխի, կիտրոնի և սխտորի հյութի սոուսով:

– Հիանալի է, – ասաց Ռուբենը, – քաղցրավենիք նոյնպես կրերեք:

– Գինին չմոռանաք՝ հոենոյան կամ ինչ-որ կառաջարկեք, – ավելացրեց Բեռնարը:

– Պարոն, 1870 թվականի բուրգունդյան գինի ունենք, նաև Սեն-Պետերի գինի:

Ոչինչ չասացին, միայն Բեռնարը գլխով արեց. հավանաբար նա կհամտեսեր բոլոր գինիներից էլ:

Մոտ քսան րոպե անց վուշե սփոռցով պատված սեղանն արդեն լցվել էր համեղ ուտեսաներով:

Ռուբենը որոշ ժամանակ նստել էր հայացքը խոնարհած. ասես մինչև խմելը համտեսում էր բերանն առած գինին, այնինչ նրան տանջում էին խառը մտքերը:

Ճաշից հետո որոշեցին մեկ-երկու թանգարան այցելել. հիշողություն է. ո՞վ գիտի, մեկ էլ երբ կինի նման հնարավորություն:

Երկուշաբթի առավոտյան առողջարանում այցելեցին մի քանի հիվանդների:



Հինգերորդ հիվանդասենյակի կողքով անցնելիս Ռուբենն անսովոր շփոթմունք ապրեց. Ներսում մեկը եկեղեցական երգ՝ շարական էր մրմնջում: Նա տեղի բժիշկներից հետաքրքրվեց, թե ովքը են ներսում:

– Այս հիվանդասենյակում, – հարցրեց բժիշկներից մեկը:

– Այո:

– Այստեղ բուժվում է Եղիսաբեթ անունով մոտ ութուն տարեկան մի կին, – ասաց բժիշկը, – զինվորական բժիշկ ամուսիններ էին, վաղուց թոշակի ան-

ցած սպաներ: Յոհանը՝ ամուսինը, օրեր առաջ մահացավ թոքախտից. չկարողացանք կյանքը փրկել, ծերությունն էլ իրենն էր արել:

– Ուզում եմ տեսնել այդ կնոջը:

– Դժվար բան չեք ասում, բայց մենք կասկած ունենք, որ կինն էլ է թոքախտով տառապում, և ինչո՞ւ հենց նրան, – հարցրեց նա Ռուբենին:

– Ես կօգնեմ նրան:

– Ավան, նա օգնության կարիք չունի: Հոգևոր ապրելակերպն է նախընտրում. ամբողջ օրը երգում է, աղոթում:

– Պետք է անպայման տեսնեմ նրան:

– Մեկնելու օրը կտեսնեք, բարեկամս, մի քանի օր դեռ այստեղ եք լինելու: Սուզը թարմ է. հոգատար էր ամուսինը:

– Ես կսպասեմ մինչև հանգստի ժամը և կտեսնեմ:

Պայմանավորվածության համաձայն, երբ բոլոր հիվանդներին այցելել էին, և արդեն երեկոյանում էր, Ռուբենը մոտեցավ հինգերորդ հիվանդասենյալին. Նրան շատ էր հետաքրքրել երգը, որ հնչում էր դոնից այն կողմ, և ծեր կինը, որ սգում էր ամուսնու մահը:

Ռուբենն ուղղեց հագուստը, թաշկինակով սրբեց քրտնած ճակատը և թակեց դուռը: Արձագանք չեղավ, չնայած տիրած լուսթյունը ևս սպասում էր: Սեղմեց դուռն քռնակը, որն ինքն իրեն բացվեց:

Առաջին բանը, որ նրան ստիպեց սարսոալ, խնկի բույրն էր, որով ներսից ու դրսից պարուրվեց Ռուբենը և ի սկզբանե արյամբ ու հոգով հասկացել էր ներսի հարազատությունը:

Ճերմակ հագուստով կինը գլուխը չբարձրացրեց:

Ռուբենը նախ նայեց չորս կողմը... Սիրտը, չգիտես ինչու, ճմլվեց. սենյակը մի տեսակ դրախտի էր

նման. ասում են, չէ, այն սպիտակ թունելով է անցնում. սենյակի ամեն անկյուն սպիտակ էր, և միակ տարբերվող գույնը Յոհանի սև-սպիտակ նկարն էր. մոխրագույն ձեռքին՝ գավազան, և գլխին՝ լայնեզր գլխարկ: Նա լայն կզակ ու խիստ հայացք ուներ, սև փողկապն էլ հիշեցնում էր, որ տարիները նրա կողքով իզուր չեն անցել՝ նրան արժանացնելով գնդապետի կոչման...

– Բարև Ձեզ:

Արձագանք չեղավ:

Մոտեցավ մահճակալին կից աթոռին, նստեց, հանգստացավ:

– Յոթ օր է՝ ես մեռնում եմ և կենդանանում, – ասաց Եղիսաբեթը:

Խոպոտ հազ սկսվեց:

Ռուրենը, ոչինչ չասելով, վերցրեց պահարանին դրված ջրով բաժակը և մեկնեց կնոջը, որը.

– Ես մեռած եմ, – հարցրեց Ռուրենին: – Ես ինչպես եմ մեռել:

Ռուրենը կանգնել էր շվարած, անգամ չգիտեր, թե ինչ հարցնի:

Կինը քթի տակ նորից երգեց առավոտյան երգած երգը. հիմա արդեն տեսանելի էին նրա արցունքները:

– Յոհանը Ռուսաստանում գնդապետի կոչում ստացավ, մեզ ուղարկեցին Սարիղամիշ, և նա արևելյան մի ամբողջ բանակի գնդապետն էր: Տարիների ընթացքում ծառայեց և՛ Կարսում, և՛ Արդահանում... Թոշակի անցնելուն պես ծանր հիվանդացավ: Մենք՝ որպես զինվորականներ, ստիպված տեղափոխվեցինք Լյուցեռն: Ապրեցինք մեզ համար նախատեսված տանը՝ Օսմանյան կայսրությունից հեռու... Նրա ծանր հիվանդությունը մեզ բերեց

առողջարան: Տարիներ շարունակ պայքարեց, և մահը նրան պատվով տարավ:

– Ես էլ եմ հայ, տիկին, Ռուբեն Չիլինկիրյան անունով: Ինձ Ձեր երգը ստիպեց զալ ձեզ մոտ:

– Կոմիտաս...– մի քանի անգամ կրկնեց կինը, – Վարդապետը եկեղեցում «Շարականներ» էր երգում...

Ռուբենն այնքան սեր ու ջերմություն զգաց նրա բառերից, որ խնդրեց երբեք չհուսահատվել. անպայման կրուժվի:

Խեղդող հազը կրկին անհանգստացրեց կնոջը: Նա շրջվեց դեպի սպիտակ պատը և այլս ոչինչ չասաց:

Ռուբենը հասկացավ, որ գնալու ժամանակն է, և դուրս եկավ՝ կամաց ծածկելով դուռը:

Օրերն իրար էին հաջորդում: Խումբն իր առաքելությունն ավարտեց երեք օրում: Մեկնելուն մի քանի ժամ էր մնացել:

– Եղիսաբեթն էլ Յոհանի ճանապարհով գնաց, – մեկնելու պատրաստվող խմբին ասաց մոտեցած քժիշկներից մեկը:

Իսկ մեկ որիշն ավելացրեց.

– Ամուսնու մահվան օրից նա անընդհատ կրկնում էր. «Տասն օր հետո ես կմիանամ քեզ», և այդպես էլ եղավ:

Հինգերորդ հիվանդասենյակում դրախտային ճերմակությունն այլս... նոյնը չէր. այն հեռացել էր Եղիսաբեթի հետ:

Նոյն կայարանից ետ մեկնարկով ճանապարհ ընկան դեպի Լոզան:



Ռուրենը բոլորովին չէր մոռացել, որ չորեքարթի է, և երեկոյան ժամը վեցին համերգասրահում կփայլի Յաննին:

Ժամանակը չէր անցնում, ճանապարհը երկարում էր, ձգվում զապանակի նման ու ասես որքան հեռանում, կրկին վերադառնում էին նոյն հատվածին:

Ռուրենը գլուխը հենել էր պատուհանի փեղկին ու կարծես ննջում էր... Հոգում փոթորիկ էր. աչքերը մեկ բացելով, մեկ փակելով՝ անընդհատ սպասում էր ժամանման ազդանշանին:

Գնացքի կողքով անցնող ճանապարհն սկսեց մագլցել վեր, իսկ գնացքը՝ իր վագոններով, ներխուժեց քարաժայո լեռների մութ կուրծքը: Մյուս վագոնում խառնաշփոթ սկսվեց, որի վրա իշխում էին լացն ու բարձր ճիշերը. ուր որ է ծննդաբերելու էր հղի կինը:

Բազում ձայներ աղաղակում էին.

– Բժիշկ, բժիշկ կանչեք...

Երիտասարդները ներսում շատ պարզ լսեցին, որ բժիշկ են կանչում, բայց արձագանք չեղավ:

Ռուրենի աչքերը դեռ փակ էին, երբ Բեռնարը հրեց ուսը.

– Ընկերս, մյուս վագոնում բժիշկ են կանչում:

– Միթե ինձանից բացի մեկ այլ բժիշկ չկա, – զայրացած պատասխանեց Ռուրենը:

Ընկերները զարմացած նայեցին իրար և ոչինչ չասացին:

Ռուրենն ասես դեռ քնած ու թմրած էր: Նա նոյն սիսկ չհասկացավ, թե ինչն իրեն ստիպեց բարձրա-

ձայն արծագանքել, և աչքերն ասես դուրս թռան ակնախոռոշերից, երբ լսեց, որ օգնություն խնդրողը հղի կին է, և չորացած կոկորդը սկսեց խեղդել նրան: Մի ակնթարթում դուրս թռավ վագոնից դեպի ձայները, կոացավ հատակին պառկած կնոջ կողքին և հասկացավ, որ ծննդաբերության ժամանակն է, խնդրեց մաքուր կտոր, իսկ ջուր այդ պահին գրեթե անհնար էր գտնել:

... Տոթը խաշում էր նրան, դեմքից ծորում էր քրտինքը, և երբ լացն ու ճիշը խառնվեցին իրար ու լսվեց խոլ տնքոց, ապա և սուլոցի ձայն, հասկացավ, որ չի ուշացել և երեխային օրինելով դրեց մոր կրծքին...

Վերադարձավ ընկերների մոտ, ներողություն խնդրեց զայրույթի համար և վերցրեց ճամպրուկը:

Վագոնից դուրս սպասող չուներ, ուստի ամենակարևոր անելիքը մոտակա ծաղկի խանութից դաշտային ծաղիկներ վերցնելը և համերգասրահ շտապելն էր:

Թղթի կտորի վրա սկսեց գրել սիրո խոստովանության առաջին բառերը.

«Սիրելի Յաննի, ուզում եմ, որ մենք միասին լինենք՝ ի հեճուկս բոլոր արգելքների և մարդկային նախանձի, և ոչ մի չարություն չկարողանա քեզ իւլել ինձանից: Խոսպացիր ինձ, Յաննի, որ լրջորեն կմրտես այս գրությանս մասին: Ու. Չ.»:

Ծալեց նամակը, ասես վախենում էր, որ կիսեն իրենից և դրեց ծոցագրապանը:

Պատշաճ տեսք ուներ. ամեն կերպ փորձում էր Յաննիի համար իդեալական կերպար դառնալ...



Դահլիճը թնդում էր. հանդիսատեսի համար նորություն էր այս երգչախումբը:

Մեծահարուստներ, արվեստագետներ, դերասաններ, քաղաքական գործիչներ, աչքի ընկնող դեմքեր:

Յաննին վարագույրի հակառակ կողմում մտատանջությունների մեջ էր. նրան անհանգստացնում էր այն միտքը, թե արդյո՞ք կտարբերի եղբայրներին, կամ նրանցից ո՞վ ավելի հարազատ կլինի իր հոգուն, չե՞նոք Ռուբենին հանդիպել էր մի քանի անգամ, իսկ Սևակին՝ ընդամենը մեկ գրական երեկոյի ժամանակ, բայց իր ներքին ձայնը նույն զգացումն էր առաջացրել:

Համերգասրահ ներս մտնելու առաջին իսկ վայրկյանից Ռուբենը, շարքը խախտելով, փորձում էր առաջ գնալ՝ տեսանելի դառնալու համար Յաննիին:

Բայց հետո այդ որոշումը նրան անհեթեթ թվաց. վերջին հանդիպումն իր համար անհասկանալի էր մնացել և նոյնիսկ անհարմարություն առաջացնող: Բեմից քիչ հեռո՛ չերևացող մի հատվածում կանգնած՝ նա անթարթ հայացքով հետևում էր բացված վարագույրից ներս եկող խմբին: Յաննին իր սև մազերը տարածել էր մեջքին, իսկ մի փունջ էլ ծածկել էր նրա լայն ճակատը:

Ծափերն ու աղմուկը ձուլվելով՝ դարձել էին համընդհանուր մթնոլորտ...

Հայացքը, որն այլևս չէր մոռանալու Ռուբենը, փնտրող էր ու անհանգիստ:

Բեմում ամեն բան ընթանում էր ըստ պլանի,

սակայն անհարմարության մի զգացում էր պատել Յանսիին, որն ինչ-որ բանից 'նեղված' աջ ու ձախ էր նայում. հանդիսատեսների այն շարքում, որտեղ մտերիմներն էին, բաց էին մնացել Ռուբենի և Սևակի տեղերը: Կոկորդը սեղմվեց, ասես մի բան Նրան խանգարում էր շնչել: Հուզիչ սպասումը երկար տևեց, ապա դադարեց աղմուկը, ամբողջ դահլիճը, շունչը պահած, սպասում էր դաշնակահարուհու առաջին ակորդներին:

Յանսին լուր էր:

Ռոպեներ անց համերգասրահում ոռումքի նման պայթեց Նրա կատարումը...

Հանդիսատեսը շշմեց:

Ռուբենը ինքնամոռաց հետևում էր Նրան՝ չհասկանալով, որ հայտնվել է բոլորի ուշադրության կենտրոնում և դուրս եկել Յանսիին դեմ-հանդիման, բայց միաժամանակ՝ դեռ աննկատ Նրա կողմից. իր կատարմամբ կլանված Յանսին, եթե նոյնիսկ շուրջը նայեր, չէր էլ նկատելու Ռուբենի ներկայությունը, ինչը պատճառ դարձավ, որ նա հուզմունքից ու սպասումից ցնցեց համերգասրահը...

Երկու ժամ տևած համերգը Յանսին նվազել էր փակ աչքերով և... չէր նկատել Ռուբենին:

Վերջին նոտաների հետ իջավ վարագույրը:

Դահլիճում քար լուսթյուն տիրեց, չկար նաև այն թոյլ բգողոք, որը համերգից հետո շարունակում է մնալ ականջներում...

Ռուբենը հայտնվեց հենց նոր իջած վարագույրից այն կողմ, նայեց Նրան ու շշնջաց.

– Դու պայթեցրիր համերգասրահը, Յանսի, – և շթողնելով Նրան խոսել՝ Երկու ձեռքերով բռնեց Նրա գլուխն ու համբուրեց ճակատը:

Նրա համբույրի մեջ կրակ կար, բառերն անկաշ-կանդ էին:

– Մի՞թե այդքան վատ էր, – հարցրեց Յաննին:

– Կատարյալ էր անգամ ամենախստապահանց քննադատի համար: Բայց ոչինչ մի հարցրու, ես ուզում եմ լսել, թե ինչպես է բարախում սիրտդ:

Հետո դաշնամուրի վրայից վերցրեց դաշտային ծաղիկներն ու մեկնեց նրան՝ համբուրելով ձեռքը:

Յաննին դեռ չէր կողմնորոշվում, թե եղբայրներից ո՞վ է ընդունել իր հրավերը և մտքում կրկնում էր. «Ինչպես դիմեմ նրան, որ չվիրավորեմ, ախր այնքան նման են», – և շուրջը նայելով՝ փորձում էր համոզվել, թե մենամկ է եկել նա: Իսկ Ռուբենը, հասկանալով օրիորդի մտահոգությունը, նրան վստահեցրեց, որ ոչ մեկին պետք չէ փնտրել. ինքն այստեղ է, և դա լիովին բավական է:

– Իսկ դո՞....

– Աևակին ես փնտրում, – Յաննիի հարցը կիսատքողեց Ռուբենը: – Նա վերադարձել է Պոլիս, նոյնիսկ հրավերդ չհասավ նրան:

– Ուրախ եմ, որ եկել ես: Ծաղիկները դաշտային են, – ժպիտով հարցրեց Յաննին:

– Դաշտային են, – փոխադարձ ժպիտով նրան պատասխանեց Ռուբենը, – ինքս եմ հավաքել Լոզանի դաշտերից, – հետո ավելացրեց, որ կատակում է...

Վարագույրից այն կողմ՝ հոծ բազմության մեջ, խառնաշփոթ փնտրտուրի մեջ էր Հերբերտը. վերջնականապես համոզված, որ այս եռախաղից մեկը պետք է անպայման դուրս մնա՝ հաստատ որոշել էր, որ այդ դուրս մնացողը ոչ այլ ոք էր լինելու, քան Ռուբենը (թերևս դա նրա համոզմունքն էր): Նրա ուղեղում խորխորատ էր բացվել, մտքերի

առատությունից անհնար էր ելք գտնել. ամեն բան ի վնաս իրեն էր դասավորվում...

Իսկ այդ ընթացքում Յանսին ու Ռուբենը չնկատելով շրջանցեցին վերջինիս, որ կանչեց.

– Յանսի:

Աղջիկը կանգ առավ մուտքի դռան մոտ, ետ նայեց ներսում սպասող ընկերներին և հասկացավ, որ շտապել ու մոռացել է նրանց:

Եվ ետ դառնալով՝ մոտեցավ՝ ամեն մեկին շնորհակալություն հայտնելու:

Ժուազը, որ նույնպես նկատել էր նրա խառնաշփոթ վարքը, հարցրեց.

– Միթե քեզ ինչ-որ բան կամ որևէ մեկն անհանգստացնում է:

– Ո՞չ, – շտապով պատասխանեց Յանսին:

– Որոշ նորություններ ունեմ: Սիրտդ ուրախությունից վեր կթոնի. դու շուտով կմեկնես Փարիզ:

Յանսին չլսելու տվեց եղբոր հայտնած լուրը և արագացրեց քայլերը:

Բավականին հեռու էր, երբ բացեց ձեռքի փորիկ ծրարք և ներսից հանեց խնամքով ծալված գրությունն ու սկսեց կարդալ.

«Սիրելի Յանսի, ուզում եմ, որ մենք միասին լինենք՝ ի հեճուկս բոլոր արգելքների և մարդկացին նախանձի, և ոչ մի չարություն չկարողանա քեզ իւել ինձանից: Խոսրացիր ինձ, Յանսի, որ լրջորեն կմրտածես այս գրությանս մասին: Ու. Զ.»:

Սրտի աշխատանքի արագանալն անխուսափելի էր: Հոգում փոթորիկ էր, որը միանգամից տակնուվրա արեց ամեն ինչ և, չսպասելով ընկերներին, աղջիկը միանգամից կառք հրավիրեց:

Խեղդող հոգեվիճակի հետ մեկտեղ այն միտքը, որ ևս մի բանի օր ու ինքը կհեռանա Լոզանից, սար-

սափեցնում ու երջանկացնում էր նրան:— «Քեզ ի՞նչ է պատահել»,— մենախոսում էր Յաննին,— և «Ոչի՞նչ»,— նրան պատասխանում էր... Յաննին, իսկ հետո՝ ծիծաղում միասին:

«Մի քանի օրից կմեկնեմ Փարիզ. երազելի համերգ, Լուվր, Շանզ Էլիզե, Պեր-Լաշեզ, Աստվածամոր տաճար... Եվ Լոգանից լոկ հիշողություններ կմնան: Համբերիր, որոշումներդ մի՛ քննարկիր ինքնուրույն: Սպասիր, սպասիր...»,— կրկնեց մի քանի անգամ՝ ինքն իրեն հուսադրելով:

Սենյակ մտնելուն պես սկսեց արտասվել: Հուզմունքից նրան թվում էր, թե առաստաղն իջնում է ներքև, և իրար մոտեցող չորս պատերի ներսում ճգմվում է ինքը: Օդ չկար սենյակում...

Շտապեց հյուրասենյակում դրված դաշնամուրի մոտ, բացեց և սկսեց խաղալ ստեղների հետ: Հետո ամեն բան ցրվեց. շուրջն ասես անծայրածիր դաշտ էր, իսկ առաստաղը՝ կապույտ երկինք:

Ապա ինքը հայտնվեց մեկ այլ՝ անկենդան մի աշխարհում... Հետո կրկին ետ եկավ, ձեռքով փակեց դեմքն ու սկսեց հառաչել... «Ոչի՞նչ չմնաց ու չկառչի՞նչ...»:

Ռուրենը կանգնել էր համերգասրահի մուտքից ոչ հեռու գտնվող հուշարձանների կողքին ու սպասում էր Ժուազին:

Կկոցեց աչքերն ու նկատեց, որ Ժուազը մենակ չէր. հավատարիմ շան նման նրա կողքին էր Հերթերտը: Պարզ երևում էր, որ հանուն Յաննիի նա պատրաստ էր անգամ չորեքթաթ քայլել...

— Բարեն, — ասաց Ռուրենը:

— Ողջույն, բարեկամս, ես ներսում էի ու մտածե-

ցի, թե դու Էլ ես Յաննիի հետ հեռացել համերգասրահից, այնինչ սպասում ես, – ասաց Ժուազը:

– Իսկ ո՞ւր գնաց Յաննին և ինչո՞ւ, – մտահոգ հարցրեց Ռուբենը:

– Ես շտապեցի նրան տեղեկացնել, որ մի քանի օրից պիտի Փարիզ մեկնի... Զգիտես ինչու, իրեն վատ զգաց, կարծես ներսում ինչ-որ բան կոտրվեց կամ խառնվեց:

Ռուբենը նույնպես անհանգստացավ. նախ կդադարեն դեռ չհաստատված հարաբերությունները, ինչը, վստահ էր, որ ոչ իր և ոչ Էլ Յաննիի համար է ցանկալի: «Պետք է առիթ ստեղծել և այդ թեմայով եղբոր հետ խոսել ճաշի ժամանակ, – մտածեց Ռուբենը, – բայց մինչ այդ ինքը պիտի Յաննիին տեսնի», և հենց տեղում Ժուազին խնդրեց կիրակի երեկոյան հանդիպել:



Ռուբենը, շուրջը չնայելով, շտապում էր. արագ քայլերը դանդաղ վազքի էին նման: Երբ շունչը կտրվում էր, հանդարտեցնում էր քայլերը, վերականգնում շնչառությունը, մտքում հավաքում բառերի մի ամբողջ շարան և նորից վազում: Նրա համառությունն աննկուն էր, իսկ նպատակը՝ ճիշտ ու ճիշտ փոթորիկ:

Փողոցը, որտեղ ապրում էր Յաննին, պատված էր խիտ ծառերով և «Առանձնատների թաղամաս» էր կոչվում: Այստեղ բնակարաններ էին վարձակալում միայն եվրոպացի երիտասարդները, որոնք լավ վճարելու հնարավորություններ ունեին, ուստի վստահ էր, որ եթե մոտենա նրա պատուհանին,

հաստատ սակավամարդ այդ փողոցում աննկատ կմնա օտար աչքերից...

Վերջապես տեղ հասած Ռուբենը հենվեց ծառին, որն ուղիղ նայում էր նրա պատուհանին... Վարագույրից այն կողմ նկատելի էր սենյակի մեջտեղում՝ ձեռքից հանկարծ անզգուշությամբ ընկած գնդակի նման պտտվող Յաննին, որ... հետո մոտեցավ պատուհանին, ասես ներքին ձայնը նրան ստիպում էր նայել դեպի այգին... Ու... չհավատաց տեսածին, ես քաշվեց և շտապեց ներքն...

– Ինչո՞ւ ես Եկել, – հարցրեց Յաննին սկզբում վախեցած, հետո իրեն ջերմացրած և ուրախացրած դողով, – ինչո՞ւ...

Ռուբենը ժպտաց.

– Ինչպես թե: Եկել եմ ասելու, խնդրելու, որ ոչ մի տեղ չգնաս: Ժամանակը գողացիր և փորձիր կանգնեցնել այն, – Ռուբենի աչքերը շատ թախծոտ էին խնդրում:

Յաննին չգիտեր՝ ուրախանա՞ն, թե՞ վշտանա. Երկու զգացում էին նրա հոգում պայքարում:

Մթության մեջ Ռուբենն ավելի մոտեցավ, սրբեց աղջկա խոնավ այտերն ու զգուշորեն դիպավ մազերի հյուսքին:

Յաննին նախ լարվեց, ապա վախին խառնվեց հաճելին...

Ռուբենը նրբորեն բաց թողեց հյուսքը, աչքերից ետ տարավ մազափունջն ու համբուրեց Յաննիի ճակատը. հենց այս ամենի համար, հենց այս զգացումի համար պետք է շարունակի պայքարել հանուն իր սիրելիի...

Եվ Ռուբենը բռնեց Յաննիի սառած ձեռքը ու նրա նուրբ մատներն ազուցեց իր վառվող մատներին,

հետո գուշակի նման նայեց նրա ափի մեջ ու մի քանի անգամ կրկնեց. «Այ սա է ճակատագիրը, որի համար ես ու դու աշխարհ ենք եկել»:

Յաննին կարմրեց մեղք գործած փոքրիկի նման, իսկ Ռուբենի համար միևնույն էր. նա կարող էր ի տես և ի լուր աշխարհի կրկնել, որ այս աղջիկն իր ճակատագիրն է, իր անխուսափելի երջանկությունը:

Երգող ժուազի տեսորը լսելի էր դեռ փողոց չմտած: Լսելով նրա գինովցած ձայնը՝ Յաննին, առանց բառ ասելու, շտապեց տուն:

Իսկ անքուն Ռուբենի գիշերը լի էր բանաստեղծությամբ.

Զոնված

*Mlle Yanni Appell-jն.*

Դուն Հրաշքն ես, դուն Երազն ես, դուն Սերն ես,

Տարաշխարհի ընադայ ծաղիկն ես աղվոր.

Միաթիքական ինկումերով թունավոր

Դուն մրւեղեն ինենթեցընող դրամարն ես.

Դուն Հրաշքն ես, դուն Երազն ես, դուն Սերն ես...

Ռուբենի սրտից ներքև էր ընկել երկանքաչափ մի քար, ինչը վկայում էր, որ սկսվեց մեծ և միակ սերը, որի համար ինքը պատրաստ է անգամ աշխարհի գլխի վրայով թռչել...

Կեսգիշերը մոտ էր, և իրեն միայն լիճը կհանգստացներ, լիճը, որը դուրս կգար ափերից, իր մեջ կառներ իրեն ու լուսինը և մանկան նման կօրորեր ալիքի թևով...

Խճաքարերը, որոնք լիճն էր նետում շը-րըմ-փոցնի, խախտում էին գորտերի՝ քաղաքական վիճարանության նմանվող կոկորցը...

Ուուրենը հասկանում էր, որ սուր է կախված իրենց սիրո գլխավերևում: Որքան էլ վստահ լիներ, որ Յաննին պատրաստ է աշխարհի դեմ պայքարի մեջ մտնել հանուն սիրո, միևնույն է, չէր կարող չանհանգստանալ. Հերբերտը մրրիկի նման պտտվում էր իրենց շուրջը, իսկ նրանից ազատվելը հավասար էր բնության մեջ ինչ-որ սատանայական չարիք վերացնելուն...

Վառեց ինքնաշեն գլանակն ու սկսեց ծխել: Հիշեց Յաննիի աչքերը, որոնց մեջ ծփում էր սերն ու իրեն պատմում այդ մասին:

Ուուրենի սիրտը՝ մերթ հանգիստ, մերթ խոռվյալ, սպասում էր կարևոր հանդիպման. մյուս օրը կիրակի էր, պետք էր հյուրընկալել Ժուազին և խոսել Յաննիի մասին... Յաննիի, որի աչքերից մաքուր աչքեր երբեկցե չէր տեսել ինքը, և որոնցից ուղղակի աննկատ չէր կարող մնալ սերը... Այդ խառնաշփոթ մտքերի հետ նա նայում էր խաղաղ լճի ծփանքին, որը պշրանքով մասերի էր բաժանում իրեն սիրահարված լուսնի սկավառակը՝ ասես ջանալով շեղել երիտասարդի խճճված մտքերը...

Կանգնեց, մի վերջին անգամ հրաժեշտ տվեց լճին...

Միևնույն է. ամեն մտածմունքի մեջ այդ գիշեր Յաննին էր...



Երեկոն ամենածանրը Հերբերտի համար էր, որն ամեն կերպ փորձում էր ազատվել Ուուրենի մղջավանջային ներկայությունից՝ գուրգուրելով մի միտք.

Գաստոնի միջոցով ինչ-որ խաղ սկսել, որպես-զի հակառակորդը վերջնահաշվում չստանա բժշկի որակավորում, բայց վախից, որ հավատարիմ շունը վերջերս չի ենթարկվում և հոր հրամանով ծածուկ հետևում է իրեն, որոշեց ինքնուրույն կատարել իր մեղսավոր առաքելությունը:

Հագուստի պահարանում նա թաքցնում էր զենքի մի քանի օտար պարկումներ. ոչ անվանական և ոչ էլ համարակալված, ուստի ոչ մեկը չէր կասկածի, թե Ռուբենին ով ուղարկեց... Զենքից հեռացրեց պարկումները, որոնց վրա փորագրված էին նրա՝ Յանսիի անվան ու ազգանվան առաջին տառերը, տեղադրեց շիամարակալվածները և սկսեց սպասել այն հարմար առիթին, թե երբ դրանք կմեխի Ռուբենի սրտին. «... և քանի որ Նրա նման Հիպոկրատի երդում չեմ տվել, պարտավոր չեմ կյանք խնայել... Նրա կատարած ամեն գործողություն փորձանք է դառնում իմ գլխին, եթե նոյնիսկ գործում է բարիք», – Հերբերտի սիրտը պայթում էր Նրանց կասկածելի հանդիպումներից, նրա վստահությունը զրոյական էր անգամ Ժուազի նկատմամբ, և ինքը վստահ էր, որ եթե ընտրության հնարավորություն ծագի, ընկերը կզիհարերի հենց իրեն՝ Հերբերտին: Ուստի ժամանակն է գործելու, և ինքը պատրաստ է ամեն խնդիր լուծել «ծանր հրետանիով», միայն թե իրենը լինի Յանսին:

Հիվանդագին սերը նրան հուշում էր. «Մեկի մահը մյուսի կյանքի գրավականն է», – անհնար է համբերել ու սպասել մինչև բժիշկը կամ մեկ ուրիշը կխլի Նրան:

Մենյակից դուրս գալիս զենքը թողեց պահարանի վրա:

Գաստոնը, որ չէր նկատել, թե ինչպես է դուրս եկել տերը, նրան փնտրելիս ներս մտավ սենյակ ու տեսնելով կիսաբաց պահարանի վրա դրված զենքը՝ տիրոջ անվանական պարկումների կողքին, որոշեց այն լիցքավորել և դրանցով փոխարինեց զենքի մեջ գտնվող անանունները:

Երբ Հերբերտը վերադարձավ, այն թույնը, որը կուտակվել էր նրա հայացքի մեջ, կարող էր գտվել միայն չոր դառնություն ունեցող խմիչքով...

Եվ չիիշելով ոչ զենքի, ոչ էլ վրեժիսնդրության մասին՝ քննեց մինչև առավոտ:



Սենյակի գորշությունը ցրվեց մոր քնքուշ ձայնից, որը խնդրում էր տանը մնալ գոնե այդ օրը:

Ասելությամբ լցված նոյնիսկ ծնողների նկատմամբ՝ Հերբերտը վերջին ժամանակները նրանց էր մեղադրում իր և Յաննիի չստացված հարաբերությունների մեջ. նրանք կարող էին կանխել աղջկա հեռանալը տանից, բայց ոչինչ չարեցին հօգուտ իրենց որդու, այլ գործեցին սոսկ ի վնաս իրեն:

Օտար հայացքով բարևեց մորը, հետո պատուհանի մոտ ուրվագծվելով՝ գնաց ետ:

Մայրը ոչինչ չասաց, դուրս եկավ լուս ու մեղավոր: Հասկանում էր. այն, ինչն իրենց թվում էր լավություն որդուն, Հերբերտի կարծիքով մեծագույն վնաս էր իրեն:

Ժամանակն անշափելի ճգվել ու չէր ցանկանում անցնել ոչ մի կերպ...

Հերբերտը մտրով անընդհատ ետ ու առաջ էր քայլում այն տարածքում ու դրա շրջակայքում,

որտեղ պանդոկն էր: Ամեն բան պետք է ընթանար իր ծրագրածի համաձայն, և թե ինչ կրերի ճակատագիրը Ռուբենին, կլինի ոչ թե Ռուբենի, այլ իր՝ Հերբերտի որոշմամբ:



Յաննին նկատեց, որ եղբայրը պատրաստվում էր ինչ-որ հանդիպման: Շուրթերը դողացին, դեմքը գունատվեց, սիրտը ցանկանում էր գուշակել, թե ուր է պատրաստվում գնալ եղբայրը և.

– Ժուազ, ինչ-որ տեղ ես գնալու, հանդիպո՞ւմ ունես, – հարցրեց:

– Սարի լանջին՝ ուռենիների տակ, մի պանդոկ կա: Ռուբենի ասելով՝ համեղ ճաշեր են տալիս, – քթի տակ ժպտաց եղբայրը:

Յաննիի սիրտը ճմլվեց սիրելիի անունից.

– Իսկ ինչո՞ւ է կանչել:

– Արշ կամ եղնիկ ուտելու, – պատասխանեց Ժուազը:

Յաննին շեշտակի նայեց Ժուազին և կրկին հարցրեց:

– Դու ասացիր՝ կգնա՞ս:

Ժուազը զարմացած ետ նայեց.

– Իսկ պատճառ ունե՞մ չգնալու:

– Զգիտեմ, մի՞թե կարևոր հանդիպում է:

– Ռուբենն ասաց՝ կարևոր է:

Յաննին ավելի խճճվեց. ինչ-որ կասկած էր սողոսկում նրա սիրտը. ինչ են խոսելու: Լուս և մտքերով տարված՝ նա չնկատեց, թե ինչպես դուրս եկավ Ժուազը և ներս մտավ Էմման:

– Անհանգիստ ես, Յաննի, – նկատեց աղախինը:

– Ուզում եմ աչքերս փակել, ուզում եմ մոռանալ երեկվա կատարվածը, և թե ինչ կլինի այսօր, դա էլ մոռանամ:

– Իսկ ինչ եղավ երեկ:

– Եկավ նա՛ ինձ մի քանի խոսք ասաց, որոնք չեմ կարողանում մոռանալ: Ես վստահ եմ, որ նա միակն է, ում խոնարհաբար կիետնեմ մինչև մահ:

– Ո՞վ է նա, – զարմացած հարցրեց Էմման:

– Ռուբենը, Էմմա՛, թժիշկ Ռուբեն Չիլինկիրյանը:

– Սիրահարված է, – հարցական հայացրով աչքերը կլորացրեց Էմման:

– Չգիտեմ, Էմմա, չգիտեմ, – դուրս պրծնելու պատրաստ արցունքները կուլ տալով՝ ասաց Յան-նին ու պատմեց ամեն ինչ:

– Պատասխանն իմանալու մի հասարակ միջոց կա, – լսելով այդ ամենը՝ վճռականորեն հայտարարեց Էմման:

– Ո՞րն է, – զարմացավ Յաննին:

– Ըսթրիքի հրավերը:

– Լավ միջոց է, բայց անզգույշ քայլ. ինչ կմտածի ժուազը, եթե իմանա:

– Դա անհրաժեշտ է. մտերմիկ միջավայրում կհասկանանք, թե ինչպիսին են նրա մտադրությունները, իսկ ժուազին կառաջարկեմ ավելի մոտ ծանոթանալ նոր ընկերոջ հետ, և եթե այսօր նա է հրավիրել, գուցե վաղն էլ ինքն է ակնկալում մեր հրավերը...

Նոյն օրվա երեկոյան՝ հանդիպման ու ճաշկերույթի թեժ պահին, մի քանի քաժակ շվեյցարական գինով տաքացած Ռուբենն ամենայն անկեղծությամբ որոշեց խոսել իր զգացմունքի մասին, որը

տածում էր Յաննի նկատմամբ: Նա չցանկացավ թաքուն պահել սերը, ինչի մասին ցանկանում էր գոռալ ի լուր ամրող աշխարհի:

– Ժուազ, ընկերս, ես քեզ հետ անկեղծանալու կարիք ունեմ: Հուսով եմ, մեր ընկերությունը բարեկամական շարունակություն կունենա, և դուք ինձ ջերմորեն կընդունեք ձեր տանը: Ես գոռողամտություն չեմ արել և երբսէ չեմ ցանկացել, որ նոյնը անեն իմ հանդեպ:

Ժուազին այժմ հասկանալի դարձավ, թե առավոտյան որն էր Յաննի մտավախության պատճառը: Նա անկեղծորեն համակրում էր իր նոր ընկերոջը և նրան արժանի թեկնածու համարում քրոջ համար:

– Եվ որքան ժամանակ է, – սառն ու կոպիտ ձայնով հարցրեց Ժուազը:

– Շատ քիչ, միայն երեկ կարողացա նամակի միջոցով տեղեկացնել Յաննին:

– Բարեկամս, իմ առաքելությունն այստեղ նրան պաշտպանելն է, ծնողներս այդ նուրբ ու միամիտ աղջնակին վստահել են ինձ:

– Ես կլոեի, և դա տեղին կլիներ, եթե երեկ չլսեի, որ նա մեկնում է Փարիզ:

Խորտկարանի մատուցողը միջամտեց գրույցին.

– Ձեր՝ լցոնած դաշտային սունկը՝ մադերայի սոուսով:

Սեղանին ամեն բան պատշաճ դասավորված էր:

– Ես նրան դեռևս չեմ տեսել: Սպասում եմ քո որոշմանն ու թույլտվությանը, ինչից հետո կփորձեմ խոսել նրա հետ, – շարունակեց Մուրենը:

– Ես քեզ լավ եմ վերաբերվում, ընկերս: Միայն թե Յաննին համաձայնի, և ես նոյնպես կհամաձայնվեմ, և դուք միասին ցույց կտաք, որ արժանի եք

իմ վստահությանը, – ասաց Ժուազը՝ մեկնելով ձեռքը, որը եղբայրաբար սեղմեց Ռուբենը:

Մատուցողը փոխեց օգտագործված ափսեներն ու սպասքը և բերեց հաջորդ ուտեստները. Երկտեղանոց սեղանը ոչ մի բանի պակաս չուներ: Իսկ բարեմաղթանքներով ըմպվող գինիներն անմահական էին, և նրանք նստեցին մինչև ուշ երեկո...

Կեսգիշերը մոտ էր:

Արկածների սիրահարը ճիշտ հաշվարկով դուրս եկավ տանից. պիտի որ այդ ժամերին ավարտվեր ճաշկերույթը, և հենց այդ րոպեների ընթացքում էլ գրանցվեր Ռուբենի հետ հաշվեհարդարը...

Դիմացի ուռենիների մութ սաղարթներում թաքնված նորին մեծություն Հերբերտը արծվենի հայացքով ուշադիր տնտղում էր ճաշարանից դուրս եկողներին ու տեսնելով Ռուբենին՝ զենքն ուղղեց նրա վրա...

Առաջին իսկ գնդակը հասավ թիրախին, և... տղամարդն ընկապված:

– Սպասեցին, – ճաշարանից դուրս վագեցին այցելուները:

Կինը, որ փորձում էր առաջին օգնությունը ցույց տալ, տեսնելով արյունը՝ ճաց, երբ ճաշարանի դռան մեջ անհասկանալի կերպով հայտնվեց Ռուբենը:

Հերբերտը, չհավատալով աչքերին, շփոթմունքից քիչ մնաց մատներ իր հեռավոր ներկայությունը...

Ռուբենի նկատմամբ նախատեսված հաշվեհարդարը պատահաբար իր կրծքին էր կրել Ժուազը, որը գինովցած լինելու պատճառով սխալմամբ հագել էր Ռուբենի վերաբերուն և ակամա շփոթեցը ել Հերբերտին, որը և խառնաշփոթի մեջ լրեց հանցանքի վայրը...

Բարեբախտաբար, գնդակը մահացու չէր. վնաս-  
վել, այսինքն՝ կոտրվել էր ժուազի անրակը: Տեղում  
ոչինչ չձեռնարկելով՝ Ռուբենը իսկոյն կառ կանչել  
տվեց և ժուազին տեղափոխեց հիվանդանոց ու տե-  
ղային անզգայացմամբ նրա ուսագլխից հեռացրեց  
գնդակը, դարձյալ մաքրեց վերքն ու նրա շրջակայքը  
և ֆիքսեց կոտրված անրակն ու ուսագլուխը՝ բազ-  
կի հետ միասին, իսկ քիչ անց դեպքի վայրից հի-  
վանդանոց հասցված պարկուճը ժուազի համար ոչ  
միայն բացահայտում եղավ, այլև մի քանի բոպեռվ  
խոսելու ընդունակությունը կորցնելու և քար կտրե-  
լու զարմանք, երբ Հերբերտի հատուկ պատվիրված  
պարկուճի վրա տեսավ քրոջ՝ Յաննիի փորագիր  
անվանատառերը...

Յաննիի անհանգստությունը տեղին էր, երբ  
մտատանջվելով դուրս եկավ փողոց: Ամայի փողոցն  
ասես սուլում էր ինչ-որ անհասկանալի, չարագույժ  
շշուկով: Ներսը իրար խառնող վախ ու դողը պատեց  
աղջկան... Էմմայի խնդրանքով նա դարձավ տուն և  
որոշեց մի փոքր հանգստանալ: Էմման ընտանեկան  
խաչելությունը վերցրեց ձեռքը և սկսեց աղոթել,  
որն իր սաների նկատմամբ հասնում էր մայրական  
քնազդի. ժուազն այսքան երբեք չէր ուշացել...



Հերբերտի սենյակի պատերն անձայն ճշում էին  
այն մասին, թե նա ինչպես սպանեց ընկերոջը... Իսկ  
երբ փոքր-ինչ հանգստացավ, իրեն հուսադրեց, որ,  
միևնույն է, ոչ մեկը երբեք չի կասկածի իրեն: Բայց  
այն մարդը, որ որսի ժամանակ մեղքի զգացում էր  
ունենում՝ կենդանու մեջ տեսնելով մահը, առաջին

անգամ ձգանը քաշելուց տարօրինակ կերպով չէր դողացել ձեռքը: Եվ այժմ նրա մեջ չէր մնացել մարդկային ոչ մի զգացում, անգամ խիդճը չէր տանջում, որ... զոհվածը հենց իր ընկերն է:

Հերբերտը վառեց մահճակալին կից պահարանին դրված գիշերալամպը, ապա հանգցրեց և դա կրկնեց մի քանի անգամ, հետո դուրս եկավ՝ վերցնելով սենյակում դրած գինու շիշը, ու մտածեց. «Այս է իմ վերքի միակ սպեղանին: Միննոյն է, ոչինչ չեմ փոխի և հարություն չեմ կարող տալ ոչ վաղեմի ընկերոջ, ոչ էլ ներկա թշնամուս»:

Այն մտքից, թե ինչեր կարող էին պատահել հետո, չին փակվում աչքերը, և ծանր գիշերը կանգ էր առել տեղում, բայց ոչ թե սեփական մեղքի զգացումից, այլ իր ազնվական ընտանիքի պատվին սպառնացող խայտառակության պատճառով...

Տան շքամուտքից լսվեց հոր ձայնը, որ պատմում էր, թե ուղենիների պուրակում սպանության փորձ է կատարվել, որի հետևանքով տուժել է ժուազ Ապակը, և, փառը Աստծո, վնասվածքը խորը չէ:

Մայրն անհանգստացավ, և ճշմարտությունը իմանալու համար որոշեցին այցելել Յաննիին:

Սկզբի համար լսածից գոհ էր այնքանով, որ մեղմացուցիչ էր ոչ ծանր վիրավորումի փաստը, քանզի նրա մտքում երբեք էլ չէր եղել ժուազը: Մի պահ տատանվելուց հետո Հերբերտը որոշեց ներքն իջնել և իմանալ մանրամասները:

– Լսեցի, թե ինչ է պատահել, – ասաց նա՝ փորձելով միամտության զրահի տակ թաքցնել հանցանքը:

– Ինչպե՞ս, դու տեղյակ չես, թե ինչ է կատարվել, մի՞թե գիշերել ես տանը, – հայրը վստահ էր, որ որդին ընկերոջ կողքին է եղել ծանր պահին:

– Այն, հայրիկ, ես տանն եմ եղել, և ինչ մի խնդիր է, որ ես նրա կողքին չեմ եղել. հարցախեղդ լինել չեմ ցանկանում: Պետք է բոլոր լուրերը արհամարհել, – բարձրածայն ու արհամարհական տոնով շարունակեց Հերբերտը:

Ծնողներին բնավ հաճելի չէր որդու հարձակողական պահվածքը, որի մեջ ինչ-որ մատնող և ինչ-որ կասկածելի բան կար:

– Ինչ լուրերի մասին է խոսքը, – լարվեց հայրը:

– Առհասարակ այն լուրերի, որոնք չարախոսելու են ամեն մեկի և ամեն ինչի մասին, և ոչ մեկը հանգստություն չի ունենա, եթե ականջ դնի դրանց:

Եվ խորաթափանց հայրը հասկացավ, որ որդու պահվածքը մատնում է ինչ-որ սարսափելի հանցանը:

– Դու խոսում ես այն լուրերի մասին, որոնք քեզ հենց նոր դատապարտեցին, – ծանր ասաց հայրը:

Հերբերտը շփոթվեց և կամացուկ դուրս եկավ՝ ծնողներին թողնելով մեծ անհանգստության մեջ:

Գաստոնը տերերին տեղեկացրեց, որ կառը պատրաստ է, իսկ ամբողջ ճանապարհին, որը տևեց տասը րոպե կամ մի փոքր ավելի, նրանք այդպես էլ ոչինչ չխոսեցին. ինչ-որ ներքին մտավախություն էր պատել նրանց. որդին կամ վիճել էր ընկերոջ հետ, կամ էլ անմիջական կապ ուներ տեղի ունեցած միջադեպի հետ:

Երբ կառը կանգ առավ ժուազի վարձած տան դիմաց, դրան միաժամանակ մոտեցավ բուժարանի կառը, որից Ռուբենի օգնությամբ իջավ մի փոքր սփրթնած ու թևակապով ժուազը:

Հերբերտի հայրը ձեռքը պարզեց ժուազին, հայրաբար ու զգուշությամբ գրկախառնվեց, անզամ

օգնություն առաջարկեց հանցագործին գտնելու հարցում:

Ներսում ամեն բան խաղաղ էր, որովհետև անհանգստությունից զատ՝ նրանք տեղյակ չէին ոչնչից:

Յաննին շփոթվեց նախ Ռուբենի ներկայությունից, ապա և Հերբերտի ծնողների այդքան վաղ այցից, իսկ երբ տեսավ վիրակապված ժուազին, հազիվ զայեց ճիչը:

– Օ՛, Աստված իմ, եղբայրս...

– Դատարկ բան է, – նրան քննչորեն ընդհատեց եղբայրը, – համարյա ոչինչ չի պատահել:

– Նա, ինչպես միշտ, պերճախոս է. մահվան աչքերին հարազատի նման նայեց, շատ խիզախ է, իրականում նրա սիրտն է կոտրվել, – մեջքերում արեց Ռուբենը:

Իսկ հյուրասրահ հրավիրված Շնայդեր ամուսինները թեյի սեղանի շուրջը զրույցի էին բռնվել Էմմայի հետ: Հետո նրանց միացան Յաննին ու երիտասարդները:

Գորանը մեկ անգամ ևս կրկնեց, որ պատրաստ է անել ամեն ինչ, որպեսզի որքան կարելի է արագ հայտնաբերվի հանցագործը, իսկ ժուազը, որ վիրավորված էր Հերբերտի արարքից, քմծիծաղով պատասխանեց.

– Պատրաստվում եք օգնել, – և չկարողանալով զապել իհասթափությունն ու բարկությունը՝ քմծիծաղեց՝ չմտածելով, որ գուցե և անկեղծ է Հերբերտի հայրը: Ձեր խոսքը ծխի նման հօդս կցնի, եթե իմանաք իրականությունը:

Հյուրը տեղում քարացավ ու լսելուց անմիջապես հետո կանգնեց ոտքի և հարցրեց.

– Կարծում ես՝ կեղծ մտադրությամբ ենք այստեղ:

Ժուազը, ձեռքը մեկնելով, նրա ափի մեջ դրեց Հերբերտի՝ հորը լավ ծանոթ անվանական պարկումն ու ասաց.

— Հերբերտի կողմից ամպրոպները միշտ էլ սպասելի են, սակայն հարավից, թե հյուսիսից, ցավոր, կանխատեսելն է անհնար:

— Հերբերտը իմ միակ պատուհասն է: Եվ ես ինքս նրան կհանձնեմ օրենքի պատասխանատվությանը, – գլուխը կախեց Գորանը:

Ներկաները լուս էին, Հերբերտի մայրը հայացքն ուղղել էր Յանսիի կողմը և չէր թարցնում այն ցավը, որը զգում էր՝ հոգու խորքում մեղադրելով բոլորին, այդ թվում և Յանսիին:

Ճաշող լուսայունն ավարտվեց հրաժեշտով:

Սեղանը, որ Էմման պատրաստել էր հյուրերի համար, կորցրեց իրեն նույնիսկ չհպված երկու հոգու, որ ցավով ներողություն խնդրելով՝ դուրս եկան:

Յանսիի վիրավորանքը հասել էր գագաթնակետին, և սա դարձավ այն վերջին կաթիլը, որը, լցնելով նրա համբերության բաժակը, դուրը փակելու էր Հերբերտի ավերված սիրո դիմաց:

Կեսօրվա «մրրիկը» մտել էր Շնայդերների տուն և քշում էր ամեն բան:

Տուն վերադառնալուն պես Հերբերտի հայրը, որի զայրույթը դուրս էր եկել ափերից և մերկացրել որդու անառակ ու հանցագործ վարքը, նրան կանչեց իր սենյակ:

— Դու ապրում ես մութ կյանքով, որը նման է մահվան, – դժվարությամբ զսպելով զայրույթը՝ ասաց նա՝ որդու դեմքին շպրտելով պարկուճը:

Լսելով պարկուճի մասին՝ Հերբերտը զարմանքից վայր զցեց ձեռքի լրագիրը, քանզի շատ լավ

թվացեսոցը Տ 1915. Հայոց Հայք

էր հիշում, թե ինչպես էր նախօրոք փոխել բոլոր հինգ անվանական պարկումներով գնդակները, և այն փաստը, որ զենքի մեջ կրկին հայտնվել էին անվանականները շշմելու աստիճան զարմացրեց նրան:

– Ես պատրաստ եմ եղել քեզանից սպասել ամեն տեսակի հիմարություն, բայց երբեք չեմ մտածել, որ իրականությունն ավելի սուլավի է, քանզի ունես հանցագործ միտք ու հոգի, – շարունակեց հայրը:

– Ես Ձեզ չեմ հասկանում, – փորձեց խորամանկել որդին և մեղայական ու աղերսական հայացքն ուղղեց մոր կողմը՝ լավ իմանալով, որ միակ օգնող ուժը մայրն է, քանզի հայրը պատվից առավել և օրենքից կարևոր ոչինչ չգիտեր:

– Աստված մի արասցե, որ դուրս գամ քո դեմ, տղա, և ինչպես ենթադրում էի մեղավոր խոսքերիցդ, անցյալ գիշեր հենց այդպես էլ եղել է, – բղավեց հայրը:

Որդին համր էր ու մունջ: Միակ բանը, որ նրան տանջում էր, այն էր, թե ինչպես են ոչ անվանական պարկումները փոխվել չարաբաստիկ անվանականներով:

– Ես մահը գերադասում եմ ստորացումից և պատրաստ եմ քեզ հանձնել օրենքի դատին, – խոլ ձայնով շարունակեց հայրը և թեքվելով դեպի դուռը, որտեղ սպասում էին երկու ոստիկաններ՝ դիմեց նրանց.

– Ուզում եմ հաղորդել այն, ինչը չեմ կարողացել հաղորդել ավելի վաղ, քանի որ ինձ միշտ ետ է պահել արյան կարևորությունն ու կանչը, – ապա խեղդելով հուզմունքը, որը բարոյականությունից էլ ուժեղ էր և անկառավարելի՝ մատնացույց անելով որդուն՝ ավարտեց: – Ահա հանցագործը:

Հարգելով հայրական զգացմունքները՝ ոստիկանները շղթայեցին որդու ձեռքերը, և նա սպաների հետ ինքնակամ դուրս եկավ սենյակից:

Դուռը չծածկված՝ մայրը նայեց ամուսուն ու կոկորդով մեկ բղավեց.

– Քանի՞ դև է ապրում ներսումդ, որ հանուն վերացական պատվի ու խոստման որդուդ հանձնեցիր օրենքի դատին:

Գորանը նոյնիսկ չնայեց կնոջ կողմը:

– Գոնե մեկ անգամ ուշադիր եղա՛ր բանականությանդ ձայնին, չէ՞ որ քո աչքով ես տեսնում որդուդ կործանումը և ձեռք մեկնելու փոխարեն, ոտնատակ ես անում այն ձեռքերը, որոնք օգնության կարիք ունեն:

– Նա կյանքը քարշ է տալիս ցեխաջրերի միջով, և այժմ ամենուր երևում են հետքերը, – կոշտ պատախանեց ամուսինը:

– Կդիմեն եղբորս, նա Հերքերտին որդուց ավելի վեր է դասում ու ամեն գնով կազատի զավակիս:

– Ես թույլ չեմ տա, որ գերմանական դեսպանը խախտի օրենքի սկզբունքները, – ձայնը բարձրացրեց Գորանը:

Հյուրասրահում լուսաթյուն տիրեց:

Այն, որ կտոր-կտոր էր լինում մոր սիրտը, երևում էր նոյնիսկ անզեն աչքով:

Ինչ վերաբերվում էր Գորանին, նա սառնասիրտ էր ձևանում միայն կնոջ ներկայությամբ: Իրականում գիշերը նրա համար ուսին դրված բերից էլ ծանր էր, իսկ թե քանի գիշեր էր շալակելու Հերքերտը ճաղերից այն կողմ, միայն ու միայն Աստված գիտեր:

Լուսադեմին մոտ էր, երբ ժուազը, խախտելով լոռությունը, խնդրեց Յաննիին, հավաքել իրերը՝ ավելացնելով, որ մեկ-երկու օրից կգնան նավահանգիստ և քույրը կուղևորվի Ֆրանսիա:

Ապա, մի փոքր տատանումից հետո տեղեկացրեց, որ ըստ ստացած ծանուցման՝ Հերբերտին դատելու են օրենքի մեջմացուցիչ հոդվածով և վկաներ են լինելու ինքը, Ռուբենն ու Սևակը:

Փոստատարը դատական ծանուցումներ էր հանձնել նաև Ռուբենին՝ նրա և Սևակի համար՝ հատուկ շեշտելով երկու եղբայրների պարտադիր ներկայությունը:

Կարդալով դա՝ Ռուբենը ձեռքով շիեց ճակատը, գունատվեց և նոյն փոստատարի միջոցով ժամադրության նամակ ուղարկեց Յաննիին, որ երեկոյան վեցին Լեմանի ափին կսպասի նրան և խնդրեց չուշանալ: Վերջին շաբաթվա ընթացքում Յաննիի համար ամենակարևոր մարդը դարձել էր փոստատարը, որին սպասում էր օրվա բոլոր ժամերին: Դուն թակոցից Յաննին հասկացավ, որ լուսաբաց է, ուստի և մեկ նամակ էլ է ստանալու Ռուբենից:

Այս անգամ նամակը կարճ էր ու միատող, և Յաննին անհանգստությամբ հասկացավ, որ չի համբերի մինչև երեկո, և փոստատարին խնդրեց, որ ետ դառնա Ռուբենի մոտ ու նրան փոխանցի իր նամակը:

Փոստատարը, որն ակամա դարձել էր նրանց սիրո վկան, հեզահամբույր ետ դարձավ եկած ուղղությամբ և փողոցում հանդիպելով աշխատանքի շտապող Ռուբենին՝ խորամանկ ժպիտով նրան հանձնեց նամակը: Եվ երիտասարդը շհամբերելով՝ նստեց ճանապարհամերձ փայտե նստարանին, բացեց և ժպիտով կարդաց հերթական երկտողը.

«Ժամը մեկին Ձեզ սպասում եմ ճաշի», ու մտածեց, թե ինչպես կարող է այս՝ առաջին հայացքից անմեղ կես նախադասությունը երջանկացնել սիրահարված մարդուն: Ճանապարհին հանդիպեց Բեռնարին, որին տարօրինակ թվաց ընկերոց հայացքի անթաքոյց խաղաղությունը. թերևս այսքան ժամանակ չէր եղել մի դեպք, որ Ռուբենը ֆիզիկապես ու հոգեպես այսքան խաղաղ լիներ:

– Ինչ-որ տարօրինակ չե՞ս այսօր, – քայլելով նրա հետ՝ հարցրեց Բեռնարը:

– Մի՞թե երևում է, – քթի տակ ժպտաց Ռուբենը:

– Մի՞թե թաքցնելու միտք ունես, – նույն ձայներանգով պատասխանեց ընկերը:

– Յաննին ճաշի հրավեր է ուղարկել, – ասաց Ռուբենը:

– Իսկ ծնողները, ինչպես են վերաբերվում քեզ նրա ծնողները, գիտե՞ն քո մասին: Ինչպես կընդունեն այն փաստը, որ հայ ես, – շարունակեց հարցաքննել Բեռնարը:

– Յաննին և ժուազը անտարբեր են իմ հայ լինելու փաստին, իսկ ծնողների մասին ոչինչ ասել չեմ կարող, քանզի չգիտեմ: Յաննին մեկնում է Ֆրանսիա, ես ամեն պարագայում պետք է կարողանամ կապի մեջ լինել նրա հետ, ուստի ինձ պետք է ստանալ նրա ծնողների բարեհաճությունն ու թույլտվությունը:

– Մտածիր այս հարցի շուրջ, ընկերս: Գուցե քեզ համար միևնույն է գերմանացիների հետ մի ընտանիք լինելը, քանզի դու ավելի բարձր ես դասում սերը, բայց հարց է, թե ինչպես կարձագանքեն նրանք:

– Իհարկե, – համաձայնեց Ռուբենը, – Շվեյցարիայից Փարիզ հասնելը բարդ չէ, հանուն նրա ես պատրաստ եմ ուղևորվել նույնիսկ Լուսին:

Ասընդհատ ժամացույցի սլաքներին նայելով՝ դահլիճի անկյունից անկյուն քայլող սևահեր Յաննին դեղին արևածաղիկներով իր շրջազգեստի մեջ կարծես երկնքից իջած արև լիներ: Պատուհանին հասնելով՝ նա հայացք նետեց դուրս և տեսնելով երջանիկ ժպիտով դեպի տուն շտապող Ռուբենին ու մոռանալով վայրկյաններ առաջ իր լարվածությունը, փոքր-ինչ հանդարտվելով՝ շտապեց նրա դիմաց բացել դուռն այնքան արագ, որ երիտասարդը չհասցրեց նույնիսկ դիպչել դռան թակիչին, բայց անմիջապես նկատեց աղջկա՝ արցունքներից կարմրած աչքերը:

– Մի՞թե արեգակը կարող է մոայլվել, կամ մի՞թե տիսրությունն ի զորու է շորթել նրա նմանակի աչքերի փայլը, – ասելով՝ Ռուբենը համբուրեց Յաննիի ձեռքը և ոչինչ չհարցրեց, քանզի ենթադրեց, որ մոտ օրերի մեկնումն է նրա միակ խնդիրը:

Յաննին վերցրեց Ռուբենի վերարկուն, բերած ծաղիկները, որոնց սպասում էր թարմ ջրով բյուրեղապակյա ծաղկամանը:

– Ինչո՞ւ ես ժպտում, – հարցրեց Յաննին:

– Դու գիտեի՞ր, որ ես ծաղիկներ կրերեմ, – ծիծանեց Ռուբենը:

– Ես գիտեի... Գիտեի նույնիսկ, թե ինչ ծաղիկներ, – ժպտալով պատասխանեց Յաննին:

– Բայց ինչպես, – զարմացավ Ռուբենը:

– Կանանց մոտ չափազանց զարգացած է նախազգացումը, – ուսերը թոթվեց Յաննին, – ես նույնիսկ զգում եմ, թե ինչ ես մտածում:

– Եվ ինչ եմ մտածում:

– Մտածում ես, որ մոայլ տրամադրությունս կապած է իմ մոտակա ճանապարհորդության հետ:

Ռուբենը զարմանքից դանդաղ, ինչպես դանդաղեցված տեսարանում, նստեց կողքի աթռողին ու, կարծես բարձրաձայն մտածելով, վախեցած շշնջաց.

– Փաստորեն, մենք՝ տղամարդիկս, պետք է զգոյշ լինենք նույնիսկ մեր մտքերով տարվելիս:

– Մենք բոլորի մտքերը չենք, որ կարողանում ենք կարդալ, – պատասխանեց Յաննին, որին զվարճացրեց Ռուբենի անմիջականությունը և, շտապելով հանգստացնել հյուրին, անզգուշորեն խոստովանեց, – միայն ու միայն նրանց մտքերը, որոնց հանդեպ տածում ենք խոր զգացմունք:

Ներս մտավ Էմման և սիրալիր բարևելով Ռուբենին՝ հրավիրեց ճաշի:

Ամբողջ ճաշի ընթացքում ոչինչ չխոսեցին:

Յաննին մտքում նախատում էր ինքն իրեն իր անխոհեմ խոսքերի համար, իսկ Ռուբենը՝ հակառակը. մտքում հենց այդ շնորհի համար աղոթում էր Աստծուն...

Վրա հասավ հրաժեշտի պահը. Ռուբենը պետք է վերադառնար հիվանդանոց:

– Ես դա գիտեի, – ասաց նա՝ հասկանալով, որ օրիորդի լուս հուզմունքը կապված էր ճաշին նախորդած նրա ակամա խոստովանության հետ:

– Ինչպես թե... Երբվանից, – անկարող լինելով թարցնել տագնապը՝ շփոթվեց Յաննին:

– Լճափի այն երեկոյից:

– Բայց ինչպես:

– Երբ սեղանի շուրջը բոլորը ծիծաղում են, նա, ով ինչ-որ մեկին համակրում է, որպես կանոն, նայում է նրան: Սա հոգեբանական ցուցիչ է: Այն օրը, երբ բոլորս ծիծաղում էինք, Դուք միշտ նայում էիք ինձ:

Խոստովանելով դա, ինչպես նաև այն, որ իրեն մնում է միայն խոնարհաբար սպասել, թե Փարիզից երբ կվերադառնա Լոզանի արևը՝ Ռուբենը ասպետաբար համբուրեց Յանսիի ձեռքն ու հիշեցնելով երեկոյան ժամը վեցին լճափնյա ժամադրության մասին՝ հեռացավ:

Գաստոնը, որ Գորանի կարգադրությամբ հեռացվել էր տնից, արդեն տասը օր էր, ինչ հավատարիմ շան պես ծառայում էր նրա կնոջ եղբոր ընտանիքին, և դեսպանի հրամանով արդեն քանի օր հերթապահում էր Չիլինկիրյանների տան մոտակայքում:

Հիմնվելով նրանց հասած հավաստի տեղեկությունների վրա, որ իբր եղբայրների ջրերը նույն առվով չեն հոսում՝ Վանգենհայմը ցանկանում էր Սևակին իբրև խայծ օգտագործել Ռուբենին վնասազերծելու և Հերբերտի պատիժը մեղմացնելու համար:

Բժիշկին քիչ թե շատ «տնտղելուց» հետո Գաստոնը ենթադրեց, որ այդ պահին տանից դուրս եկածը Սևակն է, քանզի արտաքուստ այնքան էլ բժշկի նման չէր: Նրան հետևելու ընթացքում պարզել էր, թե որ գինետան հավատարիմ հաճախորդն է հայ քանաստեղծը և պատշաճ հեռավորության վրա կամացուկ քայլեց նրա ետևից, իսկ տեղ հասնելուն պես մոտեցավ ու շշուկով ձայնեց:

– Սևակ, դո՞ւ ես:

Սևակը, որն արդեն քանի օր է, ինչ նկատել էր նորահայտ լրտեսին, ետ չնայեց:

– Սևակ, – կրկին շնորհաց Գաստոնը:

Սևակը շրջվեց ու քայլեց դեպի նա և.

– Ենթադրենք, – արձագանքեց:

Գաստոնը նայեց շուրջը և գլխի թեթևակի շարժումով հասկացրեց, որ հետևի իրեն:

Գինետան միակ առանձնասենյակում նստած էր պարոն Վանգենհայմը, որին Սևակը երբեք չէր տեսել և ոչ էլ լսել էր նրա մասին: Մեկ անգամ միայն նամակով հրավեր էր ստացել, բայց չիմանալով պատճառը՝ անտեսել էր:

– Սա ինչ է նշանակում, Սևակ, – ոչ արտահայտիչ ձայնով նրան դիմեց Վանգենհայմը, – այդ ինչպես է պատահում, որ ինձ նման մարդկանց Դուք ստիպում եք Ձեզ հրավիրել երկու անգամ:

– Պարոն, գուցե՛ Դուք պատիվ անեք ներկայանա՞լ, իսկ ինչ վերաբերվում է ինձ, ապա ես Չիլինկիրյանն եմ: Պարոն Չիլինկիրյանը:

– Բարոն Հանս ֆոն Վանգենհայմ, – մի փոքր շփոթված՝ ձեռքը մեկնեց և փորձեց բարեհամրույր երևալ դեսպանը:

Տիրապետելով քաղաքավարության նորմերին՝ Սևակը փոխադարձեց.

– Սևակ Չիլինկիրյան:

Սկիզբը դեսպանի համար հուսադրող էր, ու նա միանգամից անցավ գործի էությանը. թօթապանակից հանեց մի ծրար՝ հավանաբար պարզևալճարով այն դավաճանության դիմաց, որը պիտի կատարեր Սևակը՝ ի վնաս Ռուբենի: Դատավորներին կաշառելը նրա անվանը հարիր չէր, ուստի, որպեսզի Հերբերտի գործը կարողանար հասցնել բարեհաջող ավարտի, մշակել էր այլ տարբերակ. Սևակը պետք է ստանձներ Կայենի դերը, իսկ Ռուբենը՝ Արելի:

Սևակն զգաց, թե ինչպես երակներում սառեց արյունը:

– Պարոն, – դիմեց նա դեսպանին, – թույլ տվեք

նախքան հեռանալս Զերդ մեծությանը խոստովանել, որ Ռուբենի հետ տարածայնությունները չեն ենթադրում արյունը սատանային վաճառել:

Վանգենհայմը ձեռքը տարավ ճակատին, սրբեց քրտինքն ու կուլ տվեց կոկորդում հավաքվող դառնությունը:

Իսկ Սևակը, իր խոսքի հետ ձեռքը մեկնեց սեղանին դրված արծաթյա մրգամանին, այնտեղից վերցրեց ալ կարմիր խնձորը, ձեռքերով երկու կես արեց մեջտեղից, և մի կեսը տալով պարոնին, իսկ մյուսը՝ սուրհանդակին՝ առանց հրաժեշտ տալու հեռացավ...

Պանդոկի մուտքի մոտ բաճկոնի գրպանից հանեց մերակից կախված ժամացույցը, նայեց, ժպտաց և քայլեց երկար ու ամայի փողոցով. թե ինչ կար մտքին, կամ ինչ էր մտածում, առայժմ անհայտ էր նոյնիսկ իրեն...

Լճի ծփանքից մի խոլ հառաչանք էր տարածվում:

Ամեն մայրամուտի հանգստանալու հեռացող արեգակը լճի ջրերի մեջ էր անխնա թափել իր ամբողջ ոսկին, որոնց փայլից շլացած քամին մե՛կ հավաքում ու մե՛կ էլ, խելքի գալով, թե՝ ինչին են պետք... շաղ էր տալիս դրանք:

Յաննիի ոտնաձայները խանդով կլանող ավագները դեպի աղջիկը բերեցին Ռուբենին, որ համբուրեց նրա զույգ՝ հնչյուններ արարող ձեռքերը, և խախտելով լոռությունը.

– Գ՞նի եք, – ասաց, – որ նման խենթ սիրահար ունեք: Ինձ անհայտ է Ձեր քնավորությունը, քանզի գիտակցությունս ինձ թելադրում է ճանաչել Ձեր գեղեցկությունը, զգայուն ու արվեստագետ հոգին,

ազնվությունը, որոնք փակում են աչքերս և այրում հոգիս:

Յաննին լուտ էր: Երբեք չէր ունեցել նման հաճելի զգացողություն. Ռուբենի ճարտար լեզուն նրան ստիպում էր լսել ու մտքում հպարտանալ նրանով, ով, աչքերը կկոցած, դեռ գովարանում էր սիրելիին:

— Հաճախ մտածում եմ, որ անզգա սիրտ ունեցողներն ավելի երջանիկ են, քան մենք՝ արվեստագետներս:

Յաննին, որ մի պահ շփոթվեց Ռուբենի՝ «մենք» բառից, ընդհատեց նրան և, ցանկանալով կատակի վերածել պահը, ասաց արևոտ ու լայն ժպիտով.

— Բժիշկ, երևի ցանկանում էիք ասել. «դո՞ք՝ արվեստագետներդ»:

— Երևի, օրիորդ,— Ժպտալով պատասխանեց Ռուբենն ու համբուրեց Յաննիի ձեռքը:

— Միթե արվեստագետներից ավելի դժբախտ մարդիկ կան, — շարունակեց Յաննին, — Նայիր շուրջն ու կտեսնես, որ նրանց համար, ովքեր մեզ նման չեն ընկալում, մտածում են, թե կյանքն այնքան պարզ է և այնքան դյուրիին: Իսկ մենք, որ ունենք շատ զգայուն սիրտ, սիրում ենք, սիրվում ու բաժանվում իրարից և սպասում միմյանց նամակների ու տիրում, երազում կրկին միասին լինելու մասին...

— Թույլ տվեք մի խոսք ասեմ Ձեզ, օրիորդ: Դուք նման եք լեռնային վարար գետի, որն ինձ քաշում է իր խորքերը... Ժամանակ տվեք՝ սովորեմ լողալ հոսանքին հակառակ, որ միշտ լինեմ Ձեր գուլալ ջրերում:

Յաննիի ժպիտը աչք էր շոյում:

— Ես խոսքեր չեմ գտնում իմ սերն արտահայտելու համար: Հիշեք, եթե Դուք թախծում եք, թախծում եմ նաև ես...

Երիտասարդն ամենայն անկեղծությամբ գլուխ էր խոնարհում իր սիրո առջև, և երկար զրոյցի նպատակը Յաննիին ապացուցելն էր երբեք մեկ մազաչափ անգամ կասկած չունենալ, որ ինքը շուտով կմեկնի Փարիզ՝ իր ձեռքը խնդրելու, ավելին՝ նամակը ավելի վաղ կհասնի տեղ, քան ծնողները կհասցնեն իրեն ընդունել տանը:

Լսելով Ռուբենի խոսքերը՝ Յաննին չկարողացավ թաքցնել հուզմունքը:

– Մի հուզմունք, սիրելիս, – ասաց Ռուբենը, – Դուք այլսս իմ կինն եք՝ այս բոպեից սկսյալ, և ես մեկ անգամ ևս հավաստում եմ, որ սիրտս մինչև վերջին շունչս բարախելու է միայն ու միայն Ձեզ համար: Պիտի ցանկանամ ամեն առավոտ արթնանալ Ձեր կողքին, և Ձեր գեղեցիկ ժայիտը բացի աչքերիս առաջ այս կախարդական անհուն կապույտ լիճը, որ իր ջրերի մեջ է ցոլացնում Ալպերի ճերմակ գագաթները, – ավարտելով իր խոսքը՝ Ռուբենը ժպտաց:– Գուցե հուսադրող մեկ ակնարկ էլ Դուք ունենաք ինձ համար:

– Ես խոստանում եմ, – գլուխը խոնարհեց Յաննին, – ես խոստանում եմ միշտ ազնիվ լինել Ձեր նկատմամբ և նվիրված, ցանկացած հեռավորության և ժամանակի մեջ սպասել միայն Ձեզ: Եվ խնդրում եմ, որ ինձ սովորեցնեք հայերեն: Ուզում եմ Ձեզ նամակ գրել Ձեր իսկ լեզվով:

Ռուբենը ցնցվեց, քանզի հասկացավ, որ այս պահից սկսած՝ երկրագունդը պտտվում է միայն իր համար:

Յաննիին ճանապարհելուց հետո առաջնը, որ անցավ Ռուբենի մտքով, շտապ խնդրագիր-նամակ ուղարկելն էր նրա ծնողներին. «Լավագույն

ընտրյալը նա կլինի, ով առաջինը կխնդրի սիրելիի ձեռքը: Պետք է առաջին տպավորությունն ազդեցիկ լինի, և հայ լինելով՝ պետք է իմ ազնվությունը երևելի դարձնեմ ամեն բարի մեջ», – մտածեց Ռուբենը:

Աշխատասենյակի պահարանից վերցրեց սպիտակ թուղթը, նստեց հյուրասենյակի բազմոցին և նայելով Յաննիի՝ սեղանիկի վրա դրված նկարին, սկսեց անկեղծորեն շարադրել մտքերը:

### ՅԱՆՆԻ ԱՊԴԵԼԻ ԾՆՈՂՆԵՐԻՒ<sup>1</sup>

«Սիրելի Shikhi և Պարոն,

Ես ձեզմե ներում կիսնդրեմ, առանց ձեզ ճանչնալու պատրիկն ունենալու, այս նամակը գրելու ազարության համար: Եվ կաղաչեմ, որ ծնողական ներողամկրությամբ կարդաք այս քառերը, որովհետք ես հիրավի չափազանց հուզված եմ գրելու համար այնքան լուրջ հարցի մը վրա:

Խնդիրը ձեր դարեր՝ Օրիորդ Յաննիի և ყողերիս գրողի երջանկության կվերաբերի:

Ինը ամիս առաջ մենք զիրար ճանչցանք Շամբերի գյուղին մեջ: Մեր հանդիպման առաջին իսկ օրեն անկեղծ համակրանք մը զգացինք իրար նկարմամբ, փոխադարձ մկրեմություն մը, որ ավելի ու ավելի անդիմադրելի սիրո վերածվեցավ: Եվ հիմա, որ սրբի խորունկ ցավով իմացաւ Օրիորդ Յաննիին մեկնումը մեր քաղաքեն, կփութամ սրբազն պարսականությունն մը կարարել: Մեր երջանկության օրերուն մենք բոլորովին լուրջ, խսդապահանց և լուսական սեր մը խոսքացանք իրարու, և ես խորք պայի իրեն ձեզմե խնդրելու իր ձեռքը: Ահա այդ խոսքուն է, որ կուզեմ կարարել այսօր:

<sup>1</sup> Ռ. Սևակը նամակը գրել է ֆրանսերեն: Արևմտահայերեն է թարգմանել Աբրահամ Ալիքյանը:

Ճիշտ է, որ դուք պիտի չուզեք անմիջապես վճռել ձեր դարձեր բախտը ուսանողի մը հետ, զոր չեք ճանչնար դակավին:

Բայց ձեզմե խնդրած շրապողական ամուսնություն մը չէ, որովհետք եւ դեռ չափազանց երիտրասարդ եմ՝ քաններկու դարեկան: Կուզեի միայն խնդրել ձեզմե, որ նշանեիք մեզ հիմա և թղթակցելու ազարություն դայիք մեզի: Ես դեռ պետք է երկու դարի սորվիմ թժկության դոքայորի աստիճան սպանալու համար, իսկ նշանպուրի այդ երկու դարիների ընթացքին դուք կրնաք լավագույնս ճանչնալ զիս, ուշադիր քննել իմ բնավորությունս և սովորություններս, խորազնել սիրու. և եթե զիս կարարյալ գրնեք, այն ամբեն միայն թույլ կուրաք մեր ամուսնությունը:

Նախ և առաջ կուզեի ձեզմե խնդրել, որ օրիորդ Յան-նիի նկարմամբ դամած զգացումն թեթև ու անցողիկ սեր մը չնկարեիք: Ասոր նամակներեն զրկվելես ի վեր կզամ, թե կյանքն ինձ համար դառապագին կդառնա, իսկ աշխարհանքս՝ անկարելի, և չեմ կարծեր, որ օրիորդ Յաննին ալ երջանիկ ըլլա առանց իմ լուրերու:

Ես այն ջերմիկ հավարքն ունիմ, թե դուք բարի կըլլաք ձեր դարեր և ինծի նկարմամբ, որ կուզեմ ձեր զավակն ըլլալ: Տվեք մեր սիրույն ձեր ծնողական օրինությունը, և ես կիսուրանամ կարելիս ընել, որպեսզի հաճն ըլլամ ձեզի, հավարիմ ու հնազանդ, որպեսզի ձեզի արժանի զավակ մը դառնամ:

Մեր նշանպուրի և ամուսնության ամբողջ գլուղության եւ իմ մեծագույն հույսս դրած եմ ձեր հաճույշյան և իմաստուն խորհուրդներուն վրա: Դուք կրնաք լիովին վարահիլ ինձ և ապահով ըլլալ, որ ես շար ճշգրտորեն ու ամենայն անկեղծությամբ կպարասիսնեմ ձեզ հետաքրքրող բոլոր հարցերուն:

Այն հոյսով, որ ձեզմե ուրախալի պարասխան մը  
կարանամ, որ ձեր դարեր և ինձ հավերժական երջանկու-  
թյուն պիտի պարզեն, մնամ, սիրելի Տիկին և Պարոն,

Ձեր շատ խոնարհ և շատ հնագանդ զավակը՝

Ռյուբինս Չիլինկիր (թժկ. ու.),

Փետրվար 4, 1908, Լոզան»:

Մի քանի անգամ վերընթերցեց նամակը, տե-  
ղավորեց ծրարի մեջ՝ առավոտյան փոստարկող զցե-  
լու համար: Հոգում փետրվարյան խառնաշփոթ էր,  
փոթորիկը կրծքի տակ ճոճում էր սիրտը. միայն թե  
ստանա նրանց համաձայնությունը: Երկաթուղային  
տոմսը գրանում՝ Ռուբենը պատրաստ էր Փարիզի  
Աստվածամոր տաճարի առջև հավերժական սիրո  
երդում տալ:

Արևոտ ու բարենպաստ առավոտը լի էր սպա-  
սելիքներով: Արևի ճառագայթները փայլեցնում էին  
Յաննիի բրդյա զգեստի կանաչ խավը: Կիսակրունկ  
կոշիկները նրան դարձնում էին անչափ բարետես: Քայլերը նրան  
տանում էին դեպի բակ, որտեղ նրան  
սպասում էր Ռուբենը, և ժպիտը մոմի ճրագի նման  
թրթոռում էր աղջկա դեմքին, որին ի զորու չէր ան-  
տարբեր լինել Ռուբենը:

Դատավարությունն սկսվեց: Դահլիճը ոտքի  
կանգնեց և լուսթյամբ դիմավորեց դատավորին:  
Հերբերտի պաշտոնյա հարազատները, որոնց աչքե-  
րից հորդում էր կատաղություն և ատելություն, գրա-  
վել էին դատական նիստերի դահլիճը: Միայն հայրն  
էր, որ գլխով բարևեց հայցվոր-հակառակորդներին:

Եվ քանզի ո՞չ ժուազը և ո՞չ էլ Ռուբենը բողոք-  
դիմում չէին սերկայացրել, դատավարությունը մինչև

այն պահը, երբ դատարանը դիմեց Ռուբենին, անցնում էր հանգիստ ու խաղաղ մթնոլորտում: Սակայն Աստվածաշունչը նրան ստիպեց ասել. «Ճշմարտությունը, ճշմարտությունը և ոչինչ, բացի ճշմարտությունից»:

Առաջին հարցը, որ իրավապաշտպանն ուղղեց Ռուբենին, հետևյալն էր.

– Ինչո՞ւ դատավարությանը չի մասնակցում Սևակ Չիլինկիրյանը:

– Ձերդ գերազանցություն, – պատասխանեց նա՝ հայացքն ուղղելով դատավորին, – ես Ռուբեն-Սևակ Չիլինկիրյանն եմ, ուստի հնարավոր չէր կիսվել երկու մասի և ներկայանալ որպես տարբեր անձինք:

Դահլիճը ցնցվեց. սկզբում սկսեցին ծիծառել, հետո քար լուսվություն տիրեց, մի պահ նույնիսկ մոռացվեց, որ դատավարություն է և ոչ թե բեմադրություն:

Յաննին ոտքի կանգնեց և սառն ու շանթող հայացքով զննեց Ռուբենին, որի խոսքը շիկացած շեղքի նման փշրեց Յաննիի հավատն առ սիրած երիտասարդը. մի՞թե վարպետորեն ստել են իրեն... Մի ակնթարթում աշխարհն ասես երկու կտոր եղավ... Աղջկն առաջին անգամ անօգնական նայեց շուրջը, և հարցական ու համր հայացքը պատվեց մահվան գունատությամբ:

Ռուբենը նայեց նրան, ապա հոգով զգաց նրա մանկական մատների դողը և աչքերում խեղդված արցունքները:

Կայծակնահար եղած երկու մարդիկ ցավագին կերպով հասկացան, թե ինչ է նշանակում ընդմիշտ բաժանման տառապանքը:

Դատավորը խոպոտ ձայնով հարցրեց.

– Ինչո՞ւ որոշեցիք ներկայանալ կեղծ անունով:

Եվ Ռուբենը՝ Ներկաններին հայտնեց, որ իր անունը՝ Ռուբենը, ինչպես և բոլոր մարդիկ, ստացել է ծնողներից: Եվ քանզի սևաչյա էր, տանն իրեն սկսեցին անվանել՝ նաև՝ Սևակն, այսինքն՝ սև աչքերով տղա կամ Սևակ: Պատմեց, որ տարիներ շարունակ «Ռուբեն Սևակ» գրական անունով գրել ու մասնակցել է գրական խմբակների, տպագրվել լրագրերում: Երբ վերջնականապես որոշեց ընտրել բժշկի մասնագիտությունը, մտածեց, որ բանաստեղծական գրադարձունքը ստվեր կցցի բժշկական գործունեության վրա, քանզի այն լուրջ վերաբերմունքը, որը մարդիկ տածում են բժիշկների հանդեպ, չեն կիսում բանաստեղծները: Բայց առանց գիր ու գրականության նույնապես ինքը չի կարող պատկերացնել կյանքը: Ուստի, տեղափոխվելով Լոզան՝ ստիպված հորինեց իր երևակայական երկվորյակ եղբորը՝ Սևակ Չիլինկիրյանին, ինչից հետո, կախված իրավիճակից, սկսեց Ներկայանալ և իրքս Ռուբեն Չիլինկիրյան, և իրքս Սևակ Չիլինկիրյան: Եվ հենց այն պատճառով, որ նրանք երկուսն էլ չէին կարող գտնվել կողք կողքի, ստիպված եղավ առասպել հորինել նրանց միջև գոյություն ունեցող թշնամանքի մասին... Եվ հիմա հասկացավ, որ ժամանակին կայացրած սխալ որոշման պատճառով այժմ վրա է հասել պատասխանատվության, հետևաբար և տառապանքի պահը:

Այդ ասելով և կարծես ինքն իրեն դատապարտելով մեկ օր առաջ չխոստովանելու համար՝ հայացքն ուղղեց Յանսիին:

Այն հաղթական հայացքը, որը տիրում էր Վանգենհայմի գոհ դեմքին, միանգամից փոխվեց, երբ նա հանկարծ պատկերացրեց, որ եթե հայտնության պողոթկումի մեջ Ռուբենը չլոի նաև կաշառի մասին,

իրեն էլ կնստեցնի խայտառակության աթոռին։ Ռուբենն այդ պահին նրան թվաց իրու թույնի մի բաժակ, որն ընդունակ էր սպանել իրեն։

Դատավարությունն ավարտվեց։ Դահլիճում ոչ ոք չմնաց, և առաջինը, որ օճի պես դուրս սողաց, դա հենց երջանիկ Բարոն Հանս ֆոն Վանգենհայմն էր։ Ինչ վերաբերվում էր Հերբերտի ճակատագրին, այդ պահին դա հետաքրքիր էր միայն իր մորը, իսկ մնացյալի ուշքն ու միտքը միայն Ռուբենն էր։

— Երբեք չեմ մտածել, որ երբսէ կկանգնեմ դատարանի դիմաց, — ասաց նա։

Ժուազը ժպտալով սեղմեց ձեռքը.

— Ինձ համար միևնույն է, թե քանի անուն կունենաս, նաև միևնույն է, գր՞ո՞ն ես, թե՞ բժիշկ, կարևոր միայն Յանսիի պատիվն ու երջանկությունն է։

— Ինձ համար նույնպես, — ասաց Ռուբենը։

Ռուբենը հրաժեշտ տալով մի տարեց կնոջ՝ մոտեցավ Յանսիին։ Ժուազը նրբանկատորեն հեռացավ։

— Վանգենհայմն ինձ կաշառել էր փորձում, — խոստովանեց Ռուբենը, որ արդեն հասկացել էր անտեղի լոռության և Յանսիին այս գործի մանրամասներից հեռու պահելու «ասպետականության» վտանգի չափը։ Եսթաղրելով, որ ես Սևակն եմ, ցանկացավ, որ դատարանում հանդես գամ հօգուտ Հերբերտի շահերի։

— Ինչ... Եվ Դուք լոեցիք բարձրաձայնելու փոխարեն, — զարմացավ Յանսին և կտրուկ շրջվեց դեպի դահլիճը, — ես պետք է տեսնեմ դատավորին և պատմեմ իրողությունը։

— Պետք չէ, — ասաց Ռուբենը՝ իր ափի մեջ վերցնելով նրա ձեռքը, — միթե ույթը տարին, որ դատապարտվեց Հերբերտը, բավական չէ։

– Իսկ Վանգենհայմը, – հարցրեց Յաննին, – իիմանա հոհոռում է Զեր մարդասիրության վրա:

– Մենք ավելի կարևոր խնդիր ունենք, – ասաց Ռուբենը՝ Յաննիին տանելով դեպի դուռը, – եկեղեցի պիտի գնանք, որ կենտրոնական փողոցից քիչ վերևում՝ բլրի վրա է. ուզում եմ Զեր հավերժական սիրո խոստում տալ Աստծո տանը, որ օրինվի մեր սերը, մինչև ԻՆՔԸ մեզ կկապի այր ու կնոջ կապով:

Յաննիին այլևս չէր հուզում Ռուբենի անձի երկվության հորինվածքը. նրան լիովին բավարարել էր Ռուբենի՝ դատարանի դահլիճում տված պատասխանը:

Քամին հողմապտույտ էր սկսել նրանց դիմաց. ոչ կարգին ձյուն էր գալիս, ոչ էլ անձրև:



Մշուշի մեջ կուլ էր գնացել այգին՝ ետևում թողնելով դատն ու դատարանը:

Եկեղեցու գմբեթը մառախլապատ ամպերի մեջ էր, խորանն էլ երևի վաղուց չէր լսել սիրո խոստվանություն:

Քահանան, որ բուրվառով խունկ էր ծխում, շրջվեց դեպի երիտասարդները, խաչակնքեց նրանց և առակներով խոսեց նրանց հետ.

– Անմիտ տղան տրտմություն է իր հոր համար:

Կաշառակերը սպանում է իր հոգին, բայց կաշոք ատոռով պիտի ապրի:

Թագավորն արդարությամբ է հաստատում երկիրը, բայց կաշառակերը քանդում է այն:

Մի՛ ընկերացիր բարկացող մարդու հետ և բորբոքողի հետ մի՛ գնա:

Փշեր ու որոգայթներ կան թաքցված չար մարդու գործերում. իր հոգին պահպանում է նա, ով հեռանում է նրանից...

Քահանայի խոսքերը զարմանալի ու աներևակայելի կերպով վկայում էին այդ օրվա իրադարձությունների մասին և Աստծո կամքով արդարացնում Ռուբենին:

Նրանք զարմանքից կորցրին խոսելու կարողությունը և օրինությունն անզամ անաղմուկ եղավ. ասես քահանան ամեն տեղ եղել էր և ամեն բանից տեղյակ էր...

Երբ նրանց գրկեց լրությունը, Ռուբենը հարցական հայացքով նայեց Յաննիին.

– Քեզանից նամակներ կստանամ ամեն օր, այդպես չէ, և ամեն առավոտ փոստատարի միջոցով քեզ նամակ կգրեմ: Երդվիր, որ երբեք չես մոռանա, որ քրիստոնյա լինելով՝ կսպասենք ու հավատարիմ կմնանք միմյանց, – խնդրեց Ռուբենը:

– Երդվում եմ, – պատասխանեց Յաննին, և Ռուբենը վերջին անզամ համբուրեց նրա ձեռքն ու խոտացավ, որ շուտով միասին կլինեն:

Մի անասելի վեհություն էր թևածում այդ երդումների ու սիրո վերևում, արցունքոտ մի հայացք, որն իբրև սիրո ու հրաժեշտի վկա, իբրև անձրև՝ սկսեց սրբել նրանց դեմքերը:

Մշուշոտ ճանապարհով իջան դեպի փողոց: Նրանց ուղեկցում էր մի քուլա ամպ, որին ծանոթ էր Յաննիի տան ճանապարհը: Փողոցի վերջում հրաժեշտ տվեցին միմյանց, ինչից հետո Ռուբենը հայացքով ուղեկցեց Յաննիին, մինչև նա մտավ իրենց բակ:

Ռուբենի սրտից մի քար ընկավ՝ ժայռոտ ու ծանր մի քար, որ ծածկեց այն անդունդը, ուր կարող էր

գլորվել նրանց սերը: Մտատանց ու ցնորված եկավ տուն, հավաքեց «Ասակին» բնորոշ իրերը, խցկեց այն արկղի մեջ, որը հաճախ բաց ու խուփ էր անում՝ Ռուբենին քողարկելու համար: Առավոտյան կայարան գնալու համար դրեց առօրյա հագուստը և Յան-նիի համար գնած նվերը:

Թվում էր, թե օրվա լարվածությունը թոթափելու համար մեկ գավաթ դառը գինին և մեկ սիգարը լրիվ բավարար կլինեին, սակայն այն ամենը, ինչ կատարվել էր, այսքան էլ հեշտ չէր մոռանալ, և անքուն, կողքից կողք շրջվելով անկողնում՝ չէր էլ հիշում, թե երբ ընեց ու թե ինչպես արթնացավ լուսադեմին ծանր դողից. միայն կիսաբաց պատուհանի փեղկին հարվածող քամուց կոտրված ծառի ծանր ճյուղը նրան կհուշեր այդ մասին, որի աղմուկը նրան ստիպեց գինվել կոնյակով ու դուրս գալ պատշզամբ, որտեղ սառած դեմքով վիճեց բաց պատուհանից անարգել ներս ու դուրս անող քամու հետ, որն իրեն և շոյում էր, և համբուրում, և հնարավորություն տալիս շնչելու մարուրն ու անտեսը: Հետո մի ումառվ դատարկեց բաժակի կոնյակը, որը նախ կուրծքը ջերմացրեց, հետո բարձրացավ քունքեր ու պտտվեց գլխով մեկ:

Հոգին խաղաղեցնելու և միտքը ծանր մտքերից ազատելու համար պետք էր մի քիչ խաղաղվել:

Ժամանակը մոտենում էր, Ռուբենը անշտապ դուրս եկավ. որոշել էր ոտքով գնալ կայարան ու սպասել նրան, որ դաժան մեկնումից առաջ միասին անցկացնեն վերջին ժամերն ու վերջին բոպեները:

Ձեռքի մեջ անընդհատ շոյելով այն կախազարդը, որը գնել էր Յաննիի համար, քայլեց փողոցով: Հեռվում երևաց եկեղեցին, որ եղավ իրենց սիրո

Երդման վայրը, ապա ետևում մնացին անտառն ու գլխավոր փողոց...

Մեկնող ու ժամանող գնացքների սուլոցները, շոգեքարշերի ծուխն ավելի էին նրան մոտեցնում իրականությանը...

Այդ ամբողջ աղմուկի մեջ գնացքներից եկող քամին հարվածում էր երիտասարդի կրծքին, կոճակներից ազատված վերարկուի փեշերը խփվում էին ծնկներին, սակայն որևէ բան անզոր էր նրա հայցը շեղել այն կետից, որտեղից պետք է երևար Յաննին, ավելին՝ ամեն երկու-երեք րոպեն մեկ ձգվում էր, որպեսզի ավելի շուտ նկատի նրան:

Եվ վերջապես եկավ այդ պահը:

Ռուբենը նկատեց դեպի գնացք եկող իր սիրելին, որի որոնող հայցը վնտրում էր ինչ-որ մեկին, ու երբ աչքերի դիմաց հայտնվեց Ռուբենը, ձեռքը մեկնեց նրան ու թախծոս շնչաց.

– Հիմա ես ինչպես ապրեմ առանց քեզ:

– Ճիշտ այդպիսի մի հարց էլ իմ սիրտն է տանջում, – համբուրելով նրա ափը՝ տխուր ձայնով խոտովանեց Ռուբենը և ծոցագրապանից հանելով կախազարդը, որի վրա փորագրված էին իրենց անվանատառերը՝ շնչաց.

– Քեզ համար նվեր եմ պատրաստել:

– Ես էլ՝ քեզ՝ հավիտյան ինձ հիշելու և կրծքիդ մոտ պահելու համար, – ասաց Յաննին՝ մեկնելով ժամացույցը....

Հենց նոյն պահին հնչեց գնացքի կտրուկ սուլոցը, և ուղևորները, մեկ անգամ ևս հրաժեշտ տալով բազմաթիվ ճանապարհողներին, շտապեցին զբաղեցնել իրենց տեղերը, իսկ Յաննին, մղված իրեն մինչ այդ անծանոթ մի զգացողությունից,

անսպասելիորեն փարվեց Ռուբենին և վախսեցած իր անկեղծությունից՝ արագ շրջվեց ու շտապեց դեպի գնացքը, որը, կարծես նկատելով Յաննիի «արարքը», ևս մեկ խիստ սուլոցով կանչեց նրան:

Ու մինչ Ռուբենը ջանում էր կուլ տալ կոկորդում կանգ առած դառը գունդը, Յաննին հայտնվեց դռների մյուս կողմում:

Գնացքն իր սուլոցով և ծուխ արտաշնչելով՝ արդեն անհետացել էր, երբ Ռուբենը շտապեց ընդհանուր ռազմական հիվանդանոց, որտեղից տարբերակվող հագուստներով, գունատ դեմքերով ու փոս ընկած աչքերով մի խումբ բուժվողներ հատուկ նյութերով ու դեղերով մեկնելու էին աշխարհի լավագույն հանգստյան վայրերից մեկը՝ 1 400 մետր բարձրության վրա գտնվող Լեյսին գյուղը՝ իրենց վերջին կայանատեղին՝ սպիտակ դռների ետևում խեղդվելով հյուծող հազից և վաղ թե ուշ մեռնելու որպես թոքախտավորներ...

Ռուբենը տեղ հասավ այն պահին, երբ բոլոր նախապատրաստություններն արդեն ավարտված էին, և մեքենաները սայլերի հետ մեկը մյուսի ետևում սկսեցին հեռանալ բուժարանի բակից:

Շարապյունը, ետևում թռողնելով քաղաքը, ուղղություն վերցրեց դեպի սպիտակահող սարերը:

Սայլերը ճոռում էին արկղերի ծանրությունից:

Նեղ արահետներով ու ժայռերի սողանքներով անցնելու ժամանակ Ռուբենի կուրծքը սեղմվում էր զսպանակի նման... Բարեբախտաբար, երեկոյան հոգևած ու մրսած հասան նշված բնակավայր:

Տարօրինակ կերպով աչք էր ծակում հիվանդների անտարբեր և նույնիսկ արհամարհական վերաբերմունքը բժիշկների և... նոր ժամանած հի-

վանդների նկատմամբ. ոչ մեկը չքարեւեց, ոչ մեկի համար կարևոր չէր, թե ինչո՞ւ էին եկել, և որն էր Նրանց առաքելության իմաստը. ամեն մեկը, մի-մի թաշկինակ բերանին սեղմած, խեղդամահ լինելով, ապրում էր իր իր հոգու աշխարհում:

Առաջինը, որ քաջություն ունեցավ մոտենալու Նրանց՝ Ռուբենն էր: Նրա խնամքին հանձնված հիվանդը տարիքով կին էր՝ ծերունական կնճիռները դեմքին, ամեն մի հազից դուրս ցցվող, ապա գորտի քի նման ետ քաշվող կոկորդով, որին խնդրեց հազը լսելու համար խոր շունչ քաշել:

Կինը, շուրթերը սեղմած, ատելությամբ ու լուս նայում էր Նրան: Ձեռքի թաշկինակը, որը քիչ առաջ նա հեռացրեց շուրթերից և որով նա իզուր փորձում էր լոեցնել հազը, արյունոտ էր...

Ինչևէ, բոլոր հիվանդներին՝ մեկին՝ մի քիչ վաղ, մեկին՝ մի քիչ ուշ, ստուգեցին, դեղերն ու այլ բժշկական պիտույքներն ու նյութերը հանձնեցին այնտեղ մնացող բժշկին ու բուժքույրերին և անշափ ծանր սրտով բռնեցին ետդարձի ճամփան:

Կյանքի համար խիստ վտանգավոր առաքելության ժամանակ ցուցաբերած մարդասիրության համար Ռուբենին որպես շնորհակալություն հանձնեցին պարզևավճար և տրամադրեցին տասնօրյա արձակուրդ, որն էլ նա որոշեց օգտագործել հայրենիք ուղևորվելու համար:

Մեկներուց առաջ նա նամակ գրեց սիրելիին, ապա արագ հավաքեց ճամպրուկը՝ չմոռանալով վաղուց գնված նվերները, շտապեց կայարան և ոռնցով սլացող գնացքով մեկնեց հարավ՝ մտքի մեջ կրկնելով Յաննիին գրած նամակի տողերը.

«Անուշիկ Յաննիս,

Հեռանալուդ օրվանից առաջին նամակն է, որ գրում եմ: Հուսով եմ, որ նամակս բարեհաջող կհասնի քեզ: Ծնողներիդ ուղարկած նամակին ոչ մի պարասիան չսրացա, հուսամ՝ իմ մասին պիտի խոսեք, հուսամ՝ իմ բոլոր խնդրանքներին կպարասիանեն՝ քո մասին մրածելով: Որոշել եմ հասանելիք արձակուրդս անցկացնել Պոլսում՝ ծնողներին մոտ մեկնելով: Խնդրում եմ, քեզանից լուր ուղարկիր, այլապես ես շատ կմրտահոգվեմ: Սիրելիս, ես հասնելուն պես կիսում ծնողներիս հետ, կրեղեկացնեմ մեր մասին, և որ հաջորդ արձակուրդիս Պոլիս չեմ մեկնելու, այլ իմ փոքրիկ Յաննիս ճեռքը խնդրելու համար պիտի Գերմանիա ուղարկելում: Բայց այդ ամենը դեռ ոչինչ. ես պիտի խնդրեմ ծնողներիս օրինությունը և նշանադրության համար այն ավանդական մարտանին, որը մորս է անցել գտարից, իրեն էլ՝ իր սկեսուրից: Սիրելիս, ես քեզ փոստի միջոցով բացիկներ կուղարկեմ ամեն առավոր, կուղարկեմ նաև Մասսիս շաբաթաթերթը, որի մեջ դպագրված է իմ մի գեղեցիկ բանասրեղծությունը, այդ շաբաթաթերթը ամենահայրնին է ամբողջ Կոստանդնուպոլսում: Այդ քերթվածքին սպասիր, և դու էլ նամակներ ուղարկիր: Կսպաեմ լուրերիդ: Որոշեցի չուղեկացնել առաջին խև վայրկանից. պիտի հավաքեմ ճամպրուկս, շփառեմ կայարան և առաջին խև գնացրով դեպի Պոլիս տրում վերցնեմ: Սիրելիս, իմ հասցեն կնշեմ նամակի ներքում, այդ դրամը օրերի ընթացքում նամակները Սիրիվրիի հասցեն կուղարկեն: Զերմագին բարեներ ծնողներիդ և մի խնդրանք. ամեն նամակի մեջ քեզանից մի նկար ուղարկիր:

Սիրով՝ քո Ռ. Չ.»:

Գծերի վրա գնացքի անիվների շխկշխկոցը արագացնում էր սրտի աշխատանքը. խենթացել էր,

ժպտում ու հիշում էր սիրելիի աչքերը, մանկական մատներն ու արևից տաք ժախտը:

«Ասզոր եմ, ինքս իմ դեմ անզոր եմ, անզոր եմ այդ չքնաղագեղ աղջկա դեմ: Աչքերիս առջև նա է, ժախտը՝ սիրտս քրքրող, ու մորեգոյն շուրթերը՝ մեղրից էլ անուշ: Նրա հայացքը լիքն է, շատ բան կա հոգում, երանի ժամանակը շտապեր այնպես, ինչպես ես՝ մեր սիրո հարցում»:- Մինչև առավոտ մենախոսեց ինքն իրեն:

Քնելուց առաջ Յաննիի համար հատուկ մի քանի քանաստեղծություն գրեց, հետո քնեց մինչև առավոտ:

Լուսաբացին գնացքը մոտեցավ նախավերջին կայարանին: Դուրս եկավ կառամատույց: Չնայած մառախուղը փակել էր ճանապարհը և առջևում դեռ կար ճանապարհորդության վերջին հատվածը, բայց միտքն արդեն հայրենի տանն էր:

Կայարանում քամին ծակծկում էր առաջին վագոնի համար սպասողների դեմքերը... Բուքը խեղդում էր. Վաղուց նման ցուրտ չէր եղել:

Վերջնակետին հասցնող գնացքի սուլոցն արդեն լսվում էր հեռվից:

Ռուբենը փորձում էր իրար շփելով տաքացնել ձեռքերը: Նա համքերատար սպասում էր:

Գնալով ուժեղանում էր մոտեցող գնացքից եկող քամին, ձայնն էլ նոր սուլել սովորող տղայի նման մեկ բարձր էր, մեկ էլ կամաց...

Շտապով բարձրացավ ժամանած գնացքը, ասես դա օգնելու էր արագ տուն հասնելուն և այն անհամբերությունը բավարարելուն, որով սպասում էր այն պահին, թե երբ կմտնի տան բակ ու ձայն կտա մորը, կտեսնի հորը՝ Հովհաննես աղային, և քրոջը, որ

օրերն է ջնջում օրացույցի վրա, և որին պիտի գնա այցելության...

Ժամերն անցան, գնացքը կանգ առավ, կառամատույցում սպասող ոչ մեկը չուներ, քանզի ոչ մեկին չէր Էլ զգուշացրել իր գնալու մասին: Նրան ընդառաջ էին շտապում օտար դիմավորողները, որպեսզի հնարավորինս շուտ տեսնեին ու գրկեին երկար սպասված հարազատներին և ընկերներին:

Սիրտը ճնլվեց անսովոր ցանկությամբ. ինչ լավ կլիներ, եթե հիմա հետք լիներ Յանսին, որին ինքը մեծ սիրով կներկայացներ իր ընտանիքին:

Կարոտած փողոցներով հաճույքով քայլեց դեպի տուն, հասավ մինչև Ղալաթիո աշտարակ, բարձրացավ դրա նեղ աստիճաններով, միաչքանի պատուհանից նայեց աշխարհին և օտարերկրացիների աչքերը շլացնող ջինջ ու խաղաղ ծփացող Մարմարային, ժպտաց ու.

— Իմ երկիր,— ասաց,— քեզ հետ աճելու, հասակ առնելու ցանկություն ունեմ ու դեռ պիտի գամ, որ միասին փրկենք մեր անձն ու հոգին...

Արևի մայր մտնելուն մի քանի թզաչափ էր մնում, ուստի իջավ ցած ու շտապեց տուն՝ կանխազգալով, թե ինչպես մայրը հին ու բարի ժամանակների նման Չալոյի անհանգիստ հաշոցից կհասկանա, որ եկողը Ռուրենն է:

Սիլիվրիի իր սիրելի հայրական տան փողոց հասնելով՝ որոշեց փայտե դարպասը չթակել. Երկաթե բռնակից քաշելուն պես կնկատեին, որ տուն եկող ունեն, ուստի ներս մտավ ետնամուտքի փոքրիկ դռնով:

Ոտնաձայնից Չալոն սրեց ականջները, նետվեց դեպի դուրս՝ Ռուրենին ընդառաջ, ու երջանիկ հաշոցներով թավալվեց ոտքերի տակ:

Մայրը, որ պատուհանի մոտ նստած ինչ-որ բան էր գործում մայր մտնող արևալույսի վերջին պատառիկի դիմաց, նայեց դեպի այն կողմը, որտեղից լսվեց շան երջանիկ հաշոցն ու տխուր ժպտաց.

– Տեսնես՝ ինչից է ուրախացել Զալոն: Ասես Ռուբենիս հոտն առած լինի:

Հայրը՝ Հովհաննես աղան, որ մեկ վայրկյան առաջ արդեն նկատել էր որդուն, մաքրեց աչքերն ու կուլ գնացող արցունքը խեղդեց կոկորդում.

– Երանի ինձ, որ աչքերս լաց կլինեն միայն քեզ տեսնելուց, որդի, – ասաց նա: – Աստված ձայնդ լսեց, տիկինս, Զալոն իսկապես Ռուբենին է տեսել, դուռը բաց, բժիշկդ տուն դարձավ:

Մայրը ճշաց, ձեռքից վայր զցեց շուղերն ու վազեց դեպի դուռը, ընկավ որդու ոտքերի առաջ և հեծկլտաց. կարոտից հալ ու մաշ էր եղել խեղճի սիրտը:

Մանկան նման հուզմունքը չզսպեց նաև Ռուբենը:

– Ինչո՞ւ, ինչո՞ւ հեռագիր չուղարկեցիր, – թիկունքի կողմից որդուն գրկեց հայրը:

– Երեկ արձակուրդ ստացա ու ժամանակ չունեցա ինձանից առաջ լուր ուղարկելու:

Ռուբենը երկու թերթի մեջ առավ մորը և գլուխը հենեց հոր ուսին:

Մայրը, որ խելակորույս համբուրում էր որդու աչքերը, գլուխն ու այտերը, երբեք չէր մտածել, թե այսպիսին կլինի իրենց երկար սպասված հանդիպումը:

– Խոսի՛ր, դու մեծացե՞լ ես, թե՞ ինձ է թվում, – շոյելով որդու գլուխը՝ հարցրեց մայրը՝ զավակին դեպի տուն առաջնորդելով:

– Մեծացե՞լ, – ժպտաց Ռուբենը:

Հովհաննես աղան, որ լուր սպասում էր կնոջ կարոտակեղ ողջագուրանքների ավարտին, երեխայի նման գիրկն առավ որդուն:

– Մեջքդ լայնացել է, ուսերդ՝ ամրացել, իրավ բժշկի կեցվածք է, որդիս, – հպարտորեն ասաց աղան՝ զսպելով դուրս պրծնել պատրաստվող արցունքները:

Հետո, երբ քիչ թե շատ հանդարտվեցին հոյզերը, իսկ կարոտները կիսվեցին, նստեցին արագ զցված սեղանի շուրջը և, իրար ընդհատելով, խոսեցին եկած-զնացած օրերից:

– Դու այն ասա՝ զրո՞ւմ ես: Թերթերն ու ամսագրերը բերում են ամիսը մեկ անգամ: Ես դրանք խնամքով պահում եմ սենյակիդ պահարանում, – ասաց մայրը:

– Կենցաղիդ պայմաններն ինչպես են, – հարցրեց հայրը:

– Ամեն ինչ լավ է, հայրիկ, – հանգստացրեց Ռուբենը, – աշխատում եմ, ունեմ ոչ մեծ, բայց սեփական բուժարան, իսկ որոշ ժամանակ անց հաստատ առաջխաղացում կունենամ:

Մայրը երջանկության գագաթնակետին էր. նա ներս ու դուրս էր անում և հիանում որդու հասուն մտքերից ու խոսքերից, ապա նստեց նրա կողքին ու.

– Ռուբեն, – ասաց, – տղաս, Ստեփանի աղջիկը տարիքն առել ու նշան դնելու ժամանակն է: Ինչ կասես, որ խոսենք նրանց հետ, Ստեփանը առևտրական մարդ է, մեր հանդեպ էլ մեծ հարգանք ունի, Մարիամն էլ՝ աղջիկը, դերձակ է, այստեղ բոլորի համար հագուստ է կարում:

– Միլիվրիում լավ աղջիկներ շատ կան, – ավելացրեց հայրը:

– Մամ, – Ժպտաց Ռուբենը: – Դեռ վաղ է խոսել այդ մասին...

Զքուցեցին մինչև ուշ գիշեր: Հայրը պատմեց երկրում աճող անհաշտության մասին՝ շեշտելով, որ սիրտը խաղաղ է, որ գոնե որդին ներկա չէ այդ ամենին: Ասաց, որ գնալով հայերին ավելի ու ավելի են ճնշում և, ինչպես երևում է, այստեղ ամեն բան ավելի կլրջանա:

Ռուբենի մտքով առաջին բանը, որ անցավ, առավոտյան Սիլիվրիի հրապարակում ընկերներին հավաքելն էր. շատ ժամանակ չուներ, գոնե կարողանար օգտակար լինել մի քանի հարցով:

Ծնողներին ճանապարհեց քնելու, զարմիկի հետ որոշեց մի քանի օրվա անելիքները և բարձրացավ իր սենյակ, որի անկյունի պահարանում մայրը, ինչպես թերթի կրպակում, խնամքով իրար վրա էր դարսել մի քանի տարի անընդմեջ տպագրված թերթերը:

Մենակության մեջ բացեց նոթատետրն ու գրեց մի քանի քառատող:

Ննջարանում ամեն բան նույնն էր. մայրը ոչինչ չէր տեղաշարժել, միակ փոփոխությունն արեց ինքը՝ Ռուբենը. Յաննիի՝ համերգի ժամանակ արված լուսանկարը մահճակալի փոքրիկ պահարանին դնելն էր, որն ընդմիշտ մնալու էր այնտեղ:

Պառկեց տարիներ շարունակ կարոտած տան անկողնում ու քնեց մինչև առավոտ, երբ պիտի արթնանար մոր շշուկով խոսելու, բուխարու կրակի ճտճտոցի ու հոր ձայներից:

Դուան մեջ երևաց մայրը: Նկատելով Ռուբենի սնարի մոտ դրված լուսանկարը և այն, որ որդին տրորում է աչքերը, Ժպտաց, ներս մտավ, քայլեց դեպի նկարը ու, մատնացույց անելով այն, հարցրեց.

– Անունն ինչ է:

– Յաննի է, մամ:

– Գեղեցիկ է, տղաս, սիրով նրան կիրավիրեմ մեր տուն՝ մեզ հետ ապրելու, – ապա ապակու վրայից շոյելով աղջկա դեմքը՝ հետը տարավ հյուրասենյակ:

– Աղա, Ռուբենիս կինն է լինելու, – ասաց ու նկարը մեկնեց Հռվիհաննես աղային:

– Կինն է լինելու, հայ է, չէ, – հարցրեց կնոջն ավելի ցածր ձայնով:

– Գերմանացի է, պապ, – իշխելով ներքն՝ մոր փոխարեն պատասխանեց Ռուբենը:

Հոր դեմքը խոժողովեց, նկարը ցած դրեց ու նստեց բուխարու դիմաց:

– Մի հայ աղջիկ չկա՞ր, – ցածրաձայն դժգոհեց հայրը:

– Պապ, Յաննին կդառնա հայ, – հաշտարար տոնով շարունակեց Ռուբենը, – չնայած գերմանական ընտանիքի դուստր է, հայրն է՝ ազնվական, գնդապետ, բայց ինքը կդառնա հայ: Դաշնակահարուիհ է: Մի՞թե այն, թե ես նրան որքան եմ սիրում, ավելի կարևոր չէ: Իմանալով, որ ձեզ համար իմ երջանկությունից ավելի կարևոր ու արժեքավոր ոչինչ չկա՝ շուտով կմեկնեմ Երֆուրտ՝ Յաննիի ձեռքը խնդրելու: Իսկ հայ է, թե գերմանացի, դա այնքան էլ կարևոր չէ:

Մայրը երեկվա ասածներից փոշմանած՝ մոտեցավ գրկեց որդուն.

– Գերմանացին էլ կարող է հայ դառնալ, եթե նրան սնես հայոց ոգով, հայոց սիրով և հայոց ավանդություններով, – ասաց նաև և խաչակնքեց որդուն:

– Իսկ գերմանացի գնդապետն ինչպես ընդունեց քեզ, – դեռևս խիստ հարցրեց հայրը:

– Ես նրանց նամակով խնդրագիր եմ ուղարկել, որպեսզի արգելք չհանդիսանան իմ ու Յանսիի երջանկությանը, մինչև այս մի քանի ամիսներին նշան դնելու գնամ, բայց դեռ պատասխան նամակ չեմ ստացել: Այս տասն օրերի մեջ Յանսին կգրի, թե ինչպես է իրենց ընտանիքի անդամների վերաբերմունքը իմ հանդեպ, իսկ եղբայրն ինձ ընդունում է եղբոր նման:

– Այս դեռ պիտի սպասենք ինչ-որ գնդապետի համաձայնությանը, թե Ռուբեն Սևակ-Չիլին-կիրյանին՝ Հռվիաննես աղայի որդուն, հավանության կարժանացնեն, թե՞ ոչ, – ասաց հայրն ու դուռը շրիւկացնելով՝ դուրս եկավ տանից:

Մոտենալով դոանը՝ Ռուբենը լցվեց մտավախությամբ. հայրը խիստ մարդ էր, ավանդապաշտ, ու նրա համար դժվար էր գերմանացի հարս ընդունելը:

– Համարձակ եղիր, – հորդորեց մայրը, – մի քայլ առաջ ու նրա չոր սիրտը կփափկի:

Եվ իսկապես. երկար-բարակ «քննությունից» հետո հասկանալի դարձավ, որ այսպես թե այնպես, ուշ թե շուտ լեզու կգտնեն...

Եվ ահա, մոր բազում օրինանքներից հետո հայրը բարկության ներսից շոյեց որդու գլուխն ու տվեց իր հայրական օրինանքը:

Բայց հոր ասածը գնդապետի պատասխանի բացակայության մասին սրտի վրա ծանրացել էր քարի, ծանր ու մեծ, չընկնող քարի նման...

Մեկ բաժակ մասուրի մուրաբայով թեյ խմելուց հետո Ռուբենը մոր ականջին շշնջաց, որ եթե հանկարծ Յանսիից մինչև երեկո նամակ հասնի, մայրն ինքը այն վերցնի փոստատարից, և դուրս եկավ տանից:

Ռուբենը մինչև երեկո պատասխան ստացավ շատ հարցերի. խնդիրներ էին ծագել խմբագրատանը. այն փոքրիկ հոնորարը, որ նախատեսված էր հանձնել իրեն, ծգճում էին, նաև այն, որ ժամանակն էր ամբողջ ժողովածուն հավաքել մեկ գրքում և մինչև տարվա ավարտ տպագրել:

— Դու լավագույն թերթերում արդեն ճանաչված ես, ընկերս, այժմ քեզ նոր գիրք է պետք՝ նոր շնչով, — ասաց Հրանտը:

— Նոր ոչինչ չեմ ուզում, հետայսու կաշխատեմ միայն բժշկության զարգացման ուղղությամբ, իսկ գրականությունը, որ կստեղծեմ և որն ինձ համար շատ կարևոր է, դրա եկամուտներից կօգտվեն ուրիշները, — պատասխանեց Ռուբենը:

— Մի՛ շտապիր որոշումներիդ մեջ. «Մասիսում» տպագրվող բոլոր հոդվածների մեջ կա՛ քո գիրք, ուստի միայն համբերություն է պետք:

Փոքրիկ նեղացկոտ լոռությունից հետո Ռուբենն ասաց ընկերոջը.

— Ես երջանկություն ունեմ հայտնելու, որ մի քանի ամիս է, ինչ սիրահարված եմ գերմանացի դաշնակահարուինու, — և չկարողացավ թաքցնել ժպիտը:

— Գերմանացի՞, — աչքերը կլորացրած նրան նայեց Հրանտը, — իսկ Հովհաննես աղան կուզենա՞ իր արվեստագետ, բժիշկ որդու կողքին գերմանացի աղջիկ տեսնել:

— Հովհաննես աղան գլուխը տարութերեց, վիճեցինը, հետո որպես հայր հասկացավ, որ Յաննին է այն կինը, որն ինձ պետք է և որի կողքին ես երջանիկ կլինեմ, ու տվեց հայրական իր օրինությունը: Նրա ծնողներին նամակով եմ հայտնել մեր սիրո մասին, բայց նրանցից դեռ ոչ մի լուր չունեմ, թեև

արդեն մի քանի օր է անցել, ինչ գրել եմ նամակը, բայց Յաննին նոյսպես ոչինչ չի գրել, չկա ոչ մի լուր: Մտածմունքս մեկն է. գուցե ծնողներն են ստանում դրանք և չեն փոխանցում դատերը:

– Հանգիստ մնա, ամեն քան լավ է լինելու, նրանք դեռ անծանոթ են քո համառությանը և եթե իմանան, թե ոքան երջանիկ է լինելու իրենց դուստրը, երբեք չեն առարկի: Լուրջ մտածմունքների մեջ մի ընկիր, նամակները գուցե Շվեյցարիայի հասցեով են ուղարկվում, երբ վերադառնաս, նամակների մի ամբողջ արկդ կապասի քեզ:

– Վերջին նամակիս մեջ ես Սիլիվրիի հասցեն եմ ուղարկել, նաև տեղեկացրել եմ հայրենիք մեկնելուս մասին, – ասաց Ռուբենը:

– Առայժմ համբերիր, մենք մի քանի կարևոր գործեր ունենք. Ես խմբագրատանը քեզ համար նոր հոդված եմ տպագրության տվել: Պարսամյանը հատուկ շնորհակալություն է հայտնել քեզ երկու բանաստեղծություններիդ համար և նամակ է փոխանցել: Դու պետք է հասկանաս, որ գրականությունը քեզ մեծարելու համար լավագույնը կանի. դու քո ճանապարհն անցել ես, քեզ արդեն ճանաչում են, ուստի ուշացնել պետք չէ: Եկ ավելի շտապեցնեմ քեզ, որ աշխատածիցդ դու էլ գոհանաս:

Բայց գովասանքներին այժմ այնքան էլ կարևորություն չէր տալիս Ռուբենը. միտքը սոսկ Յաննիի հետ էր, ապա շրջվեց դեպի ընկերն ու ասաց.

– Չգիտեմ, թե հույսս ում վրա կարող եմ դնել. երկիրը մի տեսակ խառնաշփոթի մեջ է, աչքիս առաջ նեղում են ժողովրդիս, կրթության մեջ հայերին չեն ոգեշնչում, իմացածները մոռանալ են տալիս, չիմացածի համար չեն անհանգստանում, ես մի քանի

օրից պիտի ետ դառնամ ու չգիտեմ՝ ուշքս որ կողմ  
ուղղեմ՝ Գերմանիա՝, Երֆոնիրտ, թե՞ դեպի Սիլիվրի,  
Պոլիս...



Մինչ Ռուբենը տարակուսանքների մեջ էր, Յան-  
նին կարդաց հոր աշխատասեղանի վրա դրված նա-  
մակը և մտածեց, թե չէր էլ ենթադրի, որ Ռուբենը,  
իրեն սիրելով հանդերձ, կարող է ամեն տողի մեջ  
խնդրանքով դիմել ծնողներին իրենց իսկ դստեր  
երջանկության համար: Երբ ցած դրեց նամակն ու  
շրջվեց դեպի դուռը, հայրն ուշադիր ու զննող հա-  
յացքով նայում էր դստեր աչքերին:

– Եվ ինչ-որ պատասխան ունես մեզ համար,-  
հարցրեց նա:

– Հայրիկ, ես սպասում էի, որ ինքներդ կհարց-  
նեք. չէ՞ որ նամակն ավելի վաղ եք ստացել, և ժու-  
ազն էլ վերջին նամակների մեջ Ձեզ հայտնեց, որ ես  
էլ Ռուբենին եմ սիրում:

– Տեր Աստված, այս աղջկան ես ինչպես հաս-  
կացնեմ, որ հայերի հետ կապ ունենալը մեզ համար  
չէ. Նախ, որ շատ փոքրիկ և վերացող ազգի զավակ  
է, և երկրորդ՝ քեզ անհամապատասխան. Ես դեմ եմ  
այդպիսի միությանը և քեզ արգելում եմ շարունակել  
այդ կապը նրա հետ, – ասաց հայրը և դուրս եկավ  
սենյակից:

Յաննին բոլորովին չէր կարող հանգիստ լինել  
և չմտահոգվել. Նամակը, որ կարդացել էր բոպե-  
ներ առաջ, նրան մեծ ուժ էր տվել, բայց խստաբա-  
րու հայրն իրեն արգելում էր հետագա կապի մա-  
սին մտածելն իսկ, միակ տարրերակը, որի մասին

և անսմիտ, և՝ անհեթեթ կլիներ երազելը, մայրն էր, քանզի նա էլ ոգլորված չէր իրենց շփումով...

Երեկվա նամակը մի քանի բացիկների հետ փոստատարից մայրն էր վերցրել, իսկ անտեղյակ Յանսին, պատուհանից քակ նայելով, գիշերներ էր լուսացնում՝ սպասելով այն կաղ ծերուկին, որը հավանաբար պիտի բերեր նամակները:

Էմման նկատել էր Յանսիի սրտնեղությունը, որ չորս օր է, ինչ Ռուբենը չի գրել և ոչ մի նամակ, իսկ այն նամակը, որն ինքն էր ուղարկել, Էրֆուրտ հասնելուն պես մնացել էր անպատասխան: Չկար արձագանք նաև հաջորդ նամակներին: Տասներորդ օրը Յանսիի հովզերը նրան անկողին գցեցին, իսկ անտեղյակ Ռուբենը քակ մտնելիս տասնյակ անգամ ստուգում էր փոստարկը, որտեղ այդքան օրերի ընթացքում տեղ գտան միայն Լևոնի նամակն ու մի քանի թերթ, և ոչ մի պատասխան այն քազմաթիվ նամակներին, որոնք նա էր իր խոստման համաձայն պարտաճանաչ կերպով գրում և ուղարկում Սիլիվրիից ու Շամբերից...

Արդեն քանի օր լոության անկողինը գրկել էր աղջկան ոչ թե պարտադրված, այլ սրտնեղության ու... բողոքի տասնօրյա ծոմ ու պասի մեջ: Հոգսել էր տանջող մտքերին պատասխաններ փնտրելուց, սպասելուց և, ի վերջո, անհանգստությունից, հոգսել էր արթնացող հուշերից: Օրերը մթնում ու լուսանում էին սառն ու անհրապույր մահճակալին ապավինած:

Երեկոյանում էր, երբ Էմմայից թուղթ ու գրիչ խնդրեց մի վերջին նամակ գրելու համար:

Էմման, որ լրջորեն անհանգստանում էր նրա վիճակի համար, մոտեցավ, մաքրեց աղջկա՝ սառը

քրտինքով պատված ճակատն ու հասկացավ, որ նա ցերմում է:

Կարկաչուն ծիծաղով այն աղջնակը, որին լավագույնս գիտեր, հյուծվել ու դարձել էր անխոս:

Մայրը չէր խառնվում՝ ենթադրելով, որ քաղցը, ի վերջո, նրան կստիպի սնվել, իսկ հայրն էլ կարգադրել էր ոչինչ չճեռնարկել ու սպասել, մինչև աղջիկն ինքը հանձնվի:

Ամեն օրվա նման՝ գրած նամակը հանձնելով Էմմային՝ Յաննին խնդրեց, որ զցի փոստարկողը, նաև խնդրեց լավ նայել. գուցե նախկինները դեռ տեղում են:

Եվ Էմման խոստացավ, որ կօգնի, և ամեն ինչ շատ ճիշտ ու լավ կլինի, և ամեն առավոտվա նման շուտով դուրս եկավ տանից:

Կատարելով Յաննիի հանձնարարությունը՝ սկզբից ստուգեց՝ արդյոք դատարկ է փոստարկողը: Համոզվելով, որ այն՝ ծանր հոգոցով թռղեց այնտեղ նոր նամակն ու հեռացավ գնումներ կատարելու: Եվ որքան մեծ եղավ նրա զարմանքը, երբ վերադարձին տեսավ, թե ինչպես է Յաննիի մայրը ինչ-որ բան հանում փոստարկողից, ինչը, ըստ երևոյթին, կամ Ռուբենի, կամ էլ, եթե փոստատարը դեռ չէր մոտեցել փոստարկողին, Յաննիի նամակն էր: Քայլերն արագացրեց, հասկացավ, որ տիկնոջ ձեռքում են Յաննիի ապաքինման բոլոր «դեղերը»: Զգուշորեն հետևեց նրան մինչև ննջասենյակ և տեսավ, թե նա ինչպես է ձեռքի ծրարը թարցնում ծաղկամասի սեղանիկի դարակում: Ապա, նկատելով, որ տիկինը տանից դուրս եկավ, շտապեց աղջկա սենյակ ու հայտնեց, որ Ռուբենը հավատարիմ է մնացել իր խոսքին, իսկ բոլոր հարցերի պատասխանը Յաննին

կարող է գտնել մոր ննջարանում: Եվ այն, ինչը զարմացրել էր Էմմային, պակաս անակնկալ չէր նաև Յաննիի համար, որ մինչև մոր վերադարձը Էմմային կարգելով դռնապահ՝ խուզարկեց ծաղկամանի տակի դարակը, գտավ թաքցված ծրարները, և չընկնելու համար հենվելով պատին՝ վերադարձավ իր սենյակ և ուժասպառ ընկավ անկողնու վրա...

Ականջներում սկսեց աշխատել ինչ-որ հսկայական ժամացույց, աչքերի դիմաց խելահեղորեն պտտվում էին ննջասենյակի մանր ու մեծ բոլոր իրերը, և, վերմակի անսկյունը սեղմելով դեմքին, ամբողջ ուժով գոռաց դեռատի աղջիկը, արտասվեց, ողբաց, որ իրեն տեսնելով այդ վիճակում՝ հորդորել են մոռանալ «իրեն մոռացածին», երբ ամեն օր իր փոխարեն նամակները մայրն է վերցրել, նաև այն նամակները, որոնք ինքն է հասցեագրել Ռուբենին, այսինքն՝ մայրը դեպի ինքը և իրենից դեպի ՆԱզնացող ոչ մի նամակ չի թողել փոստարկում: Ողբերգությունն այն չէր, որ իրեն արգելել են սիրել Ռուբենին, և ոչ էլ այն, որ իրեն դրդել են վատը մտածել ու բացասական վերաբերվել հավերժական սեր խոստացող և սիրո երդում տված երիտասարդին, այլ... իրենց անտարբերությունը, իրենց սառնասրտությունը...

Էմման նրան նստեցրեց անկողնում, վերմակով ծածկեց հոգնատանց մարմինն ու նստեց կողքին, և աղջիկը գլուխը դրեց ավելի քան մայրահամ դայակի ծնկներին ու որքան ցավ ուներ սրտում, արցունքներով հանեց դուրս:

Տուն վերադառնալուն պես մայրն անցավ իր սենյակ և առաջին բանը, որ նկատեց, սեղանիկի կիսաբաց դարակն էր: Տեսնելով, որ տուփը դատարկ

Է՝ շտապեց ամուսնու մոտ, վստահ, որ Յաննին ինքն է նկատել... Եվ այդ բոլոր օրերին առաջին անգամ մեծ ափսոսանքով հասկացավ, որ աչք է փակել հարազատ դստեր տառապանքների վրա, որ չհասկանալով՝ նրան մենակ է թողել և... Եվ, իրականում, նրան մայրություն է արել ու խնամել Էմման:

Աննկատ մտավ դստեր սենյակ, տեսավ, թե ինչպես է օտար կինը և ոչ թե ինքը, նստած Յաննիի անկողնու կողքին, խնամում նրան, ինչպես է սառը թրջոցներով հովացնում նրա՝ հոգու ցավից ու մարմնի ջերմությունից ուժասպառված գլուխը և, չկարողանալով զսպել հուզմունքը, դստեր տենդոտ դողը նրա սրտում զայրույթ առաջացրեց դեպի ամուսինը, դեպի ինքը:

Նա շնորհակալություն հայտնեց Էմմային, որ իրեն փոխարինել է մի ամբողջ կյանք, բայց եսասիրությունից դրդված՝ մոռանալով նրա՝ տարիներ ի վեր կատարած անխոնջ աշխատանքն ու չգնահատելով հավատարմությունը՝ խնդրեց, որ նա մեկնի հանգստի, քանզի հետայսու մայրն ինքը կհոգա զավակների ամեն մի խնդիրը:

Մոր առաջին իսկ խոսքից հետո Յաննին, ի նշան նրա որոշման հետ անհամաձայնության, ամուր բռնեց Էմմայի ձեռքը ու նրան ձգեց դեպի ինքը, որով հաստատ ավելացրեց մոր խանդը...

Էմման շոյեց նրա ձեռքը, ափսեի մեջ դրեց ձեռքի թաց կտորը, կոացավ, համբուրեց աղջկա վարսերն ու դուրս եկավ սենյակից...



Ուուրենը անզորությունից իրեն պատեպատ էր խփում, և այն կասկածը, որ կրծում էր հոգին - մի՞թե սուտ էր, մի՞թե կեղծ էր ու անցողիկ ամեն ինչ - նրան հասցնում էր խենթության: «Ինչպես պատասխան գտնեմ հարցերիս...», - ճշում էր բորբոքված միտքը, սիրտը մռնչում էր առյուծի նման, զայրույթը նրան վերածել էր վիրավոր գազանի, որ եթե անզամ չէր ցանկանում, բայց մի երկտողի միջոցով պետք է այս ամենի վրա դներ մի հստակ վերջակետ:

Վերջապես ինքն իրեն հանգստացնող գտավ. պահարանից հանեց գիշու շիշն ու դատարկեց այն, ապա դուրս եկավ պատշգամբ, իրեն նետեց քամու բերանն ու ամբողջ սրտով բղավեց.

- Ոչինչ հավերժ չէ... Մի՞թե այդպես չէ, ոչինչ, ոչինչ:

Վերադարձավ ննջարան, թուղթ վերցրեց և մտքին եկած զայրույթն ու ցավը հանձնեց դրան. «Երբենէ չէի ցանկացել ու չէի մտածել արժանանալ նման պահվածքի...», հետո պատուեց գրածը և ինքն իրեն խոստացավ մոռանալ ամեն ինչ, վերադառնալ աշխատանքի, առավոտյան սովորականի պես գնալ բուժարան ու ապրել հիվանդների հոգսերով...

Լույսը բացվեց խաղաղ օրվա ակնկալիքով, վարագույրից արևը ներս մտավ սենյակ ու անկաշկանդ, տան տիրոջ պես տեղավորվեց հատակին փոփած կարպետի վրա...



Տաք թեյն ու նախաճաշը սկսուտեղի վրա դրած՝ ներս մտավ մայրն այնպես, ասես ոչինչ չէր պատահել, և դուստրն էլ երբսէ նեղացած չի եղել իրենցից:

Յաննին զարմացած հարցրեց:

– Որտե՞ղ է Էմման, մայրիկ: Ինչո՞ւ ես դու քերել նախաճաշը:

– Արձակուրդ է խնդրել, այսուհետև ես կհոգամքո բոլոր կարիքները: Էմման արդեն վաղուց երիտասարդ չէ, և նա կարիք ունի ինքն իր մասին հոգալու, – պատասխանեց մայրը և նկատելով սեղանի վրա ինչ-որ օտարալեզու գիրք՝ զարմացած հարցրեց:

– Սա ինչ գիրք է, Յաննի:

Սակայն դուստրը, կարծես չլսելով մոր հարցը, ասաց.

– Բայց Էմման երբեք չի ակնարկել հանգստի մասին և նրա համար երբեք նեղություն չի եղել մեզ հետ ապրելը:

– Իմ հարցը մնաց օդում կախված, – պատասխանեց մայրը, – սա ինչ օտարալեզու գիրք է:

– Սա այլս օտարալեզու չէ, սա հայերեն գիրք է, ուզում եմ կարդալ ու գրել սովորել:

Մայրը ոչինչ չասաց, ավելի ճիշտ՝ չհասցրեց, քանի որ հայրը, որը բոպե առաջ մտել էր սենյակ, լսելով դա, բարկությունից աջ ու ձախ նետելով գիրքն ու սեղանին դրված գիշերալամպը, զայրացած որոտաց.

– Դուքս նետիր գլխիցդ այդ անհեթեթ մտքերը: Ապավելի դուստրը, երբեք, լսո՞ւմ ես, երբեք չի սովորելու օտար լեզու, առավել ևս հայերեն: Զբաղվիր քո դասերով, դեռ ընդամենը տասնութ տարեկան

ես: Քեզ արժանի փեսացուներ կան ազնվական ընտանիքներից՝ դիվանագետ, իրավաբան, իսկ դունախընտրում ես մի հայ սկսնակ բժշկի, որի մասին ոչինչ չգիտես: Միթե այդ գավառական մտավորականն արժանի է քո արցունքներին, ես ամաչում եմ, որ դու իմ դուստրն ես, – այս ասելով՝ դուրս եկավ սենյակից՝ իր ետևից աղմուկով ծածկելով դուռը:

Ամուսնու զայրույթից քարացավ նոյնիսկ մայրը:

Յաննին նոյնապես ոչինչ չասաց, ոչինչ չխոսեց, լոեց և նորից մտավ անկողին, շրջվեց դեպի մայրն ու ասաց.

– Մայրիկ, խնդրում եմ, Էմմային ետ կանչիր, ես գիտեմ, որ քո ներսում խոսում է եսասիրությունը. դու նեղվեցիր, որ Էմման ավելի մոտ է ինձ, իսկ դու հայրիկի կողքին չես էլ հասցրել մեզ՝ ինձ ու Ժուազին հասկանալ, հիմա էլ հայրիկն է ինձանից երես թեքել:

Մայրը, զարմացած ու դստերն ասես առաջին անգամ տեսած, նայեց նրան, մոտեցավ սեղանին, կարդաց դրա վրա դրված նամակները, հետո մի թերթ թուղթ տվեց Յաննիին ու ասաց, որ նամակ գրի և մնացած բոլոր նամակների հետ տա իրեն, նաև պարտադիր ներկայացնի իրավիճակը, ինչպես որ պատահել է, իսկ ինքը կխոսի հայրիկի հետ և կապացուցի, թե որքան է բժիշկն արժանի իրենց դստերը:

Յաննին մի պահ չհասկացավ, չհավատաց սեփական ականջներին, հետո ուրախացավ, կարծես հենց մայրն էր բերել արևն ու թողել իր սենյակում, մի թոխքով հայտնվեց նրա մոտ, ամուր, որքան թույլ էին տալիս ուժերը, գրկեց, համբուրեց նրան, ապա դարակից հանեց թուղթն ու գրիչը և սկսեց արագ-

արագ նամակ գրել իր Ռուբենին, թե հոր մտավախությունն այն է, որ իրենց տարածաշրջանում լարված հարաբերությունների կենտրոնում են հայտնվել հայերը, և նա ոչ մի հեռանկար չի տեսնում դատեր ու հայ երիտասարդի կապի մեջ, մասնավորապես այն հայերի, որոնք ապրում են Կոստանդնուպոլիսում, իսկ եթե դատեր ամուսնությունը կայանա ու նրա ընտանիքը ևս տեղափոխվի... Չէ՞ որ յուրաքանչյուր ծնողի ցանկությունն իր երեխային առողջ ու երջանիկ տեսնելն է, իսկ իր մտահոգությունն ու հայրական հոգատարությունը, իր ներքին ձայնը խանգարում են դատեր որոշումը ճիշտ համարել, մանավանդ որ վստահ է եղել նաև կնոջ՝ իր հետ համամիտ լինելուն, բայց...

«Բայց»-ն ակնհայտ էր. դա կնոջ դրական վերաբերմունքն էր Ռուբենի նկատմամբ...



Լոգան վերադառնալուն պես Ռուբենն ամրողացությամբ խորասուզվեց աշխատանքի մեջ, սակայն ֆիզիկական հոգնածությունից զատ, նրան տանջում էր նաև հոգու անհանգստությունը: Միտքն անընհատ Յաննիի հետ էր, որից արդեն երկու շաբաթ ոչ մի տեղեկություն չուներ, և որոշել էր շարունակվող լոռության դեպքում մեկնել նրա մոտ, որի լոռությունն իրեն խելագարեցնում էր. գուցե սիրելին վտանգի մեջ է, կամ ինքն է իր նամակով սաստիկ բարկացրել նրա ծնողներին:

Ընկերոջ համար մտահոգ Բեռնարը խնդրեց իրեն տալ նրանց հասցեն. գուցե մի ելք, մի հնարավորություն կստեղծվի ինչ-որ բան իմանալ

Երփուրտից: Ժուազն էլ, հակառակի նման, քաղաքում չէր. չգիտես, թե ինչքան ժամանակով անգո էր նաև այդ կապը:

Ամբողջ օրվա լարված աշխատանքից հետո Ռուբենը գիշերն էլ էր մնալու հիվանդանոցում և միտք ուներ միայն առավոտյան գնալ տուն, և միակ անելիքը մի վերջին նամակն էր. գուցե դա լիներ ճակատագրական, և վերերկրային զգացումներին տրվելով՝ վերանայեց որոշումները. զայրույթը, որ ժամեր առաջ կրծում էր սիրտը, այլևս չէր խարխլում հոգու հանգիստը: Պետք չէր հակառակ գործել սրտին և պիտի փորձեր մեկ նամակով ևս շոյել նրա ծնողների սիրտը, գուցե այն բոլոր նամակները, որոնք հասցեագրվել էին Յաննիին, նրան չէին էլ հասել... Մեղավոր մի զգացում էր ապրում. շճանաչելով նրա ծնողներին՝ իրեն իրավունք էր վերապահել նամակ գրել նրանց... Յաննիի գոյության համար շնորհակալ էր Աստծուն՝ վստահ լինելով, որ նա երբեք չի մոռանա իրենց երդումը:

«Իմ սիրելի՝ Յաննի, ինչու կկարծեմ թե հիվանդ ու միայնակ ես դու: Ինչու կմտածեմ, որ ծնողներդ կցանկանան մեր սիրուն արգելք դառնալ, և մեր սերը ոճիր կկարծեն: Ով գիտե, սիրելիս, գուցե ներկա ժամանակները նրանց կթելադրեն. քանզի իրավունք ունին մտածելու, թե աղջկա պատիվն ամենակարևորն է, քանզի երիտասարդների մոտ շատ հաճախ կնկատվի թեթևամիտ սեր՝ առանց կշռադատելու, միայն հաճույքից և կրքից մղված: Սիա այս պատճառով են դեմ, որ սիրես: Միայն մեկ անելիք կա. չթաքցնենք նրանցից մեր անելիքները, այլապես հայրդ քեզ ուրիշին կնության կտա: Պետք է անկեղծ լինենք ծնողներիդ հետ, առանց նրանց

թույլտվության պետք չէ ոչինչ անել: Դու հաճախ ես պատմել նրանց խատության մասին. նրանք չեն կարող քեզ թշվառության մատնել: Ամեն օրվա նամակներիս պատասխանները չստանալուս պատճառով կմտածեմ, որ դրանք չեն ստացել, կամ հասցեն, որն ինձ ես տվել, թերի է: Այժմ շատ եմ գրաղված. մարտի վերջ համասարանի ավարտական քննություններ ունեմ, կիսնդրեմ ուշադրությունդ դարձնես դաշնամուրի դասերիդ: Ես համոզված եմ, որ դու աշխարհը պիտի գրավես: Ինչ էլ որ լինի, բացթողում չանես...»:

Առավոտը ոչ տաք էր, ոչ ցուրտ, եղանակը համապատասխանում էր հոգեվիճակին. մարտ ամսվա համար զովն այնքան էլ հուսադրող չէր:

Տունդարձի ճանապարհին որոշեց մտնել ճաշարան կամ մի այնպիսի վայր գնալ, որ ոչ մի ծանոթ չլինի. երևի խմելու ցանկություն ուներ: Վերջին օրերը, սրտին հակառակ գործելու համար, խնդիրների տարափից ուղեղում լարված պայքար էր, բայց ինչ-որ ներքին ծայն նրան տարավ դեպի տուն: Նախ մոտեցավ փոստարկովին. զարմանքն անսահման էր. նամակների մի ամբողջ կույտ էր սպասում իրեն. չգիտեր՝ ուրախանա՞մ, թե՞ տիրի: Ուղիղ երեք ժամ կարդաց դրանք. երջանկացավ, հոգվեց, բարկացավ, որ իր սիրելին միայնակ այդպիսի դժվարությունների մեջ է եղել և կողքին չի ունեցել ոչ մի մտերիմ, որ հանգստացնի: Այն նամակը, որ գիշերը գրել էր ծնողներին, առանց վարանելու զցեց փոստարկողը, մի քանի նամակ ու բացիկ ափսացել էր սիրելիի համար... Ու խոստացավ ինքն իրեն, որ կվերադառնա նրա մոտ, որ այլևս չի կասկածի այն սիրո վրա, որն զգում է: Հոգնած մեկնվեց մահճակալին, վերջապես խաղաղություն իջավ

աչքերին, հանգստացավ և անմիջապես քնեց. անցել էին հուզմունքով, ցավով ու սպասումներով լցված օրերը:

Անզորությունը վերածվեց հավատի և կյանքում լինելիք նոր շրջադարձային ապրումների:



Գնդապետը, որն առաջին անգամն էր իրեն թոյլ տվել կարդալու դստերն ուղղված Ռուբենի նամակը, մեծ զարմանք ապրեց, որ երիտասարդը, երկու և ավելի շաբաթ դստեր կողմից ոչ մի նամակի չարձանանալով, նույն համոզմունքով հայտնում էր, թե պատրաստ է սիրելիին սպասել որքան անհրաժեշտ է և որ համբերատարությամբ պատրաստ է դարձյալ սպասել նրա ծնողների օրինանքին...

Հայրն այլևս չթաքցնելով ոչինչ՝ զարմանքից և ուրախությունից ակամա ժպտաց...

Սպիտակ դրոշի ծածանումը ոչ միայն Յաննիի կյանքում էր մեծ ու կյանք պարզող խոստում, այլև Ռուբենի...

Փոստատարը, որն ամեն առավոտ նամակներ էր բերում Ռուբենին, այդ առավոտ նույնպես նամակ հասցրեց. դուռ թակոցից հասկացավ, որ իրեն այցելողը նույն ինքը՝ կրակոտ աչքերով իտալացի փոստատարն է՝ Գարպիան:

- Գարպի, իմ Յաննին է,- հարցրեց Ռուբենը:
- Ինչ հրաշալի լեռնային օդ է՝ շնչես ու շնչես, - պատասխանեց Գարպիան:
- Դու եղանակից մի՛ խոսիր, ինձ տուր նամակս:
- Նամակդ Յաննից չեմ բերել: Կարծես պարոն է գրողը, սակայն նույն հասցեից:

Ռութենը զարմացավ. մի՞թե ժուազն է, բայց ինչո՞ւ է գրել:

Իսկոյն վերցրեց ու լոեց. «Պարոնն է՝ Յանսիի հայրը, չգիտեմ իլ, թե ինչ պիտի գրեր, և ինչո՞ւ այսօր Յանսիից նամակ չկա», – մտքում ինքն իրեն հարցրեց Ռութենն ու սիրտը կծկվեց:

Բացեց նամակը. այն գոհունակությունը, որ հայտնում էր գնդապետը, մեծ պատիվ էր իր համար, իսկ այն, որ ինքը՝ երիտասարդը, վերջին ամիսներին երջանկացրել է իրենց դստերը, հայրիկին թույլ էր տվել խնդրել նրան մոտակա ամիսների ընթացքում պարտադիր հյուրընկալվել Ապակեներին, որ, ինչու ոչ, խոսեն նաև այն նշանի մասին, որի մասին առաջին նամակում ակնարկել էր Ռութենը...

Չհացնելով նամակը կարդալ մինչև վերջ՝ նրան անմիջապես պատեց խելագար ուրախության մի հսկայական ալիք... Եվ, գտնվելով աննկարագրելի զգացմունքների ազդեցության տակ, նա արքածի նման գրկեց հանկարծակիի եկած փոստատարին և բարձրածայն երգելով Շոպենի վալսը՝ պտտեցրեց նրան սենյակով մեկ, ապա, դռնից դուրս հանելով իտալացուն, ուժասպառ ընկավ բազկաթողին:

Ամբացատրելի զգացմունքների հուժկու «ջրապտույտում» էր. մեկ-երկու ժամ ուղեղում խառնաշփոթ էր. ինչպես կարգավորի հարցերը հիվանդանոցում, ինչ հայտնի կամ չհայտնի ծնողներին և այլն, և այլն...

Ժամանակն անցնում էր արագ ու աննկատ: Յանսիի նամակները հաջորդում էին միմյանց և աննկատ դառնում սովորական, նույնիսկ բովանդակությամբ՝ նույնական, իսկ վերջին՝ հազիվ մեկշանց նամակում նույնիսկ չէր հետաքրքրվել, թե ինչպես

են անցնում Ռուբենի օրերը, արդյոք կարոտել կամ սպասում է իրեն... և մեկշանց այդ նամակում նշել էր, որ իր համերգների ժամանակ դահլիճը պայթում է հանդիսատեսի «գրոհից» և ծաղկեփնջերի տարափից, իսկ երկրպագուներից տեղ ու դադար չկա:

Ռուբենն այդ նամակից հասկացավ, որ Յաննիին կլանել է փառքը և որ չմտածված նամակի պատճառով կարող էր խզվել իրենց կապը...

Պատասխան նամակով շնորհավորեց նրան և նույնական բովանդակությամբ ու ոգով պատմեց, որ իր աշխատությունների հարցերով գերազանց առաջխաղացում կա, և որ Պոլսից զատ, արդեն իր գործերը տպագրվում են նաև մի քանի այլ քաղաքներում...

Վրդովմունքով փակեց նամակն ու որոշեց դուրս գալ քայլելու:

Ճանապարհին նկատվում էր մարդկային հոսքի դադար. հունիսի սաստիկ անձրևները խանգարում էին լիարժեք ելք ու մուտքին:

Քայլեց դեպի մոտակա խանութը, որտեղից պետք է մի կոստյում գներ. ընկերների հետ մասնակցելու էր գերմանական մի երեկոյթի:

Խանութին չհասած՝ հանդիպեց ուսանող ծանթեներից մեկին, որը պատմեց այն սիրավեպի մասին, որ սկիզբ էր առել իր ու մի պարուի միջև, և որը օրեր առաջ իրեն պատմել է, թե հրապուրված է Ռուբենով, և դա խիստ մտահոգել էր երիտասարդին... Ապա մի փոքր դադար տալով՝ խնդրանքով դիմեց Ռուբենին, որ վերջինս չմասնակցի երեկոյթին, քանի որ այնտեղ է լինելու նաև պարուիին:

Ռուբենը խղճահարություն զգաց երիտասարդի նկատմամբ և.

– Խոստանում եմ, – հավաստիացրեց նրան, – որ անտարբերության կմատնեմ ձեր Դոռային, որովհետև ես արդեն խսկ հավատարիմ եմ իմ սիրելիին:

– Այս, պարոն Չիլինկ, պատկերացում չունեք, թե ես որքան շատ եմ սիրում այդ աղջկան, որն անգամ չի էլ ցանկանում ինձ մոտ թողնել իրեն:

«Որքան բարդ է կյանքը, և սերը՝ որքան բարդ, իսկ սիրո մեջ կարևորը հավատարմությունն է...», – Ռուբենի հանդարտված միտքը սավառնեց դեպի սովորական կյանքի մեծ փիլիսոփայություն: Ինչ հետաքրքիր է կյանքը, երբեմն օրիորդներն են խենթ, երբեմն՝ երիտասարդներն անկարող, և աշխարհում ավելի հազվագյուտ քան չկա, քան համերաշխությունն ու ներդաշնակությունը սիրո մեջ»:

Կիրակի երեկոն Ռուբենի համար լարված էր. օտար կնոջ կողմից ուշադրության կենտրոնում հայտնվելը, որն արդեն ինն ամիս նշանված լինելով խարտիշահեր ու ամենադժբախտ տեսքով երիտասարդի հետ՝ վերջինիս փոխարեն ցուցադրաբար ներս մտավ եղբոր ու մոր հետ:

Ավելին. մի քանի գավաթ գինի խմելուց հետո նա Ռուբենին «քարշ տվեց» դատարկ սեղանի մոտ՝ չմտածելով ոչ նշանածի, ոչ էլ հարազատների մասին:

– Դուք հավանաբար գիտեք իմ դժբախտ նշանի մասին, – չգիտես պնդեց, թե հարցրեց Դոռան:

– Գիտեմ, ավանդ, սակայն չգիտեմ, թե ձեզանից ով է ավելի դժբախտ, – պատասխանեց Ռուբենը խիստ ու խոժող դեմքով:

Ազատամիտ ու թեթևառողիկ այդ աղջիկը նրան բոլորովին դուր չեկավ.

– Ես այժմ, – հայտարարեց նա, – պաշտոնապես քաժանված եմ այդ երիտասարդից, և միայն այն բերկրանքը, որ մտերմություն կհաստատեմ Ձեզ հետ, թևավորում է ինձ, և չճանաչելով Ձեզ՝ Ձեր մասին գիտեմ ամեն ինչ:

– Բայց կա մեկ տեղեկություն, որ հասու չէ և ոչ մեկին:

– Մի՞թե մեզ պատել է նույն զգացումը, – իրենից զոհ ժպտաց Դոռան:

– Այս, որ ես արդեն նշանված եմ, և այն, որ խելակորույս սիրում եմ այդ մաքրամաքուր օրիորդին, – սառը ձայներանգով հայտարարեց Ռուբենը և, հրաժեշտ տալով Դոռային, միացավ մնացած հյուրերին:

Սակայն կար ևս մեկ տեղեկություն, որ հասու չէր արդեն Ռուբենին. Դոռան լոգանարնակ ճանաչված ֆրանսիացի բժիշկ Պերժոյի դուստրն էր: Նաև այն, որ Պերժոն ինքն էր իր գովասանքներով ու մեծարմամբ դրդել դստերը սիրահարվել Ռուբենին:

Գինովցած ճառերից հետո, որոնք թերևս անհասկանալի մնացին շատերի համար, իր ճառը գերմաներեն լեզվով ասաց նաև Ռուբենը, ինչն արժանացավ աներևակայելի բարձր ողջունների ու ծափերի:

Երեկույթի ընթացքում Ռուբենը ծանոթացավ Էրֆուրտցի նշանավոր Հոֆմանի հետ, և խոսակցության մեջ պարզ դարձավ, որ նա ծանոթ է Ապակելների ընտանիքին, ինչը Ռուբենին շատ հետաքրքրեց, բայց նա՝ չափի մեջ, չխորացավ և ոչինչ շասաց իր ու Յանսիի մտերմության մասին:

Կեսզիշերը մոտ էր, երբ վերադարձավ տուն և առաջին բանը, որ հիշեց, ծնողների ու Լևոնի չքացած նամակներն էին:

Անասելի բերկրանքով ու գոհունակությամբ լցվեց երիտասարդի սիրտը, երբ հոր նամակում կարդաց նրա զղջման խոսքերն այն մասին, որ հոգու խորքում դեմ է եղել նրանց միությանը, բայց այժմ մեծ օրինությամբ է Յաննիին ընդունելու իրենց տանը, քանի որ օրեր առաջ, նույնիսկ Ռուբենին չտեղեկացնելով այդ մասին, Յաննին Հռվիաննես աղային ու նրա կնոջը, այսինքն՝ նաև իր ապագա ընտանիքին, հայատառ նամակ է ուղարկել՝ ի սեր իրենց որդու և ի սեր այն մեծ հարգանքի, որ տածում է Ռուբենի ընտանիքի նկատմամբ:

Ռուբենն անմիջապես վերցրեց թուղթն ու գրիչը և լուսնի ու աստղերի առկայօնող թրթռուն լույսի տակ սիրած էակին գրեց ամենահուզակ տողերը, որոնք երբևէ թելադրվել են սիրառատ որևէ սրտից.

«Օրինյալ լինեն մայրներդ, որ իմ մայրենի լեզվով կարողացել ես նաևակ գրել, և օրինյալ լինեն դո՛, Յաննի. այսօր սրացաւ ծնողներին նաևակը, որը հայրնում էր անակնկալ բացիկիդ մասին, որ գրել ես հայերեն գառակով, և օրինյալ լինի այն օրը, երբ քո սեփական ձեռքերով մի սպիրակ գլխարկ ես գործելու մեր երեխայի համար, թող օրինվի այդ հեռավոր օրը: Միածիր, Յաննի, օր առաջ պետք է հյուսենք մեր սիրո բույնը: Միածիր այն հավերժության մասին, որ շուրջով պիտի միասին լինենք մինչև մահ և, զգալով այս անազորույն բառերի ծաղը, սիրելիս, պիտի սիրենք, երազենք, տենչանք, հետո երթանք... Եվ մեր աջքերին, մեր շուրջերին ու մեր սրբերին կիշնի մի բուռ հող, որ... կկոչեն հավերժություն: Ինձ հավաքացրու, որ ոչ մեր սերը, ոչ մեր անձը և ոչ էլ շրթունքները երբեք չեն զգալու ցրտությունը մասիվան: Իհարկե, սարսափելիին մեռնելը չէ, այլ մենակ մեռնելն է: Բայց բավական է. մի կողմ ձգենք մեր

միջի այս մութ ու մռայլ մրգերը, քանզի մենք երիտասարդ ենք, և դեռ երկար պիտի ապրենք: Ես շուրով կգամ:

*Հազար անուշ համբույր, քո Ռուբեն»:*

Աչքերը փակեց. չնայած հոգնած լինելուն՝ հոգում թեթևության զգացումն էր թևածում, բայց հանկարծ արթմնի, թե՛ երազով, ձեռքի մեջ սպիտակ վարդ էր հայտնվել, վրան արյան կարմիր թծերով մի սպիտակ վարդ, և իր հագուստն էր արյունոտ... Իսկ աև հագուստով ու մոլորված Յաննին հայտնվել էր մութ, բոլորովին օտար մի դաշտում ու արագ անհետացել...

Սարսափով բացեց աչքերն ու շտապեց ջուր խմելու... Կարծես թե մի փոքր սթափվեց, թեև հետո՝ ամբողջ օրը, միակ մտածմունքը Յաննին էր:

Աշխատանքի վայրում նրան սպասում էր նոր գործուղում, որից հետո հստակ որոշել էր մեկնել սիրելիի մոտ:

Լսոնի նամակն այդպես էլ չէր կարդացել, սակայն ինքն իրեն խոստացավ, որ դա կանի քննելուց առաջ, և մտածունքների մեջ, թե ինչպես ավելի վաղ հասնի Յաննիի մոտ, դուրս եկավ պատշգամբ: Մտածեց նաև նվերների մասին, որոնք անհրաժեշտ է գնել ոչ միայն իր սիրո, այլև նրա ծնողների համար. չէ որ Յաննին իրեն շոյված կզգա, եթե սիրելին ուշադրության կենտրոնում պահի ոչ միայն իրեն, այլև իր ծնողներին:

Ուրբաթ առավոտ էր, ցնծալի մի օր: Արևն այնքան պայծառ էր և լիճը՝ կապույտ, որ ասես կառամատույցը սիրային հաշվարկներ էր արել նրանց խաղաղ ջրերով ու անալիք հանդիպեցնելու մասին. չէ որ վերջին տարիների ընթացքում եղել էին

և՝ բաժանման, և՝ ցավի, և՝ տառապանքի, և՝ հիասթափությունների և, վերջապես, հավերժ միասին լինելու խոստման ու բերկրանքի օրեր:

Կառամատույցում, ինչպես աշխարհի բոլոր կառամատույցներում և բոլոր ժամանակներում, ահավոր ժխոր էր, որը... Որը չէր տեսնում ու չէր լսում Ռուբենը՝ պատասխաններ պահանջող հազարավոր հարցերից փոթորկահոյզ Ռուբենը... Հարցեր, որոնց ճակատագիրը կորոշվեր եթե ոչ այսօր, ապա վաղև անպայման, և չնայած գնդապետի խոստումնալից և բավականին սիրալիք նամակին՝ կասկածները ինչպես համալսարանական քննությունների նախօրեին, եթե նոյնիսկ լավ ես պատրաստվել, կամա թե ակամա կրծում են ներսդ և սև օձի նման հանկարծակի հայտնվելով՝ խանգարում հոգուդ անդորրը «իսկ եթե հանկարծ...» հարցով:



Գնացքը գիշերային ժամին հասավ Էրֆուրտ...

Ռուբենը կառապանին տվեց Ապակեների հասցեն:

Պատուհանների ներքևում սկսեց սուլել այն մեղեդին, որը կհասկանար միայն իր սիրելին և որն արթնացրեց աղջկան ու.

– Մի՞թե այնքան մեծ է կարոտս, – մտածեց, – որ ինձ թվում է, թե նա՞և է սուլում:

Ի վերջո, կարոտսի չդադարող մեղեդային այդ սուլոցը ստիպեց նրան վեր կենալ, մոտենալ պատուհանին ու դուրս նայել, և աչքերին չհավատալով՝ սկսեց արտասվել. Ռուբենն էր, և դա այնքան անհավատալի էր, որ ետ քաշվելով ու նորից առաջ մղվե-

լով, բայց տեսնելով նույն պատկերը՝ մեկ շնչով իրեն նետեց դուրս...

Այնքան ամուր, այնքան ջերմեռանդ ու այնքան գեղեցիկ ապրումներ, այնքան արցունք ու համբույրներ էին խառնվել իրար, որ անհնար էր իրադից անջատվել:

— Այս ինչ անակնկալ էր... Ինչո՞ւ երեկվա նամակիդ մեջ գալուդ մասին չէիր գրել... Այս ինչ անակնկալ էր... Որքան եմ քեզ սպասել, — շշնջաց Յաննին Ռուբենի ամուր գրկում:

— Դու ինքդ ասացիր, որ անակնկալ է, — Ժպտաց Ռուբենը, — ծնողներիդ հիմա չեմ տեսնի, ուշ է, բայց քեզ չտեսնել չէի կարող... Մինչև քեզ մոտ հասնելս, հյուրատուն եմ գտել, որտեղ կմնամ մինչև առավոտ, — և գրկից բաց թողնելով՝ քնքշորեն համբուրեց աղջկա աչքերն ու ճակատը:

Նստեցին բակի նստարանին, և երիտասարդը նվերների միջից հանեց հրագույն ծաղիկներով թիկնոցն ու զցեց Յաննիի ուսերին: Ապա խնդրեց, որ վեր բարձրանա, այլապես քամին նրան կառնի իր թևերին, և հրաժեշտ տալով՝ նստեց քիչ հեռվում իրեն համբերատարությամբ սպասող կառըն ու մեկնեց մոտակա փողոցներից մեկում գտնվող հյուրատուն:

Առավոտյան ժամը տասին մոտ էր: Հյուրատան բակի եղեգնահյուս սեղանին դրված սև սուրճն ու թխվածքաբլիթներն արդեն սպասում էին Ռուբենին, որ ծոցագրպանից հանեց Լևոնի՝ շաբաթներ առաջ իրեն ուղարկված ու դեռ չբացված նամակը:

Առաջին իսկ տողից մեծ ափսոսանք ապրեց. Լևոնը օգնության կարգով խնդրել էր մահամերձ եղբոր համար խորհուրդ տալ անհրաժեշտ մի դեղ:

Այն միտքը, որ ուշացրել ու ժամանակին չէր պատասխանել, նրան այնպես ճնշեց, որ հաշվի չառնելով ուշանալը՝ անմիջապես թուղթ ու գրիչ պահանջեց և ներողություն խնդրելով ուշացման համար՝ նամակ ուղարկեց, ապա ոտքի ելավ ու գնաց նրա մոտ, ում ցմահ նվիրել էր իր սիրտը...

Քայլում էր դանդաղ ու անշտապ՝ ուղեղում ճիշտ ու անսխալ դասավորելով մտքերը և նրանց ներկայացնելու ձևը, որպեսզի չթողնի երկմտելու հնարավորություն...

Փողոցի վերջում՝ ծաղկի փոքրիկ կրպակի ցուցափեղկից այն կողմ, ծաղկավաճառն առավոտյան ծաղիկներն էր դասավորում, որը նրան հուշեց, թե պետք է տիկնոց համար շուշաններ ու քաղցրավենիք գնել:

Հասնելով տան բակին՝ զգաց սրտի անհամբեր տրոփը, իսկ Էմմային տեսնելով՝ քայլերն ավելի արագացրեց, սակայն նա, չնկատելով Ռուբենին, նրան թողեց դրսում...

Անհամբերությամբ մեկ-երկու անգամ թակեց դուռ, որն Էմման համարյա անմիջապես բացեց և, ջերմորեն ներս հրավիրելով Ռուբենին, շտապեց տեղեկացնել պարոնին, որ ծխամորճը ծեռքին ու խստահայաց նստած էր ճնճաթողին՝ բուխարու դիմաց:

Էմման ժպտալով տեղեկացրեց, որ եկել և ընդունարանում սպասում է Ռուբենը:

Գնդապետը ոտքի ելավ ու անշտապ քայլերով դիմեց դեավի դուռն ու դրա ետևում սպասող դստեր ճակատագիրը:

Հարազատ հոր նման ձեռքը պարզեց երիտասարդին, գրկախառնվեց և ջերմորեն ներս հրավիրեց: Ապա կարգադրեց պատշաճ կերպով պատ-

բաստվել ընդունելությանը՝ հաշվի առնելով, որ վերադարձել է զավակը:

Երկար ու տպավորիչ գրույցին չխանգարեց ոչ մեկը...

Յաննին սրտատրով սպասում էր, թե երբ կկանչեն իրեն: Ինչ վերաբերվում էր գնդապետի կնոջը, որ բոլորին հրավիրեց ճաշասենյակ, անշափ տպավորվել էր Ռուբենի կիրթ նիստ ու կացից և ամեն վայրկյան ջանում էր նրան հյուրասիրել «չափազանց համեղ ու օգտակար» ինչ-որ բանով...

Ներս հրավիրված Յաննին եկավ ճիշտ այն պահին, երբ Ռուբենը հատուկ թույլտվություն էր խնդրում իրենց նշանվելու համար, իսկ գնդապետը, որն այլս դեմ չէր, խոստովանեց, որ ուրախ է Ռուբենին տեսնելու զավակի դերում:

Յաննին, հրճվանքից չթաքցնելով ուրախությունը, արցունքներն աշքերին գրկախառնվեց ու համբուրեց ծնողներին, իսկ Ռուբենը նրանց թույլտվությամբ հարսնացուին նվիրեց այն ավանդական մատանին, որը Պոլսում իրեն էր փոխանցել մայրը...



*Ո՞վ կուլա այսպես խշպյակիս շեմքին.*

- Քո՞յր, դարիքն է, բաց...

*Կմանիք մը կանցնի դուրսեն լալագին.*

- Ան' է, դուռը բաց...

*Տապա՞րն է ջախջախ դռանը կուրծքին.*

- Զանդն է, դուռը բաց...<sup>1</sup>

<sup>1</sup> Աղանայի դեպքերից ցնցված՝ Ռուբեն Սլակը «Հայաստանը՝ գեղարվեստական կատարելության հասցված վեց հատոր ար-

Ռուբենը չհավատաց աչքերին: Այն, ինչ սառ-նասրտորեն «հավերժացրել էր» լուսանկարիչը՝ կոտորած, դիակներ և արնաշաղախ ընկած հա-զարավոր զոհեր..., վեր էր մարդկային ուղեղում տեղավորվելուց, ցավից լայնացան աչքերի բիբերը. անհավատալի է... աչքերը խաբում են... Սակայն, լրագրի վերջին էջում հստակ գրված էր:

«1909 թվական, գարնան սկիզբ: Աղանա քա-ղաքում երիտթուրքական իշխանությունների կազմակերպած արյունահեղությանը զոհ են դար-ձել 30 հազար հայեր: Հրդեհվել ու այրվել են հա-զարավոր տներ, եկեղեցիներ: Գլխատել են տղա-մարդկանց, կանանց և երեխաների... Դիակները լեշ են դարձել իրենց արյան մեջ: Քաղաքին պա-տել է գարշահոտություն: Սիհուն գետը արյուն է ծփում»:



«Ամբողջ աշխարհի լուրերը խոսում են Կիլի-կիայի աղետի մասին, մինչդեռ ես շաբաթներ առաջ Երֆուրտում նշանվում էի Յանսիի հետ», – մտքում ողբալի ծայնով ասաց Ռուբենն ու զարմանքով նա-յեց դեպի մուտքի դուռը, երբ ներս մտնող երիտթուր-քերի գործակալների խմբի մեջ, որոնք առավոտյան համալսարանում խմբավորում էին կազմում Ար-դուլ Համիդի դեմ, մեծ հիասթափությամբ նկատեց Բեռնարին:

Բոլոր պատկերները խառնվեցին նրա գլխում. և մահվան ճիրաններից օգնություն հայցող հայրե-

---

Ժեցող այս վեց տողը, 1913 թվականին Լոզանում գրել է Ավետիք Խահալյանի ծոցատետրում:

նակիցները, և կոտորածի լուսանկարները, և Բեռ-նարը, և Լևոնը...

Դուրս եկան:

Լրագրի առաջին իսկ կրպակում՝ ապակուց այն կողմ, արդեն իսկ դրված էր նոր թերթերի կապուկը:

Հայ մամուլը ոչինչ չէր տեղեկացնում, մնում էր հասկանալ, թե որտեղից հնարավոր կիխի գտնել ավելի հավաստի լուրեր, և ինչպես օգնել հայրենակիցներին, որ երկրից անվնաս հեռանան կամ գոնե գաղթեն ոչ կյանքի գնով...

Մտավորականների առավոտվա ժողովին ներկա էին ոչ միայն տարբեր տեղերից ժամանած կուսակցականներ, այլև հայ ուսանողներ: Հայերից բացի, հրավիրվածների մեծ մասը կոտորածն այնքան անվրդով, առանց ցավի ու սարսուի էր վերլուծում, որ կարծես խոսքը գնում էր բնական փոքրիկ աղետի մասին. վնասվել է տուն, բանջարանոց կամ այգի... Բոլոր սեղաններին կային տարբեր լեզուներով լրագրեր, որոնցից, օրինակ՝ ֆրանսիականից, հասկանալի դարձավ, որ սոսկալի կոտորածի իրականացմանը միացել է թուրքական բանակը:

Լուր էր միայն հայ մամուլը:

Եվ Ռուբենը որոշեց խոսել... Խոսել այն մասին, թե վերջապես կգտնվի՞ գոնե մեկ հայ, որը կշանա իրեն զոհաբերել հանուն հայրենիքի և ի լուր աշխարհի կհայտնի իր վերջնական վրդովմունքը: Ներկայանալով որպես հայ՝ նա մտատանջությամբ արեց այն հարցադրումներն ու առաջարկները, որոնք, գուցե և դժվար իրագործելի, բայց անհնարին չեն, առավել ևս ամբողջ աշխարհի օգնությամբ:

Քննարկումը գնալով թեժանում էր. որոշների կարծիքով այդ երկրում հայերի ապրելն այլևս ան-

հնար էր: Բայց Ռուբենը պնդեց, որ «... դժվար կլինի, սակայն պետք է ապրենք հավասար իրավունքներով»:

– Ինչպես պետք է ապրենք, եթք արյունատեսչ թուրքն ամեն պատեհ-անպատեհ առիթով կոտորածներ է սարքում, – հակաճառում էին ներկաները:

– Պետք է միասնական ու համախմբված աշխատանք լինի, – բացատրում էր Ռուբենը, – նախ՝ հետևենք սերունդների կրթությանն ու դաստիարակությանը: Նոր սերունդը պետք է կարողանա առողջ դատել ոչ միայն ֆիզիկապես, այլև հոգեպես: Պետք է միաբան ազգ դառնանք, այլապես մենք էլ, մեր սերունդներն էլ երբեք չենք կարողանալու դուրս գալ թուրքի բռնապետության տակից:

Բավականին երկար տևեց թեժ վիճաբանությունը, սակայն ամեն մեկի համար ընդունելի էր սուկ սեփական կարծիքը:

Իսկ Ռուբենը լոեց և, հետևելով այդ աղմկահարույց տեսարանին, հասկացավ, որ չի կարող ոչինչ փոխել, ուստի ամենաճիշտ որոշումը դահլիճը լրելն էր, որպեսզի ականատես չլինի և ականջալուր չդառնա ներկաների անորոշ ու սուտ խոսքերին...



Համերգի վերջին փորձերն էին, եթք ուժասպառ Յանսին թուլություն էր զգում և ինչ-որ բանից մտահոգ՝ որոշել էր չմասնակցել համերգին: Առավոտյան արևից վաղ արթնացած՝ նա գրկել էր վերմակն ու փորձում էր երկարաձգել քունը:

Մայրը, որ առաջին օրվանից նկատել էր Յաննիի տիսրությունն ու աշխատում էր ամեն կերպ փարատել դստեր մտահոգությունը, մոտեցավ, համբուրեց և հիշեցրեց, որ մոտենում է թատրոն գնալու ժամը, որտեղ տեղի էին ունենում համերգի վերջին փորձերը:

– Յաննի, աղջիկս, Ռոզան հյուրասրահում է, սպասում է, որպեսզի միասին գնաք թատրոն:

– Մայրիկ, Ռոզային իմ կողմից խնդրիր՝ մենակ գնա, ես այսօր ուզում եմ մնալ անկողնում:

– Երեկ ավելի խաղաղ էիր, ինչ-որ քան այնպես չէ, մտահոգությունդ ինձ վախս է ներշնչում, դու մենակատար ես և քացակայելու իրավունք չունես, այլապես ամբողջ խումբը կթուլանա, – Նախատեց մայրը և պատուիհանից ետ քաշեց մուգ վարագույրը:

– Սուր գլխացավ ունեմ... Քունքերս պայթում են... Ես չեմ կարող մասնակցել այսօրվա փորձին, – արձագանքեց Յաննին:

– Եթե ավելի արդարացնող պատասխան չունես, աղջիկս, ներքս իջիր, ես քեզ դեղահաք կտամ, – ասաց մայրը և դուռը ծածկեց ետևից:

Քիչ անց ներս մտավ Ռոզան և հարցական հայցքն ուղղելով Յաննիին՝ ասաց.

– Ինչ-որ քան կա՞, որ թաքցնում ես կամ քողարկում վատ տրամադրության ետևում:

– Պարզապես սուր գլխացավ է, ուրիշ ոչինչ, – հայցքը թեքելով՝ ասաց Յաննին:

– Երեկ՝ սրտխառնոց ու թուլություն, այսօր՝ գլխացավ: Տեսնում եմ, որ նշանածիդ գնալու օրվանից անընդհատ վատառողջ ես ու գունատ: Եթե եղել է այն, ինչ եղել է, գուցե դիմես բժշկի, կզամ քեզ հետ, – ասաց Ռոզան ու մաքրեց Յաննիի արցունքները:

– Ոչինչ չկա, ոչինչ չի եղել, պարզապես անբացատրելի կարոտ եմ զգում: Ուզում եմ վերջնականապես տեղափոխվել Լոզան կամ այնտեղ, որտեղ Ռուբենն է...



Մինչ տակնուվրա էր լինում Յաննիի հոգին, Ռուբենը դահլիճի վերջին շարքից հետևում էր միջանկյալ կատարումները փորձող խմբին, երբ նրան մոտեցավ դաշնակահարներից մեկն ու հարցրեց, թե կարո՞ղ է օգտակար լինել նրան: Ռուբենը պատասխանեց, որ փնտրում է օրիորդ Ապակելին և հենց նոյն պահին Նկատելով Յաննիին՝ արագ, բայց այնպես, որ չփոթեցնի նրան և չխանգարի ամբողջ փորձը, արագ վազեց ներքև:

Ոչ շատ հեռվից Նկատեց նրա գունատ դեմքը և թե որքան է նա անտարբեր դաշնամուրի հանդեպ: Այս Յաննին, որը կլանում ու սրտի միջով տիեզերք էր բաց թողնում նոտաները, այսօր պարզապես նման էր չստացված ու չկրթված աշակերտի, և այդ ամենը խիստ հուզեց ոչ միայն Ռուբենին, այլև Ռոզային:

Եվ մի կերպ անցկացնելով փորձ՝ Յաննին, երբ պատրաստվում էր լրել դահլիճը, կորցրեց գիտակցությունը, բայց վայր ընկնելու պահին նրան իր գիրկն առավ վայրկենապես բեմ հասած Ռուբենը, որը նրան դահլիճից դուրս բերելով ետնաբեմ՝ փորձեց ուշքի բերել սիրելիին: Յաննին Ռուբենին տեսնելով՝ չհավատաց աչքերին ու սկսեց արտասվել, ինչը հուզեց նաև ներկաներին:

Մեծ էր Ռուբենի մտահոգությունը: Նա Յաննիին տուն բերեց: Ծնողները տանը չէին: Էմման սրտա-

բաց ընդունեց նրանց: Փորձեց անկողնում արգանակ խմեցնել նրան, ինչը և հաճելի էր, և սրտնեղություն, որ նրա թուլության և հյուծվածության պատճառով ինքն է կերակրում...

Վերջապես տուն դարձան տեր և տիկին Ապաել-ները, որ սկզբում անակնակալի եկան Ռուբենի ներկայությունից, բայց քիչ անց իրենք էլ Յաննի նման ուրախացան:

Ֆրանց Ապաելի առանձնասենյակում Ռուբենի պնդմամբ և ծնողների համաձայնությամբ երեք օրից նշանակվեց հարսանիքի օրը. ոչ այնքան տոնախմբության, այլ իբրև օրինական կարգով և Աստծո տանը կայանալիք ամուսնության հաստատման օր: Այն եկեղեցին, որտեղ պետք է կատարվեր պսակադրությունը, գերմանական էր լինելու, բայց պայմանով, որ այն տեղի ունենար Լոգանում: Զեռք ձեռքի տվեցին և լավ լուրով դուրս եկան հյուրասենյակ:

Այդ օրը ոչինչ չասացին Յաննին. Ռուբենը խնդրեց, որ երեկոյան զբոսանքի ժամանակ ինքը կասի Յաննին:

– Այսօր տիսուր դեպքեր տեղի ունեցան, և ես դեռ մտահոգ եմ Յաննի առողջության վերաբերյալ, – ասաց Ռուբենը:

– Մենք հարազատներ ենք, տղաս, ես համաձայնվեցի այս քայլին գնալ միայն հանուն նրա առողջության, քանի որ նրա բոլոր դժվարությունները, հիվանդություններն ու ցավերն ունեն մեկ արմատ, որի անունն է Ռուբեն:

– Շնորհակալ եմ, – ասաց Ռուբենը՝ սեղմելով աներ-հոր ձեռքը, – այստեղ իմ գալը պատրվակ էր, ես խնդրեցի՝ ինձ Գերմանիա գործուղեն, որպես-

զի կտրվեմ բոլոր հոգսերից, աշխատանքից և ինձ  
նվիրեմ իմ Յաննիին:

Յաննիի հայրը մեծ ցավ էր տեսնում Ռուբենի  
հոգում, որքան էլ ժպիտը իրական լիներ, հայցըն  
այլ բան էր ասում:

– Տղաս, ինչ լուրեր կան Պոլսից:  
– Կոտորած է, պարոն, կոտորած, – պատասխա-  
նեց Ռուբենը, – Աղանայում մարդ չի մնացել. որը  
գաղթել է, որը խոշտանգվել ու սպանվել: Չգիտեմ  
ինչպես կդասավորվի հայերուս ճակատագիրը,  
բայց թուրքն արդեն մեծ ոճիր է գործել:

Երբ Յաննին ու մայրն իջան նրանց մոտ, ցա-  
վալի զրույցը փոխարինվեց ժպիտով, և Յաննին էլ  
ժպտաց հոր ջերմագին վերաբերմունքից:

Հայրը մոտեցավ հյուրասենյակի անկյունում  
դրված սեղանիկին ու թեթևակի կպավ բռնակին: Եվ փական-զսպանակը սեղանիկից դուրս հրեց շշե-  
րով լի արկղը: Եվ պարոն Ապպելը Էմմային խնդրեց  
բաժակներ բերել, իսկ մայրը հիացմունքով նա-  
յում էր դստերն ու փեսային, որը հենց այն երջան-  
կությունն էր, որ նա երազում էր տեսնել իր տեսքը  
վերստացած և ոչ թե առավոտվա՝ դալուկ ու կոտր-  
ված Յաննիի կողքին:

«Բարի գալուստի» մաղթանքից ու խմելուց հետո  
ծնողների թույլտվությամբ նրանք դուրս եկան տա-  
նից: Ապպելների փողոցում՝ դարպաներից քիչ  
հեռու, Յաննիին ու Ռուբենին սպասում էր քառանիվ  
մի կառը:

Երբ սիրահարները թևանցուկ մոտեցան, կառա-  
պանը բացեց դուռը, և կառը, անցնելով ամբողջ  
Երֆուրտով, նեղ ու քարքարոտ, աջ ու ձախ կողմե-  
րում բազմաթիվ թեյարաններ ունեցող փողոցնե-

րով, բարձրացավ դեպի աշտարակ: Կլավիսինային երաժշտությանն ընդառաջ գնալով՝ Ռուբենը կառքը կանգնեցնել տվեց թեյարաններից մեկի մոտ և կառապանին խնդրեց իրենց թողնել այդ թեյարանի մոտ ու վերադառնալ միայն երեք ժամից:

Զքաղեցրին սեղաններից մեկը և սկսեցին վայելել հոգեպարար երաժշտությունը:

– Ռուբեն, կարելի՞ է մեկ հարց, – դիմեց Նրան Յաննին:

– Իհարկե, սիրելիս, ուղղիր ինչքան ցանկանաս, այսօր հենց բոլոր հարցերի օրն է:

– Ներիր այսքան շտապեցնելուս համար, Ռուբեն, երբ պիտի ամուսնանանք. Ես հոգնել եմ երկար սպասելուց, որքան կարող ենք այսպես ապրել, շուրջ երկու տարի է, ինչ մենք միասին տառապում ենք:

– Սիրելիս, ընդամենը՝ մեկ-երկու օր, և մենք միասին կվերադառնանք Լոզան, – Ժպտաց Ռուբենը և համբուրեց Յաննիին:

– Միթե այդ նպատակով ես եկել:

– Միայն այդ նպատակով: Ինձ անհանգստացնում էին քո սեղմ ու թերի նամակները, հաճախակի հիվանդությունները, դու պետք է կողքիս լինես, որ ես հանգիստ ապրեմ: Դու կարող ես խոսել, գրել ու կարդալ հայերեն, եփել ու գործել, քեզ կնության առնելու իսկական ժամանակն է, – բարձր ծիծաղեց Ռուբենը:

– Սիրելիս, բայց մտահոգ ես երևում:

– Ես սկսել եմ վախենալ ընկերներիցւ. ինձ վաճառողը իմ երկիրն էլ կվաճառի, ինձ ուրացողը իմ ընկերությունն էլ կուրանա:

– Ո՞ւմ մասին է խոսքը:

– Բեռնարի. միացել է երիտթուրքերին և այն պահերին, երբ փորձում է խաղաղեցնել ինձ, փառասիրությունից, թե՞ փողասիրությունից դրդված, փորձում է կարդալ մտքերս, հայրենիքիս նկատմամբ ծրագրերս և հասցնել «այլոց»:

– Ինչպիսի դժբախտություն: Ինչպես նկատեցիր, որ դավադիր է:

– Մեկ շաբաթ առաջ ես պատրաստվում էի դիմավորել Լևոնին, առաջարկեցի միասին գնալ, պատասխանեց, որ գործնական հանդիպում ունի: Եվ գիշերը կենտրոնական սրճարանում Բեռնարին տեսա նրանց հետ: Առայժմ ոչինչ չեմ ասել. ցանկանում եմ ընդամենը պահել տեսադաշտում:

– Ռուբեն, – մտահոգվեց Յանսին, – խնդրում եմ, հեռու մնա նման ընկերներից, ես վախենում եմ քեզ համար:

– Վախենա՞լ. երբեք, դու պետք է անվախ լինես, քանի որ իմ կիսն ես:

Այդ նույն ժամին Ֆրանց Ապակեն իր ապագա հյուրերին տեղեկացնում էր, որ երկու օրից դստեր հարսանիքն է, իսկ տիկին Ապակեն արդեն կազմակերպում էր ճոխ ընդունելություն:

Հարսանիքի օրը հյուրերի բազմությունը մտահոգեց Ռուբենին. չկար մեկը, որ լիներ ի՞ր կողմից, ի՞ր կողքին...

Սակայն դա լոկ անցողիկ մի պահ էր. Նրա միտքն ամբողջությամբ զբաղված էր միայն իր Յանսիով. ոչ հյուրերը և ոչ էլ մեծ շուքով խնջույքը բնավ հետաքրքիր չէին իրեն:

Եկեղեցու շրեղ արարողությունից հետո վերադարձան տուն, որտեղ հյուրերը, հետաքրքրասիրությունից մղված, արդեն փորձում էին միմյանցից

տեղեկանալ, թե ինչպես է պատվավոր Ապահների ընտանիքն իրենց բարձրաշխարհիկ դստերը վստահել այլազգի միայնակ տղային...

Այդ հեղիեղուկ փսփսուքները երկար չտևեցին. Ռուբենի ճառը ոչ թե զարմացրեց, այլ ցնցեց բոլորին: Նրա մեկ բանաստեղծությունն իսկ բավական էր, որպեսզի հաստատուն խարիսխ գցեր այդ հասարակության մեջ. օտարականի նման ընդունվածի մասին նրանք չէին Էլ կարող երևակայել, որ Ռուբենը ոչ միայն եվրոպական վայելուշ ոճին համապատասխան է հագնվում, այլև հրաշալի խոսում է ֆրանսերեն ու գերմաներեն և գերազանց գրում այդ լեզուներով...

Մեկ ակնքարթի նման անցան անմոռանալի օրերը, և ծնողները դստերն ու Ռուբենին ճանապարհեցին Լոզան:



Վերադառնալուն պես ամուսինները խորասուզվեցին աշխատանքային լարված գործունեության մեջ. Ռուբենը, ինչպես միշտ՝ իր հիվանդանցում, որտեղ օրեցօր ձեռք էր բերում հմուտ բժշկի համբավ, իսկ Յաննին՝ թատրոնում՝ դաշնամուրի դասեր տալով տեղի պատանիներին ու պարմանուիներին:

Ինչ վերաբերվում էր նրանց երջանկությանը, ապա այն նման էր հարատև մի խոստումի:

Առավոտյան ժամը ութին, երբ Ռուբենը վերադարձավ տուն, Յաննին ամբողջ գիշեր բազմոցի մեջ կուշ եկած՝ սպասել էր նրան: Իր սպիտակ մետաքսե գծավոր գիշերազգեստի մեջ նա կարծես

փափուկ խաղալիք լիներ. այնքան անմեղ, այնքան մանկական:

– Տիկին Չիլինկիրյան, – շշուկով հարցրեց Ռուբենը, – մի՞թե ամբողջ գիշերը սպասումով այստեղ եք անցկացրել:

– Պարոն, ես պատրաստ եմ սպասել Ձեզ այս բազմոցի վրա մի ամբողջ կյանք:

– Իսկ եթե մի օր չվերադառնամ, – Ժպտաց Ռուբենը:

Յաննին հանդիմանող հայացքով նայեց նրան.

– Ինչո՞ւ նման խոսք ասացիր, խնդրում եմ, երբեք չքարձրածայնես վատ մտքերդ:

– Բեռնարը շնորհավորում է քեզ, – խոսակցության թեման փոխեց Ռուբենը:

– Դու դեռ վստահո՞ւմ ես նրան, – զարմացավ Յաննին:

– Բնակ: Ես նրան մոտ եմ պահում մտադրությունները հասկանալու համար:

Երկխոսության ավարտին Ռուբենը հարցրեց.

– Քեզ համար փոքրիկ չէ այս բնակարանը, Յաննիս:

– Բացարձակ, – գլուխը տարութերեց Յաննին, – ես այստեղ ինձ լավ եմ զգում. քո բույրն է ամենուր, քո իրերը՝ աչքիս առաջ, իսկ մեծ տանը ես կմոլորվեմ: Երբ տղա ունենանք, միասին կընտրենք տուն, երկհարկ, մեծ պարտեզով մի տուն և շուն կպահենք տունը հսկելու համար:

– Սիրելին, – մի փոքր հապաղումից հետո ասաց Ռուբենը, – ինձ Պոլսից հրավեր են ուղարկել պատգամավորության համար, ինչ ես կարծում:

– Ռուբեն, ախր այստեղ աշխատանքդ բավականին վարձատրվող է, իսկ այստեղ քեզ ուզում են

Ներգրավել քաղաքականության մեջ: Ես վախենում եմ:

– Դե կարող ենք չընդունել պատգամավորության այդ հրավերը, ուղղակի մեկնենք ծնողներիս մոտ՝ քեզ հարազատներիս հետ ծանոթացնելու համար, – հանգստացրեց Ռուբենը:

Հաջորդ օրը հիվանդանոցում նրան կանգնեցրեց Բեռնարը և ասաց.

– Ըսկերս, դու ինձ բացատրվելու հնարավորություն չես տալիս:

– Գնա եկածդ ճանապարհով, – սառը պատասխանեց Ռուբենը:

– Ի՞սչն է քեզ վանում ինձանից:

– Երիտթուրքերի հետ մտերմությունդ, ինչը վկայում է, որ հարազատ ընկերոջդ դեմ դավ ես նյութել:

– Ես ցանկանում եմ ձեզ երջանիկ տեսնել և փորձում եմ նրանց միջոցով քեզ համար ապահովություն գտնել թուրքերի մեջ, իսկ դու կապվել ես դավադիրների հետ, որոնք օգտագործում են ձեզ՝ մտավորականերիդ՝ իշխանությունների դեմ լարելով: Հավատա, ես գործում եմ հօգուտ քեզ, – պատասխանեց ընկերը:

Ռուբենը մի պահ կատաղեց, ապա շրջվեց և առանց հրաժեշտ տալու հեռացավ՝ անուշադրության մատնելով Բեռնարի մեկնած ձեռքը:

Մի քանի օր անց՝ լուսադեմին, քառանիվ մի կառք եկավ Յանսիի ու Ռուբենի ետևից. Վերջինիս կարծիքով այս անգամ Պոլիս մեկնելն ավելի ճիշտ կլիներ նավով, քանզի չգիտեր, թե Յանսին ինչպիսի ծանր տեսարանների կարող է ականատես լինել ճանապարհին:

Ալիքները վեր ու վար անելով՝ տանում էին նրանց:

Յաննին նայում էր ծովին, իսկ Ռուբենս ամուր գրկել էր նրա թիկունքը:

– Ուզում եմ, որ հոգիդ խաղաղ ու ջինջ լինի այս կապույտի նման:

– Ես երջանիկ ու խաղաղ կլինեմ, եթե դու միշտ կողքիս լինես:

– Կողքիդ եմ, սրտիդ մոտ, – ասաց Ռուբենս ու ամուր գրկեց նրան...

Ափ հասնելուն պես նրանց դիմավորող Լևոն ու Հրանտն ասացին, որ քաղաքում սվիններով պտտվում են ոստիկաները:

Ռուբենը նրանց հասկացրեց, որ Յաննին այդքան էլ տեղեկացված չէ և ինչ որ գիտի, նրան անցյալ է թվում:

Ծնողները դուրս էին եկել փողոց, երբ երևացին Ռուբենն ու Յաննին:

Հովհաննես աղան, որն ամենաշատն էր սպասում հարսին ու որդուն, արագ-արագ նրանց ընդառաջ գնաց և գրկելով ու օրինելով՝ համբուրեց ճակատները:

Տանը հայրը մի կողմ տարավ որդուն և հանդիմանելով՝ ասաց.

– Խնդրել էի՝ որոշ ժամանակով մոռանայիր հայրենիք գալու մասին: Ես ու մայրդ կզայինք հյուր:

– Անմտություն է, դուք պարզապես վախենում եք ճշմարտությունից, – առարկեց Ռուբենը:

– Մենք սովոր ենք այս արյունալի կյանքին, իսկ նա անհոգ է ապրել:

– Ո՛չ, – չհամաձայնեց զավակը, – նա արդեն հայ է, ուստի պետք է համակերպվի մեր և ցավի, և ուրախության հետ, ապրի մեզ նման:

– Ազգությունը փոխելը արյան կանչն է, – հոգոց հանեց հայրը, – ուրեմն նա քեզ սիրել է հոգով ու սրտով:

Իսկ Ռուբենի մայրը, հարսի հետ մենակ մնալով, խնդրեց նրան բաց անել սպիտակ դուռը, որը տառում էր դեպի Ռուբենի ննջարանը:

Յանսին անվատահորեն ներքև սեղմեց բռնակը, և նրա դիմաց բացվեց երկրային դրախտը. մուտքից այն կողմ ամեն ինչ ճերմակ էր. ճերմակ կահույք, ճերմակ վարագույր, ճերմակ անկողին և նոյնիսկ ճերմակ դաշնամուր:

Պատկերը այնքան հմայիչ էր, որ նա շրջվեց և առանց վարանելու համբուրելով Ռուբենի ծնող-ներին՝ առաջին անգամ ջերմագին ու սիրով նրանց անվանեց ՀԱՅՐԻԿ ՈՒ ՄԱՅՐԻԿ:

Ռուբենն ինքն էլ հուզվեց իրենց սենյակի հիասքանչ տեսքից և կարոտած ու մեծագույն սիրով գրկեց ծնողներին:



Արդեն հաջորդ օրվանից Ռուբենը խորասուզվեց համայնքային կյանքի բարդությունների մեջ, իսկ Յանսին սկեսրոջ օգնությամբ սկսեց համառորեն խորամուխ լինել տեղական ճաշացանկի գաղտնիքներին ու կատարելագործել հայերենի իր իմացությունը:

Երեկոյան Յանսին որովայնի շրջանում հանկարծ տարօրինակ ցավեր սկսվեցին:

Ռուբենն ընկերների հետ քաղաքում էր, աղան էլ բացակայում էր իր գործերով:

Սկեսուր-մայրիկը սկզբում վախեցավ. գուցե մի անսովոր բան է կերել, քանզի դեռևս սովոր չէր

իրենց կերակուրներին և, առանց հապաղելու, դիմեց հարևան փողոցում ապրող բժիշկ Նուարդին, քանզի Աստված գիտե, թե երբ կվերադառնար Ռուբենը:

Նուարդը եկավ, զննեց Յաննիին և նրա հետ մեն-մենակ զրոյցից հետո հասկացավ, որ ոչ ճանապարհին է խնդիրը և ոչ էլ սնունդը, այլ այն, որ Տերն օրինել է Յաննիին, ու նա մայրանալու է:

Յաննին ուրախությունից արտասվեց, իսկ սկեսուրը, ոսկե շղթան հանելով պարանցից, զցեց հարսի պարանցին ու ասաց, որ հարսի Ներկա վիճակը կնոջ համար ամենամեծ օրինանքն է:

Երբ Ռուբենը կեսպիշերին վերադարձավ տուն, Յաննին գունատ էր և բավականին թույլ: Տեսնելով դա՝ նա ցանկացավ կնոջը շտապ տանել հիվանդանոց, բայց Յաննին ժպտաց, համբուրեց նրան ու ասաց.

– Այլս չնախատես ինձ, թե գունատ եմ կամ վատառողջ:

- Ինչպես չնախատեմ, հավանաբար մրսել ես:
- Սիրելիս, մենք շուտով ծնողներ կդառնանք: Ես մայրանալու եմ:

Ռուբենը ուրախությունից կորցրեց իրեն, հետո գրկեց նրան, սեղմեց կրծքին, ապա նստեց մահճակալի եզրին ու հարցրեց.

– Սիրելիս, հիշում ես Շամբերից քիչ հեռու գտնվող այն առանձնատունը և երազանքիդ մասին, երբ ամեն անզամ կառուվ անցնում էինք դրա մոտով:

– Իհարկե, հիշում եմ, – հոնքերը ճակատին թոցնելով՝ ասաց Յաննին:

– Այստեղից միանգամից տեղափոխվելու ենք այդ առանձնատուն. մենք վարձակալել ենք դրա երկրորդ հարկը:

– Ինչպես թե, չէ՞ որ դա կիսի քո աշխատած գումարի զգալի մասը:

– Տանտերը կնոց հիվանդության պատճառով օրեր առաջ ինձ մոտ էր: Երկրից հեռանում են: Տունն անբնակ չթողնելու համար փոքր գումարի դիմաց առաջարկեց ինձ: Ես էլ չմերժեցի:

Երկու շաբաթ անց Ռուբենին՝ որպես զինվորական բժիշկի ուղարկեցին գյուղական համայնքներ, իսկ Յաննին մի քանի ամիս մնաց Պոլսում, որից հետո միասին վերադարձան Լոզան:

Ամիսներ տևած սոսկալի զբաղվածության պատճառով Ռուբենն արդեն մոռանում էր ամեն ինչ, նույնիսկ այն մասին, որ Լևոնը շուտով կդառնա վեց ամսական, իսկ ծնողները նրան տեսել են սոսկ լուսանկարներով: Խիստ լարվածության պատճառով նա կորցրել էր ժամանակի զգացողությունը և, որ Հրանտը կնոց՝ Լենայի հետ գալիս է Լոզան, հիշեց միայն վերջին օրը:

Հրանտը եկել էր բարի լուրով. չնայած խառը և ցավալի օրերին, նա հասցրել էր հավաքել ու բերել Ռուբենի աշխատությունները, որոնք լույս էին տեսել Պոլսի տարրեր պարբերականներում:

Երեկոյան սեղանի շուրջը հավաքված նշում էին Հրանտի և Լենայի բարի գալուստը, երբ պարզվեց, որ ընկերներն այլս մտադիր չեն վերադառնալ Պոլիս. Լենան իտալուհի էր, իսկ վերջին պատերազմի ժամանակ Իտալիան Թուրքիային մատնել էր խայտառակ պարտության, ուստի իտալացիները պետք է լրեին երկիրը, իսկ Թուրքիայից Իտալիա ուղևորվելը գրեթե անհնար էր:

Մինչ ընկերներն աշխատասենյակում զրուցում էին երկրի կարգ ու կանոնից, Լենայի խնդրանքով

Յաննին մոտեցավ դաշնամուրին, ինչը տղամարդկանց քերեց հյուրասրահ, որտեղից լավում էին Կոմիտասի երաժշտության քնքույշ հնչյունները, որոնք, սակայն, արթնացրին Լևոնին, որ ձեռքից ձեռք՝ Ռուբենից Հրանտին ու Հրանտից Ռուբենին անցնելով՝ հրճվանք էր պատճառում բոլորին, զվարճացնում իր ամեն շարժումով, դեմքի ցանկացած մկանի թրթումով, աչուկների թարթումով, չարաճիությամբ...

Լուսաբացին, երբ արևը թափանցել էր Վարդգոյրներից ներս, այգու կողմից լսվեց երգի ձայն, որը, վստահաբար, Ռուբենինը չէր. քանզի նա դեռ քնած էր...

Յաննին պատուհանից դուրս նայեց ու ժպտաց.

– Սիրելիս, մենք քնով ենք անցել, իսկ Հրանտը, իմանալով Լևոնի զբոսանքի ժամը, բակում խաղանում է երեխային ու երգում նրա համար:

Դուրս եկան ննջարանից, երբ Լենան արդեն սեղանին էր դրել համեռ նախաճաշը, իսկ Հրանտը հասցել էր մի լավ զբոսնել Լևոնի հետ:

Փոստարկում կային մի քանի նամակներ, որոնցից մեկը տեղեկացնում էր, թե այդ շաբաթ Ռուբենը վերջնականապես կստանա բժշկության դոկտորի աստիճան: Ուստի նախաճաշն անցավ մեծ խանդակառությամբ: Թվում էր, թե խավարն իսպառ վերացել է Ռուբենի մտքից ու սրտից, և այսօր նա ամենաաջերմ սեղանակիցն էր ընկերների համար:

– Վերջապես կտեղեկացնեմ ծնողներիս, որ իրենց որդիին բժիշկ է դարձել, – ասաց անկեղծ ուրախացած Ռուբենը և վերցրեց թուղթն ու գրիչը.

«Սիրելի ծնողներ, երջանիկ լուր ունեմ հաղորդելու ձեզ. այսացաւ վեց տարիներ ի վեր երազած բժշկության դոկտորի վկայական:

Առաջինը պարսք համարեցի երախտագիրությունս հայրնել ձեզ: Ձեզ եմ նվիրում այսքան տարիների աշխարհանքին պրոդը, նաև՝ ավարտական թեզու՝ գիրական ուսումնասիրություններին իմ առաջին գիրը: Այսպես վարվելով՝ հուսամ հաճուք կապահառեմ ձեզ: Ուստի հոյս ունեմ, որ մոռացնել կրամ այն մորմորները, որոնք բվել եմ տարիներ ի վեր: Մոդակա օրերը Յաննին երկու շաբաթով կմեկնի Գերմանիա՝ ծնողների մոտ, քանզի ես չեմ կարող բացակայել երկար ժամանակով, իսկ հետո կվերցնեմ արձակուրդս, և բոլոր կզանք հայրենիք, որպեսզի դուք վերջապես գրկեք Լևոնին»:

Համալսարան գնալու ճանապարհին Ռուբենը խնդրեց Հրանտին, որ ինքն ու Լենան երեկոյան Լևոնին վերցնեն իրենց խնամքի տակ, քանի որ այսօր Յաննիի մենահամերգն է, իսկ ինքը Յաննիին անակնկալ ունի:

Հրանտն անմիջապես համաձայնեց՝ ասելով, որ կգնան միասին, իսկ ինչ վերաբերվում է փոքրիկին, նրան սիրով կխնամի Լենան:

Բանն այն էր, որ Ռուբենը օրեր առաջ հագուստի խանութում մի ճյունասպիտակ շրջազգեստ էր տեսակ և որոշել էր համերգի օրը դաշտային ծաղիկների հետ միասին վերցնել դա ու գնալ համերգասրահ:

Դահլիճի հոծ բազմության մեջ Ռուբենը չէր մնաաննկատ, սիրուն ինքն էր հուշում, թե ինչպես տեսանելի լինի սիրելիին:

Չսայած Յաննին բազմիցս մասնակցել էր համերգների, բայց այդ օրը նրա ամենամեծ մենահամերգն էր:

Ռուբենը սպասողական վիճակում մի հայացք նետեց դահլիճին և առաջին շարքերում տեսավ

փոքրիկ Լսոնին՝ Լենայի գրկում, իսկ Հրանտը, ծաղիկների մի մեծ փունջ ձեռքին, կանգնել է քեմից քիչ հեռու. ընկերոջ աջակցությունն իրոք անզնահատելի էր: Ալեկոծ սրտով մոտեցավ նրանց, գրկեց Լսոնին, սեղմեց կրծքին և նստեց դաշնամուրի տեսանելիության հատվածում:

Յաննիի մուտքը դահլիճ նման էր հրեշտակի թերեւասահ երևութականության, որ նրբորեն մոտեցավ քեմեզրին, խոնարհվեց, ապա նստեց դաշնամուրի դիմաց ու նվազեց երկար ու ձիգ երկու ժամ...

Երաժշտության վերջին հնչյունները դեռ թրթոռում էին համրացած հանդիսատեսի գլխավերևում, երբ որոտընդուատ ծափերն ու բացականչությունները հանկարծ ցնցեցին ողջ դահլիճը՝ վեհացնելով հուզված դաշնակահարուին հոգին:

Նկատելով քեմին մոտ ժպտացող որդուն՝ նա առաջ եկավ, գրկեց փոքրիկին ու մտածեց. «Դու երջանիկ ես, քեզ հարկավոր չէ այլս ոչինչ, որու ունես այն, ինչ կամեցել է կատարյալն Աստված»:

Այնուհետև խորին շնորհակալություն հայտնեց ներկաներին, ընկերներին ու սիրելիին:

Ռուրենը բռնեց նրա ձեռքն ու շտապեց հանդերձարան:

– Իսկ Լսոնը, Հրանտն ու Լենան, – հարցրեց Յաննին:

– Մի մտահոգվիր, Լենան մեծ սիրով է խնամում մեր որդուն: Այսօրը միայն մերն է. ոչ մեկն ու ոչինչ չեն խանգարի մեզ, – ու նրան հանդիսավորապես մատուցեց նվերը, – կրի՛ սա այս երեկո:

Յաննիին ոչինչ չէր պակասում երազանքի տիրուհուն նմանվելու համար, սակայն ձյունասպիտակ զգեստն արդեն նրան դարձրեց կատարյալ:

– Դու պետք է քեզ իմ աչքերով նայես, որպեսզի հասկանաս, թե որքան անթերի ես. երկնքի նման խաղաղ ու արևի նման ջերմացնող:

– Ես ինձ տեսնում եմ քո սրտի մեջ, մի՞թե դա բավարար չէ: Այս, ինչը հեղվում է աչքերից, մի՞թե երջանկությունը չէ, – հպվելով ամուսնուն՝ շշնջաց Յաննին:

– Ո՞չ մի ստվեր, ո՞չ մի փոթորիկ ի զորու չէ կանգնել մեր ճանապարհին: Մահն անզամ անկարող է խանգարել մեր սիրուն, – շուրթերը թեթևակի հպելով կնոջ սևաթ մազերին՝ պատասխանեց Ռուբենը, և նրանք զրունելով հասան քաղաքի լավագույն դյյակներից մեկին, որը սովորաբար վարձակալվում էր քաղաքի պատվավոր հյուրերի համար և որը, ի պատիվ կնոջ մենահամերգի, այդ օրը վարձակալել էր Ռուբենը: Ամեն քան այդ օրը այստեղ անբիծ սպիտակ էր նրանց սիրո նման. ընթրիքի՝ սպիտակ մոմակալներով սպիտակ մոմերն ու ձունաճերմակ սեղանը, դաշտային ճերմակ ծաղիկներով սփռված ճերմակ մահճակալը և... խոստունալից ժպիտը, որն ի զորու էր Յաննին պարզել տիեզերական սիրո հրճվանք ու հաճույք:

Ժամանակը մագնիսի նման իրեն էր ձգում մուլթը:

Թվում էր, նույնիսկ երկրագունդն է այդ գիշեր աստղերի տակ պտտվում միայն ու միայն այս զույգի համար...

Եվ անցավ գիշերը, և եղավ առավոտ և... Առաջին համաշխարհային պատերազմ:

Երկու շաբաթվա փոխարեն Յաննիի ու Լևոնի բացակայությունը տևեց մեկ ամիս և ութ օր:

Կայարանի սպասարահում ահավոր լարվածություն էր տիրում. զենք-զինամթերքի, զինվորների տեղափոխությունների պատճառով գնացքների ժամանման ու մեկնման չվացուցակներն անհուսալիորեն խախտվել էին. աշխարհում մոլեգնում էր պատերազմը. հանգստությունն ու խաղաղությունը փախել էին Երկիր մոլորակից...

Հիվանդանոցներում տիրում էր նոյն խառնաշփոթը: Բժիշկներին գործուղում էին տարբեր քաղաքներ ու վայրեր: Վերջին ցուցակներում Ռուբենի անունը նշված չէր, բայց, այնուամենայնիվ, դեկավարությունը նրան զգուշացրել էր՝ որպես զինվորական բժիշկ՝ պատրաստ լինել հրամանին:

Ամիսներն անցնում էին ավագե ժամացույցի դատարկվելու հանգույն: Ռուբենի վերջնական որոշում կայացնելու ժամանակն էր, և նա խնդրեց Յաննիին ընդունել այն փաստը, որ չեն կարող հավերժ մնալ Շվեյցարիայում և պետք է վերադառնան տուն:

– Օրեր առաջ իմացել եմ, որ մենք կրկին երեխան ենք ունենալու, – մի փոքր հապաղումից հետո ասաց Յաննին:

– Աստված օրինի քն ներսում քնակվող խաղաղությանը, – հրճվեց Ռուբենը, – գուցե հենց այդ ծնունդը պիտի դառնա մեր երկրի բարի լուրը. Ես երջանիկ եմ ավելի քան երբեմ: Ես քն ամեն օրը կվերածեմ հեքիաթի ու քեզ կնվիրեմ քն երազած կյանքը, – ասելով այդ հուզված խոսքերը՝ նա միաժամանակ զգում էր, թե ինչպես է տակնուվրա լինում սեփական սիրտը: Չէ որ Յաննին արժանի չէր նման անհանգիստ ճակատագրի և որպեսզի շեղի իր տագնապալի մտքերը, կնոջը խնդրեց ինչ-որ քան կատարել այս հուզիչ նորության առթիվ:

– Ռուբեն, մեր որդին կարոտում է քեզ, – մի քանի ստեղծագործություն կատարելու հետո, փակելով դաշնամուրի կափարիչը, ասաց Յաննին:

– Ես նոյնպես կարոտում եմ Լևոնին, – պատահանեց Ռուբենը, – ես նոյնպես երազում եմ հանգիստ վայելել նրա մանկության յուրաքանչյուր օրը:

– Նա արդեն մեծ տղա է և զգում է քո պակասը, – գրկելով ամուսնուն՝ ասաց Յաննին:

Ռուբենը ձեռքի ջղայն շարժումով դեն նետեց սեղանին փոված լրագրերը և շրջվելով դեպի կինը՝ հարցրեց,

– Կցանկանա՞ս Լևոնի հետ վերադառնալ ծնողներիդ մոտ:

– Խելազարվել ես, – ապշեց Յաննին, – մի՞թե երբսէ առիթ եմ տվել, որ նման քան մտածես, ես քեզ հետ եմ այսօր, Վաղը և ընդմիշտ: Ես քեզ հավատարիմ եմ և պատերազմի ժամանակ, և խաղաղության:

– Մտահոգությունս դու և Լևոնն եք, – գրկեց նրան Ռուբենը:

– Մտածիր միայն, թե ինչ է կատարվում ամբողջ աշխարհում, – պատասխանեց Յաննին, – աղետ է, աղետ բոլոր երկրներում և իմ հայրենիքում նոյնպես: Խնդրում եմ, քնիր, Վաղը քեզ հիվանդանցում ծանր օր է սպասում: Պետք է հանգստանաս:

Ռուբենը ոտքի կանգնեց, բարի գիշեր մաղթեց ու գնաց ննջարան, իսկ թե ինչ որոշում կկայացվեր վաղը, հայտնի էր միայն ու միայն Աստծուն:

Արշալույսի հետ եկավ նաև վերջնական որոշումը, և հիվանդանց մտնելուն պես անմիջապես հայտարարեց, որ ժամանակն է հավաքել իրերն ու մեկնել հայրենիք: Ու երբ արդեն ավարտում էր հավաքել իրերը, նրան այցելեց Բեռնարը:

– Ներիր, եթե կարող ես, – մեկնելով հաշտության ձեռք՝ ցածրածայն շնչաց նա ու մոլորված լոեց:

– Կներեն, շտապում եմ, – դուրս գալով սենյակից՝ ասաց Ռուբենն ու քայլեց դեպի տուն՝ վանելով անողոք հետապնդող միտքը, թե արդյոք իրավունք ունի վտանգի ենթարկել Լևոնին ու Յաննիին՝ նրանց հետ ուղևորվելով Պոլիս, այն դեպքում, եթք ծանոթներից ոմանք, ընդհակառակը, ծնողներին են այնտեղից տեղափոխում Եվրոպա:

Տանն ամեն բան պատրաստ էր, մնում էր միայն հասնել կայարան: Ճանապարհն անցավ լուռ, նույնիսկ սնդիկի նման շարժուն երեխան էր անսովոր լուռ ու զուսպ, կարծես հասկանում էր դրության ողջ լրջությունը:

Կայարանում աղմուկն անգերազանցելի էր. լաց, ուրախություն, ցավ՝ ամեն բան խառնվել էր իրար, կարծես աշխարհի վերջն էր:

– Ռուբեն, գուցե լավ մտածես, – վախեցած հայացքով նայելով շուրջը և կարծես ուշքի գալով զարհուրելի տեսարանից՝ չհամբերեց Յաննի:

Ռուբենն ինքն էլ էր նկատելի կերպով ընկճվել կայարանում տիրող վիճակից և փորձում էր գտնել այն միակ ու ճիշտ պատասխանը, որով կկարողանար հանգստություն պարզելի կնոշը... փոխարենը զարմանքով ու նույնիսկ անբարյացկամությամբ լսեց իր սեփական ձայնը, որ հայտարարեց անտեղի պաթոսով.

– Մենք առաքելություն ունենք, սիրելիս, ամենակարևոր պարտքը հայրենիքի նկատմամբ:

Գնացքում սարսափելի շոգ էր. արևը ներսում այրել էր ամեն ինչ՝ պատերն ու նստարանները, սե-

դանիկներն ու... նույնիսկ օդը: Ի տարբերություն կայարանի աղմուկի՝ այստեղ լուս էր: Բոլորը՝ ուր և ինչու, ինչից փախչելով և ինչ գտնելու շտապողները, խորասուզված իրենց էռությունների խորքերը կամ շոգից թմրած-թուլացած, ուժասպառ ննջում էին...

Իսկ գնացքն արդեն արյան նման պլանում էր հայրենիքի երակով, երբ խոժոռ դեմքով ծերունին, որի կնճիռները երեսի քողն էին դարձել, ասաց.

– Լավ է, որ կհայրենադարձվիս, բայց մանչուն մուր կտանիս:

Բարեդեմ Ռուբենը ժպտաց ծերունուն.

– Հայրենիքիս առյուծն է, պիտի ծառայի ու թագավորե երկրիս գահին:

– Այս, երկրիդ, – կրկնեց ծերունին ու գլուխը թեքելով դեպի Ռուբենը՝ շշնջաց ականջին: – Այն երկրի, որուն տիրողներու երդումը մեկն է. «Կյանքնինք մեկ հայ և այն էլ թանգարանում»:

Ռուբենը սարսոաց, ետ նայեց. Յաննին, որը, բարեբախտաբար, աչքերը փակել էր (քննվ էր ընկել, թե՞ պարզապես հոգնած կոպերն էր փակել), լավ է՝ չլսեց, թե չէ սիրուն իսկույն կպայթեր:

Ռուբենի երբեսէ անցած ամենաերկար ուղևորությունն էր. ոչ ժամանակն էր առաջ գնում, ոչ էլ գնացքը, որ սողում էր նեղ ու լայն դաշտերով՝ սև վարագուրներով թաքցնելով մահվան ու ցավի սուկալի դեմքը...

Վերջապես շոգեքարշը հաղթական սուլոցով հասավ Միլիվրի կայարան:

Հարազատներից մարդ չկար, ոչ մեկը չէր սպասում:

Բոլոր ուղևորներին ստուգեցին այնպես խիստ ու պարտաճանաչ, կարծես վտանգավոր մի հանցա-

գործի էին փնտրում, որը պատրաստվում էր պայթեցնել քաղաքը:

Հոր տան դուռը, ինչպես միշտ, բաց էր. Նա ոչ անհավատ տիրողներից վախ ուներ, ոչ էլ գողերից: Շալն ուսերին զցած՝ մայրն ավլում էր բակի սալահատակն ու բարձր աղոթում. «Աստված ձեզ հետ, զավակներս: Աստված ձեզ հետ»:

– Նա բոլորիս հետ է, մայրիկ, – բարձր ձայնով արձագանքեց Ռուբենը:

Մայրը, որ թիկունքով էր դեպի Ռուբենը, անսպասելիությունից խառնված՝ ետ նայեց ու տեսնելով որդուն՝ գոչեց.

– Իմ Ռուբենս... Աղա, մանչս է տուն եկել:

Հիվանդ Հովհաննես աղան տրորեց աչքերն ու վեր կենալով անկողնուց՝ պահանջեց.

– Օդի բերեք. մի կում՝ գլխացավիս, ու մի կում էլ՝ բարի գալուստի համար:

Յաննին ուզում էր պատկերացնել, թե այդ պահին ինչ կարող էր պատահել կարոտախտով հիվանդ մարդու հետ, որ ծնկեց Յաննիի դիմաց ու, գիրկն առնելով Լևոնին, բացականչեց.

– Եկավ, եկավ իմ առյուծ թռոնիկս, – և հոտութելով մանկան հագուստն ու բեղերը քսելով նրա գլխին՝ ասաց, – մանչս, սիրոս կցավի, մազերս քսեմ երեսիդ, – բայց համբուրեց՝ հազիվ շուրթերը այտերին հաթելով, և անհագ համբուրեց գլուխը, ձեռքերն ու շորերը: Հետո գրկեց ու օրինեց հարսին:

Երկար նստեցին: Ծնողների երբեմնի երիտասարդությունը նմանվել էր գլուխները ծածկած ճերմակ քողի, և Ռուբենը, շոյելով մոր մազերը, ասաց.

*Մասիսն ինչ նման էքեզ.  
Չուն իջել է վարսեղին,  
Մամ, քո սիրոն էլ սարի պես  
Ինձ առել է ուսերին:*

*Ճակարն առել ճակարիդ՝  
Ալուր պուրպուր կհոսի...  
Մամ, Մասիսն էլ քեզ նման՝  
Իր ցավերից չի խոսի:*

– Այս զավակս, – ասաց հայրը, – հպարտանում եմ, որ հայրենիքիդ շահերը «սեփական ընտանիք» հասկացությունից վեր ես դասում: Բայց կիսնորեմ, որ գնաս Եվրոպա: Ըստանիքիդ տար ու հանգիստ ապրիր: Այստեղ կան բժիշկներ, և քո կարիքը բնավ չունեն:

– Հսիր աղային, – ասաց մայրն ու շոյեց Յաննիի մազերը: – Հոս անկարելի ու շատ դժվար է երջանիկ լինել:

– Կուզեմ, որ զավակս հողիս մեջ ծնվի, – գրկելով Յաննիին՝ ասաց Ռուբենը:

*Հայրը աչքերը լայն բացած՝ նայեց Ռուբենին.*

– Միթե օրինվել եք:

– Այո, շուտով կրկին կդառնաս պապիկ:

– Ուրեմն առավել ևս, ես արգելում եմ քեզ մնալ այստեղ, – խիստ ծայնով ասաց հայրը:

Մայրը գրկեց Յաննիին ու իր հետ տարավ սենյակից:

– Եթե մնաս, դուն բժիշկ ես, քեզ կուղարկեն պատերազմ:

– Աղա, հոգ չէ, – նայելով ժամացույցին՝ ոտքի կանգնեց Ռուբենը, – գնդակից մեռնելը մահ չէ, կա-

րոտն ու ցավն են մահացու: Իսկ հիմա, եթե թույլ տաս, պիտի գնամ:

Հայրը համբուրեց Ռուբենի աչքերը, ծանր հոգոցով գրկեց Լևոնին ու դուրս եկավ, իսկ Ռուբենը շտապեց Սիամանթոյի ու Դանիել Վարուժանի մոտ, և ընկերների ճաշկերույթը տևեց մինչև ուշ երեկո:

Հոր մտավախույթունը կիսով չափ իրականացավ. զինվորական վարչությունը, իմանալով Ռուբենի վերադարձի մասին, նրան իսկույն գործունեց հիվանդանոց:

Իսկ Յաննին սկսեց տեղի երեխաներին դաշնամուրի դասեր տալ:

Պատի օրացույցի թերթիկները ներքև էին թափվում աշնան տերենների արագությամբ...

Յաննին, ջանալով զապել ձայնի մեջ զգացվող հուզմունքը, խնայում էր Ռուբենի քունը: Լուսադեմին մոտ էր, երբ նա վերցրեց խավապատ բամբակյա կտորներն ու դուրս եկավ սենյակից:

Մայրն արդեն պատրաստում էր Լևոնի նախաճաշը, բայց միայն կանանց հայտնի հինգերորդ զգայարանով կռահեց, որ սկսվեցին հարսի նախածննդաբերական սուր ցավերն ու ճշաց.

– Ռուբեն, երեխան:

Դստեր ծնունդով օրինվեց տունն ու ընտանիքը:

Ռուբենը ծնկի իջավ ու շուրթերը ջերմեռանդրեն հպեց Յաննիի ճակատին, իսկ հետո՝ փոքրիկի՝ նրան անվանելով Շամիրամ:

Խնդությունն ու երջանկությունը նրանց չէր լրում մի քանի ամիս:

Երբ Ռուբենը որոշեց ընտանիքի հետ տեղափոխվել Բերա թաղամաս, Յաննին սրտանց դեմ էր.

Ռուբենի ծնողներն իրեն վերաբերվում էին հարազատի նման, և նա հոգեպես հանգիստ էր նրանց կողքին:

Մի օր՝ ուշ երեկոյան, լսվեց նրանց դռան թակոցը: Յաննին շտապեց դեպի դուռը, որից այն կողմ կանգնած էին ոստիկանության՝ մինչև ատամները զինված աշխատակիցները:

Յաննին ետ քաշվեց և սարափելի վախեցավ, երբ տեսավ նրանց բաց սվինները: Սակայն ոստիկանները հարգալից բարենցին ու խնդրեցին բժշկին: Յաննին իսկովյն հաղորդեց ամուսնուն:

— Միրելիս, լավ լսիր,— հագնելով բաճկոնը՝ ասաց Ռուբենը, — մենք՝ բժիշկներս, պետք է պատրաստ լինենք ամեն տեսակի աշխատանքի: Բայց եթե չվերադառնամ, լուր ուղարկիր Դանիելին և իսկովն մեկնիր ծնողներիդ մոտ, — ասելով՝ գրկեց կնոջը, համբուրեց և, — տեր եղիր երեխաներին: Շուտով կվերադառնամ, — ասելով՝ դուրս եկավ տանից, իսկ վախեցած ու սրտնեղած Յաննին կանգնած մնաց տան կենտրոնում...

Ոստիկանության սպան, հարգալից վերաբերվելով նրա կոչմանը, հայտնեց, որ պատերազմական վիճակից ելնելով, նրան՝ որպես զինվորական բժշկի, զորակոչում են Մաքրիզյուդի զորամաս:

Մինչ կառքը տեղից կշարժվեր, նա մի հայացը սետեց տան պատուհանին, ինչից հետո թևակոյից իր կյանքի հաջորդ փուլը...

Վիրավորների հոսքն անսահման էր. անզամ մոռացավ օրերի ու ժամերի մասին: Մոռացավ, թե երբ է դուրս եկել տանից, որքան են մեծացել երեխաները, ամեն օր ահավոր գերհոգնածությունը

մարմնի բոլոր անդամներում՝ նա կտրում, կարում ու կարկատում էր մարդկանց մարմինները:

Յաննին ամենուր իրար խառնեց ընկերներին ու հարազատներին և իբրև աղոթք կրկնում էր ամուսնու խոսքը, որ ամեն բան լավ է լինելու և նա կվերադառնա: Միայն թե վերադառնա, թեկուզ օրեր, թեկուզ ամիսներ անց:

Իսկ Ռուբենը շարունակում էր կատարել իր երդումը զարմանալի նվիրվածությամբ. հաճախ՝ իր քնելու հաշվին, իսկ հաճախ էլ՝ չունենալով նույնիսկ թեթև սնվելու ժամանակ:

Շատերը զարմանում էին, թե ինչու է նա այդքան հոգատար թուրք հիվանդների նկատմամբ, իսկ նրա միակ պատասխանն այն էր, որ իր տված բժշկական երդումը տարածվում է բոլոր ազգությունների ու կրոնների վրա:

Այնուամենայնիվ շուտով հայտարարվեց, որ բոլոր հայերին աքսորում են: Աքսորականները ճամփա ընկան, սակայն Ռուբենին մոտեցան ոստիկանության մի քանի սպաներ և, առանց որևէ բացատրության, նստեցրին կառք ու տարան անհայտ ուղղությամբ:

Ինչպես շուտով պարզվեց, նրան բերեցին Չանդրը՝ թուրք ոստիկանապետի՝ չեթեճի Արապաճը Իսմայիլի մոտ, որը խիստ տոնով ընդունեց Ռուբենին ու ասաց.

– Երկար եմ փնտրել քեզ, զյավուր:

– Ես Ռուբեն Չիլինկիրյանն եմ, – արժանապատվորեն պատասխանեց Ռուբենը:

– Հոսպիտալում և վիրավորներ կան, և հիվանդներ, ու ձեզ աքսորում են:

Ռուբենը լոեց, իսկ զրուցակիցը, ուշադրություն չդարձնելով, շարունակեց.

– Աղջկաս հազար ու մի քժիշկ է ստուգել, իսկ նա մահամերծ է, հոյսս կորցրել եմ, եթե դու կարողանաս օգնել, կլինես միակ թշնամին, որին կընդունեմ որպես հարազատի:

– Որտե՞ղ է փոքրիկը, – հարցրեց Ռուբենը:

– Այիշեն օրիորդ է, ես քեզ կուղեկցեմ նրա մոտ:

Հիվանդի մահճակալը ամեն կողմից քողարկված էր ճերմակ վարագույրներով, սենյակը շուշանների մեջ էր, որոնց բույրը խուտուտ էր տալիս քիթը, և անհնար էր մտածել, թե դա հիվանդասենյակ է:

Այիշեի շնչառությունն այնքան թույլ էր, որ Ռուբենին մի պահ նույնիսկ թվաց, թե նա չի շնչում, և կարգադրեց անկողինն ազատել վարագույրներից ու սենյակը օդափոխել և գոնե մոր ներկայությամբ թույլ տալ մարմինն ազատել շորերից:

Ծանր շնչառությունը խիստ անհանգստացրեց Ռուբենին, որն ափսոսանքով էր նայում տեսնից հյուծված աղջկան, որ, ամենայն հավանականությամբ, կմահանար մեկ-երկու օրվա ընթացքում:

Մինչ մայրը կգար, Ռուբենը շոյեց նրա մազերն ու բարձրաձայն ասաց.

– Ախ, Յաննիս, Երանի կողքիդ լինեի ու փարատեի ցավերդ:

Նա հիվանդի մորից օդի խնդրեց: Շուրթերը հաեց աղջկա անհավանականորեն տաք ճակատին, և, թոքերը լսելով, հասկացավ, որ դրանց գրեթե մեծ մասը ախտահարված է: Դուրս եկավ ու չկարողացավ ստել.

– Շատ եք ուշացրել, հնարավոր ամեն ինչ կանեմ հօգուտ Այիշեի, որպեսզի կյանքը փրկեմ, միայն պետք է անեք այն, ինչ կկարգադրեմ: Չմտածեք, թե

Ժամանակ եմ շահում աքսորից խուսափելու համար, բուժումը կլինի երկարատև ու դժվար:

Չեթեճի Խսմայիլը ծեռքը դրեց Ռուբենի ուսին.

– Բժիշկ, Դուք ունեք այնքան ժամանակ, որքան կտևի նրան ոտքի կանգնեցնելը:

– Բարի, – պատասխանեց Ռուբենը, – կգրեմ այն ամենը, ինչը հարկավոր է բուժման համար, և մի քան ևս պետք է թույլ տաք, որ նրա կրծքավանդակը յուղերով մերսեմ. դա բժշկի աշխատանք է, զիտեմ ձեր կրոնը դեմ է, բայց բժշկության մեջ արգելքներ չկան:

– Ես վստահում եմ Ձեզ, – ուղիղ նայելով Ռուբենի աչքերին՝ ասաց չեթեճին, – փրկեք միակիս:

Այս ասելով՝ հրամայեց ներս կանչել ոստիկանների սպային և հայտարարեց, որ բժիշկն իր հյուրն է և կմնա իր մոտ այնքան ժամանակ, մինչև դուստրը կապաքինվի:

Տասն օր շարունակ Ռուբենը մեղք ու կաթ էր խմեցնում Այիշեին, յուղերով մերսում կրծքավանդակը, հետևաբար և թոքերը, և ի վերջո նկատվեցին ապաքինման առաջին նշանները, որոնք վկայում էին, որ Այիշեն շուտով կսկսի շնչել առանց շնչահեղձության:

Համոզվելով, որ հիվանդությունն սկսում է կամաց-կամաց նահանջել՝ Ռուբենը շտապեց ուրախացնել չեթեճիին, թե դստեր ջերմությունը համարյա կարգավորվել է:

Իսկ նա, անկարող լինելով թաքցնել զգացմունքները, ամուր գրկեց Ռուբենին:

Անցավ ևս երկու-երեք օր, և Այիշեն արդեն ժպտում էր, երբ տեսնում էր Ռուբենին, սակայն մեկ օր հետո նա սկսեց ուժեղ հազար:

Դարձյալ բոլորն ընկճվեցին. աղջիկը չէր ջերմում, բայց և սոսկալի հազում էր, թվում էր, թե ամեն ինչ ապարդյուն է և ամեն ինչ ետք է գնում, բայց Ռուբենը պահանջեց, որ այլս չմիջամտեն բուժման ընթացքին՝ հայտարարելով, որ դրանք լիարժեք ապարինման նշաններ են:

Մտնելով Այիշեի սենյակ.

– Բարի լույս, օրիորդ, – ասաց, – գոնե այսօր ինձ բարեկիր. չէ՞ որ դու շուտով լրիվ կառողջանաս:

Այիշեն ժպտաց. խորամանկ ժպիտը մեծ հրապուրանքի խորհրդանիշ էր. նա այլս չէր կարող թաքցնել այն վեհ զգացմունքը, որ տածում էր Ռուբենի նկատմամբ:

– Բժիշկ, կարելի՞ է Ձեզ Ռուբեն անվանել:

– Իհարկե, – խսկույն համաձայնեց Ռուբենը:

– Կպատմեն քո մասին:

– Լսիր, Այիշե, ես հրաշալի կյանքով եմ ապրել, որ մի շատ գեղեցիկ պատմություն է, բանաստեղծական:

– Ինչպես:

– Մի օր անպայման կպատմեմ:

Գնալով ավելի ու ավելի էր ջերմանում նրանց մտերմությունը: Դրա հետ մեկտեղ շարունակվում էր Այիշեի ապարինումը և գրեթե առողջության փուլում էր, երբ կտրուկ վատացավ նրա ինքնազգացնությունը:

Սայրը կասկածեց, որ վերջին ժամանակներս Այիշեն կաթը չի խմում. ինքը լվացարանի մեջ նկատել էր ճերմակ կաթիներ և հարցրեց այդ մասին աղջկան:

– Այո՞ – խստովանեց նա, – եթե ապարինվեմ, նա այլս չի ապրի մեզ մոտ:

– Ինչ նշանակություն ունի, թե որտեղ կապրի այդ քրիստոնյան, – զարմացավ մայրը, – կարևորը քո առողջանալն է:

– Իսկ սիրտս, մայրիկ, չնկատեց թշնամուն, այն փականքից տեսավ հրեշտակին, որն ամեն առավոտ շոյում էր մարմինս և ամեն օր խնամում ինձ: Նա կատարյալ է:

– Ինչ ես խոսում: Դու գյավուրի՞ն ես սիրում, – չհավատաց իր ականջներին մայրը:

– Նրան այդպես չանվանես, – զայրացավ դուստրն ու բղավեց, – Ռուբենն ավելի մաքուր սիրտ ունի, քան թուրքերից շատերը:

– Եվ դու գտնում ես, որ իր կողքին երջանիկ կլինես, – շարունակեց զարմանալ մայրը:

– Միանշանակ, – առանց կասկածանքի պատասխանեց դուստրը, – նրան սիրելով՝ ես լիարժեք եմ ու կատարյալ:

– Նա ընտանիք ունի, – փորձեց բարձրաճայնել մայրը և կոչ անել դստեր խոհեմությանը:

– Ես կլինեմ նրա երկրորդ կինը, – առարկություն թույլ չտվող ձայնով պատասխանեց դուստրը:

– Իսկ հայրդ կընդունի՞ նրան, – փորձեց վերջին փաստարկն օգտագործել մայրը և քիչ մնաց կծեր լեզուն, քանզի սենյակ մտավ Ռուբենն ու, չնկատելով տանտիրուհուն, բարկացած հարցրեց.

– Այիշե, ինչո՞ւ չես կատարում բժշկի նշանակումները: Ինչո՞ւ չես քայլում, կամ ո՞ւմ են նշանակված կաթն ու մեղրը, քն՞զ, թե՞ լվացարանին:

– Ես քայլում եմ, Ռուբեն, – փորձեց արդարանալ Այիշեն և վկա կանչեց մորը, – այդպես չէ, մայրիկ:

Ռուբենը, որ նոր նկատեց տանտիրուհուն, պարկեց բարևեց և, դիմելով նրան, շարունակեց.

– Մի հիսուն քայլ չարած՝ ոժասպառ է լինում, այդպես չէ, տիկին:

– Դու չես կարող ինձ մենակ թողնել ու հեռանալ, – արտասվեց Այշեն:

– Իսկ ո՞վ ասաց, որ ես քեզ մենակ եմ թողնում՝ հիվանդության հետ դեմ առ դեմ, – չհասկանալով Այշենի խոսքերի իմաստը՝ զարմացավ Ռուբենը, – դու արդեն ինքդ կհետևես առողջությանդ, իսկ մայրիկդ օրը երկու անգամ յուղով կօծի մարմինդ: – Եվ մնաք բարով ասելով՝ դուրս եկավ այգի, որտեղ նրան սպասում էր չեթեճի հսմայիլը՝ չնայած, որ ինքն էլ էր մեծ կապվածություն զգում և իրեն էլ էր տիսրեցնում այն փաստը, որ այլս չի տեսնելու այդ ուրախ աղջնակին, որին վերաբերվում էր ավելի քան որպես մանկահասակ երեխայի, քանզի նրան երկրորդ կյանք տալուց հետո հասկացել էր, որ նրան մանկան պես է խնամել:

– Այսուհետև դու իմ հավատարիմ բարեկամն ես, – ասաց չեթեճին ու սեղմեց Ռուբենի ձեռքը:

– Լավ նայեք նրան, – պատասխանեց Ռուբենը, – կատարեք բոլոր խորհուրդներս ու նշանակումներս:

Չեթեճի հսմայիլը աղջկա առողջության առթիվ խնջույք էր կազմակերպել: Հրավիրել էր քաղաքական գործիչների, բարձրաստիճան զինվորականների, մեծահարուստների:

Սկզբում նա ցանկանում էր ներկայացնել Ռուբենին, բայց Ռուբենն ասաց, որ պետք չէ հատուկ ուշադրություն հրավիրել իր անձի նկատմամբ, քանզի դժվար թե կրկին հանդիպի հյուրերից որևէ մեկի հետ:

Սեղանի շորջը խոսակցությունը հիմնականում վերաբերվում էր ռազմական թեմաներին, քաղա-

քականությանը ու հայերին, և եթե իրենք երբեմն վիճում էլ էին, ապա միայն հայերի մասով էին միակարծիք. այդ դավաճաններին պետք է անխտիր ոչնչացել:

Եվ Ռուբենը հանկարծ հեգնական պարզությամբ գիտակցեց, որ քուրքերը պարզ են ու հետևողական. որպես գիշատիչների մի ռիմակ՝ նրանք իրենց տիրույթում գերիշխանության համար մարտնչում են այլ գիշատիչների հետ՝ ոչնչացնելով մշակույթի իրական կրողներին, յուրացնելով դրա պտուղները, ստեղծելով նոր առասպելական պատմություն և կառչում դրանից, ինչպես վերջին կիսավարտիքից...

Եվ չցանկանալով այլս շնչել հավաքվածների հետ նոյն օդը՝ լուս դուրս եկավ բակ, ինչը ներկաներից ոչ ոք նոյնիսկ չնկատեց էլ: Բակում նրան արդեն սպասում էին նոյն այն ոստիկանները, որոնք բերել էին այստեղ:

Տեսնելով Ռուբենին՝ նրանք մոտեցան և պահանջեցին հետևել իրենց և ուղեկցեցին նրան այն բանտախուց, որտեղ պատահականությամբ աքսորի ճանկն էին ընկել նրա՝ Աստծո կողմից շնորհված և այժմ չարի ձեռքով բախտակից ընկերները՝ Սիամանթոն ու Վարուժանը, և որոնց ուղղած առաջին հարցը Յաննիի մասին էր. ինչպես է նա առանց իրեն և որտեղ է այսքան ամիս:

Վարուժանն ասաց, որ Յաննին Պոլսում է՝ Հովհաննես աղայի ու մայրիկի հետ, և որ երեխաններին թողնելով նրանց խնամքին՝ գործի է դրել բոլոր ծանոթությունները, որպեսզի կարողանա աքսորից փրկել ամուսնուն: Նաև ծնողներին չցավեցնելու համար համոզել է, որ Ռուբենը ուրիշ բժիշկների

հետ մեկնել է այլ քաղաք... Մայրը հավատացել է, իսկ աղան՝ ոչ:

Իսկ Յաննին...

Իսկ Յաննին խուճապի մեջ էր, ամեն անգամ վերջին նամակը կարդալիս պատեպատ էր խփվում. կվերադառնա՞ արդյոք սիրելի ամուսինը, ու միշտ ինքն իրեն հուսադրում. Ռուբենը պարտավոր է վերադառնալ. խոստացել է, որ երջանիկ են լինելու ընդմիշտ...



Այն ժամանակից ի վեր, ինչ Այիշեն մնաց մենակ, նա կարծես դարձյալ հիվանդացավ: Ո՛չ, նրան այլս չէր խեղդում հազը, և նա այլս չէր այրվում շերմության մեջ, բայց ժպիտը նրա դեմքին նույնքան անհնար բան էր, որքան արեգակը կեսպիշերին:

Այդ չարաբաստիկ օրը նրան այցելել էր ընկերուիին՝ Սայան, որի հայրը սուլթանի պալատում կարևոր պաշտոն էր զբաղեցնում: Պատմեց քաղաքի վերջին նորությունները, բամբասեց ընդհանուր ընկերուիիներից, նկարագրեց հորեղբոր որդու հարսանիքը, պատմեց, թե նա սուլթանից ինչ նժոյգ ստացավ նվեր, և տեղեկացրեց, որ շուտով մայրիկի հետ մեկնում է Գերմանիա՝ հանքային ջրեր խմելու:

Լսելով ընկերուին՝ Այիշեին չէր լրում այն զգացումը, որ նա ինչ-որ բան է թաքցնում իրենից և, ընդհատելով նրա հերթական նորությունն ու նայելով ուղիղ ընկերուին աչքերի մեջ, հարցրեց.

– Ինչ ես թաքցնում ինձանից, դա կապված է նրա հետ:

Սայան լոեց և փորձեց թաքցնել հայացքը, բայց Այշեն, դժվարությամբ նատելով անկողնում, պահանջեց.

– Նայիր աչքերիս ու չփորձես ստել, թե չէ ես սև Գերմանիա կրերեմ գլխիդ:

– Ես պատահաբար լսեցի... – կմկմաց Սայան ու հանկարծ հապաղեց:

– Ի՞նչ լսեցիր, ի՞նչ, – կորցնելով ինքնատիրապետումը՝ բղավեց Այշեն:

– Թե ինչպես... թե ինչպես հայրս մայրիկիս ասաց, որ բժշկիդ... նրան շուտով կսպանեն, – դողացող ձայնով խոստովանեց Սայան:

Լսելով այդ՝ Այշեն ճշաց և ուշաթափվեց:

Ըսդամենը մեկ ժամ անց չեթեճին իր ջոկատով մոտեցավ բանտին: Դարպասի մոտ նրան արդեն սպասում էր բանտապետը:

– Ուղեկցիր նրա մոտ, – կարգադրեց չեթեճին:

Երբ աղմուկով բացվեցին բանտախցի երկարե դրները, բացի Ռուբենից, Ներսում էին նաև Սիամանքոն ու Դանիել Վարուժանը: Բոլորը հարցական նայեցին հյուրին ու գնդապետին:

Չեթեճին ասաց, որ ուզում է՝ իրեն բժիշկի հետ մենակ թողնեն:

Երբ մյուսների ետևից ծածկվեց դուռը, թուրքը հայացք գցեց Ռուբենի գունատ երեսին ու ասաց.

– Քեզ սպասվում են ծանր օրեր, շուտով քեզ ու ընկերներիդ կուղարկեն Այաշ, ինչը նշանակում է, որ դուք չեք հասնի այստեղ: Ամայի տարածքում կսպանեն ձեզ: Բարեխսեցի, որ քեզ՝ որպես բժշկի թողնեն Զանդըրը հիվանդանցում: Թալեաթը մերժեց:

– Թող Աստծո կամքը կատարվի, չեթեճի, – պատասխանեց Ռուբենը:

– Սակայն ես ունեմ մի հնարավորություն, որին չի համարձակվի խանգարել նոյնիսկ ինքը՝ Թաղեաթը:  
Եվ դու կարող ես օգնել ինձ, որ տրորեմ դրա քիթը:

– Ինչպես:

– Ես չեմ ուզում նմանվել երախտամոռ քուրդի շան: Դու ինձ համար կյանք վերադարձիր Այիշեն, և ես պարտավոր եմ փրկել քեզ, – չեթեճին կարծես կոկորդին կանգնած մի գունդ կուլ տալով՝ երկար լոեց ու ապա, – Այիշեն, – ասաց, – սիրում է քեզ, ամուսնացիր նրա հետ, և ես չգիտեմ կայսրության մեջ մեկին, որը կհանդգնի իմ փեսայի գլխից թեկուզ մեկ մազ պոկել:

– Ես ունեմ կին:

– Մեր հավատը («Ձեր անհավատությունը, – մտքում նրան ուղղեց Սևակը, – ձեր անհավատությունը...») թույլ է տալիս ունենալ մի քանի կին, – նրան հանգստացրեց չեթեճին:

– Սակայն թույլ չի տալիս սերս կնոջս հանդեպ, – պատասխանեց Ռուբենը:

Հյուրը լարվեց, ապա արագ դուրս եկավ խցիկից ու կարգադրեց իրեն ուղեկցել Ռուբենի ընկերների մոտ, ինչը գնդապետը կատարեց մեծ պատրաստակամությամբ:

Երբ չեթեճին ու նրանք մնացին մենակ, նա Դանիելին ու Վարուժանին նկարագրեց նրանց սպասվող դառը ճակատագիրը, պատմեց այն կարճառոտ զրոյցը, որ վայրկյաններ առաջ տեղի էր ունեցել իր ու Ռուբենի միջև և առաջարկեց, որ նրանք փորձեն համոզել նրան շարունակել կյանքը, քանզի ինքը՝ չեթեճին, վստահաբար գիտի, որ Ռուբենի որոշման հիմքում ընկերներին, այսինքն՝ Դանիելին ու Վարուժանին չդավաճանելու գաղափարն է, այսինքն՝

Նա խուսափում է լրել նրանց այս դառը պահին և պատրաստ է նրանց հետ կիսել մահը...

Երբ երիտասարդներին վերադարձրին իրենց խցիկ, նրանք անկեղծորեն պատմեցին այն խոսակցությունը, որն ունեցան չեթեճիի հետ, և փորձեցին համոզել Ռուբենին ետ վերցնել իր որոշումն ու կյանքի կամ մահվան միջև ընտրել առաջինը:

— Հասկացիր, Ռուբեն,— ասաց Վարուժանը, — եթե բոլորս գնանք՝ թեկուզ բարձր պահելով գլուխներս, ովք կմնա: Ո՞վ կդառնա այն հովիվը, որը կտանի մեր ազգը ճիշտ ճանապարհով: Կուսակցականները: Բայց չէ՞ որ նրանք մեզ հասցրին այս անդունդի եզրին: Ներգրավվեցին ոչ միայն ներքին, այև արտաքին քաղաքականության մեջ՝ անտեսելով, որ գործ ունենք ոչ թե բարեկիրթ եվրոպացիների, այլ վայրի ցեղի հետ, որոնց համար օտարին կոտորելը անմեղ զվարճանք է:

— Օտարին,— դառը քմծիծաղ տվեց Դանիելը, — նրանք չներեցին նույնիսկ սեփական թուրքերին, որոնք անցան թուրք Թեմուրի կողմը, երբ նա հարձակվեց Օսմանյան կայսրության վրա:

— Դու պետք է ապրես, — շարունակեց Վարուժանը, — համարիր, որ դա մեր ընկերական հանձնարարությունն է քեզ: Եվ դու պետք է նաև ապրես, որպեսզի գրես մեր փոխարեն:

Դեռ երկար զրուցեցին ընկերները, բայց, ավանդ, ապարդյուն. Ռուբենն անկաշկանդ պնդում էր իրենը, և երբ անհետացավ Ռուբենին տարհամոզելու հոյսը, բանտախցիկ վերադարձավ համբերությունը կորցրած չեթեճին և, տեսնելով Վարուժանի ու Դանիելի դեմքերի արտահայտությունը, հասկացավ ամեն ինչ ու պահանջեց վերջին անգամ իրեն մենակ թողնել Ռուբենի հետ:

– Լավ մտածիր, Ռուբեն,- ասաց նա, երբ երիտասարդների ետևից դարձյալ փակվեց դուռը,- մեր կրոնը թույլ է տալիս բազմակնություն, և դու կարող ես կնոջդ ու երեխաներիդ նույնպես քերել քեզ մոտ։ Հակառակ դեպքում՝ ես ստիպված եմ... Ինձ հրամայված է երեք օրում ոչ մի հայ չթողնել իմ տարածքում, և ձեզ կվերացնեն, հասկացիր։

– Իմ սերը չի ընդունում ոչ մի արդարացում։ Ես կմեռնեմ կրոնիս հավատարիմ, որպես հայրենիքիս նվիրյալ։ Ինձ համար նախընտրելի է մահը, քան ծախու կյանքը։

– Մահը գլխիդ վերևում է կախված, Ռուբեն, քո փոխարեն բոլորը կընտրեին կյանքը։ Դուրս եմ գալիս, մտածիր և կես ժամում տուր պատասխանդ, այլապես վաղը ուշ կլինի։

– Շնորհակալ եմ, միայն արա այնպես, որ այս երկտողը հասնի կնոջս,- չեթեճիին փոխանցելով թղթի պատառը՝ ասաց Ռուբենը։

Չեթեճին ցավով գրկեց նրան, ապա գնաց դեպի դուռը, բայց մի պահ հապաղեց ու շրջվելով դեպի Ռուբենը՝ ասաց։

– Մեր տարբերությունն այն է,- ասաց նա,- որ մենք հանուն մեր գաղափարի պատրաստ ենք սպանել, իսկ դուք՝ լավագույն դեպքում՝ մահանալ, և հենց դա է մեր վճռական հաղթանակի ու ձեր անխուսափելի պարտության և ոչնչացման պատճառը։ Ափսոս, որ դու հայ ես,- և գլուխն օրորելով՝ դուրս եկավ բանտախցից՝ իր ետևից աղմուկով փակելով մետաղյա դուռը։

Դարձի ճանապարհին չեթեճին հրամայեց, որ Յանսիին իր մոտ քերեն Զանդըրը։

Երեկոյան ժամը յոթն էր:

Մեջքը դունը հենած՝ հուսահատ Յաննին միայն  
մեկ հարց տվեց.

– Ռուբենս ո՞ղջ է:

– Ողջ է, տիկին, ողջ է, և ապրելու մեկ հնարավո-  
րույթուն ունի. եթե կրոնափոխ լինի և ամուսնանա  
դստերս հետ, նույնիսկ դեմ չեմ լինի, որ Դուք և ձեր  
երեխաները ցանկանաք ապրել նրա հետ միասին:

– Համաձայնեց, – հարցրեց Յաննին:

– Հավատարիմ ամուսին ունեք: Սերն ու կրոնը  
գերադասում է մահից, – դառը ափսոսանքով ասաց  
չեթեճին:

– Նա հավատարիմ է ինքն իրեն, – պատասխա-  
նեց Յաննին:

– Ինչնել, – խոր շունչ քաշեց չեթեճին ու ափսո-  
սանքով շարունակեց, – ունենք այն, ինչ ունենք...  
Որքան գիտեմ, գերմանուիի եք, այն էլ ազնվական՝  
գնդապետի ընտանիքից: Այսինքն՝ Ռուբենը գեր-  
մանուիի կնոջ ամուսին ու գերմանացի զավակնե-  
րի հայր է, ուստի գերմանական դեսպանը կարող է  
նրան փրկել: Մի հապաղեք, ես կտամ իմ մարդկանց,  
նրանք Ձեզ կուղեկցեն: Եվ, վերջինը. նա փոխանցեց  
Ձեզ այս նամակը, – այս ասելով՝ չեթեճին մեկնեց  
Ռուբենի տված նամակն ու եզրափակեց, – իսկ հիմա  
շտապեք, ժամանակը թանկ է, համարյա չկա...

Երբ կառքը շարժվեց, Յաննին բացեց նամակն ու  
արցունքն աչքերին՝ կարդաց.

«Եթե կարկույթ լուղա կամ անձրև,  
Կայծակ խիի, ու որոպա ամպը սև,  
Կամ լորժորիկ սկսվի անսիրու,  
Ես, միննոյն է, կամ, դու սպասիր:

Եթե տարածեն օդար ու ծանոթ  
Կարճողանի սրեր ցավոդ,  
Եվ ներքին ձայնս պոռթկա՝ ինձ լսիր,  
Ես, միևնույն է, կգամ, միայն թե սպասիր:

Նոյնիսկ եթե ակամա ինձ կորցնեմ  
Կամ էլ տենդում մոլեզնորեն զառանցեմ,  
Եվ մահն անարդ իր գերանդին  
Մոդեցընի իմ ուսին,  
Ես, միևնույն է, կգամ, միայն սպասիր:

Բայց եթե լուսը բացվի առանց ինձ,  
Ու գալի կաղկանձ լսվի անպառից,  
Եվ չըերի քամին իմ շունչը անգամ.  
Էլ չսպասես. այլևս չկամ»: (Մ. Ա.)<sup>1</sup>

Նամակը թաքցրեց պայուսակի մեջ, թաշկինակով սրբեց աչքերը, մի պահ փակեց կոպերը, որպեսզի ամբողջ կամքը հավաքի բոի մեջ, ապա ուղղվեց և կարգադրեց արագացնել ձիերի վարգը՝ դեպի գերմանական դեսպանատուն...

Աչքերի առջև Ռուբենի պատկերն էր...

Վերջապես նրան հրավիրեցին ընդունարան, ապա և աշխատասենյակ, որտեղ ոչ ոք չկար... Քիչ անց՝ մեկ այլ դոնով այնտեղ մտավ... Բարոն ֆոն Վանգենհայմը՝ Հերբերտի քերին:

– Լուս եմ Ձեզ, տիկին, – սառը հայացքով Յան-նիին նայեց դեսպանը:

– Ես Գերմանիայի հպատակ եմ, – ասեց Յաննին՝ պայուսակից հանելով անձնագիրը, – ամուսինս աքսորի ճանապարհին է... Այժմ նա Այաշի բանտում

<sup>1</sup> Մարկ Արեն

Է... Օր չունի... Միայն Դուք կարող եք... Խնդրում եմ, փրկեք,- իրեն կորցնելով՝ հեկեկաց Յաննին:- Մենք երկու մանկահասակ երեխաներ ունենք... Օգնեք մեզ, պարո՞ւ:

Դեսպանը շրջվեց դեպի պատուհանը և կպցնելով ծխամորճը՝ նետեց.

- Դու անարժան գերմանուիի ես, ամուսնացար հայի հետ և հիմա եկել ես ինձ մոտ ու օգնություն ես մուրում: Նա չի վերադառնա, նրանք բոլորը գնացել են մեռնելու:

Սարսափած նման պատասխանից՝ Յաննին պատռեց իր անձնագիրն ու շարտեց դեսպանի դեմքին:

- Ես որդի ունեմ ու նրան կդաստիարակեմ այնպես, որ մի օր նա գերմանացիներից վրեժ լուծի իր հոր համար...

1915 թվականի օգոստոսի 26-ին՝ հինգշաբթի առավոտյան, հինգ հոգու երկու կառքով ուղարկեցին Այաշ, որոնց մեջ և՝ Ռուբեն Սևակն ու Դանիել Վարուժանը: Գիշերվա ժամը 12-ին հասակ նրանց սպանության լուրը...

Ականատես Հասան անունով թուրք կառապանի պատմությունը բացում է սպանության հանգամանքները. ճանապարհին կառքերը կանգնեցնում են: Կարծում են՝ ավագակների հարձակում է, բայց ոստիկանության պաշտոնյան ակնածանքով բարևում է անծանոթին, որին հետևում էին մինչև ատամները զինված չորս ուրիշներ:

Տեղափոխությունն այսպիսով խարեւություն է եղել. Նախապես ճշգրտորեն մշակված հինգ զոհերի սպանության ծրագիր: Նրանց ձեռքերը կապված

են եղել և դիմադրել չէին կարող. «...անոնցմեն մեր երիտասարդ մըն էր՝ սև մորուքով և վառվոուն աչքերով» (կառապանն անկասկած նկատի է ունեցել Ռուբեն Սևակին): Ոստիկանները խուզարկում են զոհերին, կողոպատում և հեռանում, իսկ հինգ դահիճները հարձակվում են հինգ զոհերի վրա, մերկացնում, կապում ծառերին. «Հետո չեթեապետը և իր մարդիկը իրենց դաշույնները մերկացուցին և սկսան դանդաղորեն և հանդարտ կերպով զանոնք մորթուել: Դատապարտյալներու աղաղակը և անոնց հուսահատ կատաղությունը սիրտ կճմլեին, որոնք միայն հոհոցն են հարուցել մարդանման թուրք գազանների...»<sup>2</sup>:

Եվ սև մորուքով ու վառվոուն աչքերով Ռուբեն Չիլինկիրյանի վերջին բառերը սրանք եղան.

– Յաննի, ես քո մասին Աստծուն կպատմեմ...

ՎԵՐՋ

թշուշուցիւց 5 1915. հունիսի 15

<sup>1</sup> «Հայրենիք», Բուստոն, 1931, Էջ 50:

<sup>2</sup> Նոյն տեղում:

Մարկ Արեն  
Վարս Չարենց  
**ԴԱՐՁՅԱԼ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ**

Խմբագիր՝  
Վերստ. սրբագրիչ՝  
Էջաղբող՝  
Տեխն. խմբագիր՝  
Կազմը՝

Սաթենիկ Մկրտչյան  
Տիրուհի Նազարեթյան  
Նարինե Հովհաննիսյան  
Հեղինե Մեղոյան  
Արամ Վարդանյանի

## **bookinist**

«Բուկինիստ» հրատարակչություն  
ՀՀ, 0002, Երևան, Մաշտոցի 20,  
հեռ.՝ +37455537413

Էլ. փոստ՝ [info@bookinist.am](mailto:info@bookinist.am)

Էլ. կայք՝ [www.books.am](http://www.books.am)

Ֆեյսբուքյան կայքէջ՝  
[www.facebook.com/bookinistofficial](http://www.facebook.com/bookinistofficial)

Տպագովել է



**ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ**

Տպագուստուն - Գրտարակադրութեան

[www.veprint.am](http://www.veprint.am)